ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՁԵՐ ԱՃԻ ԽԹԱՆԻՉԸ

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Թանկագի՛ն ընկեր,

Ես անչափ ուրախ եմ, որ դուք կարդում եք «Անկոտրում հոգի» դասընթացի նյութերի ամբողջական ուսումնասիրությունը, որոնք մենք ջանասիրաբար թարգմանել ենք հայերենով: «Անկոտրում հոգի» աշխատանքային գիրքը, «Անկոտրում հոգի» գիրքը, «Անկոտրում հոգի» աուդիո և վիդեոդասընթացները կոգեշնչեն, կխրախուսեն և կապահովեն ձեզ, որպեսզի Աստծո համար ավելի մեծ գործեր անեք:

Այս ուսումնական ծրագրի ստեղծման նպատակն է, որպեսզի ձեր կյանքում հաստատվեք ճշմարտության մեջ և ունենաք ավելի շատ հայտնություններ: Այս գրքի 12 գլուխներից յուրաքանչյուրը համապատասխանում է վիդեոդասընթացի 12 դասերին, պարունակում է ամենօրյա ընթերցանության նյութեր, որոնք կարող եք օգտագործել ցանկության դեպքում, ինչպես նաև հարցեր, որոնց շուրջ կարող եք մտորել: Նախ՝ կարդացե՛ք «Անկոտրում հոգի» գիրքը, ապա օգտագործելով այն՝ դիտե՛ք յուրաքանչյուր դասը «Անկոտրում հոգի» վիդեոդասընթացների հավաքածուի միջոցով կամ առցանց՝ կայքէջում: Այս դասընթացի բոլոր մասերը կարող եք առցանց դիտել կամ ներբեռնել: Դրանք լիովին անվճար են: Այս նյութերն ազատ կարող եք պատճենել և օգտագործել հատվածներ ձեր եկեղեցու կամ Աստվածաշնչյան դպրոցի համար: Մենք այս նյութերը վստահում ենք ձեզ, որպեսզի օգտագործեք դրանք և օգնեք մարդկանց մնալու իրենց ընթացքի մեջ և առաջ շարժվելու դեպի հաղթանակը:

Իմ ընկեր, այս ուղերձը հավիտյան փոխել է իմ կյանքն ու ծառայությունը: Ես աղոթում եմ, որպեսզի այն խորապես վերափոխի նաև ձեզ, երբ կարդաք այն, ինչ Աստված ցանկանում հայտնել ձեզ այս դասընթացի միջոցով: Ես սրտանց կցանկանայի իմանալ, թե ինչ ազդեցություն թողեց այս ուղերձը ձեր և ձեր ծառայության մեջ գտնվող մարդկանց կյանքերում: Ձեր նամակները կարող եք ուղարկել JohnBevere@gmail.com էլ. հասցեով:

Ձեր եղբայրը և ընկերը Քրիստոսի մեջ՝

Ջոն Բիվեր
JohnBevere@ymail.com

Messenger International.
Messengerinternational.org

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՔՈ ԱՃԻ ԽԹԱՆԻՉԸ

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

«Անկոտրում հոգի», Ջոն Բիվեր
© 2012 «Մեսինջեր Ինտերնեյշնլ»
www.MessengerInternational.org
Բնագիրը տպագրված է անգլերենով

Հայերենով կարելի է անվճար լրացուցիչ նյութեր ներբեռնել
www.CloudLibrary.org կայքէջից

Այս ուղերձի հայերեն տարբերակը կարող եք կրկնօրինակել,
օգտագործել քաղվածքներ և փոխանցել այլ մարդկանց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծանոթություն և ցուցումներ IV

Գլուխ 1: Անկոտրում հոգի 1

Գլուխ 2: Զորացված՝ իշխելու համար 17

Գլուխ 3: Դառնալ ակնառու 33

Գլուխ 4: Տեսնել կամ մտնել 49

Գլուխ 5: Ո՞վ է կանգնած նեղության ետևում 65

Գլուխ 6: Զինե՛ք ինքներդ ձեզ 81

Գլուխ 7: Շնորհքի զենքերը 99

Գլուխ 8: Դե՛ն գցեք ծանրությունը 115

Գլուխ 9: Հակառա՛կ կանգնեք սատանային 129

Գլուխ 10: Դիմադրության ամենաբարձր ձևը 145

Գլուխ 11: Անկոտրում աղոթք 161

Գլուխ 12: Երբե՛ք չհանձնվեք 179

Բարի՛ գալուստ «Անկոտրում հոգի» դասընթաց

Մենք այնքան ոգեշնչված ենք, որ դուք որոշեցիք մասնակցել այս դասընթացին: Պահանջվել են երկարատև աղոթքներ, ուսումնասիրություններ և պատրաստություններ, որպեսզի ձեզ համար կարողանանք ստեղծել այս խորացված, ինտերակտիվ և կենսատու դասընթացը: Այս ուսումնական ձեռնարկի նպատակն է՝ հաստատել ճշմարտությունը ձեր կյանքում և տալ նոր հայտնություններ: Հետևյալ տասներկու գլուխներից յուրաքանչյուրը համապատասխանում է «Անկոտրում հոգի» «DVD» դասընթացի մեկ դասին և պարունակում է միտքը խթանող հարցեր, օգտակար սահմանումներ և ամենօրյա ընթերցանություն:

Բացի այդ՝ յուրաքանչյուր գլուխ պարունակում է հետևյալ բաժինները՝

- **Հատվածներ Աստվածաշնչից**, որոնք կարող են փոխել ձեր կյանքը:
- **Հարթելով ուղին** բաժնում քրիստոնյա առաջնորդների իմաստուն մեջբերումներն են, որոնք նախատեսված են ձեզ օգնելու համար:
- **Զորավոր հիմք** բաժնում զետեղված են առանցքային ճշմարտություններ յուրաքանչյուր դասից, որոնք դուք պետք է հիշեք:
- **Շաբաթական կոչերը** կօգնեն ձեզ գործնականում կիրառել յուրաքանչյուր դասի սկզբունքները:

Ժամանակ հատկացրեք և մտորեք այս առանձնացված ակնարկների շուրջ:

Դասի ամփոփում բաժինը նույնպես զետեղել ենք ձեզ համար, ինչպես նաև ազատ տողեր՝ ձեր անձնական **նշումները** կատարելու համար: Այս ամենն արված է, որպեսզի դուք լիարժեք կերպով ստանաք այն, ինչ Աստված ցանկանում է տալ ձեզ տվյալ դասընթացի միջոցով: Մենք աղոթում ենք, որպեսզի ոչ միայն տեղեկություններ փոխանցենք ձեզ, այլ՝ Աստված իրականում վերափոխի ձեր կյանքը:

«Անկոտրում հոգի» դասընթացը՝ առցանց*

«Հիշե՛ք ձեր առաջնորդներին, ովքեր սովորեցրին ձեզ Աստծո Խոսքը: Մտածեք բոլոր բարի բաների մասին, որ տեսել եք նրանց կյանքում և հետևե՛ք նրանց հավատքին»:
Եբրայեցիների 13.7, NLT

Կան բազմաթիվ Աստծո ծառայողներ, ովքեր անկոտրում հավատքի ազդեցիկ օրինակներ են եղել: Մենք խնդրեցինք աշխարհի տարբեր մասերում ապրող այս առաջնորդներին՝ կիսվել իրենց իմաստությամբ և փորձառությամբ՝ պատասխանելով որոշ հարցերի այս ուսումնական ձեռնարկից:

Ուսումնական ձեռնարկում դուք պարբերաբար կհանդիպեք ICON-ով նշված հարցերի: Այցելե՛ք RelentlessOnline.org կայքէջը՝ դիտելու համար այդ

առաջնորդների տեսագրված պատասխանները: Այս ուղերձի մասին ավելի շատ տեղեկություններ ստանալու համար միացե՛ք Ջոն Բիվերին facebook-ով և twitter-ով:

Մենք նույնպես խրախուսում ենք ձեզ...

- **Աղոթե՛ք դասերի թե՛ սկզբում, թե՛ վերջում**: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ հայտնել Իր ճշմարտությունը և հաստատել այն ձեր սրտում:
- **Հարթե՛ք ձեր ուղին:** Ծրագիր մշակեք, ըստ որի դուք կավարտեք յուրաքանչյուր դասը մեկ շաբաթվա ընթացքում կամ դրա համար հատկացրած այլ ժամանակահատվածում:
- **Հետևողականորեն մասնակցե՛ք** դասերին՝ որոշված ժամին և որոշված վայրում, և կիսատ մի՛ թողեք դասընթացը:
- **Եղե՛ք անկեղծ՝** դասընթացի հարցերին պատասխանելիս, և ճշմարտությունը կազատի ձեզ:

Առաջարկներ խմբակների ավագներին

Ավագնե՛ր, շնորհակալություն, որ համագործակցում եք մեզ հետ: Դուք փոխանցում եք Աստծո ժողովրդին այն ճշմարտությունները, որոնք կարող են փոխել նրանց կյանքը: Մեզ համար պատիվ է ծառայել ձեզ հետ:

Մենք խորհուրդ ենք տալիս ձեր խմբակի յուրաքանչյուր անդամին՝ ձեռքի տակ ունենալ գիրքը և ուսումնական ձեռնարկը՝ այս դասընթացը լավագույն ձևով յուրացնելու համար: Այս դեպքում նրանք կարող են անձամբ խորությամբ ուսումնասիրել ամբողջ նյութը և մտորել դրա շուրջ: Կատարվում է յուրահատուկ մի բան, երբ մենք անձամբ ներդնում ենք մեր ժամանակը որևէ ուսմունքի համար, ինչպես և մտորում ենք դրա շուրջ: Այն, ինչ մենք սովորում ենք դրա արդյունքում, անկարելի է այլ կերպ ստանալ: Այս ուսումնական ձեռնարկը կօգնի մարդկանց աճել այն ընթացքի մեջ, որ իրենք անցնում են Աստծո հետ, և գործադրել աստվածաշնչյան սկզբունքներն իրենց անձնական կյանքում:

Ինչպես օգտագործել «Անկոտրում հոգի» դասընթացը. Մինչև խմբակում հավաքվելը, ձեր անդամներին հանձնարարեք կարդալ դասընթացին համապատասխան գրքի գլուխ(ներ)ը: Դիտեք կամ լսեք դասընթացը միասին, իսկ հետո քննարկեք «Ուսումնական ձեռնարկ»-ում նշված հարցերը: Խ-ով նշված հարցերը խորհուրդ է տրվում քննարկել ամբողջ խմբով: Այնուամենայնիվ մենք ցանկանում ենք, որ դուք թույլ տաք Սուրբ Հոգուն՝ առաջնորդել ձեզ այնպես, ինչպես Նա կամենում է: Եթե դրա հետևանքով ձեզ չհաջողվի սերտել ամբողջ նյութը խմբակային հավաքույթի համար հատկացված ժամանակահատվածում, ապա խրախուսե՛ք ձեր խմբակի անդամներին ինքնուրույն ավարտել «Ուսումնական ձեռնարկի» տվյալ գլուխը շաբաթվա ընթացքում:

Մենք աղոթում ենք, որպեսզի այս դասընթացը լեցունություն պարգևի ձեզ ու մյուս մասնակիցներին և հավիտյան փոխի ձեր կյանքը: Մենք ցանկանում ենք, որպեսզի դուք ապրեք այն *անկոտրում կյանքով*, որի համար Աստված կանչել է ձեզ:

*«Դուք պետք է հաստատուն կերպով համբերեք և **դիմանաք**, որպեսզի կատարեք և ամբողջովին իրականացնեք Աստծո կամքը և այդպիսով ստանաք և վերցնեք [և լիովին վայելեք] այն, ինչ խոստացված է»:*

— Եբրայեցիների 10.36, AMP

Գլուխ 1

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 1-ին դասից, «Անկոտրում հոգի» գրքի ներածությունից և 1-ին ու 2-րդ գլուխներից:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Աստված ձեր կողմից է, և բոլորից առավել ցանկանում է, որպեսզի դուք հաջողակ լինեք հավատքի կյանքում: Նա անհավատալի կյանք է պատրաստել ձեզ համար: Նա նախապատրաստել է զորավոր ավարտ, որին հասնելով՝ դուք մեծ, ազդեցիկ հավատքի ժառանգություն կթողնեք՝ այլ մարդկանց օգտակար լինելու համար: Բայց այսօրինակ կյանքով ապրելու պայմանն անկոտրում հավատացյալ լինելն է:

Խ 1. *«Անկոտրում»* բառն ազդեցիկ է: Այն ունի հետևյալ իմաստները՝ համառ, դիմացկուն, փոխզիջման չգնացող և անզիջում վճռականություն: Ի՞նչ եք դուք պատկերացնում՝ լսելով այս բառերը:

Հիշե՛ք ինչ-որ մեկին, ով անկոտրում խիզախություն է ցուցաբերել ձեր կյանքն ավելի լավը դարձնելու համար: Ի՞նչ փոփոխություն է բերել այդ մարդը (կամ՝ մարդիկ) ձեր կյանքում, և ինչպե՞ս է այդ ներդրումը ուրիշներին օգնելու շարժառիթ տվել ձեզ:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԱՆԿՈՏՐՈՒՄ

«Անկոտրում» բառն ունի հետևյալ նշանակությունը՝ վճռական, համառ և անզիջում վերաբերմունք կամ դիրքորոշում: Պարզ ասած՝ այն չի զիջում, չի փափկում, լճանում կամ տեղի տալիս ինչ-որ բանի: Հետևյալ **հոմանիշներն** օգնում են մեզ սահմանել *«անկոտրում»* բառը. «անդրդվելի, խիստ, փոխզիջման չգնացող, անհաղթահարելի, հաստատ և նպատակասլաց»: Այս բառը կարելի է նույնպես սահմանել հետևյալ կերպ. «հաստատուն, վճռական, նվիրված որևէ նպատակի, կայուն և դիմացկուն»:

Խ 2. Այն տեսիլքի մեջ, որը նավակում նստած մարդու մասին էր, պատկերվում են երեք տեսակի մարդիկ. *անհավատը*, ով գնում է այս աշխարհի հոսան-

քին համընթաց, *հավատացյալը*, ով շարունակում է գնալ այս աշխարհին հակառակ և *խաբվածը*, ով արտաքնապես «քրիստոնյա» է, սակայն գնում է այն նույն ուղղությամբ, ինչ ուղղությամբ գնում է աշխարհը: Ո՞ր նկարագրությունն է առավել համապատասխանում ձեզ: Ինչո՞ւ:

3. Եթե դուք *սովորության համաձայն* չեք ավարտում այն, ինչ սկսում եք, ապա կա՛նգ առեք և հիշե՛ք անցյալի այն դեպքերը, երբ հանձնվել եք կամ թողել ինչ-որ բան: Ինչպիսի՞ անբարենպաստ հանգամանքներ և պայմաններ եք մտաբերում: *Աղոթե՛ք* և խնդրե՛ք Աստծուն՝ ցույց տալ ձեզ հանձնվելու ցանկության գլխավոր պատճառները:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մեր ուղին, անընդմեջ գործունեությունը, աղմուկը, դադարները, վերջնաժամկետները և պահանջները, օրակարգը, ձախողման պարբերական զգացումները և ունայնությունը կարծես հրետանիով ռմբակոծում են մեզ: Մեր բնական ցանկությունն է՝ բարձրացնել սպիտակ դրոշը և գոչել. «Ես թողնո՛ւմ եմ ամեն ինչ: Ես հանձնվո՛ւմ եմ»: Սա, իհարկե, հոգնած լինելու վտանգավոր ծայրահեղությունն է, երբ մենք որոշում ենք փախուստի դիմել, խոստովանել սեփական պարտությունը, տեղի տալ հուսահատությանը և հանձնվել: Հոգնածություն զգալը բոլորովին սխալ չէ, սակայն մարտի կեսին փախուստի դիմելը շատ մեծ սխալ է»:

— Չարլզ Սուինդոլ[1]

«Քննի՛ր ինձ, ո՜վ Տեր, և իմացի՛ր իմ սիրտը. փորձի՛ր ինձ և իմացի՛ր իմ մտահոգությունները: Ցո՛ւյց տուր ցանկացած բան ինձանում, որ վիրավորում է Քեզ, և առաջնորդի՛ր ինձ հավիտենական կյանքի ճանապարհով»:

— Սաղմոս 139.23, NLT

4. Լինելով ուժեղ հավատքի մեջ՝ մենք ունենք զորություն, որպեսզի ապրենք անկոտրում կերպով և փոխենք մեզ շրջապատող աշխարհը: Ներկայումս ի՞նչ քայլերի եք դիմում, որպեսզի զորացնեք Աստծո հանդեպ ունեցած ձեր հավատքը և ավելի ոգեշնչվեք՝ Նրա խոսքերին հավատալու համար: Կարո՞ղ եք արդյոք ավելի հաճախ նման բաներ անել:

«Մարդու ուժեղ հոգին սատարում է նրան մարմնական ցավի կամ դժվարության մեջ, բայց տկար և կոտրված հոգին ո՞վ կարող է բարձրացնել կամ կրել»:

— Առակաց 18.14, AMP

Խ 5. Աստված Իր Խոսքում զորավոր կերպով հայտնում է, որ «...բոլորը, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ձրիաբար արդարանում Նրա առջև, **կիշխեն կյանքում** Քրիստոսի միջոցով» (Հռոմեացիների 5.17, TEV): Դուք հավատո՞ւմ եք այս արտահայտությանը: Ի՞նչ է նշանակում *իշխել կյանքում*:

_____

_____

_____

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Աստված ծրագրում է, որպեսզի մենք, որպես թագավորներ, իշխենք և թագավորենք կյանքում. իշխենք և թագավորենք հանգամանքների, աղքատության, հիվանդության և ցանկացած խոչընդոտի վրա: Մենք թագավորում ենք, որովհետև իշխանություն ունենք: Մենք թագավորում ենք Հիսուս Քրիստոսով, ոչ թե հաջորդ կյանքում, այլ՝ ա՛յս կյանքում»:

— Քեննեթ Հեգին[2]

Խ 6. Կարդացե՛ք Ծննդոց 1.28-ը, Սաղմոս 115.16-ը և Հռոմեացիների 11.29-ը: Դժվար, անբարենպաստ կամ նույնիսկ վտանգավոր իրավիճակներում որոշ հավատացյալներ կրկնում են այս արտահայտությունը. «Աստված վերահսկում է ամեն ինչ»: Ինչպե՞ս եք դուք գնահատում այդ պատասխանն Աստծո Խոսքի լույսի ներքո:

_____

_____

_____

_____

«Եվ Աստված ստեղծեց մարդկանց՝ կազմելով նրանց Իր նմանությամբ: Նա ստեղծեց նրանց որպես տղամարդ և կին, օրհնեց նրանց և ասաց. «Շատ երեխաներ ունեցեք, որպեսզի ձեր սերունդներն ապրեն ամբողջ երկրի վրա և ենթարկեն այն իրենց վերահսկողությանը:
Ես իշխանություն եմ տալիս ձեզ»»:
— Ծննդոց 1.27,28, TEV

Խ 7. Երբ Ադամն ու Եվան մեղանչեցին Եդեմի պարտեզում, անասելի խնդիր ծագեց, սակայն Աստված աշխարհի ստեղծագործությունից առաջ ծրագրել էր, թե ինչպես պետք է ուղղեր ամեն ինչ: Նրա միջոցը Իր Որդու՝ Հիսուսի ծնունդն էր, մահը և հարությունը: Ձեր խոսքերով կարճ նկարագրեք՝ ի՞նչ տեղի ունեցավ մարդու երկրային կյանքում ունեցած իշխանության հետ, երբ կատարվեցին հետևյալ իրադարձությունները.

Եդեմի պարտեզում. Ադամի ու Եվայի ապստամբությունը

_____

_____

_____

Քրիստոսի հարությունը

_____

_____

_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Հիսուսը պետք է ծնվեր կնոջից. Նա պետք է 100 տոկոսանոց Մարդ լիներ: Բայց Նա նաև ծնվել էր Սուրբ Հոգուց, այնպես որ Հիսուսը 100 տոկոսանոց Աստված է: Այդ իսկ պատճառով Նա ազատ է մեղքի անեծքից: Փիլիպեցիների 2.7-ում գրված է. «Երբ ժամանակը եկավ, Նա մի կողմ դրեց աստվածության արտոնությունները և մարդ դառնալով՝ ստանձնեց ստրուկի կարգավիճակը: Դառնալով մարդ՝ Նա մնաց մարդ, որն էլ խոնարհության աներևակայելի գործընթաց էր» (MSG):

8. Ինչո՞ւ Հիսուսը պետք է ծնվեր մարդկային մարմնով՝ որպես «Մարդու Որդի» և ի՞նչ օրհնություն մենք ստացանք, երբ Նա դարձավ «մեզանից մեկը»՝ ըստ Եբրայեցիների 2.17,18-ի:

«Այնպես որ ակնհայտ է՝ անհրաժեշտ էր, որ Նա դառնար Իր եղբայրների նման ամեն կերպով, որպեսզի Նա կարողանար դառնալ ողորմած (կարեկցող) և հավատարիմ Քահանայապետ այն հարցերում, որոնք կապված են Աստծո հետ, որպեսզի քավություն և հաշտություն աներ մարդկանց մեղքերի համար: Քանի որ Նա Անձամբ [Իր մարդեղության մեջ] չարչարվել էր՝ գայթակղվելով [ստուգվելով և փորձվելով], Նա կարող է [անմիջապես] հասնել նրանց աղաղակին (օգնել, ազատել), ովքեր գայթակղվում և ստուգվում և փորձվում են [և ովքեր այդ պատճառով ենթակա են չարչարանքի]»:

— Եբրայեցիների 2.17,18, AMP

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Եբրայեցիների 4.15,16

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, իսկ Քրիստոսը՝ եկեղեցու Գլուխը: Թե՛ ծնողների ու երեխաների, թե՛ տերերի ու ծառաների, թե՛ նույնիսկ ամուսինների ու կանանց փոխհարաբերությունները կարող են խզվել, սակայն *ֆիզիկական գլուխն ու իր մարմինն անբաժանելի են.* դրանք **հավիտյան մեկ են**: Նմանապես՝ Քրիստոսը և եկեղեցին երբեք չեն կարող առանձնացվել»:

— Վոչման Նի[3]

9. Ո՞ւմ մասին եք դուք սովորաբար մտածում՝ լսելով «*Քրիստոս*» բառը: Մտորե՛ք ստորև բերված սուրբգրային հատվածների շուրջ և բացատրե՛ք, թե ո՞վ է «Քրիստոսը» համաձայն այս խոսքերի և *ո՞վ եք դուք*՝ որպես հավատացյալ:

«Մարմինը բաղկացած է բազմաթիվ մասերից, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր գործածությունը: Մենք հենց այսպիսին ենք: Մենք շատ ենք, սակայն յուրաքանչյուրս Քրիստոսի մարմնի մասն ենք, ինչպես և մեկս մյուսի մասը»:

— Հռոմեացիների 12.4,5, CEV

«Չե՞ք հասկանում, որ ձեր մարմիններն իրականում Քրիստոսի մասերն են»:

— Ա Կորնթացիների 6.15, NLT

«Բոլորդ միասին Քրիստոսի մարմինն եք, և յուրաքանչյուրդ՝ դրա առանձին և անհրաժեշտ մասը»:

— Ա Կորնթացիների 12.27, NLT

«Կյանքի աղբյուրը Քրիստոսն է, Ով միավորում է մեզ մեկ մարմնում, Ում շունչն անգամ մեր մեջ է, իսկ արյունը հոսում է մեզանով: Նա է Գլուխը, իսկ մենք՝ մարմինը: Մենք կարող ենք աճել և առողջ լինել Աստծո մեջ միայն այն դեպքում, երբ Նա սնուցում է մեզ»:

— Կողոսացիների 2.19, MSG

10. Բացի այն, որ Քրիստոսը դարձավ մեզանից մեկը՝ մենք *մեկ* դարձանք *Նրա* հետ: Վերստին ծնունդի միջոցով մեզանում դրվեց Ամենակարող Աստծո աստվածային սերմը, և մենք դարձանք ամբողջովին նոր արարած *Քրիստոսի մեջ*: Մի քանի վայրկյան մտորե՛ք ստորև բերված սուրբգրային հատվածների շուրջ և նկարագրե՛ք, թե ինչ է նշանակում ձեզ համար *Քրիստոսի մեջ* լինելու հրաշալի արտոնությունը:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մենք Քրիստոսի մարմինն ենք: Մեզանից յուրաքանչյուրն այդ մարմնի առանձին մասն է: Հիսուսը Գլուխն է, իսկ մենք մարմնի մնացած մասերը. որքա՜ն պարզ է: Այնպես որ, երբ դուք կարդում եք «Քրիստոս»՝ ընթերցելով Նոր կտակարանը, դուք պետք է տեսնեք ձեզ դրա մեջ, ոչ թե միայն Նրան, Ով մահացավ խաչի վրա: Մենք *Քրիստոսում ենք*: Մենք միասին Քրիստոսն ենք: Մենք Նրա մարմինն ենք: Մենք *մեկ ենք* Նրա հետ:

«Որովհետև բոլորդ, որ մկրտված եք Քրիստոսի մեջ, հագել եք Քրիստոսին: Չկա ո՛չ հրեա, ո՛չ հույն, ո՛չ ստրուկ, ո՛չ ազատ, ո՛չ տղամարդ, ո՛չ կին, որովհետև դուք բոլորդ մեկ եք *Քրիստոս Հիսուսում*: Եթե դուք պատկանում եք Քրիստոսին, ապա դուք Աբրահամի սերմն եք, և ժառանգներ՝ ըստ խոստման»:

— Գաղատացիների 3.27-29, NIV

«Իր աստվածային զորությամբ Աստված տվեց մեզ ամեն ինչ, ինչի կարիքը մենք ունենք աստվածապաշտ կյանքով ապրելու համար: Մենք ստացել ենք այս ամենը՝ ճանաչելով Նրան, Ով կանչել է մեզ Իր մոտ Իր զարմանալի փառքի և գերազանցության միջոցով: Հենց այս խոստումներն են կարողություն տալիս ձեզ հաղորդակցվել Նրա աստվածային բնությանը և փախչել այս աշխարհի ապականությունից, որն առաջացել է մարդկային ցանկությունների պատճառով»:

Բ Պետրոս 1.3,4, NLT

«Ոչ ոք, ով ծնված (ծնունդ առած) է Աստծուց [կանխամտածված կերպով, գիտակցաբար և սովորաբար] չի մեղանչում, *որովհետև Աստծո բնությունը բնակվում է նրանում* [Նրա կյանքի սկզբունքը՝ աստվածային սերմը, մշտապես մնում է նրանում], և նա չի կարող շարունակաբար մեղք գործել, որովհետև նա ծնված (ծնունդ առած) է Աստծուց»:

Ա Հովհաննես 3.9, AMP

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Հովհաննես 3.3-8, 15-21, Բ Կորնթացիների 5.17,21, Գաղատացիների 2.20, Ա Պետրոս 1.23

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Ինչպես ամուսինն ու կինն են մեկ, այնպես էլ Հիսուսն է մեկ բոլոր նրանց հետ, ովքեր հավատքով միացած են Իրեն. նրանք մեկ են այնպիսի ամուսնական կապով, որը երբեք չի կարող խզվել: Ավելին՝ *հավատացյալները Քրիստոսի մարմնի անդամներն են*, այնպես որ *նրանք մեկ են Նրա հետ* կենդանի ու հարատև սիրո միաբանությամբ: Աստված կանչել է մեզ այս միաբանության, հաղորդակցման, ընկերակցության մեջ... Քանի որ մենք մեկ ենք Հիսուսի հետ, Աստված դարձրել է մեզ Նրա բնության հաղորդակիցները և ընծայել Նրա հավիտենական կյանքը: Մեր կյանքը կապակցված է մեր Տիրոջ կյանքին, և մենք կարող ենք կորչել միայն այն դեպքում, եթե դա կատարվի Նրա հետ, ինչն անհնարին է»:

— Չարլզ Սփերջեն[4]

Ծարաթական ԿՈՉ

Ընտրե՛ք հստակ նպատակ, որը դուք պետք է իրականացնեք այս դասընթացի ժամանակ: Ընտրե՛ք օրական կամ շաբաթական նպատակներ ձեր հոգևոր կյանքի, առողջության, փոխհարաբերությունների, ֆինանսական վիճակի կամ այլ բնագավառի համար, որտեղ խնդիրներ ունեք: Անկախ այն բանից՝ դուք կորոշեք իրականացնել այդ նպատակը մենա՞կ, ձեր ընտանիքի՞, թե՞ մի խումբ ընկերների հետ, հանձն առեք այն հաջորդ տասներկու շաբաթների ընթացքում:

Իմ անձնական անկոտրում կոչը

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. որոշե՛ք իրականացնել մի նպատակ, որտեղ մասնակցություն կունենան ձեր խմբակի բոլոր անդամները:

Օր 1. ԱՆՑՆԵԼ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐՋՆԱԳԻԾԸ

«Ես պատերազմել եմ բարի պատերազմը, ես ավարտել եմ ընթացքը, և ես հավատարիմ եմ մնացել»:

— Բ Տիմոթեոս 4.7, NLT

Կա մեծ տարբերություն սկսելու և ավարտելու միջև: Սկզբում մենք սովորաբար եռանդուն ենք, նախանձախնդիր և պատրաստ՝ հաղթահարելու ցանկացած խոչընդոտ: Հասնելով ավարտին՝ մենք հաճախ զգացմունքորեն և ֆիզիկապես սպառվում ենք: Պողոս առաքյալը բնավ բացառություն չէր: Սակայն նրա համար ընթացքի բարեհաջող ավարտն անչափ կարևոր էր: Չնայած բոլոր փորձանքներին՝ նա ասաց.

«Բայց **դրանցից ոչ մեկը չի ազդում ինձ վրա**. ո՛չ էլ թանկ եմ համարում իմ կյանքը, միայն թե կարողանամ *ավարտել իմ ընթացքն ուրախությամբ* և այն ծառայությունը, որ ստացել եմ [որը վստահված էր ինձ] Տեր Հիսուսից. հավատարիմ կերպով վկայեմ Աստծո շնորհքի (Նրա բարեհաճության, հոգևոր օրհնության և ողորմության, որին մենք չենք արժանացել) Բարի լուրը (Ավետարանը)»:

— Գործք 20.24, AMP

Զորավոր կերպով ընթացքն ավարտելը կարևոր էր նաև Հիսուսի համար: Նա ասաց. «Իմ սնուցումը գալիս է Աստծո կամքը կատարելուց, Ով ուղարկել է Ինձ, և Նրա աշխատանքն *ավարտելուց*» (Հովհաննես 4.34, NLT): Անմիջապես խաչը բարձրանալուց առաջ Նա աղոթեց. «Ես փառավորեցի Քեզ երկրի վրա: Ես *ավարտեցի* այն գործը, որ Դու տվել էիր Ինձ» (Հովհաննես 17.4, NKJV): Երբ Հիսուսն ավարտեց Իր աշխատանքը խաչի վրա, Նա աղաղակեց. «*Կատարվա՛ծ է*» (Հովհաննես 19.30):

Ի՞նչ սկզբունքներ դուք կարող եք սովորել Պողոսից ու մեր Տեր Հիսուսից և կիրառել դրանք ձեր կյանքում:

_____

_____

_____

Ինչպիսի՞ խոսք կուզեիք գրված լիներ ձեր տապանաքարի վրա: Ո՞ր արտահայտությունը կարող է ամփոփել ձեր ամբողջ կյանքը հենց հիմա: Եթե դուք բավարարված չեք ձեր կյանքի ներկա դրությամբ, ապա ինչպե՞ս պետք է ապրեք՝ այն փոխելու համար:

_____

_____

Կարդացե՛ք Եբրայեցիների 12.1-3-ը: Ինչպե՞ս կարող ենք բարեհաջող կերպով ավարտել մեր ընթացքը՝ *շարունակաբար կենտրոնանալով մեր առջև դրված ուրախության վրա*: Ինչպե՞ս կարող է այս հատվածը օգնել ձեզ, որ հատեք ձեր ընթացքի վերջնագիծը:

_____

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Ա Կորնթացիների 9.24-27
Ա Տիմոթեոս 6.11,12
Ժողովող 7.8

Օր 2. ՀԱՎԱՏՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

«Ստուգե՛ք ինքներդ ձեզ՝ համոզվելու համար, որ դուք հաստատ եք հավատքի մեջ: Մի՛ անցեք այս կյանքով՝ պարզապես հավատալով ամեն ինչին: Պարբերաբար ստուգումների՛ ենթարկեք ձեզ: Դուք պետք է անմիջական վկայություն ունենաք, որ Հիսուս Քրիստոսը ձեզանում է, ոչ թե միայն վստահեք ինչ-որ բանի, որ լսել եք: Ստուգե՛ք դա: Եթե չանցնեք այդ ստուգումը, ապա ինչ-որ բա՛ն ձեռնարկեք»:

— Բ Կորնթացիների 13.5, MSG

Եթե դուք անկոտրում կերպով քայլում եք Աստծո հետ, ապա ձեր կյանքում կլինի Նրա ներկայության և զորության վկայությունը: Դուք պետք է ստուգեք այն պտուղը, որ կա ձեր կյանքում: Սա լավագույն միջոցներից մեկն է, որով կարող եք համոզված լինել, որ աճում եք Քրիստոսի մեջ ու լճացած չեք: Երբ Նրա բնավորությունը ձևավորվում է ձեր կյանքում, դուք ճշմարիտ վկայություն ունեք, որ Հիսուսն ապրում է ձեզանում և գործում է ձեր միջոցով:

Ուշադի՛ր կարդացեք Գաղատացիների 5.19-23-ը և Եփեսացիների 5.8,9-ը: Ըստ այս հատվածների, որտեղ նկարագրվում են *մարմնի և Հոգու պտուղները*՝ ինչպիսի՞ պտուղ եք դուք տեսնում ձեր կյանքում:

_____
_____
_____
_____
_____

Համաձայն Հովհաննեսի 15.1-8-ում գրված Հիսուսի խոսքերի՝ ո՞րն է պարտադիր պահանջը Նրա բնավորության պտուղն ունենալու համար: Ի՞նչ է սա նշանակում անձամբ ձեզ համար:

_____
_____
_____
_____
_____

Արդյո՞ք Սուրբ Հոգին դրդում է փոփոխություն կատարել ձեր կյանքում: Եթե այո, ապա ինչպիսի՞ փոփոխություն:

_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հետագա ուսումնասիրության համար
Սաղմոս 1, Սաղմոս 92.12-15, Երեմիա 17.7,8, Մատթեոս 13.23, Մարկոս 4.20, Ղուկաս 8.15

Օր 3. ՀԱՍՏԱՏԵ՛Ք ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ

«Բարձրացրե՛ք ձեր հոգնած ձեռքերը և զորացրե՛ք ձեր դողդոջուն ծնկները: Շարունակե՛ք քայլել ուղիղ շավիղներով... Զգո՛ւյշ եղեք, որպեսզի ետ չդառնաք Աստծո շնորհից»:

— Եբրայեցիների 12.12-15, TEV

Երբ ինչ-որ մեկը ետ է դառնում Աստծո շնորհից, ապա դա հստակ նշան է, որ նա նահանջել է: Այդ մարդն այլևս ջանք չի գործադրում Տիրոջ հետ շփվելիս՝ շարժվի առաջ, թե՝ վեր:

Կա՛նգ առեք և մտածե՛ք. որո՞նք են այն երկու ամենալուրջ հարցերը ձեր կյանքում, որոնք նահանջելու նախանշաններ եք համարում և, որոնք ներկայումս հյուծում և հուսահատեցնում են ձեզ՝ կլանելով թե՛ ձեր ուրախությունը, թե՛ ուժերը: Արդյո՞ք խոսքը ֆինանսական ճնշումների մասին է: Միգուցե խնդիրներ ունեք առողջությա՞ն հետ, թե՞ ունեք խաթարված փոխհարաբերություններ: Անկախ ձեր իրավիճակից՝ Աստծո Խոսքը կարող է հեղափոխել ձեր պատկերացումները: Այն կզորացնի ձեզ, որպեսզի հաստատ կանգնեք և կարգավորեք բոլոր խնդիրները, որոնց դեմ պայքարում եք:

Օգտագործելով Աստվածաշնչի համաբարբառ՝ *փնտրե՛ք աստվածաշնչյան խոսքեր* այն հարցերի վերաբերյալ, որոնց դեմ պայքարում եք, կամ՝ փնտրեք առցանց՝ օգտագործելով այնպիսի կայքեր, ինչպես օրինակ www.biblegateway.com-ը: Ուսումնասիրեք այն խոսքերը, որ կգտնեք տարբեր թարգմանություններից: Դուրս գրեք նվազագույնը երկու սուրբգրային հատված, որոնք նոր կյանք են ներշնչում ձեզ և ոգևորում առաջ շարժվելու համար, մտորե՛ք դրանց շուրջ:

_____ ուժասպառ է անում ինձ և դրդում նահանջել: Բայց Աստված ասում է... _____

_____

_____

_____

_____

_____

_____ ուժասպառ է անում ինձ և դրդում նահանջել: Բայց Աստված ասում է... _____

_____

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Ահա թեմատիկ որոնման որոշ օրինակներ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ	ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Բ Կորնթացիների 9.8-12, Մաղաքիա 3.10, Առակաց 3.9,10, Ղուկաս 6.38, Փիլիպեցիների 4.19	Եսայի 53.5, Ա Պետրոս 2.24, Սաղմոս 107.20, Ելից 23.25,26, Առակաց 4.20-22	Սաղմոս 133.1-3, Եփեսացիների 4.2,3, Ա Կորնթացիների 1.10, Հռոմեացիների 12.18-21, Ա Պետրոս 3.8-11

Օր 4. ԹՇՆԱՄԻՆ ՊԱՐՏՎԱԾ Է

«Այս նպատակով Աստծո Որդին հայտնվեց, որ քանդի սատանայի գործերը»:
— Ա Հովհաննես 3.8, NKJV

Քրիստոսի հաղթանակը խաչի վրա անհամար օրհնություններ է տալիս մեզ: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ այդ օրհնություններից մեկը՝ մեր թշնամու պարտությունն է: Հիսուսի մահվան և հարության միջոցով սատանան ու նրա դևերը ջախջախիչ պարտություն կրեցին: Թշնամին պարտվեց. սա արդեն կատարված փաստ է: Մենք չենք սպասում նրա վերահաս պարտությանը. այդ պարտությունն արդեն տեղի է ունեցել: Լինելով հավատացյալ՝ մենք չենք պատերազմում հաղթանակի *համար*. մենք պատերազմում ենք՝ *որպես* հաղթողներ:

Ավետարանիչ և գրող Թի Էլ Օսբորնը հայտնի էր ողջ աշխարհով, քանի որ նրա ծառայության շնորհիվ Աստծո հրաշագործ և բժշկարար զորությունը հպվել էր անթիվ մարդկանց: Նա ասել է.

> «Հիսուսի հաղթանակը մեր հաղթանակն է: Նրա նվաճումը մեր նվաճումն է: Նա չարեց ոչինչ Իր համար. Նա արեց ամեն ինչ մեզ համար: Նա պարտության մատնեց սատանային մեզ համար: Նա խլեց նրա զորությունը մեզ համար: Նա ոչնչացրեց նրա գործերը մեզ համար: Նա ջախջախեց սատանային մեզ համար:
> …Երբ Հիսուսը հարություն առավ մեռելներից, սատանան հավիտյան պարտվեց: Մշտապես մտածե՛ք սատանայի մասին՝ որպես հավիտյան պարտված թշնամու: Մտապահե՛ք, որ Հիսուսն ունի բացարձակ իշխանություն սատանայի վրա, ինչպես և դուք՝ Հիսուսի անունով»[5]:

Մի պահ մտորե՛ք այն ճշմարտությունների շուրջ, որ գրված են այս խոսքերում.

Կողոսացիների 2.14,15 • Եբրայեցիների 2.14,15 և Ա Հովհաննես 5.18 • Հայտնություն 12.11
Կարդացե՛ք այս խոսքերը տարբեր թարգմանություններով և մտորե՛ք դրանց շուրջ:

Ի՞նչ կատարվեց թշնամու հետ Հիսուսի կատարած աշխատանքի շնորհիվ: Ուրիշ ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ այս խոսքերում:

_____
_____
_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Հովհաննես 12.31,32, 16.33, Գաղատացիների 3.13, Կողոսացիների 1.13,14

«Թշնամին պարտված է» գիտելիքը ինչպե՞ս է խրախուսում ձեզ և փոխում ձեր պատկերացումները:

_____
_____
_____

Հետագա ուսումնասիրության համար
Քրիստոսի հաղթանակը նաև կործանեց մեղքի զորությունը: Ուշադի՛ր մտորեք այս հատվածների շուրջ:
Հռոմեացիների 6.2-8, 8.1-3, Գաղատացիների 2.20, 5.24, Կողոսացիների 3.3, Ա Պետրոս 2.24

Օր 5. ԻՆՉԻ՞Ն ԵՔ ՀԱՎԱՏՈՒՄ

«Նա դիպչեց նրանց աչքերին և ասաց. «Ինչին որ հավատում եք, թող կատարվի ձեզ համար»»:

— Մատթեոս 9.29, GW

Աստվածաշնչում շատ հրաշալի խոստումներ կան, սակայն եթե մեր սրտերը չեն ընդունում դրանք հավատքով, ապա մնում են ընդամենը էջի վրա տպված բառեր: Մենք երբեք չենք բարձրանա ավելի, քան մեր հավատքի մակարդակն է: Մի պահ կա՛նգ առ և մտածի՛ր այս արտահայտության մասին. *մենք երբեք չենք բարձրանա ավելի, քան մեր հավատքի մակարդակն է*: Սա Առակաց 23.7-ի սկզբունքն է. «Որովհետև ինչպես **մտածում է** իր սրտում, այնպես էլ նա է» (NKJV): Մենք դառնում ենք այն, ինչ մտածում ենք:

Հեղինակ և հովիվ Մարկ Բեթերսոնը նորովի է բացատրում հավատքի զորությունը և ցույց է տալիս, թե ի՞նչ է անհրաժեշտ մեր հավատքը ձևափոխելու համար: Նա պնդում է.

«Վարժվելն ընդամենը սովորելու կեսն է: Մյուս կեսը ետ վարժվելն է: …Հավատալ նշանակում է ետ վարժվել անհիմաստ հոգսերից և սխալ համոզմունքներից, որոնք պահում են մեզ գերության մեջ: Սա շատ ավելի բարդ է, քան պարզապես վարքը փոխելը: Հավատքի ձևավորումը մեծապես ազդում է մեր մտածելու գործընթացի վրա: Հավատքը նման է մարդկային ուղեղի «հաղորդալարերը փոխելուն»: Նյարդաբանորեն մենք հենց սա ենք անում՝ Աստվածաշունչն ուսումնասիրելիս: Մենք բառացիորեն կատարելագործում ենք մեր միտքը՝ ներբեռնելով Քրիստոսի միտքը:

Ինչպես համակարգչի կոշտ սկավառակը վերամիացման (դեֆրագմենտացիայի) կարիք ունի՝ աշխատունակությունը բարելավելու համար, այնպես էլ մեր մտքերը պետք է վերամիացվեն: Իսկ ինչպե՞ս ենք վերամիացնում մեր հավատքը: Ինչպե՞ս ենք նորոգում մեր մտքերը: Ինչպե՞ս ենք դուրս գալիս այն մտավոր փոսից, որի մեջ ընկել ենք: Մեր միտքը կատարելագործելու միակ միջոցը Սուրբ գիրքը ներբեռնելն է»[6]:

Ուրեմն ինչի՞ն եք դուք հավատում: Դուք հավատո՞ւմ եք, որ *Քրիստոսն եք* երկրի վրա: Դուք հավատո՞ւմ եք, որ *մեկ եք Նրա հետ*: Դուք հավատո՞ւմ եք, որ Նրա աստվածային բնության հաղորդակիցն եք, որ Նրա գերբնական ԴՆԹ-ն դրված է ձեր հոգու հյուսվածքների մեջ: Դուք հավատո՞ւմ եք, որ *թշնամին պարտված է*, և ողջ իշխանությունը տրվել է ձեզ Քրիստոսի միջոցով՝ *այս կյանքում իշխելու համար*: Ինչին որ հավատում եք, դա էլ կկատարվի ձեզ կյանքում:

Բոլոր ճշմարտություններից, որոնց մասին խոսվեց այս դասի ընթացքում, ո՞րն էր առավել անսովոր ձեզ համար: Ինչո՞ւ:

_____

_____

_____

Աղոթե՛ք և հանձնե՛ք այս բաներն Աստծուն: Խնդրե՛ք Նրա շնորհքը՝ հավատալու համար, որ Նրա խոսքերը ճշմարիտ են:

Ուշադի՛ր կարդացեք Հռոմեացիների 10.17, 12.2, Եբրայեցիների 4.12 և Կողոսացիների 3.16 խոսքերը: Համաձայն այս խոսքերի՝ ի՞նչ է պետք անել ձեր հավատքը զորացնելու համար:

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Մատթեոս 21.18-22, Մարկոս 11.20-25, Հովհաննես 6.28,29, Եբրայեցիների 11.1,6, Հռոմեացիների 10.10,11

Օր 6. ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ ԱՆՀՆԱՐԻՆ ՈՉԻՆՉ ՉԿԱ

«Ես Տե՛ր եմ: Չկա ոչինչ, որ դժվար լինի Ինձ համար»:

— Ծննդոց 18.14, CEV

Անկոտրում հավատացյալի կյանքում անհնարինը հնարավոր կդառնա: Երբ համառորեն ու սրտանց հավատանք ու վստահենք Տիրոջը և դադարենք վստահել մեր մարմնին, մեր կյանքում հրաշքներ կկատարվեն:

Էնն Գրեհեմ Լոտսը՝ ավետարանիչ Բիլլի Գրեհեմի դուստրը, ասել է. «Երբ մենք հայտնվում ենք անելանելի դրության մեջ, մեր կյանքից պետք է հեռանա ողջ ինքնավստահությունը, մենք պետք է ամբողջովին կախված լինենք Նրանից ամեն ինչի համար»[7]: Շարունակելով այս դասընթացը և անձնատուր լինելով Աստծուն՝ դուք կսովորեք, թե ինչպես հաղթահարել այն, ինչ վեր է ձեր մարդկային կարողությունից և ականատես լինել, թե ինչպես է անհնարինը հնարավոր դառնում:

Մտորե՛ք այս զորավոր խոստումների շուրջ, որոնք գրված են Աստծո Խոսքում.

«Հիսուսը նայեց նրանց և ասաց. «Մարդկանց համար դա անհնար է, բայց Աստծո համար ամեն բան հնարավոր է»»:

— Մատթեոս 19.26, NIV

«Ի՞նչ նկատի ունես՝ ասելով. «Եթե ես կարող եմ,- հարցրեց Հիսուսը:- Ամեն ինչ հնարավոր է, եթե մարդը հավատում է»»:

— Մարկոս 9.22, NLT

«Հիսուսը նայեց նրանց սևեռուն հայացքով և ասաց. «Մարդկորեն խոսելով՝ դա անհնար է, բայց ոչ՝ Աստծո համար: Ամեն ինչ հնարավոր է Աստծո համար»»:

— Մարկոս 10.27, NLT

«Որովհետև Աստծո համար անհնարին ոչինչ չկա և ոչ մի խոսք Աստծուց չի գա առանց զորության, ինչպես և անհնարին է, որ այն չկատարվի»:

— Ղուկաս 1.37, AMP

Ի՞նչ են արթնացնում այս խոսքերը ձեր հոգու մեջ, երբ դուք մտորում եք դրանց շուրջ:

_____

_____

_____

Միգուցե դուք ինչ-որ ցանկություն ունեք և համոզված եք, որ դա Աստծո կամքն է, սակայն մտածում կամ զգում եք, որ դա անհնար է: Ի՞նչ եք դուք ցանկանում:

_____

_____

_____

_____

Աղոթք.

Հա՛յր, ես ցանկանում եմ միայն Քեզ և այլևս ոչինչ: Ես ապաշխարում եմ այս աշխարհին հարելու և դրա հոսանքով գնալու համար: Զորացրո՛ւ ինձ, որպեսզի անտեսեմ այս աշխարհի աղաղակներն ու թշնամու ձայնը իմ մարմնավոր բնության մեջ: Այս դասընթացի ժամանակ ստեղծի՛ր իմ մեջ անկոտրում սիրտ՝ անվեհեր, համարձակ և վճռական հոգի, որը թույլ չի տա, որպեսզի որևէ բան խանգարի՝ կատարելու համար այն հանձնարարությունները, որ Դու տալիս ես ինձ: Ձևավորի՛ր ինձանում ամուր հոգի՝ զորավոր հավատքի մեջ, և Քեզ արագորեն հնազանդվող սիրտ, Հիսուսի անունով: Ամե՛ն:

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Քրիստոնեական կյանքը նման է մրցավազքի կամ ընթացքի: Այն ոչ թե կարճատև մրցավազք է, այլ երկարատև մարաթոն: Եթե մենք ցանկանում ենք արդյունավետ կերպով առաջ գնալ և ավարտել այն ընթացքը, որ Աստված դրել է մեր առջև, պետք է զարգացնենք անկոտրում հոգի, որը երբեք չի նահանջում, այլ՝ համառորեն դիմանում է մինչև վերջ: Ինչպե՞ս ենք ապրում անկոտրում կերպով և իշխում կյանքում թշնամու բոլոր հակառակությունների վրա. Աստծո առատ շնորհքի միջոցով, որը տրվել է մեզ Քրիստոսում:

(1) Չարլզ Ռ. Սուինդոլ. *«Զորանալ կյանքի տարբեր շրջանում»* (Փորթլենդ՝ Օրեգոն. «Multnomah Press», 1983թ.) էջ 135: (2) Քեննեթ Հեգին. *«Հավատացյալի իշխանությունը»* (Տալսա՝ Օկլահոմա. «RHEMA Bible Church», 2007թ.) էջ 39: (3) Վոչման Նի. *«Հոգևոր իշխանություն»* (Նյու Յորք, ՆՅ. «Christian Fellowship Publishers Inc.», 1972թ.) էջեր 76,77: (4) Չարլզ Սփերջեն. «Ողջ շնորհքը» (Նյու Քենսիգթոն՝ Փենսիլվանիա. «Whitaker House», 1981թ.) էջեր 162,163: (5) Թի էլ Օսբորն. *«Հիվանդների բժշկությունը»* (Տալսա՝ Օկլահոմա, «Harrison House Inc.», 1992թ.) էջ 111: (6) Մարկ Բեթերսոն. *«Փոսի մեջ՝ առյուծի հետ ծյունոտ օրը»* (Կոլորադո Սփրինգս՝ Կոլորադո. «Multnomah Books», 2006թ.) էջեր 44-46: (7) *«Արագ ընդմիջում. հինգրոպեանոց ուղերձներ՝ ձեր օրը սկսելու համար»* («Parable», 2007թ.), Օր 66:

Նշումներ

Նշումներ

«Բոլորը, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ձրիաբար արդարանում Նրա առջև, ***կիշխեն կյանքում*** *Քրիստոսի միջոցով»:*

— Հռոմեացիների 5.17, TEV

Գլուխ 2

ՁՈՐԱՑՎԱԾ՝ ԻՇԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 2-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 2-րդ և 3-րդ գլուխներից:

ԱՆՉԱՓԵԼԻ •ԱՆՍԱՀՄԱՆ • ԳԵՐԱԶԱՆՑ

«Անչափելի» նշանակում է «մի բան, որ անկարող է չափվել, անսահման, չափելու կարողությունից վեր»: *«Անսահման»* նշանակում է «առանց սահմանների, չսահմանափակված, անզուսպ»: «Գերազանց» նշանակում է «անցնել բոլորից, լինել ամենաորակյալը, լինել հոյակապ՝ առանձնանալու աստիճան»[1]:Այս բառերի **հոմանիշներն** են՝ *անվերջ, ահռելի* և *անսպառ*: Բոլոր բառերը նկարագրում են Աստծո զորությունը՝ Նրա շնորհքը, որը գործում է ձեր **մեջ** և ձեզ **համար**, որ հավատում եք (տե՛ս Եփես. 1.19):

1. Որպես հավատացյալ՝ Աստծո անսահման զորությունը մշտապես հասանելի է ձեզ: Այդ զորությունն Աստծո *շնորհքն* է. Սուրբ Հոգին, Ով ապրում է ձեր մեջ, այդ զորության աղբյուրն է: Կարո՞ղ եք հիշել գոնե մի դեպք, երբ Աստծո գերազանց զորությունը գործել է հօգուտ ձեզ: Նկարագրե՛ք, թե ինչ է տեղի ունեցել: Ներկայումս ո՞ր իրավիճակում դուք ունեք Աստծո անչափելի մեծության կարիքը: Ինչպե՞ս են անցյալում ունեցած հաղթանակների մասին հուշերը զորացնում ձեր հավատքը:

Աստծո զորությունը գործեց հօգուտ ինձ, երբ...

_____

_____

_____

_____

Ներկայումս ես ունեմ Աստծո անսահման զորության կարիքը...

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Սաղմոս 77.11-15

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մենք Քրիստոսի մասն ենք: Այդ իսկ պատճառով՝ Նրա ամբողջական զորությունը պատկանում է մեզ: «Ինչպես Նա է, այնպես էլ մենք՝ այս աշխարհում» (Ա Հովհաննես 4.17): Թո՛ւյլ տվեք, որպեսզի այս ճշմարտությունը թափանցի ձեր սրտի խորքը:

Խ 2. Մենք մեկ ենք դառնում Քրիստոսի հետ՝ հաղորդակցվելով Նրա մահվանը և հարությանը: Պողոսը շարունակաբար խոսում է այս սկզբունքի մասին ամբողջ Նոր կտակարանում: Ուշադի՛ր կարդացեք այս հատվածը և նկարագրե՛ք, թե ինչ է այն հաղորդում ձեզ Քրիստոսի մեջ մեկ լինելու մասին:

«Ձեր հին բնությունը, որը սիրում էր մեղքը, թաղվեց Նրա հետ մկրտությամբ, երբ Նա մահացավ, իսկ երբ Հայր Աստված փառավոր զորությամբ կրկին կյանքի կոչեց Նրան, ձեզ տրվեց Նրա հրաշալի նոր կյանքը՝ վայելելու համար: Որովհետև դուք դարձաք Նրա մասը, այնպես որ, դուք, այսպես ասած, մահացաք Նրա հետ, երբ Նա մահացավ. և դուք ապրում եք Նրա նոր կյանքով և հարություն կառնեք, ինչպես և Նա հարություն առավ:

Ձեր հին չար ցանկությունները գամվեցին խաչին Նրա հետ. այն մասը ձեր մեջ, որ սիրում է մեղանչել, ջախջախվեց և մահացու վիրավորվեց, այնպես որ ձեր մարմինը, որ սիրում է մեղքը, այլևս չի վերահսկվում մեղքով, այլևս կարիք չունի լինել մեղքի ստրուկը, որովհետև երբ դուք մահացաք մեղքի համար, դուք ազատվեցիք ողջ գայթակղությունից և մեղքի իշխանությունից, որ կար ձեր կյանքում:

Այնպես որ դիտարկե՛ք ձեր հին մեղավոր բնությունը՝ որպես մահացած և անընկալունակ մեղք, և փոխարենը կենդանի եղեք Աստծո համար, զգոն եղեք Նրա հանդեպ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով»:

— Հռոմեացիների 6.4-7, 11, TLB

_____
_____
_____
_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Գաղատացների 5.24,25, Կողոսացիների 2.11-14, 3.3

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մենք Քրիստոսի մարմինն ենք: Այն պահին, երբ ընկղմվեցինք Նրա մեջ, մեր կյանքը փոխվեց: Մենք մահացանք Նրա հետ, թաղվեցինք Նրա հետ և հարություն առանք Նրա հետ: Եվ որպես բոլորովին նոր արարածներ՝ մենք ապրում ենք այնպես, ինչպես Նա: «Ինչպես Նա է, այնպես էլ մենք՝ այս աշխարհում»: Մենք *Քրիստոսո՛ւմ* ենք: Մենք միասին *Քրիստո՛սն* ենք: Մենք մեկ ենք Նրա հետ:

«Ես խաչված եմ Քրիստոսի հետ [Նրանում ես հաղորդակից եմ Նրա խաչելությանը]. այլևս ես չէ, որ ապրում եմ, այլ Քրիստոսը (Մեսիան) ապրում է իմ մեջ. և այն կյանքը, որ ես այժմ ապրում եմ մարմնում, ես ապրում եմ Աստծո Որդու հանդեպ ունեցած հավատքով (հարելով, հենվելով և կատարելապես վստահելով), Ով սիրեց ինձ և զոհեց Իրեն ինձ համար»:

— Գաղատացիների 2.20, AMP

Խ 3. Բացի այն, որ մենք խաչված ենք Քրիստոսի հետ՝ մենք նույնպես հարություն ենք առել Նրա հետ և նստած ենք Երկնքում: Ուշադի՛ր մտորեք Հիսուսի ազդեցիկ խոսքերի շուրջ Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում, ինչպես նաև այն հայտարարության շուրջ, որ Աստված անում է Եփեսացիների թղթում Պողոս առաքյալի միջոցով: Այս խոսքերի լույսի ներքո ինչպե՞ս դուք կնկարագրեիք այն **իշխանությունը**, որ ունեք՝ որպես հավատացյալ: Դուք տեսնո՞ւմ եք այնպիսի բան, որ մինչև այժմ չէիք տեսնում:

«Ողջ իշխանությունը տրվեց Ինձ երկնքում և երկրի վրա: Ուրեմն, գնացե՛ք և աշակերտներ պատրաստեք բոլոր ազգերից՝ մկրտելով նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, սովորեցնելով նրանց պահել այն ամենը, ինչ պատվիրել եմ ձեզ. և ահա, ես ձեզ հետ եմ միշտ, նույնիսկ մինչև այս աշխարհի վերջը»:

— Մատթեոս 28.18-20, NKJV

«Ահա՛ ես տվել եմ ձեզ իշխանություն և զորություն [ֆիզիկական ու մտավոր ուժ և կարողություն] տրորել օձերին և կարիճներին և թշնամու ողջ զորության վրա [որ նա ունի], և ոչինչ որևէ կերպով չի վնասի ձեզ»:

— Ղուկաս 10.19, AMP

«Եվ [Աստված] հարություն տվեց մեզ Նրա հետ միասին և նստեցրեց մեզ միասին [տալով մեզ միացյալ դիրք Նրա հետ] երկնային ոլորտում [շնորհիվ այն բանի, որ մենք գտնվում ենք] Քրիստոս Հիսուսի (Մեսիայի՝ Օծյալի) մեջ»:

— Եփեսացիների 2.6, AMP

«[Աստված] հարություն տվեց Նրան մեռելներից և նստեցրեց Նրան Իր [սեփական] աջ կողմը երկնային [վայրերում]՝ շատ ավելի վեր բոլոր իշխանություններից, պետություններից, զորություններից և տերություններից և յուրաքանչյուր անունից, որ անվանվում է [վեր յուրաքանչյուր տիտղոսից, որ կարող է շնորհվել] ոչ միայն այս ժամանակաշրջանում և աշխարհում, այլ նույնպես գալիք ժամանակաշրջանում և աշխարհում»:

— Եփեսացիների 1.20,21, AMP

[Քառակուսի փակագծերում գրված բառերը պարզեցնելու համար են]:

_____
_____
_____
_____
_____
_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Մարկոս 6.7, Ղուկաս 9.1-6

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Իշխանությունը զորություն կամ իրավունք է՝ կատարել որոշ բաներ առանց արգելքների հանդիպելու: Այն հիմնված է օրենքի որևէ տեսակի վրա՝ աստվածային, քաղաքացիական կամ բարոյական: Գերագույն իշխանությունը պատկանում է միայն Աստծուն (Հռոմեացիների 13.1), այդ իսկ պատճառով ողջ մարդկային իշխանությունը սկիզբ է առնում Նրանից:

Աստծո իշխանությունն անվերապահ և բացարձակ է (Սաղմոս 29.10, Առակաց 21.30, Եսայի 40): Նրանից է սկիզբ առնում կառավարությունների (Հովհաննես 19.10,11, Հռոմեացիների 13.1), ծնողների (Եփեսացիների 6.1-4), գործատուների (Եփեսացիների 6.5-9), եկեղեցու առաջնորդների (Եբրայեցիների 13.7,17) և այլ դիրքեր զբաղեցնող մարդկանց իշխանությունը:

Քանի որ Հիսուսն Աստված է, Նրա իշխանությունը պարզապես սկիզբ չի առնում Հոր իշխանությունից. այն ներհատուկ է: Նրա *անսահման իշխանությունը* մեզ՝ Իր աշակերտներին տրված հանձնարարականի հիմքն է (Մարկոս 6.7, Մատթեոս 28.18-20) [2]:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մենք պետք է հաղթահարենք բոլոր հակառակությունները՝ դարձնելով հանգամանքները հարմար կյանքին ու աստվածապաշտությանը: Մենք այն մարդիկ ենք, ովքեր պետք է իշխեն այս երկրի վրա: Եթե մեր անբարենպաստ հանգամանքները չեն փոխվում, ապա պատճառն այն է, որ մենք զիջել ենք մեր իշխանությունը:

4. Մտածե՛ք մի պահ: Ի՞նչը կարող է ստիպել մեզ՝ Խ *զիջել մեր իշխանությունը՝* տանը, աշխատանքի վայրում կամ շրջապատում: Միգուցե այսօր ձեր կյանքում նման խոչընդոտներ կան: Եթե այդպես է, ապա ինչպե՞ս կարող է Աստծո շնորհքը զորացնել ձեզ՝ դրանք հաղթահարելու համար:

_____
_____
_____
_____
_____
_____

5. *Կյանքում իշխելու համար* մեզ անհրաժեշտ է Աստծո **շնորհքը**: Նախ՝ շնորհքն Աստծո ողորմած բարեհաճությունն է, որին մենք չենք արժանացել: Այն մեղքերի ներում և փրկություն է տալիս մեզ: Կա՛նգ առ և անկեղծորեն պատասխանիր այս կարևորագույն հարցին.

Ինչպե՞ս եմ ես փրկվել՝ դառնալով ընդունելի, արդար ու սիրելի և ինչպե՞ս եմ ճիշտ փոխհարաբերություններ ձեռք բերել Աստծո հետ:

_____
_____
_____
_____
_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Եփեսացիների 1.7, 2.4,5,8,9, Գործք 15.11, Հռոմեացիների 11.5,6, Տիտոս 2.11

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Աստծո շնորհքը ձեր զորությունն է, ինչպես նաև ուրախությունը. և բնակվելով միայն դրա մեջ՝ կարող եք լիարժեքորեն վայելել ձեր փրկությունը: Ուրեմն, եղե՛ք ուժեղ այս շնորհքի մեջ. վերցրե՛ք այստեղից ձեր ուրախությունը և զգո՛ւյշ եղեք, որ չորոնեք այլ աղբյուրներ՝ թարմության, մխիթարության կամ սրբության համար: …Մշտապես հարեք Քրիստոսին և Նրա լիությանը այս շնորհքի համար»:

— Ֆ. Հորացիուս Բոնար[5]

ՇՆՈՐՀՔ

Հունարեն «շնորհք» բառը, որը բացառապես օգտագործվում է Նոր կտակարանում, «խարիս»-ն է: Ընդհանուր առմամբ՝ *շնորհք* նշանակում է «համակրանք, ողորմած սեր և բարեհաճություն, որին մենք արժանի չենք»: Սակայն շնորհքն ունի ևս մեկ հավասարազոր իմաստ՝ «**աստվածային զորություն**»[3]: Դոկտոր Ջեյմս Սթրոնգը, ով հարգարժան աստվածաբան էր և 35 տարի ներդրում է արել աստվածաշնչյան խոսքերի սպառիչ համաբարբառ կազմելու համար, ասել է, որ շնորհքը «աստվածային ազդեցությունն է սրտի վրա, որը դրսևորվում է մարդու կյանքում»[4]: Ըստ էության՝ շնորհքն *Աստծո ծրիաբար տրվող զորացումն է, որը կարողություն է տալիս մեզ գերազանցել մեր բնական կարողությունները:*

ԽՍ 6. Աստծո շնորհքը մեզ միայն փրկություն չի պարգևում, այլ նաև լցնում է անձամբ Քրիստոսի լիությամբ: Նրա աստվածային բնությունն ավանդվում է մեզ և է՛լ ավելանում Նրա հրաշալի Հոգու աշխատանքի միջոցով: Մտորե՛ք այս զորավոր խոսքերի շուրջ որոշ ժամանակ և նկարագրեք, թե ի՞նչ է նշանակում ստանալ Նրա շնորհքի լիությունը:

«Որովհետև Նրա լիությունից (առատությունից) մենք բոլորս ստացել ենք [բոլորս բաժին ենք ունեցել և բոլորիս տրվել է] շնորհք շնորհքի ետևից և հոգևոր օրհնություն հոգևոր օրհնության վրա, և նույնիսկ բարեհաճություն բարեհաճության վրա և պարգև [կիտված] պարգևի վրա»:

— Հովհաննես 1.16, AMP

«(Քրիստոսի) մարմինը՝ Նրա լիությունը, Ով լցնում է ամեն ինչ ամեն ինչում [որովհետև այդ (Քրիստոսի) մարմնում բնակվում է Նրա լրումը, Ով ամբողջական է դարձնում ամեն ինչ և Ով լցնում է ամեն ինչ ամենուր Իրենով]»:

— Եփեսացիների 1.23, AMP

«Որովհետև (*Քրիստոսում*) Աստվածության ամբողջ լիությունը շարունակաբար բնակվում է մարմնավոր կերպով [լիակատար դրսևորելով աստվածային բնությունը]: Եվ դուք Նրանում եք, լցված եք և մոտեցել եք կյանքի լիությանը [Քրիստոսում դուք նույնպես լցված եք Աստվածությամբ՝ Հորով, Որդիով և Սուրբ Հոգով, և լիակատար հոգևոր հասակ եք առնում]: Եվ Նա Գլուխն է ողջ իշխանության և պետության [ցանկացած հրեշտակային զորության և տերության]»:

— Կողոսացիների 2.9,10, AMP

(Շեղագիր բառերը փակագծերում ավելացված են պարզեցնելու համար):

Ստանալ Քրիստոսի լիությունը նշանակում է...

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ԽՍ 7. Հռոմեացիների 5.2-ում գրված է, որ *հավատքով ենք մտնում շնորհքի մեջ, որում մենք կանգնած ենք* (NKJV): Ուշադի՛ր մտորեք այս սուրբգրային խոստումների շուրջ, որպեսզի պարզեք, թե ինչպես ենք մենք ստանում Աստծո շնորհքը: Ինչի՞ց պետք է զգուշանանք, որպեսզի շնորհքի հոսքը չդադարի:

«Բայց Նա տալիս է մեզ ավելի ու ավելի շնորհք (Սուրբ Հոգու զորությունը՝ լիարժեք կերպով հակառակվելու այս և մնացած բոլոր չարիքներին):

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Բոլոր ճշմարիտ հավատացյալները ստանում են Քրիստոսի լիությունից: Նույնիսկ լավագույն և մեծագույն սրբերը չեն կարող ապրել առանց Նրա, իսկ ամենաթույլերը կարող են ապրել Նրանով: Այս ճշմարտությունը բացառում է հպարտ պարծենկոտությունը, քանի որ մենք չունենք ոչինչ, իսկ այն, ինչ ունենք, ստացել ենք, և սաստում է շփոթեցնող վախերը, քանի որ մենք ոչինչ չենք ցանկանում, բայց կարող ենք ստանալ այն, ինչ ցանկանում ենք: Ամենը, ինչ մենք ստանում ենք Քրիստոսից, ամփոփված է մեկ բառով՝ շնորհք: Այս պարգևն այնքա՜ն մեծ է, այնքա՜ն հարուստ, այնքա՜ն անգին»:

— Մեթյու Հենրի[6]

Ահա թե ինչու է Նա ասում, որ Աստված հակառակ է կանգնում հպարտներին և ամբարտավաններին, բայց [շարունակաբար] շնորհք է տալիս հեզերին (նրանց, ովքեր բավականին խոնարհ են այն ընդունելու համար)»:

— Հակոբոս 4.6, AMP

«Աստված հակառակվում է հպարտներին, բայց շնորհք է տալիս խոնարհներին»:

— Ա Պետրոս 5.5, NIV

«Թո՛ղ Աստված ավելի ու ավելի շնորհք և խաղաղություն տա ձեզ, մինչ դուք աճում եք Աստծո և մեր Տեր Հիսուսի գիտության մեջ: Իր աստվածային զորությամբ *Աստված տվել է մեզ ամենը, ինչի կարիքն ունենք աստվածապաշտ կյանքով ապրելու համար*: Մենք ստացել ենք այս ամենը՝ ճանաչելով Նրան, Ով կանչել է մեզ Իր մոտ Իր զարմանալի շնորհքի և գերազանցության միջոցով»:

— Բ Պետրոս 1.2,3, NLT

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Բ Կորնթացիների 12.9, Բ Տիմոթեոս 2.1

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Աղոթքն Աստծո շնորհքը ստանալու վարժանք է: Մի՛ ասեք. «Ես կդիմանամ այնքան, մինչև դուրս կգամ այս իրավիճակից և այդ ժամանակ նոր կաղոթեմ»: Աղոթե՛ք հիմա. մոտեցեք Աստծո շնորհքին այն ժամանակ, երբ կարիք ունեք: Աղոթքն ամենագործնական քայլն է, այն նվիրվածության ակամա արտացոլում չէ: Աղոթքը... գործողություն է, որով մենք սովորում ենք ստանալ Աստծո շնորհքը»:

— Օսվալդ Չեմբերս[7]

8. Աստծո զորացնող շնորհքը կարողության ամենակիրառելի աղբյուրն է, որն ընդունում է այն ամենի ձևը, ինչի կարիքը մենք ունենք: Բոլոր փականքները բացող բանալու պես այն բացում է Աստծո բոլոր օրհնությունների դուռը, որոնց թվում են իմաստությունը, բժշկությունը, առաջնորդությունը, ստեղծարարությունը և հրաշագործ զորությունը: Կա՛նգ առեք և մտածե՛ք. ի՞նչ կարիք ունեք դուք և ձեր ընտանիքը հենց հիմա, որ Աստծո շնորհքը կարող է հոգալ:

Աստծո շնորհքը պե՛տք է ինձ...

1. _____
_____
2. _____
_____
3. _____
_____

Աստծո շնորհքը պե՛տք է իմ ամուսնուն/կնոջը/երեխաներին...

1. _____
_____
2. _____
_____
3. _____
_____

Լռությամբ եկե՛ք Տիրոջ առջև և խնդրե՛ք Նրա շնորհքն այս մասնավոր կարիքները հոգալու համար: Փնտրե՛ք Նրա Խոսքում այն խոստումները, որոնք վերաբերում են սրանց: Մտորե՛ք Նրա խոստումների շուրջ և աղոթե՛ք, որ դրանք կատարվեն ձեր կյանքում: Դրանից հետո կտեսնեք, թե ինչպես է Նա պատասխանելու ձեր աղոթքներին: Ստանալով պատասխանը՝ գրի՛ առեք, թե ինչպես դա տեղի ունեցավ, որպեսզի կարողանաք հիշել և կիսվել այլ մարդկանց հետ:

«Ես ցանկանում եմ, որ դուք անեք հետևյալը. գտե՛ք հանդարտ, առանձին վայր, որ չգայթակղվեք ու դերախաղ չանեք Աստծո առջև: Եղե՛ք այդտեղ այնքան պարզ և անկեղծ, որքան կարող եք: Ձեր ուշադրությունը ձեզանից կուղղեք Աստծուն, և դուք կսկսեք զգալ Նրա շնորհքը: Աշխարհը լի է, այսպես կոչված, աղոթքի պատերազմողներով, ովքեր անտեղյակ են աղոթքից: Նրանք լցված են բանաձևերով, ծրագրերով, խորհուրդներով և առևտրական մեթոդներով, որպեսզի ստանան Աստծուց այն, ինչ ցանկանում են: Մի՛ հետևեք այդ անհեթեթությանը: Դուք մոտենում եք ձեր Հորը, և Նա ձեզանից լավ գիտի, թե ինչի կարիք ունեք: Իմանալով, որ Աստված այսպես սիրում է ձեզ, դուք կարող եք շատ հասարակ աղոթել»:

— Մատթեոս 6.6-8, MSG

9. Պարզ երևում է, թե ինչպես էր Աստծո շնորհքը գործում ու դրսևորվում Ստեփանոսի, Պողոսի և Անտիոքի եկեղեցու հավատացյալների կյանքում (տե՛ս Գործք 6.8,11.22,23,19.11): Ինչպիսի՞ վկայություններ ունեք, որ Աստծո շնորհքը գործում է ձեր կյանքում: Հարցրե՛ք ձեր մտերիմներին՝ իմանալու համար, թե ինչ են նրանք տեսնում:

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Ա Պետրոս 4.10,11

ԽՍ 10. Աֆրիկյան ցեղն անգնահատելի նվեր էր ստացել, սակայն չօգտագործեց այն, քանի որ ցեղաբնակները չիմացան դրա գլխավոր գործառույթը: Շնորհքի գլխավոր գործառույթը **զորացումն** է, որը կարողություն է տալիս մեզ՝ գերազանցել մեր բնական կարողությունները: Արդյո՞ք այս դասից հետո դուք փոխեցիք ձեր կարծիքը շնորհքի մասին: Ինչպիսի՞ ճշմարտություն(ներ) Սուրբ Հոգին օգտագործեց՝ բացատրելու համար, թե իրականում ինչ է նշանակում շնորհքը:

_____

_____

_____

_____

_____

Աղոթք կորայման համար

Հայր, թո՛ղ Քրիստոսն իմ հավատքով [իրականում] բնակվի Իմ սրտում (բնակություն հաստատի, դարձնի Իր մշտական տունը): Թո՛ղ որ ես խորապես արմատացած լինեմ սիրո մեջ և հաստատ հիմնված՝ սիրո վրա, որպեսզի զորություն ունենամ և ուժեղ լինեմ, որ ըմբռնեմ և հասկանամ բոլոր սուրբերի հետ [Աստծո նվիրված ժողովրդի հետ այդ սերը], թե ինչ է [դրա] լայնությունը և երկարությունը և բարձրությունը և խորությունը:

Թո՛ղ որ ես իսկապես ճանաչեմ [գործնականորեն, փորձառության միջոցով, անձամբ ինձ համար] Քրիստոսի սերը, որը շատ ավելի գերազանցում է սովորական գիտելիքը [առանց փորձառության]: Թո՛ղ որ ես լցվեմ [ողջ իմ էությամբ] Քո ամբողջական լիությամբ [թող որ ունենամ Քո աստվածային ներկայության ամենաառատ բաժինը և դառնամ այնպիսի մարմին, որն ամբողջովին լցված ու հեղեղված է անձամբ Աստծով], Հիսուսի անունով: Ամե՛ն:

Անձնական աղոթք՝ ըստ Եփեսացիների 3.17-19-ի, AMP:

Ծարաթական

ԿՈՉ

Նոր հայտնությունը յուրացնելու լավագույն ձևերից մեկը՝ այն ինչ-որ մեկին սովորեցնելն է: Հիշե՛ք մեկ կամ երկու հոգու, ովքեր չեն մասնակցում այս դասընթացին, սակայն իրենց ուժերով ջանում են իշխել կյանքի որևէ բնագավառում: Հրավիրե՛ք նրանց սուրճի, գնումներ կատարելու կամ ընթրիքի և պատմեք այն, ինչ իմացաք Աստծո շնորհքի մասին: Սովորեցրե՛ք, որ շնորհքն Աստծո զորացումն է այն իրավիճակում, որում նրանք գտնվում են:

Օր 1. ՈՂՋ ԵՐԿԻՆՔԸ ԿԱՆԳՆԱԾ Է ՁԵՐ ԹԻԿՈՒՆՔԻՆ

«Ի՞նչ են բոլոր հրեշտակները. նրանք հոգիներ են, որոնք ուղարկված են՝ ծառայելու նրանց, ովքեր պետք է ընդունեն փրկությունը»:

— Եբրայեցիների 1.14, GW

Որպես հավատացյալներ՝ մենք փրկված և *զորացված* ենք շնորհքով, որպեսզի *իշխենք այս կյանքում*, այսինքն՝ դրսևորենք Աստծո արքայությունը երկրի վրա այնպես, ինչպես Երկնքում: Աստված ուղարկեց Հիսուսին՝ Իրեն ներկայացնելու համար, իսկ Հիսուսն ուղարկեց մեզ: **Ռիկ Ռենները**, ով արտասովոր հովիվ է և հունարեն լեզվի գիտակ, շատ լավ է հասկանում այս սկզբունքը: Նա ասում է.

«Դուք գիտեի՞ք, որ Աստծո արքայության մեջ դուք ունեք բարձրաստիճան, պատվավոր, նշանավոր, աչքի ընկնող և ազդեցիկ աշխատանք: Սա ճշմարիտ է: Դուք այնքա՜ն կարևոր եք Աստծո արքայության համար: Ահա թե ինչու ողջ Երկինքը կանգնած է ձեր թիկունքին և պարզապես սպասում է, որ ցանկացած պահին սատարի ու պաշտպանի ձեզ, մատակարարի, օգնի, աջակցի և տրամադրի իր ուժերը այն ժամանակ, երբ դուք հավատքի քայլ անեք: Կարճ ասած՝ Երկինքը պարզապես սպասում է, որ գործի հոգուտ ձեզ: Ինչո՞ւ: Որովհետև **դուք** Քրիստոսի **դեսպա՛ն եք** այս աշխարհում»[8]:

Դուք Հիսուս Քրիստոսի դեսպա՛ն եք: Դուք զորացված եք Նրա շնորհքով, հրեշտակային ուժերը ձեր տրամադրության տակ են, որպեսզի կարողանաք լուծել այս երկրի խնդիրները:

Կա՛նգ առեք և մտածե՛ք. ինչպե՞ս կցանկանայիք իշխել կամ ինչպե՞ս կցանկանայիք, որպեսզի Աստծո ժողովուրդն իշխեր այս կյանքում:

_____

_____

Ինչպիսի՞ անարդարություն է տիրում այս աշխարհում... հատկապես՝ այն բնագավառը, որտեղ դուք ազդեցություն եք թողնում, առավել հուսահատություն և զայրույթ է պատճառում ձեզ:

_____

_____

Ի՞նչ կանեք դուք՝ իմանալով, որ ունեք զորություն (շնորհք)՝ փոխելու այդ իրավիճակը:

_____

_____

*«Որովհետև Նա [հատուկ] հրաման կտա Իր հրեշտակներին քեզ համար, որ **ուղեկցեն** և **պաշտպանեն** և **պահպանեն** քեզ բոլոր քո [հնազանդության և ծառայության] ճանապարհներին: Նրանք կպահեն քեզ իրենց ձեռքերի վրա, որպեսզի ոտքդ քարին չհարվածես»:*

— Սաղմոս 91.11,12, AMP

Հետագա ուսումնասիրության համար
Աստծո հրեշտակային ուժերը միջամտում էին՝ աներևակայելի կերպով գործելով հոգուտ Իր ժողովրդի: Ահա մի քանի օրինակ.
Իսրայելի կյանքում. Ելից 23.20-23 **Եղիայի կյանքում**. Ա Թագավորաց 19.3-8
Դանիելի կյանքում. Դանիել 6.16-23 **Պետրոսի կյանքում**. Գործք 12.5-11

Օր 2. ԱՐԴՅՈ՞Ք ԴՈՒՔ ԿՈՉ ԵՔ ԱՆՈՒՄ

*«Աստված էր [անձամբ ներկա] Քրիստոսում, որ հաշտեցնում և վերականգնում էր աշխարհը՝ կրկին շնորհելով Իր բարեհաճությունը, չհաշվելով և չպահելով [մարդկանց դեմ] նրանց օրինազանցությունները [այլ՝ չեղյակ դարձնելով դրանք], և հանձնարարելով մեզ հաշտության ուղերձը (բարեհաճությունը կրկին շնորհելու մասին): Այնպես որ մենք Քրիստոսի դեսպաններն ենք, և Աստված **Իր կոչն է անում** մեր միջոցով: Մենք [որպես Քրիստոսի անձնական ներկայացուցիչներ], աղաչում ենք ձեզ հանուն Նրա ընդունել աստվածային բարեհաճությունը [որն այժմ առաջարկվում է ձեզ] և հաշտվել Աստծո հետ»:*

— Բ Կորնթացիների 5.19,20, AMP

Մենք հավատում ենք, որ Քրիստոս Հիսուսն անմեղ էր. Նա մահացավ, որպեսզի վճարեր մեր մեղքերի համար, և հաղթությամբ հարություն առավ գերեզմանից, որպեսզի մենք *հաշտվենք* Նրա հետ: Մենք ստացանք նոր կյանք և արդար դիրք Նրա առջև: Այս նոր դիրքում Աստված դրեց մեզ, որպեսզի մենք օգնենք այլ մարդկանց՝ Իր հետ հաշտվելու համար: Նա ցանկանում է, որպեսզի մենք իշխենք կյանքում՝ որպես Իր *դեսպաններ*:

Ո՞Վ Է ԴԵՍՊԱՆԸ

Նոր կտակարանի ժամանակներում «դեսպան» բառն ուներ նույն իմաստը, ինչ այսօր: Դեսպանը՝

- Պաշտոնական ներկայացուցիչ է, ով լիազորված է խոսել իրեն ուղարկողի անունից:
- Լիազորված սուրհանդակ է, ով ունի իշխանություն՝ որոշումներ կայացնելու և ներկայացնելու իր կառավարության, ժողովրդի կամ թագավորի կամքը:
- Բարձրաստիճան դիվանագիտական գործակալ է՝ վստահված որևէ օտարերկրյա կառավարության կամ թագավորի կողմից:

Որպես Հիսուս Քրիստոսի *դեսպան*՝ դուք Նրա լիազորված ներկայացուցիչն եք երկրի վրա, ում միջոցով Աստված անում է իր կոչն աշխարհի մարդկանց՝ Իր հետ կրկին ճիշտ փոխհարաբերություններ հաստատելու համար[9]:

Պատկերացրեք, որ չեք ճանաչում Աստծուն, բայց գիտեք ինչ-որ մեկին, ով ապրում և վարվում է այնպես, ինչպես դուք՝ այսօր: Արդյո՞ք այդ մարդը կգրավեր ձեզ դեպի Քրիստոսը: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:

_____

_____

_____

Արե՛ք ավելին: Հարցրե՛ք ձեր մտերիմ ընկերներից մեկին, թե ինչպիսի՞ հատկանիշներ են նպաստում կամ խոչընդոտում նրան՝ մոտենալ Քրիստոսին:

Ինչպիսի՞ փոփոխություն կարող եք բերել ձեր կյանքում, որպեսզի Աստծո մասին գիտությունն ավելի հրապուրիչ դարձնեք ձեր շրջապատում ապրող մարդկանց համար:

_____

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Մատթեոս 5.13-16,
Ա Պետրոս 2.9-17,
Ղուկաս 6.35

Օր 3. ԻՆՉՊԵ՞Ս ԵՔ ԴՈՒՔ ՏԵՍՆՈՒՄ ՁԵԶ

«Այդ իսկ պատճառով, եթե որևէ մարդ [պատվաստվել է] Քրիստոսում (Մեսիայի մեջ), Նա նոր ստեղծագործություն է (բոլորովին նոր ստեղծագործություն). հները [նախորդ բարոյական և հոգևոր վիճակը] անցել են: Ահա եկել է թարմը և նորը»:

— Բ Կորնթացիների 5.17, AMP

Կյանքում արդյունավետ կերպով իշխելու համար դուք պետք է ճշմարիտ պատկերացում կազմեք Աստծո մասին և դիտարկեք ձեզ՝ որպես Քրիստոսի անբաժանելի մասը: Դուք **մեկ** եք Նրա հետ և Նրա շնորհքի հրաշագործ զորությանը հաղորդակից եք: Ահա թե ինչու էր Պողոսը ջերմեռանդորեն ասում. «*Իմ աղոթքն է, որպեսզի լույսը հեղեղի ձեր սրտերը և դուք հասկանաք այն հույսը, որ տրվեց ձեզ, երբ Աստված ընտրեց ձեզ: Այդ ժամանակ դուք կհայտնաբերեք այն փառավոր օրհնությունները, որոնք կլինեն ձերը, ինչպես և ողջ Աստծո ժողովրդինը*» (Եփեսացիների 1.18, CEV): Աստված ցանկանում է բացել ձեր սրտի աչքերը…

«[Որպեսզի դուք իմանաք և հասկանաք] թե ինչ է Նրա զորության անչափելի և անսահման և գերազանց մեծությունը *մեզանում և մեզ համար, որ հավատում ենք*՝ ըստ Նրա կարող զորության ներգործության:

Որը Նա գործադրեց Քրիստոսում, և հարություն տվեց Նրան մեռելներից և նստեցրեց Նրան Իր [սեփական] աջ կողմը երկնային [վայրերում]՝ շատ ավելի վեր բոլոր իշխանություններից, պետություններից, զորություններից և տերություններից և յուրաքանչյուր անունից, որ անվանվում է [վեր յուրաքանչյուր տիտղոսից, որ կարող է շնորհվել] ոչ միայն այս ժամանակաշրջանում և այս աշխարհում, այլ նույնպես գալիք ժամանակաշրջանում և աշխարհում:

Եվ Նա դրեց ամեն բան Նրա ոտքերի տակ և նշանակեց Նրան եկեղեցու տիեզերական և գերագույն Գլուխ [իշխանություն, որը գործադրվում է եկեղեցու միջոցով], որն է Նրա մարմինը՝ Նրա լիությունը, Ով լցնում է ամեն ինչ ամեն ինչում [որովհետև այդ մարմնում բնակվում է Նրա լրումը, Ով ամբողջական է դարձնում ամեն ինչ և Ով լցնում է ամեն ինչ ամենուր Իրենով]»:

— Բ Կորնթացիների 5.17, AMP

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Հիշե՛ք. դուք Քրիստոսի մասն եք: Գլուխը կտրված չէ մարմնից: Մենք բոլորս միասին նստած ենք իշխանության և զորության դիրքում երկնային ոլորտում: Այլ խոսքերով՝ մենք այնպիսի ոլորտում ենք, որը բարձր է այս երկրում գոյություն ունեցող ցանկացած ուժից: Ավելի ճիշտ՝ մենք *շատ ավելի բարձր* ենք: Ոչ մի դիվային ոգի, այսինքն՝ ընկած հրեշտակ, անգամ սատանան չունի զորություն կամ իշխանություն մեզ վրա: Մենք գերագույն իշխանություն ունենք:

Ի՞նչ է նշանակում, որ դուք նստած եք երկնային իշխանական դիրքում:

_____
_____
_____
_____

Արդյո՞ք դուք հավատում եք, որ այս ամենը վերաբերում է ձեզ: Ուրիշ ի՞նչ է Աստված ցույց տալիս ձեզ:

_____
_____
_____
_____

Օր 4. ԴՈՒՔ ԱՍՏԾՈ ԶԱՎԱԿ ԵՔ

«Տեսե՛ք, թե Աստված ինչպիսի [անհավատալի] սեր է տվել [ցուցաբերել, շնորհել] մեզ, որ մենք [թույլտվություն ունենանք] կոչվել և անվանվել և համարվել Աստծո զավակներ: Եվ դա հենց այդպես է»:

— Ա Հովհաննես 3.1, AMP

Մենք փրկված ենք շնորհքով: Աստված «փրկել է մեզ խավարի թագավորությունից և տեղափոխել Իր թանկագին Որդու արքայության մեջ, Ով գնեց մեր ազատությունը և ներեց մեր մեղքերը» (Կողոսացիների 1.13,14, NLT): Փա՜ռք Նրա անվանը: Բայց Աստված պարզապես չդարձրեց մեզ Իր ծառաները: Նա որդեգրեց մեզ և դարձրեց մեզ *ժառանգակիցներ* Հիսուսի հետ: Այն ամենը, ինչ Հիսուսինն է, նույնպես մերն է: Եփեսացիների 1.3-ում (GW), գրված է. «Քրիստոսի միջոցով Աստված օրհնեց մեզ *յուրաքանչյուր հոգևոր օրհնությամբ*, որ Երկիրքը կարող է առաջարկել»: Ինչպիսի՜ զարմանալի խոստում:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ.

«Բայց բոլոր նրանց, ովքեր հավատացին և ընդունեցին Նրան, Նա իրավունք տվեց դառնալ Աստծո զավակներ»:

— Հովհաննես 1.12, NLT

«Որովհետև բոլորը, ովքեր առաջնորդվում են Աստծո Հոգով, Աստծո զավակներն են: Եվ դուք չեք ընդունել այնպիսի հոգի, որ վախվորած ստրուկներ է դարձնում ձեզ: Փոխարենը՝ դուք ընդունել եք Աստծո Հոգին, երբ Նա որդեգրել է ձեզ՝ որպես Իր զավակներ: Այժմ մենք անվանում ենք Նրան «Աբբա, Հայր»: Որովհետև Նրա Հոգին միանում է մեր հոգու հետ՝ հաստատելու համար, որ մենք Աստծո զավակներ ենք»:

— Հռոմեացիների 8.14-16, NLT

«Աստված ուղարկեց Նրան (Հիսուսին)՝ մեզ համար ազատություն գնելու, որ ստրուկներ էինք օրենքին, որպեսզի Նա կարողանա որդեգրել մեզ՝ որպես Իր զավակներ... Աստված ուղարկեց Իր Որդու Հոգին ձեր սրտերի մեջ, և այժմ դուք կարող եք անվանել Աստծուն ձեր թանկագին Հայրը: Այժմ դուք այլևս ստրուկ չեք, այլ՝ Աստծո զավակ: Եվ քանի որ դուք Նրա զավակն եք, ամենը, ինչ Նա ունի, պատկանում է ձեզ»:

— Գաղատացիների 4.5-7, NLT

Ի՞նչ է Աստված հայտնում ձեզ Նրա զավակը լինելու մասին:

_____

_____

Կարդացե՛ք Եփեսացիների 5.1,2-ը: Ի՞նչ է այս խոսքն ասում ձեզ Նրա զավակը լինելու վերաբերյալ:

_____

Կարդացե՛ք Բ Պետրոս 1.3,4 խոսքերը: Դուք ունեք Աստծո աստվածային բնությունը, այսինքն՝ Քրիստոսի լիությունը, և դուք Նրա զավակն եք, այսինքն՝ Հիսուսի ժառանգակիցը: Բացատրե՛ք, թե ինչ կապ կա այս երկու փաստերի միջև:

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Գաղատացիների 3.26-29, Եփեսացիների 3.6

Օր 5. ՈՒՆԵՑԵ՛Ք ԱՌԱՆՁԻՆ ԺԱՄԱՆԱԿ

«Մոտ ութ օր անց Հիսուսը Պետրոսի, Հովհաննեսի ու Հակոբոսի հետ բարձրացավ սար՝ աղոթելու համար: Երբ Նա աղոթում էր, Նրա դեմքի կերպարանքը վերափոխվեց, և Նրա հանդերձները շլացուցիչ սպիտակ դարձան»:

— Ղուկաս 9.28,29, NLT

Սարեր, անապատներ, պարտեզներ և ծովափեր. Հիսուսը հաճախ էր այցելում այս չորս վայրերը և առանձնանում՝ ժամանակ անցկացնելով Հոր հետ: Ի՞նչ էր տեղի ունենում այդ ժամանակ: Հիսուսը վերափոխվում էր: Թեև այդ վերափոխումը մշտապես չէր դրսևորում Քրիստոսի ամբողջական փառքն այնպես, ինչպես դա տեղի ունեցավ կերպարանափոխման սարի վրա. Հոր հետ հաղորդակցվելը և շփումը ամեն անգամ թույլ էին տալիս Հոգուն՝ նորոգել Որդու երիտասարդությունը, լրացնել Նրա պակասությունները և առաջնորդել Նրան: Ահա թե ինչպես էր Նա կարողանում իշխել կյանքում:

Թեև Հիսուսն Աստծո Որդին էր, Նրա գլխավոր նպատակը այս երկրի վրա Հոր հետ միասնությունը պահպանելն էր: Ժամանակ անցկացնելով Հոր հետ՝ Հիսուսը շարունակ զորացված էր շնորհքով և հնազանդ Նրա կամքին:

Հատկապես ի՞նչ դուք կարող եք անել, որպեսզի ավելի շատ ժամանակ անցկացնեք Աստծո ներկայության մեջ:

_____
_____
_____
_____
_____

Ուշադի՛ր կարդացեք յուրաքանչյուր հատվածը և ասե՛ք, թե ի՞նչ կատարվեց այն բանից հետո, երբ Հիսուսը ժամանակ անցկացրեց Հոր հետ: Ձեր կարծիքով որքանո՞վ էին Հիսուսի հրաշագործությունները պայմանավորված այն ժամանակով, որ Նա անցկացնում էր Հոր հետ:

Մարկոս 6.12-16 _____
_____

Ղուկաս 6.12-16 _____
_____

Մատթեոս 26.36-46, Ղուկաս 22.39-54, Մատթեոս 14.22-36, Մարկոս 6.45-56
_____
_____
_____
_____
_____
_____

Հետագա ուսումնասիրության համար
Մարկոս 1.35, 6.31,32, Ղուկաս 5.16, Հովհաննես 18.1,2

Օր 6. ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԴԵՌ ԱՌՋԵՎՈՒՄ Է

«Ես ճշմարտությունն եմ ասում ձեզ. յուրաքանչյուրը, ով հավատում է Ինձ, կանի նույն գործերը, ինչ ես արեցի, և նույնիսկ ավելի մեծ գործեր, որովհետև Ես գնում եմ Իմ Հոր մոտ: Դուք կարող եք խնդրել ամեն ինչ Իմ անունով, և Ես կկատարեմ, որպեսզի Որդին կարողանա փառք բերել Հորը: Այո՛, խնդրե՛ք Ինձ ամեն ինչի համար Ի՛մ անունով, և Ես կանե՛մ դա»:

— Հովհաննես 14.12-14, NLT

Հիսուսն իշխում էր կյանքում, երբ ապրում էր երկրի վրա: Նա երկնային Հոր ճիշտ նմանությունն էր և անում էր միայն այն, ինչ տեսնում էր Հորն անելիս (տե՛ս Եբր. 1.3, Հովհ. 5.19): Ավետարաններում նշված են երեսունից ավելի հրաշքներ, որոնք կատարվել են Հիսուսի միջոցով, բայց «կան դեռ ուրիշ շատ բաներ, որ Հիսուսն արեց: Եթե դրանք բոլորը գրվեին…ապա չեմ կարող պատկերացնել բավականաչափ մեծ աշխարհ, որը կարող է պահել այդքան գրքերով լի գրադարան» (Հովհաննես 21.25, MSG): Ահա Հիսուսի գործերի որոշ օրինակներ.

Հիսուսն իշխում էր կյանքում՝	**Ինքնե՛րդ կարդացեք այդ մասին**
Իշխանություն վերցնելով եղանակի վրա, արգելելով փոթորկի պատճառով առաջացած ալեկոծությունը:	Մատթեոս 8.23-27, Մարկոս 4.35-41
Բազմացնելով ուտելիքը՝ ավելի քան 5000 մարդու մեկ անգամ կերակրելու համար, և ավելի քան 4000 մարդու՝ ևս մեկ անգամ կերակրելու համար:	Մատթեոս 14.13-21, 15.32-38, Մարկոս 6.35-44, Ղուկաս 9.12-17, Հովհաննես 6.5-13
Մեռելներին հարություն տալով:	Մարկոս 5.35-43, Ղուկաս 7.11-15, Հովհաննես 11.41-44

Հիսուսն ասաց, որ **դուք** կանեք *ավելի մեծ* գործեր, քան Նա: Ինչո՞ւ է Աստված ցանկանում, որպեսզի դուք մեծ գործեր անեք:

_____

_____

Նշե՛ք մի քանի «ավելի մեծ գործեր» կամ Աստծո զորության դրսևորումներ, որոնց դուք ականատես եք եղել: Արդյո՞ք դուք երբևէ եղել եք այն գործիքը, ում միջոցով Աստված գործել է: Ի՞նչ ազդեցություն են ունեցել այդ փոխաբերությունները ձեր և այն մարդկանց հավատքի վրա, ովքեր դրա ականատեսն են եղել:

_____

_____

Ուշադի՛ր կարդացեք Հովհաննես 6.28,29, 15.1-8 և Ա Հովհաննես 5.14,15 խոսքերը: Ի՞նչ կարող եք փոխել ձեր կյանքում՝ ավելի մեծ գործեր անելու համար: Արդյո՞ք այս խոսքերը մարտահրավեր նետեցին քեզ:

_____

_____

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Որպես հավատացյալ՝ ձեզ հասանելի է Աստծո շնորհքի անսահման պաշարը: Շնորհքով դուք դարձել եք Աստծո զավակը և զորացել եք՝ կյանքի ցանկացած բնագավառում իշխելու համար: Շնորհքը լցնում է ձեզ Քրիստոսի լիությամբ, այսինքն՝ Նրա աստվածային բնությամբ: Շնորհքի միջոցով դուք իշխանություն ունեք թշնամու ողջ զորության վրա և կարողություն՝ գերազանցել ձեր բնական կարողությունները: Շնորհքը կարելի է ստանալ ցանկացած պահին և ցանկացած վայրում՝ խոնարհաբար աղոթելու միջոցով:

Նշումներ

(1) Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարանի» առաջին հրատարակություն* (1828թ.), պատճենման միջոցով վերահրատարակված «Foundation for Americal Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո՝ Կալիֆոռնիա, 2000թ.) էջ 135: (2) Անգերի *«Նոր Աստվածաշնչի բառարան»*, Մերիլ Ֆ. Անգեր (Չիկագո՝ Իլինոյս. «Moody Press», 1988թ.) էջ 39: (3) Թայերի *«Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան»*, Ջոզեֆ Հ. Թայեր (Grand Rapids, MI: «Baker Book House Company», 1977թ.) էջ 666: (4) Սթրոնգի *«Աստվածաշնչի լիակատար համաբարբառ»*, Ջեյմս Սթրոնգ՝ Իրավագիտության և Աստվածաբանության դոկտոր (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishers», 1990թ.) էջեր 162,163: (5) *«Հաստա՛տ կանգնիր. 365 ուղերձ ձեր հավատքը զորացնելու համար»*, համադրող՝ Փեթի Մ. Համմել (Սան Լուիս Օբսիպո՝ Կալիֆոռնիա, «Parable») էջ 360: (6) Մեթյու Հենրիի *«Ուսումնական Աստվածաշունչ»*, KJV, Ա. Քեննեթ Աբրահամ, Գլխավոր խմբագիր («World Bible Publishers, Inc.», 1994թ.), Հովհաննես 1.16-ի նշումը: (7) Օսվալդ Չեմբերս *«Իմ առավելագույնը Նորին Մեծության համար»* (Ուրիխսվիլ՝ Օհայո, «Barbour Publishing, Inc.», MCMXCVII), էջ 178: (8) Ռիկ Ռեններ. *«Հունարենի գանձերը»* (Տալսա՝ Օկլահոմա. «Teach All Nations», 2003թ.) էջ 55: (9) Նույնը (փոփոխված):

«Դուք ընտրված ազգ եք, թագավորական քահանայություն, նվիրված ազգ [Աստծո] գնվածները, հատուկ ժողովուրդ, որպեսզի կարողանաք ցուցադրել Նրա հրաշալի գործերը և Նրա առաքինություններն ու կատարելությունը, Ով կանչել է ձեզ խավարից Իր սքանչելի լույսի մեջ»:

— Ա Պետրոս 2.9, AMP

Գլուխ 3

ԴԱՌՆԱԼ ԱԿՆԱՌՈՒ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 3-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 4-րդ և 5-րդ գլուխներից:

1. Ինչպիսի՞ արտասովոր կյանքով էր ապրում Հիսուսը: Սուրբ գրքում ասվում է, որ Աստծո շնորհքը Նրա վրա էր և զորացնում էր Նրան, որպեսզի Նա աչքի ընկներ կյանքի ցանկացած բնագավառում: Նշե՛ք կյանքի երեք տարբեր բնագավառ, որոնցում Հիսուսն ապրում էր ակնառու կյանքով: Այդ երեքից ո՞րն է ավելի դժվար ձեզ համար: Ինչո՞ւ:

Կյանքի երեք բնագավառ, որոնցում Հիսուսն աչքի էր ընկնում

1. _____
_____
2. _____
_____
3. _____
_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

«Նա, ով պնդում է, թե ապրում է Նրանում, պետք է վարվի այնպես, ինչպես Հիսուսը վարվեց» (Ա Հովհաննես 2.6, NIV): Ինչպե՞ս մենք կարող ենք վարվել Հիսուսի նման՝ միայն Աստծո շնորհքով: Շնորհքն ավելին է, քան մեղքերի ներումը. այն զորացնում է մեզ, որպեսզի վարվենք այնպես, ինչպես Հիսուսը վարվեց, քանի որ շնորհքը տալիս է մեզ Նրա բնությունը:

Ամենադժվարն ինձ համար հետևյալ բնագավառն է...

_____
_____
_____
_____

ԽՍ 2. Եթե փորձենք սուրբ կյանքով ապրել մեր կարողությամբ, ապա մեզ մոտ կարող է ձևավորվել հետևյալ երկու մտածելակերպերից մեկը: Կա՛մ մենք *կեղծավոր օրինապաշտներ* կդառնանք (որոնց խոսքը տարբերվում է իրենց ապրած կյանքից), կա՛մ կշարունակենք ապրել ազատ կյանքով՝ հարելով ոչ աստվածաշնչյան համոզմունքի, ըստ որի «շնորհքը ծածկում է բոլոր մեղքերը, որոնք ես որոշել եմ չթողնել»: Կարո՞ղ եք ասել, որ դուք հակված եք այս երկու մտածելակերպերից մեկին: Եթե այո, ապա ինչպե՞ս է այս դասընթացն ազատագրում ձեզ դրանցից:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Շնորհքով *ապրելու* համար հարկավոր չէ ավելի շատ ջանք գործադրել, հարկավոր է ավելի մոտենալ Քրիստոսին: Ահա թե որտեղ է շնորհքի զորությունը: ...Հիսուս Քրիստոսը ցանկանում է արտահայտել Իր կյանքը ձեր միջոցով և ապահովել ձեր *շնչառությունը*: Դուք, ինչպես նաև ես, չենք կարող հոգևորապես շնչել առանց Նրա: Նրա շնորհքն այն թթվածինն է մեր թոքերում, որ հնարավոր է դարձնում մեր հոգևոր կյանքը: Երբ մենք անձնատուր ենք լինում Քրիստոսին, Նա լցնում է մեզ շնորհքի անհավատալի, կենսատու պարգևով»:

— Թոնի Էվանս[1]

_____
_____
_____
_____
_____
_____
_____

*«Ուստի անշարժ թագավորություն ընդունած լինելով՝ **պինդ բռնենք այն շնորհքը**, որով պաշտում ենք հաճությամբ Աստծուն, ահով և երկյուղածությամբ»:*
— Եբրայեցիների 12.28

3. Երբ մենք փորձում ենք *վաստակել* Աստծո շնորհքը՝ լինելով «բավականին լավը» կամ հասնելով արժանավայել նպատակների, շնորհքը վերածվում է մի շարք գործերի: Ուշադի՛ր կարդացեք ստորև բերված ցուցակը: Արդյո՞ք դուք երբևէ փորձել եք վաստակել Աստծո շնորհքը այս գործերից որևէ մեկով.

ԽՍ

Աստվածաշունչ կարդալով որոշակի քանակությամբ,
Երկար աղոթելով,
Ծոմ պահելով,
Մարդկանց հետ համբերատար և բարի լինելով,
Եկեղեցում ծառայելով,
Աղքատներին օգնելով,
Տասանորդ կամ զոհաբերություն տալով,
Ավետարանը քարոզելով,
Եկեղեցի հաճախելով,
Որոշակի մեղք չգործելով,
Ճիշտ բաներ խոսելով,
Այլ _____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Սրբությունը մեր մարմնի գործը չէ. այն Աստծո շնորհքի արդյունքն է: Շնորհքն Աստծո զորացնող ներկայությունն է մեր կյանքում: Այն կարողություն է տալիս մեզ անել այնպիսի բաներ, որ չէինք կարողանա անել մեր ուժերով: Այն կարողություն է տալիս մեզ մաքրվել այնպիսի բաներից, որ պղծում է մեր մարմինն ու անձը, և կարողություն է տալիս ապրել կատարյալ սուրբ կյանքով: Սա Աստծուն ծառայելու ընդունելի ձևն է:

Ի՞նչը թույլ չի տվել ձեզ ավելի խորը հայտնություն ունենալ Աստծո շնորհքի պարգևի մասին:

_____
_____
_____
_____
_____
_____

Աղոթե՛ք և հանձնե՛ք Աստծուն ցանկացած խոչընդոտ, որի դեմ պայքարում եք: Մտապահեք, որ շնորհքն Աստծո զորացումն է: Այն Նրա բոլոր օրհնություն-

ների աղբյուրն է, որոնց թվում են իմաստությունը, առաջնորդությունը, ստեղծարարությունը, օծությունը և հրաշագործ զորությունը: Դուք չեք կարող վաստակել Աստծո շնորհքը՝ սրանցից որևէ մեկն ունենալու համար: Դուք պետք է ընդունեք շնորհքը հավատքով և խոնարհ սրտով:

ԽՍ 4. Աստծո շնորհքով Հիսուսը նույնպես հոգում էր մարդկանց կարիքները: Նա բժշկում էր հիվանդներին, տեսողություն տալիս կույրերին, բացում խուլերի ականջները և ոտքի կանգնեցնում կաղերին: Նա բազմացնում էր ուտելիքը՝ քաղցածներին կերակրելու համար, ազատագրում էր դիվահարներին և, նույնիսկ, հարություն էր տալիս մեռելներին: Ուշադի՛ր կարդացեք այս խոսքերը:

«Եվ Հիսուսը ժողովեց Իր մոտ Իր տասներկու աշակերտներին և զորություն ու իշխանություն տվեց անմաքուր ոգիների վրա՝ նրանց քշելու համար, և բժշկելու ամեն տեսակ հիվանդություն և ամեն տեսակ տկարություն»:

— Մատթեոս 10.1, AMP

«Ահա այն հրաշագործ նշանները, որոնք կհետևեն հավատացյալներին. նրանք կօգտագործեն Իմ անվան զորությունն ու իշխանությունը դևերին մարդկանց միջից դուրս քշելու համար: Նրանք կխոսեն նոր լեզուներով: Նրանք կվերցնեն օձերի, և եթե խմեն որևէ մահաբեր թույն, այն չի վնասի նրանց: Նրանք կդնեն իրենց ձեռքերը հիվանդների վրա և կբուժեն նրանց»:

— Մարկոս 16.17,18, GW

«Առաքյալները մարդկանց մեջ բազմաթիվ հրաշքներ և նշաններ գործեցին… Շատ տղամարդիկ և կանայք սկսեցին հավատալ Տիրոջը: Հիվանդ մարդկանց շարժական մահճակալներով ու խսիրներով դնում էին ճանապարհների վրա: Նրանք հույս ունեին, որ Պետրոսը կանցներ, և նրա ստվերը կընկներ իրենց վրա և կբժշկեր: Շատերը, ովքեր ապրում էին Երուսաղեմին մոտ գտնվող քաղաքներում, բերում էին նրանց, ովքեր հիվանդ էին կամ նրանց, ում չար ոգիներն անհանգստություն էին պատճառում, և բոլորը բժշկվում էին»:

— Գործք 5.12,14-16, CEV

«Աստված արտասովոր հրաշքներ էր անում Պողոսի միջոցով, այնպես որ, նույնիսկ նրա մարմնին դիպած թաշկինակներն ու գոգնոցները դնում էին հիվանդների վրա, և նրանց հիվանդությունները բուժվում էին, և չար ոգիները հեռանում էին նրանցից»:

— Գործք 19.11,12, NIV

Ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ այս հատվածներում: Ի՞նչ կարող եք անել դուք որպես Քրիստոսի մաս՝ մարդկանց կարիքները բավարարելու համար:

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Ղուկաս 4.38-41, Գործք 28.1-6

*«Այժմ ես անշուշտ և խորապես գիտակցում ու հասկանում եմ, որ Աստված **կողմնակալություն չի ցուցաբերում** և **աչառ չէ»**:*

— Գործք 10.34, AMP

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Աստծո շնորհքը Հիսուսի կյանքում կարողություն տվեց Նրան՝ փոխել այն հասարակությունը, որտեղ ապրում էր: Այժմ Նա պատվիրում է մեզ. «…Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհաննես 20.21): Այն հասարակությունը, որտեղ ապրում ենք, պետք է փոխենք այնպես, ինչպես Հիսուսը՝ Աստծո շնորհքի ձրի պարգևի միջոցով:

5. Դուք իմաստության կարի՞ք ունեք: Աստծո շնորհքի լիությունը տալիս է այն: **Մտորե՛ք** այս խոսքերի շուրջ: Ի՞նչ է Տերն ասում ձեզ իմաստություն, հանճար և հասկացողություն ստանալու մասին: Ինչպիսի՞ դժվար իրավիճակում եք դուք և հենց հիմա ինչ պատասխանների կարիք ունեք: Հենց հիմա աղոթե՛ք Աստծո իմաստության կամ ստեղծարար լուծման համար: Գրե՛ք այն, ինչ Նա ասում է ձեզ:

«Այո՛, եթե դու ցանկանում ես ավելի ներըմբռնող և զանազանող լինես, և եթե փնտրում ես դրանք այնպես, ինչպես կփնտրեիր կորած փող կամ թաքնված գանձ, ապա քեզ իմաստություն կտրվի, ինչպես և անձամբ Աստծո գիտությունը. շուտով դու կսովորես Տիրոջից երկյուղած լինելու և Նրան վստահելու կարևորությունը: Որովհետև Տե՛րն է իմաստություն պարգևում: Նա ողջամտություն է պարգևում աստվածապաշտներին՝ Իր սրբերին: Նա նրանց վահանն է. Նա պաշտպանում է և հսկում նրանց ուղին: Նա ցույց է տալիս նրանց, թե ինչպես զանազանել ճիշտը սխալից, ինչպես ամեն անգամ ճիշտ որոշում կայացնել: Որովհետև իմաստությունը և ճշմարտությունը կմտնեն անմիջապես քո էության մեջ՝ լցնելով քո կյանքն ուրախությամբ»:

— Առակաց 2.3-10, TLB

«Աստված թաքցրել է իմաստության և գիտության բոլոր գանձերը Քրիստոսի մեջ»:

— Կողոսացիների 2.3, GW

«Եթե դուք իմաստության կարիք ունեք, եթե դուք ցանկանում եք իմանալ, թե ինչ է Աստված ցանկանում ձեզնից, ապա խնդրե՛ք Նրան, և Նա ուրախությամբ կասի ձեզ: Նա չի մերժի ձեր խնդրանքը: Բայց երբ դուք խնդրում եք Նրան, համոզվա՛ծ եղեք, որ իսկապես սպասում եք Նրա պատասխանին»:

— Հակոբոս 1.5,6, NLT

Իմ դժվար իրավիճակը հետևյալն է…

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Դանիել 2.21, Մատթեոս 7.24, Ղուկաս 21.15, Հովհաննես 8.31,32

Աստված ցույց է տալիս ինձ հետևյալ իմաստությունը կամ ստեղծարար լուծումը…

_____

_____

_____

_____

Միգուցե Աստծո իմաստությունը ձեր իրավիճակի համար չգա հենց այսօր, բայց անպայման կգա: Ստանալով այն՝ ժամանակ հատկացրեք, որպեսզի գրի առնեք և գոհանաք Նրանից:

ԱԿՆԱՌՈՒ

«Աչքի ընկնող և հայտնի որևէ առանձնահատկությամբ կամ տարբերվող հատկանիշներով. աչքի ընկնող մյուսներից գերազանց կամ արտասովոր հատկանիշներով»: Մարդը կարող է աչքի ընկնել իր պահվածքով և վարքով, ինչպես նաև վերաբերմունքով և գործերով: Հետաքրքիր է, որ «*ակնառու*» բառի (անգլ.՝ *distinguish*) ծագումնաբանական արմատը նշանակում է «Սուր ծայրով ծակել կամ թափանցել. նշաններ անել սուր առարկայով»: Այս արմատից առաջացել է անգլերեն «stick» բառը (խրել, ծակել)[3]: Վերագրելով այս սահմանումը մեզ՝ պետք է տանք հետևյալ հարցը. *արդյո՞ք մենք ապրում ենք՝ թափանցելով մարդկանց կյանքի մեջ և դրդելով նրանց՝ ընդունել Աստծուն*:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«**Իմաստությունն** Աստծո տեսանկյունից նայելու կարողություն է: ...Երբե՛ք մի մոռացեք այն փաստը, որ Աստված տեսնում է ձեր կյանքն ամբողջապես: Նա կատարելապես ճանաչում է ձեզ: Նա գիտի ձեր մտքերը, զգացմունքները և խառնվածքը: Նա գիտի ձեր անցյալը, ներկան և ապագան: Նա գիտի՝ ինչ տաղանդներ, փորձառություն և հոգևոր պարգևներ ունեք: Աստծուն կատարելապես հայտնի է, թե ով եք դուք, ինչի համար եք կանչված և ինչ իրավիճակում եք հենց հիմա: Որքան ավելի նայեք ձեր կյանքին Աստծո տեսանկյունից, այնքան ավելի պարզ կտեսնեք ձեր հետագա քայլերը»:

— Չարլզ Սթենլի[2]

Խ 6. Լինել **ակնառու** նշանակում է ապրել աչքի ընկնող, արտասովոր կյանքով, որն անջնջելի հետք է թողնում մարդկանց կյանքում: Դանդաղորեն կարդացե՛ք ստորև բերված հատվածները և տեսե՛ք, թե ինչ դրական ազդեցություն կարող է թողնել ակնառու կյանքը: Ինչպիսի՞ գործնական միջոցներով դուք կարող եք խրախուսել և խթանել ձեր ընկերներին ու ընտանիքի անդամներին՝ ապրել ակնառու կյանքով:

«Թո՛ղ ձեր լույսն այնպես շողա մարդկանց առջև, որ նրանք կարողանան տեսնել ձեր բարոյական գերազանցությունը և գովելի, ազնիվ ու բարի գործերը և ճանաչեն ու պատվեն ու գովեն ու փառավորեն ձեր Հորը, որ Երկնքում է»:

— Մատթեոս 5.16, AMP

«Ապրե՛ք օրինակելի կյանքով տեղացիների միջև, որպեսզի ձեր գործերը հերքեն նրանց նախապաշարումները: Այդ ժամանակ դուք կշահեք նրանց Աստծո կողմը, և նրանք կմիանան տոնակատարությանն այն ժամանակ, երբ Նա գա»:

— Ա Պետրոս 2.12, MSG

«Միշտ օրինակ ծառայիր բարի գործեր անելով: Երբ դու սովորեցնում ես, եղի՛ր բարոյական մաքրության և արժանապատվության օրինակ: Խոսի՛ր հավաստի խոսքեր, որոնք անկարելի կլինի դատապարտել: Այդ ժամանակ նրանք, ովքեր հակառակվում են մեզ, կամաչեն, որովհետև չեն կարողանա որևէ վատ բան ասել մեր մասին: Հորդորի՛ր ստրուկներին *[աշխատողներին]* հնազանդվել իրենց տերերին և փորձել լավագույնս հաճեցնել նրանց: Նրանք չպետք է հակաճառեն, ո՛չ էլ գողանան, այլ պետք է լիովին վստահելի լինեն: Այսպես վարվելու դեպքում, նրանց պատճառով մարդիկ կցանկանան հավատալ մեր Փրկչին և Աստծուն»:

— Տիտոս 2.7,8, GW, 9,10, TLB

[Քառակուսի փակագծում գրված բառը պարզեցնելու համար է]:

Ակնառու կյանքի դրական ազդեցությունը հետևյալն է...

_____

_____

_____

Ես կարող եմ խրախուսել մարդկանց՝ ապրել ակնառու կյանքով հետևյալ կերպ...

_____

_____

_____

«Եկե՛ք մտածենք, թե ինչպես կարող ենք խթանել մեկս մյուսին՝ սիրուց դրդված բարի գործեր անել»:
— Եբրայեցիների 10.24, NLT

Բնութագիր
ԴԱՆԻԵԼ

Կյանքի տևողությունը. մոտ մ.թ.ա. 620 - մ.թ.ա. 535թթ.,
Զբաղվածությունը. Մարգարե և պետական պաշտոնյա,
Ծառայության վայրը. Բաբելոնի և Մարա-պարթևական թագավորության արքունիքներ,
Դանիելին նկարագրող բառեր. նվիրված, հավատարիմ, անզիջում, ակնառու, գերազանց, վստահելի, անկոտրում:

Դանիելը, ում անունը նշանակում է «Աստված իմ դատավորն է», մեծացել էր հրեա ազնվականների ընտանիքում՝ ստանալով փայլուն դաստիարակություն (տե՛ս Դանիել 1.3): Մ.թ.ա. 605թ.-ին, երբ նա 15 կամ 16 տարեկան էր, Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորը պաշարեց Երուսաղեմը, և Դանիելը տարագրվեց Բաբելոն: Եռամյա բաբելական կրթություն ստանալուց հետո (տե՛ս Դանիել 1.4,5) նա ծառայեց առնվազն չորս հեթանոս թագավորների. բաբելացի Նաբուգոդոնոսորին ու Բաղդասարին, և մար-պարթևների Դարեհ ու Կյուրոս թագավորներին:

Դանիելի կյանքը չդասավորվեց այնպես, ինչպես ինքը ծրագրել էր: Այնուամենայնիվ՝ նա հավատարիմ մնաց Աստծուն և մեծ փառք բերեց Նրան մոտ 70 տարվա ընթացքում: Նա միակ հայտնի մարգարեն է, ով ծառայել է բացառապես օտար երկրներում: Միաժամանակ լինելով թե՛ ծառայության մեջ, թե՛ քաղաքական դաշտում՝ նա դարձավ ավետարանիչ իրեն գերեվարողների համար: Բաբելացի և մար-պարթևացի իմաստուններն ատում էին նրան և անարդար վերաբերմունք ցուցաբերում նրա հանդեպ: Տարեց հասակում նրան նույնիսկ գցեցին առյուծների գուբը: Սակայն Աստված հավատարմորեն փրկեց նրան, ապագան տեսնելու համար աստվածային իմաստություն շնորհեց, ինչպես նաև երազներ մեկնելու կարողություն տվեց: Դանիելը երբեք չհանձնվեց և չնահանջեց: Նա անկոտրում էր Աստծո հետ իր ընթացքի մեջ և ակնառու անձնավորություն էր[4]:

Ի՞նչ կարող եք սովորել Դանիելից: Կարդացե՛ք նրա գիրքը, որպեսզի տեսնեք, թե ինչպես նա ակնառու դարձավ և պահեց իր աստվածապաշտությունն այդ մեղավոր հասարակության մեջ:

*«Այս մարդը՝ Դանիելը, **աչքի ընկավ** այլ պաշտոնյաների և կուսակալների միջև, որովհետև նրանում արտասովոր հոգի կար»:*
— Դանիել 6.3, GW

ԽՍ 7. Կա՛նգ առեք և հարցրեք ինքներդ ձեզ. *«Արդյո՞ք ես աչքի եմ ընկնում Դանիելի պես: Արդյո՞ք ես թույլ եմ տալիս, որպեսզի Աստծո արտասովոր Հոգին լիովին դրսևորվի իմ միջոցով: Արդյո՞ք ես Աստծո շնորհքով ակնառու եմ դառնում իմաստությամբ, արդյունավետությամբ և ստեղծարարությամբ: Որտե՞ղ ես կարող եմ ավելի ակնառու դառնալ»:* Աղոթե՛ք և խնդրեք Աստծո միջամտությունը: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է:

Աստծո շնորհքն ակնառու է դարձնում ինձ հետևյալ բնագավառներում...

_____

_____

_____

Ես կարող եմ ավելի աչքի ընկնել հետևյալ բնագավառներում...

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. խրախուսե՛ք ձեր խմբակի անդամներին՝ վերը նշված հարցերը տալ այն մարդկանց, ովքեր ճանաչում և սիրում են իրենց: Ընկերոջ տեսանկյունը հաճախ կարող է բացել մեր աչքերն այն բաների վրա, որ պարզապես կարող էինք անտեսել (տե՛ս Առակ. 27.17):

8. Միգուցե դուք զգում եք, որ Աստված կանչում է ձեզ որևէ բնագավառում ակնառու լինելու համար, սակայն ըստ ձեզ՝ դուք չեք կարող անել դա: Ո՞րն է այդ բնագավառը և ինչպե՞ս է այս դասը խրախուսում ձեզ՝ հավատալ և ստանալ Աստծո շնորհքի զորացումը:

_____

_____

_____

ԽՍ 9. Արդյո՞ք դուք այն 98 տոկոս քրիստոնյաների թվում եք, ովքեր *չեն* հասկանում, որ Աստծո շնորհքը Նրա զորությունն է: Այս ուսմունքի ո՞ր մասը կամ մասերը վառվեցին ձեր սրտում և օգնեցին ավելի զորավոր կերպով հասկանալ շնորհքը: Ի՞նչ քայլ(եր) է Սուրբ Հոգին դրդում ձեզ՝ անել:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Ձեր ինքնությունը չի որոշվում ազգությամբ, անցյալով, հասարակական կարգավիճակով կամ կրթությամբ: **Ձեր ինքնությունը որոշվում է Աստծո շնորհքով:**

Այն *ճշմարտությունները*, որոնք օգնեցին ինձ ավելի զորավոր կերպով հասկանալ շնորհքը, հետևյալն են...

_____

_____

_____

Սուրբ Հոգին դրդում է ինձ կատարել հետևյալ *քայլերը*...

_____

_____

_____

10. Մի քանի րոպե տրամադրե՛ք և հիշե՛ք այս շաբաթվա դասի հիմնական սկզբունքները: Դրանից հետո ձեր բառերով կարճ նկարագրեք՝ ինչպես է Աստծո շնորհքը զորացնում ձեզ ակնառու կյանքով ապրելու համար:

Շնորհքը կարողություն է տալիս ինձ ապրել ակնառու կյանքով հետևյալ կերպ…

_____

_____

_____

Դուք ճանաչո՞ւմ եք այն մարդկանց, ում այս ճշմարտությունը կարող է խրախուսել: Ժամանակ հատկացրեք և պատմե՛ք նրանց այս մասին:

Այս թեմայի շուրջ ավելին իմանալու համար տե՛ս *Ջոնի* «Արտասովոր կյանք» դասընթացը:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Ամենակարո՛ղ Աստված, որ ստեղծել ես մեզ Քո պատկերով. ճնշումները չընդունելու և չարին խիզախորեն հակառակվելու **կարողություն տո՛ւր**, և որպեսզի կարողանանք երկյուղածությամբ օգտագործել մեր ազատությունը: Օգնի՛ր մեզ, Քո սուրբ անվան փառքի համար կիրառել այն՝ հաստատելով արդարություն մեր համայնքներում և ազգերի մեջ»:

— Վիլյամ Վիլբերֆորս[5]

Ճարտարական ԿՈՉ

Գտե՛ք մի կարիք, որը կարող եք հոգալ: Միգուցե ինչ-որ մեկը, ով ապրում է ձեր հարևանությամբ, ֆինանսական դժվարություն ունի, և դուք կարող եք օգնել նրան՝ վճարել որևէ հաշիվ կամ մթերք գնել: Դուք կարող եք խնամել որևէ միայնակ մոր երեխայի, որպեսզի նա որոշ ժամանակ կարողանա հանգստանալ: Դուք կարող եք ընթրիքի հրավիրել ծանոթ ուսանողների, ովքեր մենակ են ապրում: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ բացել ձեր աչքերը՝ տեսնելու համար որևէ կարիք ձեր շրջապատում, և ցույց տալ, թե ինչպես կարող եք հոգալ այն:

Օր 1. **ԱՃԵ՛Ք ՇՆՈՐՀՔՈՎ**

«Բայց **աճե՛ք** մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի (Մեսիայի) **շնորհքով** (բարեհաճություն, որին չենք արժանացել, հոգևոր զորություն) և ճանաչողությունով գիտությունով և հասկացողությունով: Նրան [լինի] փա՛ռք (պատիվ, մեծություն և վայելչություն) և՛ այժմ, և՛ մինչև հավիտենության օրը: Ամե՛ն (թո՛ղ այսպես լինի)»:

— Բ Պետրոս 3.18, AMP

Շնորհքն Աստծո զորացումն է կյանքի համար: Ինչպես շունչը մեր թոքերի և արյունը՝ երակների մեջ, այն կյանք է տալիս մեր ողջ էությանը: Պետրոս առաքյալի միջոցով Աստված պատվիրում է մեզ՝ աճել շնորհքի մեջ: «Աճել» բառը ենթադրում է ժամանակ, իսկ ժամանակը՝ գործընթաց: Անկասկած՝ շնորհքի մեջ աճելը տեղի է ունենում *ամբողջ կյանքի* ընթացքում: Այն վերահսկվում է Աստծո և իրականացվում Սուրբ Հոգու կողմից:

Աճել շնորհքի մեջ նշանակում է հասունանալ Քրիստոսի մեջ: Աստված սահմանել է սա Իր բոլոր զավակների համար (տե՛ս Հռոմ. 8.29,30): Հենց սրա մասին էր խոսում Պողոսը, երբ ասում էր, որ մենք գնում ենք «հավատքից՝ հավատք» և «փառքից՝ փառք» (տե՛ս Հռոմ. 1.17, Բ Կորնթ. 3.18): Քայլ առ քայլ, օրըստօրե մենք սովորում ենք, թե ինչպես պետք է խնդրել, ստանալ և գործադրել Աստծո շնորհքը: Ահա թե ինչ է ասում Պողոսը.

«Եվ այժմ [եղբայրներ] ես հանձնում եմ ձեզ Աստծուն [ես ավանդում եմ ձեզ Նրա հսկողությանը՝ վստահելով ձեզ Նրա պաշտպանությանը և հոգատարությանը]: Եվ ես հանձնում եմ ձեզ **Նրա շնորհքի խոսքին** [Նրա բարեհաճության պատվիրաններին, խորհուրդներին և խոստումներին, որոնց մենք չենք արժանացել]: Այն կարող է շինություն տալ ձեզ, տալ նաև [ձեր օրինավոր] ժառանգությունը բոլոր նրանց հետ (նվիրվածների, մաքրվածների և վերափոխված անձ ունեցողների), ում Աստված առանձնացրել է Իր համար»:

— Գործք 20.32, AMP

Ո՞րն է շնորհքի աղբյուրը: Ինչպե՞ս է այն գործում, և ի՞նչ դուք կարող եք անել՝ համոզվելու համար, որ աճում եք դրանում:

_____

_____

Ըստ Եփեսացիների 4.11-16-ի՝ ուրիշ ի՞նչ է Աստված տվել ձեզ՝ հոգևորում աճելու համար: Ի՞նչ է ասում այս հատվածը ձեզ:

_____

_____

Կարդացե՛ք Եբրայեցիների 12.14,15-ը: Ի՞նչ կապ կա այս երկու խոսքերի միջև, և ինչպե՞ս են սրանք առնչվում Աստծո շնորհքից *ետ մնալու* կամ այն *չպահելու* հետ:

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Եփեսացիների 4.30-32, Ա Կորնթացիների 1.10

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մեր Նոր կտակարանում շնորհքի մասին գրված է 155 անգամ, որոնցից 130-ը պատկանում է Պողոսի գրչին: Այդ խոսքով սկսվում և ավարտվում է նրա յուրաքանչյուր նամակը, նաև գերիշխում է դրանց մեջ: Այն սահմանում է նրա ուսմունքը և նրա ամենանվիրական հույսերը: Շնորհքն այն վեհաշուք չափանիշն է, որով նա կամենում է չափել թե՛ իր և, թե՛ ձեր կյանքը»:

— Դեյվիդ Ջերեմայա[6]

Օր 2. ՇՆՈՐՀՔԸ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ՁԵԶ՝ ԱՊՐԵԼ ՍՈՒՐԲ ԿՅԱՆՔՈՎ

«Աղաչո՛ւմ ենք ձեզ, որ ընդունեցիք Աստծո շնորհքը, թույլ չտա՛ք, որ այն զուր լինի... Ուստի **մաքրե՛նք մեզ** ամեն ինչից, որ պղծում է մարմինը կամ անձը, և լինենք կատարելապես սուրբ»:

— *Բ Կորնթացիների 6.1,7.1 TEV*

Աստծո զորացնող շնորհքի գլխավոր օրհնություններից մեկը սուրբ կյանքով ապրելու կարողությունն է, ինչպես ապրում էր Հիսուսը: Ճիշտ է, Նրա արյունը մաքրում է մեզ բոլոր մեղքերից, սակայն մենք կարիք ունենք համագործակցել Սուրբ Հոգու հետ և մաքրել մեր կյանքն ամեն ինչից, որ պղծում է մեր մարմինը կամ անձը *(միտքը, կամքը* և *զգացմունքները)*: Այդ թվում նաև մեր վերաբերմունքը և զգացմունքները, որոնք չեն համապատասխանում Աստծո Խոսքին: Ինչպե՞ս ենք մենք անում դա՝ Աստծո շնորհքով: Շնորհքը զուր է, եթե այն չենք օգտագործում մեր անձը մաքրելու համար:

Ի՞նչն է Աստված անմաքուր կամ պիղծ համարում:
Կարդացե՛ք Եփեսացիների 5.3-5 • Հակոբոս 1.19,21, 3.5-10 • Ա Պետրոս 2.1 • Բ Կորնթացիների 6.14, 7.1

_____

_____

Կարդացե՛ք Մատթեոս 15.10,11,18-րդ խոսքերը: Որտեղի՞ց են գալիս պղծությունները: Ինչպե՞ս դուք կարող եք պաշտպանվել դրանցից:

_____

_____

Ի՞նչ է Աստված տվել մեր անձերը սրբելու համար: Ինչպե՞ս ենք մենք օգտագործում դա:
Կարդացե՛ք Սաղմոս 119.9,11 • Հովհաննես 15.3, 17.17 • Եփեսացիների 5.25,26 • Հակոբոս 1.21-25 • Ա Պետրոս 1.22, 2.2 • Կողոսացիների 3.16

_____

_____

Այլևս ո՞վ է մասնակցում մեր մաքրման ընթացքին: Ինչպիսի՞ արձագանք մենք պետք է տանք:
Կարդացե՛ք Փիլիպեցիների 1.6, 2.12,13 • Ա Թեսաղոնիկեցիների 5.23,24 • Հռոմեացիների 6.19,22

_____

_____

Արդյո՞ք Սուրբ Հոգին ցույց է տալիս ինչ-որ անմաքուր բան ձեր կյանքում: Միգուցե դա վերաբերմունք է, գործողություն, փոխհարաբերություն, մտածելակերպ կամ խոսելաոճ: Ինչպե՞ս դուք կարող եք համագործակցել Նրա հետ և մաքրել ձեր անձը:

_____

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Եսայի 1.16, Երեմիա 4.14
Հակոբոս 4.8, Ա Հովհաննես 3.3, Բ Տիմոթեոս 2.20-23

Օր 3. ՇՆՈՐՀՔԸ ՏԱԼԻՍ ՁԵԶ ՎԱՌ ԿԵՐՊՈՎ ԼՈՒՍԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

«Բարձրացի՛ր, Ի՛մ ժողովուրդ: Թո՛ղ քո լույսը շողա այնպես, որ բոլոր ազգերը տեսնեն: Որովհետև Տիրոջ փառքը տարածվում է քեզանից: Սև խավարը գիշերվա նման կծածկի երկրի բոլոր ժողովուրդներին, բայց Տիրոջ փառքը կշողա քեզ վրա: Բոլոր ազգերը կգան դեպի քո լույսը. զորավոր թագավորները կգան, որպեսզի տեսնեն Տիրոջ փառքը քեզ վրա»:

— *Եսայի 60.1-3, TLB*

«Աստված ասաց. «Ես հրամայում եմ լույսին՝ շողալ»: Եվ լույսը սկսեց շողալ»» (Ծննդոց 1.3, CEV): Սա Նրա ցանկությունն էր սկզբում և է մինչև օրս: Հիսուսն ասաց.

«Դուք այստեղ եք, որպեսզի լույս լինեք և բացահայտեք Աստծո գույներն աշխարհում: Աստված գաղտնիք չէ, որը պետք է պահել: Մենք ցուցադրում ենք սա բոլորին՝ ինչպես սարի վրա գտնվող քաղաքը: Եթե ես լույսի կրողներ դարձրի ձեզ, ապա մի՛ կարծեք, որ ես թաքցնելու եմ ձեզ դույլի մեջ: Ես դնում եմ ձեզ լույսի պատվանդանի վրա: Իսկ հիմա, երբ դրեցի ձեզ սարի գագաթին, լույսի պատվանդանի վրա, **լուսավորե՛ք**: Լա՛յն բացեք ձեր դռները, առատաձեռն եղեք մարդկանց նկատմամբ: Բաց լինելով մարդկանց համար՝ դուք կդրդեք նրանց՝ բացել իրենց սիրտն Աստծո առջև՝ առատաձեռն երկնային Հորը»:

— *Մատթեոս 5.14-16, MSG*

Մտածե՛ք Հիսուսի խոսքերի և Աստծո կոչի մասին՝ գրված Եսայի 60.1-3-ում: Ի՞նչ է ասում ձեզ Տերը Իր լույսը լինելու մասին:

_____

_____

Պատկերացրե՛ք, որ ձմռան ամենախիստ պահին էլեկտրաէներգիայի մատակարարումը դադարեցվում է մի քանի օրով: Երկար գիշերների ընթացքում խավարն այնքան թանձր է, որ նույնիսկ ձեր ձեռքի ափն աչքերի առջև պահելով՝ այն չեք տեսնում: Որքա՜ն ուրախ կլինեիք, երբ լույսը կրկին միացնեին: Ինչպե՞ս է սա օգնում ձեզ՝ ավելի գթասիրտ լինել նրանց հանդեպ, ովքեր ապրում են հոգևոր խավարում: Ինչպե՞ս դա կփոխի ձեր վարքը խանութում, շրջապատում, ընտանիքում և այլուր:

_____

_____

_____

Ինչի՞ շնորհիվ է Աստծո փառքը լուսավորում մեզ և տարածվում մեզանով:

Կարդացե՛ք Սաղմոս 34.5 • Բ Կորնթացիների 3.18, 4.6 • Փիլիպեցիների 2.14,15 • Եսայի 58.10

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Ժողովող 8.1, Սաղմոս 19.8, 119.105, 130, Բ Պետրոս 1.19

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մեզնից յուրաքանչյուրը կանչված է հասարակության տարբեր բնագավառներում: Այս կյանքում որտեղ էլ լինենք, մենք պետք է առաջնորդ և առաջատար լինենք: Մեր ստեղծարարությունը պետք է ոգեշնչի մարդկանց, և նրանք պետք է ձգտեն մեր նորամուծություններին յուրաքանչյուր բնագավառում: Ցանկացած վայրում և բնագավառում, որտեղ կան հավատացյալներ, պետք է առատորեն դրսևորվի նրանց ստեղծագործական մոտեցումը, արդյունավետությունը, խաղաղությունը և խորաթափանցությունը: Աստծո շնորհքի միջոցով մենք պետք է լույս լինենք այս խավար աշխարհում:

Օր 4. ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ՆՊԱՏԱԿ

«Յուրաքանչյուրին տրվել է ինչ-որ գործ, որը ցույց է տալիս, թե Ով է Աստված: Յուրաքանչյուրը ներգրավվում է սրանում. շահում են բոլորը»:

— Ա Կորնթացիների 12.7, MSG

Ձեր մատնահետքերը և ձայնը, աչքերի ձևը և ատամների մակերեսը. այս ամենը խոսում են մեկ բանի մասին, որ դուք եզակի եք: Աստված նույնպես տվել է ձեզ պարգևներ, տաղանդներ և կարողություններ, որոնք առանձնացնում են ձեզ: Դուք սպառազինված եք՝ իրականացնելու համար հատուկ առաքելություն, որ այլևս ոչ ոք այս երկրի վրա չի կարող իրականացնել: Աստված և այլ մարդիկ հավատում են, որ դուք կգնաք մինչև վերջ:

Հավատաք, թե՝ ոչ, ձեր կյանքի ամեն օրը գրված էր նույնիսկ մինչև ձեր ծնվելը: Մինչև հասարակական-տեղեկատվական ցանցերի ստեղծումը, անգամ մինչև աշխարհի արարումը Աստված ձայնագրել է ձեր կյանքի ամեն օրը: Տեսե՛ք, թե ինչ է Նա ասում Իր Խոսքում.

«Դու ստեղծեցիր իմ մարմնի բոլոր նուրբ, ներքին մասերը և գործեցիր ինձ իմ մոր որովայնում: Շնորհակալություն, որ այսքան հրաշալիորեն բարդ ես ստեղծել ինձ: Քո գործը սքանչելի է. որքա՜ն քաջատեղյակ եմ այդ մասին: Դու դիտում էիր, թե ինչպես էի ես ձևավորվում լիովին մեկուսի վայրում, ինչպես էի ես գործվում որովայնի խավարում: Դու տեսար ինձ մինչև իմ ծնվելը: Կյանքիս բոլոր օրերը գրանցված էին Քո գրքում: Ամեն պահը գրառված էր, երբ իմ օրերից ոչ մեկը դեռ չկար: Որքա՜ն թանկ են Քո մտքերն իմ մասին, ո՜վ Աստված: Դրանք անկարելի է հաշվել: Ես չեմ կարող նույնիսկ հաշվել դրանք. դրանք ավելի շատ են, քան ավազահատիկները»:

— Սաղմոս 139.13-18, NLT

Դուք հավատո՞ւմ եք, որ Աստված մտածում է ձեր մասին և բարի ծրագիր ունի ձեր կյանքի համար: Դուք հավատո՞ւմ եք, որ Նրա մտքերը ձեր մասին թանկարժեք և անհաշվելի են: Ի՞նչ է Նա հաղորդում ձեզ այս խոսքերի միջոցով:

_____

_____

Բացահայտե՛ք ձեր պարգևներն ու տաղանդները: Ի՞նչն է իսկապես հաջողվում ձեզ: Արդյո՞ք մարդիկ վկայում են ինչ-որ բանի մասին, որ ձեզ մոտ լավ է ստացվում: Ի՞նչ է դուր գալիս ձեզ: Կարո՞ղ եք տեսնել, թե ինչն է կապակցվում այս հարցերի պատասխաններում: Այս պատասխանները կօգնեն ձեզ՝ կարճ նկարագրել ձեր կոչումը:

Ինձ դուր է գալիս կամ ինձ մոտ գերազանց ստացվում է...

_____

Մարդիկ ասում են, որ ինձ մոտ լավ է ստացվում...

_____

Այս պատասխանների լույսի ներքո ես զգում եմ, որ իմ կոչումն է...

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Երեմիա 1.5, Եսայի 49.1, Եփեսացիների 2.10, Երեմիա 29.11, Հռոմեացիների 12.4-8

Օր 5. ԴՈՒՔ ԳՏՆՎՈՒՄ ԵՔ ՃԻՇՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՐՔՈՒՄ

«Այդ իսկ պատճառով քանի դեռ հնարավորություն ունենք, պետք է բարի գործենք յուրաքանչյուրին, հատկապես նրանց, ովքեր հավատքի ընտանիքից են»:
— Գաղատացիների 6.10, NLT

Աստծո ժողովուրդն ամենուր է: Ձեր գտնվելու վայրը պատահական չէ. դուք գտնվում եք ճիշտ ռազմավարական դիրքում: Նրա նպատակն է, որպեսզի դուք թագավորեք կյանքում հենց այնտեղ, որտեղ ապրում եք, շոշափելի կերպով դրսևորեք Իր արքայության հատկանիշները և փառք բերեք Իրեն: Որպես Քրիստոսի մարմնի մաս՝ դուք զորացված եք, որպեսզի նպաստեք բարուն, կործանեք չարը և հույս տաք մարդկանց զարմանալի միջոցներով:

Ինչո՞ւ է Աստված տալիս մեզ Իր շնորհքը: Ինչո՞ւ է Նա տալիս Իր օծությունը, իմաստությունը, ստեղծարարությունը և Իր Հոգու հարության զորությունը: Այս բաները նախատեսված չեն պարզապես մեր և մեր ընտանիքների օգուտի համար: Նա տալիս է Իր շնորհքի զորությունը, որպեսզի մենք այն մատակարարենք մեզ շրջապատող մարդկանց՝ թե՛ նրանց, ում հետ շփվում ենք այսօր, թե՛ նրանց, ովքեր կհայտնվեն մեր կյանքում:

Հիշե՛ք ձեր կյանքը: Ո՞ւմ է Աստված օգտագործել՝ ձեզ օրհնելու համար: Որտե՞ղ կլինեիք դուք, եթե այդ մարդիկ չհնազանդվեին Աստծուն:

_____

_____

Արդյո՞ք դուք ընդամենը պահոց եք, որը միայն վերցնում է օրհնությունները, թե՞ խողովակ, որի միջոցով Աստված կարող է հոսեցնել Իր բարիքները:

_____

Աղոթե՛ք և խնդրե՛ք Աստծուն՝ տալ ձեզ զգայուն սիրտ, որպեսզի ցանկանաք օգնել մարդկանց:

Ո՞ւմ կյանքում եք ներկայումս լցնում Աստծո օրհնությունները: Միգուցե դուք զգում եք, թե ինչպես է Աստված մղում ձեզ՝ օգնել որևէ մարդու, ընտանիքի, համայնքի կամ խմբի: Ինչպե՞ս է Նա ցանկանում, որ անեք դա:

_____

_____

Աստված ցանկանում է, որպեսզի դուք հատկապես մտածեք *այրիների*, *որբերի* և *աղքատների* մասին: Կարդացե՛ք Սաղմոս 68.5 • 146.5-9 • Առակաց 15.25 • Երեմիա 49.11 • Հակոբոս 1.27

Ի՞նչ է ցանկանում Աստված, որպեսզի անենք նրանց համար: Ինչպե՞ս կարող ենք օրհնվել դրա շնորհիվ:
Կարդացե՛ք Սաղմոս 41.1-3, 82.3,4 • Եսայի 1.17 • Երեմիա 22.3 • Առակաց 19.17, 21.13, 28.27

_____

_____

Ո՞ր ընտանիքին, անհատին կամ կազմակերպությանն եք օգնություն ցուցաբերելու այս հանձնարարությունը կատարելու համար:

_____

_____

Օր 6. ՁԵԶ ՎԻՃԱԿՎԱԾ Է ՀԱՂԹԵ՛Լ

*«Տերը կդարձնի քեզ **գլուխ**, ոչ թե պոչ: Դու միշտ վերևում կլինես, և երբեք՝ ներքևում, եթե հավատարմորեն հնազանդվես քո Տեր Աստծո պատվիրաններին, որ Ես տալիս եմ քեզ այսօր»:*

— Երկրորդ Օրինաց 28.13, GW

Իշխել կյանքում Աստծո շնորհքով նշանակում է դուրս գալ կյանքի սովորական հունից: Դուք չեք ապրում այս աշխարհում աշխատավարձ ստանալու և բանկում գումար կուտակելու համար, որպեսզի մեկ օր թոշակի գնաք: Դուք դարձել եք առաջնորդ և առաջատար ձեր մասնագիտական ոլորտում: Դուք *բերում* եք երկինքը երկրի վրա:

Ո՞ր բնագավառում եք աշխատում:

_____

Օրինակ՝ Բժշկության, կրթության, քաղաքականության, շինարարության, տեղեկատվական, սպասարկման, գործարար ոլորտներում, ծառայության, երեխաների դաստիարակության և այլն.

Նկարագրե՛ք, թե ինչպես կարելի է *իշխել կյանքում* **ձեր** մասնագիտական ոլորտում: Ինչպե՞ս ձեր գործընկերները պետք է արձագանքեն ձեր քայլերին:

_____

_____

Այն պայմանը, որ Աստված սահմանել է «գլուխ» դառնալու համար, *Նրա պատվիրաններին հնազանդվելն է*: Կարդացե՛ք Սավուղի անկման պատմությունն Ա Թագավորաց 15-րդ գլխում: Ի՞նչ կարող եք սովորել Սավուղի օրինակից և կիրառել ձեր կյանքում: Ի՞նչ է նշանակում հնազանդությունն Աստծո համար:

_____

_____

Հնազանդությունը օրհնություններ է բերում ձեր կյանքում: Ծանոթացե՛ք այն խոստումներին, որոնց մասին գրված է հետևյալ խոսքերում.
Մատթեոս 12.50 • Հովհաննես 14.23, 15.9-11 • Երկրորդ Օրինաց 28.1,14 • Հեսու 1.7,8 • Ա Թագավորաց 3.14 • Եսայի 1.19

_____

Լռությամբ եկե՛ք Տիրոջ առջև: Հարցրեք Նրան, թե արդյոք կա՞ որևէ բան, որ Նա խնդրել է ձեզնից, իսկ դուք մասամբ եք կատարել կամ ընդհանրապես չեք կատարել: Գրե՛ք այն, ինչ Նա ցույց է տալիս: Անհրաժեշտության դեպքում խնդրե՛ք Նրան՝ ներել ձեզ անհնազանդության համար և տալ շնորհք՝ Նրա առաջնորդությանը կատարելապես հնազանդվելու համար:

_____

_____

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Շնորհքն Աստծո զորացումն է ակնառու կյանքով ապրելու համար այնպես, ինչպես ապրում էր Հիսուսը: Իմաստությունը, ստեղծարարությունը, մաքրությունը, սրբությունը և հասարակությունը փոխելու կարողությունն ընդգրկված են շնորհքի մեջ և հնարավոր են շնորհքով: Ուր էլ գնաք և ինչ էլ անեք՝ Աստված ցանկանում է, որպեսզի դուք լուսավորեք՝ հայտնելով Իր բնավորությունը և փառավորելով Իրեն:

Նշումներ

(1) Թոնի Էվանս *«Վերջապես ազատ»* (Չիկագո՝ Իլինոյս. «Moody Publishers», 2001թ.) էջեր 97, 99: (2) Չարլզ Սթենլի *«Վարվել իմաստությամբ»* (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishers», 2002թ.) էջեր 18,42: (3) Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարան»*-ի *առաջին հրատարակություն* (1828թ.), պատճենման միջոցով վերահրատարակված «Foundation for Americal Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո՝ Կալիֆոռնիա, 2000թ.) (4) *«Life Application Bible»* հեղ. իրավունքները՝ 1988, 1989, 1990, 1991 «Tyndale House Publishers, Inc.» Ուիտոն՝ Իլինոյս, 60189: Բոլոր իրավունքները պաշտպանված են: («New International Version», էջեր 1473-1475) «New International Version»-ը համատեղ հրատարակվում է «Tyndale House Publishers, Inc.» և «Zondervan Publishing House»-ի կողմից: Նույնպես փոփոխված «Word in LIfe™ Study Bible»-ից, հեղ. իրավունքները՝ 1993, 1996 «Thomas Nelson Inc.»-ի կողմից: Օգտագործված է ըստ թույլտվության («New King James Version», էջեր 1444-1452): (5) *«Հաստա՛տ կանգնիր. 365 ուղերձ ձեր հավատքը զորացնելու համար»*, համադրող՝ Փեթի Մ. Համմել (Սան Լուիս Օբսիպո՝ Կալիֆոռնիա, «Parable») էջ 226: (6) *Դեյվիդ Ջերեմայա, «Հափշտակված շնորհքով»*, (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson, Inc.», 2006թ.), էջ 13:

*«Հիսուսը պատասխանեց. «Ես հավաստիացնում եմ քեզ. մինչև վերստին չծնվես, երբեք չես կարող **տեսնել** Աստծո արքայությունը… Ճշմարտությունն այն է, որ ոչ ոք չի կարող **մտնել** Աստծո արքայությունն առանց ջրից և Հոգուց ծնվելու»»:*

— Հովհաննես 3.3,5, NLT

Գլուխ 4

ՏԵՍՆԵԼ ԿԱՄ ՄՏՆԵԼ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 4-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 6-րդ գլխից:

1. Եթե դուք ցանկանում եք իշխել կյանքում, ապա պետք է հասկանաք, թե ինչ է Աստծո արքայությունը: Մտածե՛ք Հիսուսի և Պողոս առաքյալի այս խոսքերի մասին: Որտե՞ղ է Աստծո արքայությունը և այն ինչի՞ց բաղկացած չէ: Ի՞նչ *չէ* Աստծո արքայությունը:

«Հարցվելով փարիսեցիներից այն մասին, թե երբ կգա Աստծո արքայությունը՝ Նա պատասխանեց նրանց՝ ասելով. «Աստծո արքայությունը չի գալիս տեսանելի նշաններով կամ երևացող կերպով, ո՛չ էլ մարդիկ կասեն. «Տե՛ս [այն] այստեղ է,- կամ,- տե՛ս [այն] այնտեղ է»: Որովհետև ահա Աստծո արքայությունը ձեր ներսում է [ձեր սրտում] և ձեր միջև [ձեր շուրջը]»»:

— Ղուկաս 17.20,21, AMP

«Աստծո արքայությունը կապ չունի ուտելու և խմելու հետ: Այն կապված է Աստծուն հաճեցնելու, խաղաղության մեջ ապրելու և ճշմարիտ երջանկություն ունենալու հետ: Այս ամենը գալիս է Սուրբ Հոգուց»:

— Հռոմեացիների 14.17, CEV

«Որովհետև Աստծո արքայությունը պարզապես շատ խոսելու մեջ չէ, այլ՝ Աստծո զորությամբ ապրելու մեջ է»:

— Ա Կորնթացիների 4.20, NLT

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Հիսուսը շատ է խոսում Աստծո արքայության մասին: Իրականում այն հիշատակված է Նոր կտակարանում ավելի քան 100 անգամ: Շատերը մտածում են, որ Աստծո արքայությունը երկինքն է, բայց իրականում խոսելով արքայության մասին՝ Հիսուսը նկատի ուներ **Աստծո իշխանությունը**: Բոլորը, ովքեր ընդունել են Աստծո շնորհքը և ծրիաբար արդարացվել Աստծո առջև, պետք է իշխեն կյանքում. մենք պետք է տարածենք Նրա արքայությունը՝ բերելով Նրա կյանքն այս երկիր:

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Հովհաննես 18.36

ԱՍՏՑՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ամենից հաճախ օգտագործվող հունարեն արտահայտությունը, որը թարգմանվում է որպես *«Աստծո արքայություն»*, *«բասիլեա դե Թեոսն»* է: *«Թեոս»* նշանակում է «Աստված՝ գերագույն աստվածություն», իսկ *«բասիլեան»* ունի

«թագավորություն, իշխանություն կամ իշխանության տիրույթ» իմաստները: *«Բասիլեա»*-ի արմատական բառը նշանակում է «զորության հիմքը»[1]: Այնպես որ, կարելի է ասել, որ Աստծո արքայությունն *Աստծո թագավորական իշխանությունն է կամ Աստծո կայսերական իշխանությունը*: «կայսերական» բառի սահմանումներից մեկը «գերագույն զորություն ունեցող»-ն է: Այսպիսով, Աստծո արքայությունն **Աստծո գերագույն, զորավոր իշխանությունն է**[2]:

Կյանքի դասեր Աստծո արքայությունից

Աստծո արքայությունը նման է...	Կյանքի դասը	Գտե՛ք սա...
Թագավորի, ով ցանկանում էր իր ծառաների հետ հաշիվ տեսնել	Ներում	Մատթեոս 18.21-35
Սերմնացանի, ով սերմ էր ցանում հողում	Աստված է տալիս աճը	Մարկոս 4.26-29
Մանանեխի սերմի	Երբեք մի՛ թերագնահատեք Աստծո զորությունը	Մատթեոս 13.31,32, Մարկոս 4.30-32, Ղուկաս 13.18,19
Մարդու, ով բարի սերմ ցանեց իր արտում	Կան ճշմարիտ և կեղծ հավատացյալներ. Աստված կդատի, թե ով ինչպիսին է	Մատթեոս 13.24-30, 36-43
Թթխմորի, որ մի կին ավելացրեց մեծ քանակությամբ խմորի մեջ	Աստծո զորությունն ունի մեծ, հեռանկարային ազդեցություն	Մատթեոս 13.33, Ղուկաս 13.20,21
Թաքնված գանձի, որ մի մարդ գտավ դաշտում	Աստծո արքայության արժեքն անգնահատելի է	Մատթեոս 13.44
Վաճառականի, որը թանկարժեք մարգարիտներ էր փնտրում	Աստծո արքայության արժեքն անգնահատելի է	Մատթեոս 13.45,46
Ձկնորսական ցանցի՝ գցված ծովի մեջ, որն ամեն տեսակի ձկներ է հավաքել	Աստված Դատավոր է, որ կայացնելու է վերջնական դատաստանը	Մատթեոս 13.47-50
Տանտիրոջ, որ հանում է նոր և հին գանձերը	Հիսուսի «նոր» ուսմունքը կապակցված է Հին կտակարանի հետ և հաստատված՝ Հին կտակարանով	Մատթեոս 13.52
Տանտիրոջ, ով մշակներ վարձեց իր այգու համար	Բոլորը փրկված են շնորհքով	Մատթեոս 20.1-16
Թագավորի, ով մեծ խնջույք էր կազմակերպել	Աստված նախանձախնդրորեն ցանկանում է, որպեսզի յուրաքանչյուրը լինի Իր հետ երկնքում	Մատթեոս 22.1-14, Ղուկաս 14.15-24
Տասը կույսերի, ովքեր վերցրին իրենց լապտերները՝ փեսային դիմավորելու համար	Ամեն ժամանակ պատրաստ եղեք Քրիստոսի վերադարձին	Մատթեոս 25.1-13
Գործատուի, ով տաղանդներ տվեց իր ծառաներին՝ գործի մեջ ներդնելու համար	Աստված պարգևներ է տալիս մեզնից յուրաքանչյուրին: Նա գիտի, որ մենք կարող ենք ճիշտ վարվել դրանց հետ, և հատուցում է ակնկալում	Մատթեոս 25.14-30

2. Տեսնելով *«Աստծո արքայություն»* արտահայտությունն Աստվածաշնչում, փոխարինի՛ր այն իր հունարեն բնագրի իմաստով. «**Աստծո գերագույն, զորավոր իշխանություն**»: Այս դեպքում մենք ավելի պարզ կընկալենք այս արտահայտության իմաստը: Կա՛նգ առեք և մտորե՛ք այս զարմանալի հռչակումների շուրջ:

«Մեր Հա՛յր, որ երկնքում ես, Քո անունը սո՛ւրբ լինի, Քո [գերագույն, զորավոր իշխանությունը] գա, Քո կա՛մքը լինի, ինչպես երկնքում, այնպես էլ երկրիս վրա»:

— Ղուկաս 11.2

«Երանի՜ աղքատներիդ, որ ձերն է [Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը]»:

— Ղուկաս 6.20, NLT

«Երբ Հիսուսը տեսավ, թե ինչ էր տեղի ունենում, Նա զայրացավ աշակերտների վրա: Նա ասաց նրանց. «Թողե՛ք, որպեսզի երեխաները գան Ինձ մոտ: Մի՛ արգելեք նրանց: Որովհետև [Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը] պատկանում է նրանց, ովքեր այս երեխաների նման են: Ճշմարտությունն եմ ասում ձեզ՝ ցանկացած մարդ, ով չի ընդունում [Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը] երեխայի նման, երբեք չի մտնի դրա մեջ»»:

— Մարկոս 10.14,15, NLT

«Փնտրե՛ք [Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը] մնացած ամեն ինչից առավել, և Նա կտա ձեզ ամեն ինչ, ինչի կարիքը դուք ունեք»:

— Ղուկաս 12.31, NLT

Ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ Աստծո արքայության՝ Իր գերագույն, զորավոր իշխանության մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

*«Հիսուսը պատասխանեց. «Ես հավաստիացնում եմ քեզ. մինչև դուք վերստին չծնվեք, երբեք չեք կարող **տեսնել** Աստծո արքայությունը... Ճշմարտությունն այն է, որ ոչ ոք չի կարող **մտնել** Աստծո արքայությունը առանց ջրից և Հոգուց ծնվելու»»:*

— Հովհաննես 3.3,5, NLT

3. Այն հավատացյալները, ովքեր պարզապես տեսնում են Աստծո արքայությունը, նման են ինքնաթիռի ուղևորների: Նրանք, ովքեր *մուտք* են գործում արքայության մեջ, *օդաչուների* են նման: Նկարագրե՛ք տարբերությունը «ուղևոր» և «օդաչու» լինելու միջև: Ինչպիսի՞ առավելություններ ունեն օդաչուները: Ո՞ր խմբին եք պատկանում դուք:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«*«Քո արքայությունը գա: Քո կամքը լինի, ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»:* Այս արտահայտությունը պարզապես նշանակում է, որ ճշմարիտ աղոթքի մարդը հետաքրքրված չէ իր սեփական արքայությամբ: Նա հետաքրքրված է Աստծո արքայությամբ և նրանով, որ Նա ցանկանում է իրականացնել: ...Մենք պետք է խնդրենք. «Հա՛յր, ի՞նչ ես *Դու* ցանկանում: Ի՞նչ ես *Դու* ցանկանում, որ կատարվի երկրի վրա»: Աստված ուրախանում է, երբ դուք ոգևորված եք այն ամենի համար, ինչի համար Նա է ոգևորված: Նա կօրհնի ձեզ՝ Իր աշխատանքը երկրի վրա կատարելու ընթացքում»»:

— Դր. Մայլս Մոնրո[3]

«Ուղևոր» քրիստոնյաներ **«Օդաչու» քրիստոնյաներ**

_____
_____
_____
_____
_____
_____

ՏԵՍՆԵԼ կամ ՄՏՆԵԼ

«Տեսնել» բառը Հովհաննես 3.3-ի հունարեն տեքստում *«էյդո»*-ն է: Այն նշանակում է «տեսնել, ընկալել, տեղյակ լինել կամ ծանոթ լինել»: Հովհաննես 3.5-ում Հիսուսը բարձրացնում է հավատացյալներին նոր մակարդակի՝ օգտագործելով **«մտնել»** բառը՝ հունարեն *«էյզերխոմայ»*-ը, որը նշանակում է «կանգնել և մուտք գործել» կամ «մուտք գործել»[4]: Աստծո բոլոր զավակները կարող են տեսնել արքայությունը. նրանք ծանոթ են Աստծո գերագույն, զորավոր իշխանությանը և տեղյակ են դրա մասին: Բայց Նրա զավակներից բոլորը չեն մտնում արքայության մեջ: Նրանք, ովքեր **մտնում** են, կանգնում և մուտք են գործում Աստծո գերագույն, զորավոր իշխանության մեջ: Տարբերությունը մեծ է:

ԽՍ 4. Հիսուսն ասում է, որ հարուստների համար բառացիորեն անհնար է մտնել արքայության՝ Աստծո գերագույն, զորավոր իշխանության մեջ (տե՛ս Մատթ. 19.24): Բայց արքայությունը ձրիաբար տրվում է նրանց, ովքեր աղքատ են (տե՛ս Ղուկ. 6.20): Բացատրե՛ք, թե ինչ նկատի ունի Հիսուսը, երբ օգտագործում է *«հարուստ»* և *«աղքատ»* բառերը: Ինչպիսի՞ մտածելակերպ ունեն նրանք և ինչի՞ վրա են դրել իրենց հույսը:

ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ...

_____
_____
_____
_____

ԱՂՔԱՏՆԵՐԸ...

_____
_____
_____
_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. տե՛ս «Անկոտրում հոգի» գրքի 68-71 էջերում:

5. Արքայությունը տեսնելուց դեպի արքայությունը մտնելու համար մենք պետք է անցնենք շատ *նեղությունների* միջով (տե՛ս Գործք 14.22): Բայց Աստված չի ցանկանում, որ մենք տրտմենք. Նա ցանկանում է, որպեսզի մենք ուրախանանք:

Մտորե՛ք այս զորավոր խոստումների շուրջ...

«Ես ասացի ձեզ այս բաները, որպեսզի Ինձանում [կատարյալ] ուրախություն և վստահություն ունենաք: Այս աշխարհում դուք նեղություններ և փորձություններ և վիշտ և հուսահատություն կունենաք. բայց ցնծացե՛ք [լցվեք խիզախությամբ, եղեք վստահ, համոզված, անվեհեր]: Որովհետև ես հաղթել եմ աշխարհին: **[Ես զրկել եմ այն՝ ձեզ վնասելու զորությունից և նվաճել եմ այն ձեզ համար]**»:

— Հովհաննես 16.33, AMP

«Մի՛ վախեցիր, որովհետև ես փրկագնել եմ քեզ: Ես կանչել եմ քեզ անունով. դու Իմն ես: Երբ գնաս խոր ջրերով, ես քեզ հետ կլինեմ: Երբ գնաս դժվարությունների գետերով, դու չես խորտակվի: Երբ քայլես ընկճվածության կրակով, դու չես այրվի. կրակը քեզ չի լափի: Որովհետև ես եմ Տերը՝ քո Աստվածը՝ Իսրայելի Սուրբը, քո Փրկիչը»:

— Եսայի 43.1-3, NLT

«Որովհետև Նա [Աստված] Ինքն ասաց, ես ոչ մի դեպքում հուսախաբ չեմ անի քեզ, ո՛չ էլ կլքեմ քեզ, ո՛չ էլ կթողնեմ քեզ առանց օգնության: [Ես] ո՛չ մի, ո՛չ մի, ո՛չ մի վայրկյան անօգնական չեմ թողնի քեզ, ո՛չ էլ բաց կթողնեմ [քեզ] (Իմ գրկից բաց չեմ թողնի քեզ): [Հիրավի, ո՛չ]: Այնպես որ մենք մխիթարվում ենք և խրախուսվում և վստահաբար ու համարձակությամբ ասում. «Տերն իմ Օգնականն է. ես չեմ բռնվի տագնապով [ես չեմ վախենա կամ վեհերի կամ սարսափի]: Ի՞նչ կարող է անել ինձ մարդը»:

— Եբրայեցիների 13.5,6, AMP

Ինչպե՞ս են Աստծուց տրված այս խոստումները խրախուսում և զորացնում ձեզ՝ կյանքի փորձություններին դիմակայելու համար:

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Սաղմոս 28.6-9, 37.23,24,39,40, Առակաց 2.8, Եսայի 41.10-14, 54.10, Բ Տիմոթեոս 4.18

ՆԵՂՈՒԹՅՈՒՆ

«Նեղություն» բառը հունարեն բնագրում *«թլիփսիս»*-ն է: Ջեյմս Սթրոնգը սահմանում է այն որպես «ճնշում, հալածանք, տառապանք կամ փորձանք»[5]: Թայերի բառարանում սահմանումն այսպիսին է. «կնոջ լարվածությունը կամ հյուծվածությունը ծննդաբերության ժամանակ»[6]: Ըստ *«Աստվածաշնչյան բառերի հանրագիտարան»*-ի՝ *«թլիփսիս»*-ը «մեծ զգացմունքային կամ հոգևոր ճնշվածություն» է, որը կարող է առաջանալ արտաքին կամ ներքին ճնշումների պատճառով: Այս բառը Նոր կտակարանում օգտագործվում է հիսունհինգ անգամ, որոնցից հիսուներեքը փոխաբերական իմաստով է: Այդ ճնշումը կարող է գալ թշնամիներից, անբարենպաստ հանգամանքներից, սխալ որոշումներից կամ անկառավարելի զգացմունքներից[7]:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Եթե մեր Հայրը թույլ է տալիս, որ մեր կյանքում փորձություն գա, ապա պատճառն այն է, որ այդ փորձությունն ամենահաճելի և ամենալավ բանն է, որ կարող է պատահել մեզ, և մենք այն պետք է ընդունենք գոհությունով՝ Նրա թանկագին ձեռքից: Փորձությունն ինքնին կարող է դժվար լինել մարմնի և արյան համար, և ես նկատի չունեմ, որ մեզ պետք է դուր գա այն չարչարանքը, որ մենք կրում ենք դրա պատճառով: Բայց մենք կարող ենք և պետք է սիրենք Աստծո կամքն այդ փորձության մեջ, որովհետև Նրա կամքը միշտ հաճելի է թե՛ ուրախության, թե՛ տրտմության մեջ: Մեր փորձությունները կարող են լինել մեր կառքերը… որ կտանեն մեզ դեպի հաղթությունը, որին մենք մեծապես փափագում ենք»:

— Հաննա Ուիթալ Սմիթ[8]

6. Մենք ունենալու ենք նեղություններ, բայց Աստված երբեք չի առաջնորդի մեզ դեպի այն փոթորիկը, որը հաղթահարելու համար Նա զորություն չի տվել մեզ: Նկարագրե՛ք այն փոթորիկը, որի մեջ դուք հիմա գտնվում եք: Ըստ Հիսուսի օրինակի՝ ի՞նչ կարող եք ակնկալել անմիջապես այն բանից հետո, երբ բարեհաջող կերպով անցնեք այդ փոթորկի միջով:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ՝ իմաստություն ստանալու համար.

«Եվ Հիսուսը Հոգու զորությունով ետ դառավ *[անապատից]* Գալիլեա. և Նրա համբավը դուրս գնաց այն գավառի ամեն կողմերը»:

— Ղուկաս 4.14

«Որովհետև ես համարում եմ, որ այս ներկա ժամանակվա *(այս ներկա կյանքի)* հալածանքները արժանի չեն համեմատվելու այն փառքի հետ, որ պետք է հայտնվի մեզ և մեզանում և մեզ համար և շնորհվի մեզ»:

— Հռոմեացիների 8.18, AMP

«Երանի՜ այն մարդուն, ով դիմանում է փորձությանը, որովհետև, եթե անցնի այդ փորձությունը, կստանա կյանքի թագը, որ Աստված խոստացել է նրանց, ովքեր սիրում են Իրեն»:

— Հակոբոս 1.12, NIV

«Եվ այն բանից հետո, երբ դուք մի փոքր չարչարվեցիք, ամեն շնորհքի Աստված [Ով փոխանցում է ողջ օրհնությունն ու բարեհաճությունը], Ով կանչել է ձեզ դեպի Իր [իսկ] հավիտենական փառքը Քրիստոս Հիսուսի մեջ, Անձամբ կկատարելագործի ձեզ և կդարձնի այնպիսին, ինչպիսին դուք պետք է լինեք, ապահով կերպով կհաստատի և կկանգնեցնի ձեզ և կզորացնի և կհիմնի ձեզ»:

— Ա Պետրոս 5.10, AMP

[Քառակուսի փակագծերում գրված բառերը պարզեցնելու համար են]:

Ես փոթորկի մեջ եմ հետևյալ բնագավառում…

_____

_____

_____

Հիմնված Աստծո Խոսքի վրա՝ ես ակնկալում եմ…

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. տե՛ս «Անկոտրում հոգի» գրքի 75-78 էջերում:

Խ 7. Նեղությունը չարչարանք է առաջացնում, բայց եթե չարչարվում ենք Հիսուսի հետ, ապա նույնպես փառավորվում ենք Նրա հետ և բաժնեկից լինում Նրա հարության զորությանը: Ձեր բառերով կարճ բացատրեք՝ որն է չարչարանքը հանուն այս աշխարհի և չարչարանքը հանուն արդարության: Կյանքի ո՞ր բնագավառում եք դուք չարչարվել արդարության համար:

Չարչարանք հանուն այս աշխարհի

Չարչարանք հանուն արդարության

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Պողոսն օգտագործում է հունարեն *«թլիփսիս»* բառը՝ խոսելով չարչարանքի մասին: Այդ բառն օգտագործվում է այնպիսի ճնշման ժամանակ, ինչպիսին, օրինակ, խաղող ճզմելն է՝ հյութ ստանալու համար: Մենք մեր ճանապարհին նեղություններ չենք որոնում, բայց անկասկած՝ օգուտ ենք քաղում դրանցից: Վատ ժամանակները մեզ վառելանյութ են տրամադրում՝ վերափոխման համար: Դրանք դարձնում են մեզ ավելի ուժեղ, ազնիվ, իմաստուն և արժանի, որպեսզի ծառայենք Աստծուն հարաճուն կարողությամբ»:

— Դեյվիդ Ջերեմայա[9]

*«Ես կփառաբանեմ և գոհություն կտամ Քեզ սրտի ուղղությունով, երբ սովորեմ [**սրբացման փորձառություններով**] Քո արդար դատաստանները [Քո որոշումները և դատաստաններն ընդդեմ որոշակի մտքի և վարքի ձևերի]»:*

— Սաղմոս 119.7, AMP

8. Յուրաքանչյուր նեղություն *սրբացման փորձառություն է* Աստծո ձեռքերում: Եթե նեղության ժամանակ մենք ճիշտ վարվենք և առաջնորդվենք Նրա շնորհքով, ապա այն կզորացնի մեզ այս կյանքում իշխելու համար ավելի, քան կարող ենք պատկերացնել: Հիշե՛ք մի մեծ փորձություն, որը երկարատև ու լարված է եղել, և որին դուք դիմացել և հաղթահարել եք: Որքանո՞վ այն ձեզ ավելի նման դարձրեց Քրիստոսին և զորացրեց՝ այլ մարդկանց ծառայելու համար:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Աստված **չէ** նեղության *«թլիփսիս»*-ի հեղինակը: Նա գիտի, որ մենք ապրում ենք այնպիսի աշխարհում, որը հակառակ է Իր ճանապարհներին, և եթե ցանկանում ենք լինել հաղթողներ և իշխել այս կյանքում, ապա չար ուժերը դիմակայելու են մեզ: Այդ իսկ պատճառով Նա մարզում է մեզ այն բնագավառներում, որտեղ մենք կարող ենք դիմանալ, որպեսզի զորացնի ավելի մեծ նվաճումների համար:

«Տերը կազատի ինձ ամեն չար հարձակումից և ապահով կբերի ինձ Իր երկնային արքայությունը: Ողջ փառքն Աստծուն հավիտյանս հավիտենից: Ամե՛ն»:
— Բ Տիմոթեոս 4.18, NLT

ԽՍ 9. Անչափ կարևոր է նայել նեղություններին և չարչարանքներին Աստծո տեսանկյունից: Այս դասից հետո կարողացա՞ք ավելի լավ հասկանալ դժվարությունների դերը: Ո՞րն է ամենախրախուսող ճշմարտությունը, որ դուք սովորեցիք: Ժամանակ տրամադրեք, որպեսզի գոհանաք Աստծուց և պատմեք մարդկանց այն, ինչ դուք իմացաք:

_____
_____
_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մեր կյանքը երբեք չի լինի առանց չարչարանքների: Այնպես որ, մի՛ վախեցեք չարչարանքներից: Ձեր չարչարանքը մեծ սիրո գործիք է, եթե գործածեք այն: … բայց երբ մարդիկ, ովքեր փափագում են Քրիստոսին, կիսվում են իրենց չարչարանքով՝ հրաշալի պարգև և սիրո նշան է: Անկասկած՝ Քրիստոսի չարչարանքը պարգև է, սիրո մեծագույն պարգևը, որովհետև Նրա չարչարանքը քավեց մեր մեղքերը»:
— Մայր Թերեզա[10]

Ճաքաքական ԿՈՉ

Այս շաբաթվա ընթացքում ժամանակ հատկացրեք մեկ կամ ավելի Ավետարան կարդալու համար և *«Աստծո արքայություն»* արտահայտությունը փոխարինեք *«Աստծո գերագույն, զորավոր իշխանություն»*-ով: Մտորե՛ք այն խոսքերի շուրջ, որոնցում հանդիպում է այս արտահայտությունը և խնդրե՛ք Աստծուն՝ ավելի շատ հայտնություններ տալ Իր ներկա իշխանության մասին: Գրե՛ք ստորև այն, ինչ սովորեցիք դրա արդյունքում:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Օր 1. ԼՑՎԵ՛Ք ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

«Մշտապես լցվե՛ք և խրախուսվե՛ք Սուրբ Հոգով»:

Եփեսացիների 5.18, AMP

Ինչպիսի՞ օրհնություն է Սուրբ Հոգին: Նա Շնորհքի Հոգին է: Նա շնորհք է տալիս մեզ և գործադրում շնորհքի զորությունը մեր կյանքում: Պենտեկոստեի օրը Նա եկավ առաջին անգամ՝ մարդու հոգու մեջ բնակվելու համար: Աստծո արքայությունը ներխուժեց երկիր իր ողջ ուժով: Հոգու թափվելը, որի մասին մարգարեացել էր Հովելը, այս իրադարձության սկիզբն էր (տե՛ս Հովել 2.28,29):

Աստվածային միջամտության այս նոր հարթության մեջ Հիսուսի հետևորդները զորություն ստացան, որպեսզի մտնեն Աստծո գերագույն, զորավոր իշխանության մեջ և տարածեն այն: Այդ ժամանակ այն, ինչ գործում էր աշակերտների կյանքում, այսօր գործում է մեր կյանքում: Մենք կտեսնենք Աստծո արքայության գալուստը «…ոչ թե զորությունով և ոչ թե ուժով, այլ՝ Իմ Հոգով,- ասում է Զորաց Տերը» (Զաքարիա 4.6): Ահա թե ինչու է Աստված ցանկանում, որպեսզի ամեն օր մենք **լցված** լինենք Իր Հոգով:

Եթե բաժակը լի է ջրով, ապա այնտեղ տեղ չկա այլ բաների համար: Եթե մենք լցված ենք այլ բաներով, ապա մենք տեղ չենք ունենա Սուրբ Հոգու համար: Խորհե՛ք, թե ինչ եք մտածում, ինչ եք խնդրում աղոթելիս և ինչով եք զբաղված ամբողջ օրը: Ինչո՞վ եք լցված: Միգուցե ձեր ներսում ամեն ինչ խառնվա՞ծ է: Աղոթե՛ք և խնդրե՛ք Աստծուն՝ հայտնել, թե ինչ կա ձեր սրտում:

_____

_____

_____

Կարդացե՛ք Հովհաննես 14.16,17,26 և 16.12-15 խոսքերը նաև հավատացյալների աղոթքը Գործք 14.23-33-ում: Եթե դուք լցված եք Սուրբ Հոգով, ապա շնորհքի ինչպիսի՞ դրսևորումներ կարող եք ակնկալել:

_____

_____

_____

_____

Կարդացե՛ք Եսայի 40.28-31, Գործք 1.4,5,8 և Սաղմոս 23.1-3,5 խոսքերը: Ինչպիսի՞ սկզբունքներ կարող եք առանձնացնել և կիրառել ամեն օր, որպեսզի կարողանաք պահպանել Սուրբ Հոգու լեցունությունը:

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Եփեսացիների 3.14-19,
Կողոսացիների 1.9-13

_____

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Դուք կարող եք ստանալ Աստծո այն շնորհքը, որը տրվեց հալածող Սավուղին: Դուք կարող եք ստանալ նույն Սուրբ Հոգու լեցունությունը, որը նա ստացավ: Մի՛ բավարարվեք ցանկացած վերապրումով, որն ավելի ցածր է, քան մկրտությունը, որ առաքյալներն ընդունեցին Պենտեկոստեի օրը, իսկ դրանից հետո ավելի ու ավելի լցվեք Աստծո օրհնյալ Հոգով»:

— Սմիթ Վիգլսվորդ[11]

Օր 2. ՀԱԳԵՑԵ՛Ք ԱՍՏԾՈ ԽՈՍՔՈՎ

*«Թո՛ղ Քրիստոսի **Խոսքն** իր ողջ իմաստությունով և հարստությունով **բնակվի ձեր մեջ**: Օգտագործե՛ք սաղմոսներ, հիմներ և հոգևոր երգեր, որպեսզի խրատեք և սովորեցնեք ձեզ Աստծո բարության մասին: Երգե՛ք Աստծուն ձեր սրտերում»:*

— Կողոսացիների 3.16, GW

Ամենաարժեքավոր բաներից մեկը, որ կարող եք անել, հատկապես նեղության ժամանակ, Աստծո Խոսքով լցվելը կամ հագենալն է: Սուրբ Հոգու ձեռքում ոչինչ ավելի մեծ զորություն չունի: Իմ զոքանչը՝ Շիրլին, վարվեց այսպես. երբ նրա մոտ մահացու քաղցկեղ հայտնաբերվեց, նա փակվեց բոլոր բացասական տեղեկությունների և պարտություն բերող մտքերի համար, որոնք մշտապես անհանգստություն են պատճառում: Նա փոխարինեց դրանք Սուրբ Հոգու ճշմարտությամբ: Անկոտրում կերպով պայքարելով ուժգին *թլիփսիսի* դեմ Խոսքի միջոցով՝ նա ստացավ կյանքի պսակը և այժմ իշխում է այն բնագավառում, որտեղ հարատևեց: Ինչպիսի՜ վկայություն Աստծո զորացնող շնորհքի մասին:

Ինչո՞ւ է Խոսքն ավելի արժեքավոր, քան ցանկացած այլ տեղեկատվության աղբյուր, որ հայտնի է մարդկանց:

Կարդացե՛ք Սաղմոս 119.89 • Եսայի 40.8 • Մատթեոս 24.35 • Ա Պետրոս 1.25 • Բ Տիմոթեոս 3.16,17 • Բ Պետրոս 1.20,21

_____
_____
_____
_____
_____

Ինչպիսի՞ ազդեցություն է թողնելու ձեր կյանքում Նրա զորությունը, որ տրվել է ձեզ վերստին ծնունդի ժամանակ:

Կարդացե՛ք Եբրայեցիների 4.12 • Հակոբոս 1.21 • Հովհաննես 8.31,32 • Երեմիա 23.29 • Առակաց 4.20-22 • Սաղմոս 19.7-11, 107.20

_____
_____
_____
_____
_____

Ի՞նչ եք *ձեռնարկելու*՝ Խոսքով լցվելու համար: Աղոթե՛ք և խնդրեք Նրան՝ տալ ձեզ գործնական միջոց՝ Նրա հավիտենական ճշմարտության հարուստ պաշարները յուրացնելու համար: Նա գիտի, թե ինչպես է դասավորված ձեր ժամանակը և ցույց կտա ձեզ համար լավագույնը: Գրե՛ք այն, ինչ Նա խոսում է ձեր սրտում:

_____
_____
_____
_____
_____

Օգտվե՛ք հետևյալ միջոցներից. հոգևոր գրքեր, ուսմունքներ, ներբեռնված նյութեր, դասընթացներ և երաժշտություն:

Օր 3. ԻՄԱՍՏՈՒՆ ԿԵՐՊՈՎ ԸՆՏՐԵՔ ՁԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

«Ես՝ որպես ինձ ընկեր, ընտրում եմ յուրաքանչյուրին, ով երկրպագում է Քեզ և հետևում Քո ուսմունքներին»:

— Սաղմոս 119.63, CEV

Դուք կարող եք ձևավորել ևս մեկ սովորություն, որը կփոխի ձեր ողջ կյանքը. ուշադի՛ր եղեք, թե ովքեր են ձեր մտերիմ ընկերները: Կա մի հին, ճշմարիտ ասացվածք. «Ցո՛ւյց տուր, թե ով է ընկերդ, և ես ցույց կտամ քո ապագան»: *Մեր* ընկերական *ներքին շրջանակը* կարող է ձևավորել մեր կյանքի ընթացքը և որակը: Լավ ընկերակցությունը մեր մեջ ձգտում կառաջացնի ավելի ջանասիրաբար գործել և հետևել Աստծուն, իսկ վատ ընկերակցությունը մեր մեջ կմարի Քրիստոսի կյանքը և կարող է տանել սխալ ուղղությամբ: Եթե մենք ցանկանում ենք անկոտրում կերպով ապրել Նրա համար, ապա պետք է իմաստությամբ ընտրենք այն մարդկանց, ում հետ անցկացնում ենք մեր ժամանակի մեծ մասը:

Կարդացե՛ք Սաղմոս 1.1 • Առակաց 4.14,15, 22.24,25, 24.1,2 • Ա Կորնթացիների 5.11, 15.33 • Բ Կորնթացիների 6.14-18 • Առակաց 13.20, 17.17, 27.5,6,17 • Ժողովող 4.9,10 • Մաղաքիա 3.16,17

Մենք պետք է հասնենք կորած մարդկանց և ազդեցություն թողնենք նրանց կյանքում, ովքեր ապրում են փոխզիջման մեջ: Ինչպե՞ս կարող ենք ընտրություն անել մեր ընկերական շրջապատի հանդեպ և միևնույն ժամանակ լինել աղ և լույս՝ չփրկված ու խաբված մարդկանց համար:

_____

_____

*«Դուք այստեղ եք, որպեսզի լույս լինեք և բացահայտեք Աստծո գույներն աշխարհում: Աստված գաղտնիք չէ, որը պետք է պահել: Մենք ցուցադրում ենք սա բոլորին, ինչպես որ սարի վրա գտնվող քաղաքն է ցուցադրված: ...Ես դնում եմ ձեզ լույսի պատվանդանին: Իսկ հիմա՝ երբ դրեցի ձեզ սարի գագաթին, լույսի պատվանդանին, **լուսավորե՛ք**: Լայն բացեք ձեր դռները, առատաձեռն եղեք մարդկանց հետ: Բաց լինելով այլ մարդկանց համար՝ դուք կդրդեք նրանց՝ բացել իրենց սրտերն Աստծո՝ առատաձեռն երկնային Հոր առջև»:*

— Մատթեոս 5.14-16, MSG

Ո՞վ է խրախուսում ձեզ՝ հետևել Աստծուն, հավատալ Նրա Խոսքին և աճել Քրիստոսի մեջ:

_____

_____

Փա՜ռք Աստծուն այս մարդկանց համար. աղոթե՛ք նրանց համար և շատ շփվեք նրանց հետ:

Ժամանակ հատկացրեք «կատարյալ ընկերոջ» հատկանիշները նկարագրելու համար: Ինչպե՞ս պետք է նրանք օգնեն ձեզ՝ անկոտրում կյանքով ապրելու համար: Ի՞նչ պետք է նրանք ասեն և անեն: Խնդրե՛ք Աստծո շնորհքն այսպիսի ընկեր լինելու համար. ինչպե՞ս կարող եք այսպիսին լինել ձեր շրջապատում:

_____

_____

_____

Օր 4. ՀԻՇԵ՛Ք, ԹԵ ԻՆՉ ԱՐԵՑ ՀԻՍՈՒՍԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ

«Պարզապես մտածե՛ք *(Հիսուսի մասին)*, Ով կրեց այսպիսի վշտալի հակառակություն և դառը թշնամանք մեղավորների կողմից [հաշվի առեք և նկատի ունեցեք այս ամենը՝ համեմատելով ձեր փորձությունների հետ], որպեսզի ուժասպառ չլինեք և չհյուծվեք՝ հուսահատվելով, թուլանալով և նվաղելով ձեր մտքերում»:

— Եբրայեցիների 12.3, AMP

(Փակագծերում գրված բառերն ավելացված են պարզեցնելու համար):

Հիսուսն ապրում էր անկոտրում կյանքով: Նա անցնում էր դժվարություններով և փորձություններով այնպես, ինչպես և մենք, և հաղթահարում էր դրանք Աստծո շնորհքի զորությամբ: Երբ մենք հիշում ենք, թե ինչ կրեց Նա, մեր սիրտը և անձը կազդուրվում են: Եբրայեցիների 12.2,3-րդ խոսքերը «Մեսիջ» Աստվածաշնչում գրված են այսպես. «Մի՛ հեռացրեք ձեր աչքերը Հիսուսից, Ով և՛ սկսեց, և՛ ավարտեց այն ընթացքը, որը մենք անցնում ենք»:

Ուսումնասիրե՛ք, թե ինչպես Նա արեց դա: Քանի որ Նա երբեք տեսադաշտից չկորցրեց Իր նպատակակետը՝ Աստծո հետ և Աստծո մեջ ունեցած այն ուրախալի ավարտը: Նա կարողացավ դիմանալ Իր ճանապարհին հանդիպած ամեն ինչին՝ խաչին, ամոթին… Եվ այժմ գտնվում է պատվի վայրում՝ անմիջապես Աստծո կողքին:

Երբ դուք պարզեք, որ թուլացել եք ձեր հավատքի մեջ, կրկին անդրադարձեք այդ պատմությանը կետ առ կետ՝ այն երկարատև ու տաղտկալի թշնամանքին, որի միջով Հիսուսն անցավ: Սա կոգեշնչի ձեզ:

Ժամանակ հատկացրե՛ք և կարդացե՛ք, թե ինչ է գրված Ավետարաններում Քրիստոսի կյանքի վերջին ժամանակների մասին. Մատթեոս 26.57-75, 27.1-50 • Մարկոս 14.53-72, 15.1-37 • Ղուկաս 22.54-71, 23.1-46 • Հովհաննես 18.12-40, 19.1-30

Ավելի խոր ընկալման համար ընթերցե՛ք բոլոր հատվածները:

Ինչպիսի՞ ծառայություն է մատուցել Հիսուսի չարչարանքը և զոհը անձամբ ձեզ:

_____

_____

Ինչպե՞ս է Հիսուսի ընթացքը խրախուսում ձեզ՝ շարունակել ձեր ընթացքը:

_____

_____

Ուրիշ ի՞նչ է Սուրբ Հոգին ասում ձեզ: Արդյո՞ք Նա դրդում է փոխել ձեր վերաբերմունքը կամ կարծիքը որոշ հարցերում: Եթե այո, ապա որո՞նք են դրանք:

_____

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
ՉԱՐՉԱՐՎՈՂ ՇԱՌԱՆ. Եսայի 53.1-12
ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՎԱՅՐԸ. Փիլիպեցիների 2.5-11

Օր 5. ԹՈ՛Ւ ՏՎԵՔ, ՈՐՊԵՍԶԻ ՆԵՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՌՆԱ

*«Եվ մենք **վերափոխվում** ենք Նրա նմանությամբ հարաճուն փառքով, որը գալիս է Տիրոջից, Ով Հոգին է»:*

— Բ Կորնթացիների 3.18, NIV

Աստծո Խոսքն ասում է. «Հիսուսը Սուրբ Հոգով լցված… Հոգով տարվեց անապատ» (Ղուկաս 4.1): Մենք նույնպես անապատ կտարվենք Սուրբ Հոգու կողմից: Մեր կյանքում կլինի փորձության ժամանակ, երբ կթվա, թե չկա աճ, միայն չորություն ու տապ է:

Սուրբ գրքում ասվում է, որ փորձությունից հետո Հիսուսը *«Հոգու զորությունով ետ դառավ…»* (Ղուկաս 4.14): Ուշադրությո՛ւն դարձրեք. Նա մտավ փորձության մեջ՝ *լցված Հոգով*, իսկ դուրս եկավ փորձությունից Հոգու զորությունով: Նրա մտնելու և դուրս գալու միջև **վերափոխում** էր տեղի ունեցել:

Բ Կորնթացիների 3.18-ում գրված *«վերափոխվել»* բառը հունարեն *«մետամորֆոս»*-ն է: Այն *«մետա»* և *«մորֆոս»* բառերի համադրությունն է: *«Մետա»* նշանակում է *փոխանակում*, իսկ *«մորֆոս»*՝ մարդու *արտաքին տեսք*: Միասին այս երկուսը նշանակում են «ձևափոխել կամ վերափոխել մարդու արտաքին տեսքը»[12]:

Ուշադի՛ր կարդացեք Ղուկաս 4.1-14-ը (Աստվածաշնչի այս մեկ թարգմանությունը, եթե հնարավոր է):

Ինչպե՞ս սատանան հարձակում գործեց Հիսուսի վրա անապատում: Ինչպե՞ս է նա հարձակվում ձեզ վրա:

_____

_____

_____

Ինչպե՞ս Հիսուսը պատասխանեց դրան: Ի՞նչ կարող եք սովորել դրանից և կիրառել ձեր կյանքում:

_____

_____

_____

Արդյո՞ք դուք կրկին ու կրկին բախվում եք նույն փորձություններին և հաջողության չեք հասնում: Խնդրե՛ք Աստծուն՝ ցույց տալ, թե ինչպիսի փոփոխություններ է պետք կատարել ձեր կյանքում, որպեսզի տեղի ունենա այն վերափոխումը, որ Նա ցանկանում է: Գրե՛ք այն, ինչ Նա ասում է ձեզ:

_____

_____

_____

*«[Որովհետև իմ մտադրությունն ու նպատակն է] …որպեսզի ես այնպես հաղորդակից լինեմ Նրա չարչարանքներին, **որ շարունակաբար վերափոխվեմ** [հոգով Նրա նմանությամբ]՝ կերպարանակից դառնալով Նրա մահվանը»:*

— Փիլիպեցիների 3.10, AMP

Օր 6. ԻՄԱՑԵ՛Ք, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ Է

«Ուրեմն ի՞նչ պետք է ասենք սրան [այս ամենին]: Եթե Աստված մեր կողմից է, ո՞վ է [ո՞վ կարող է լինել] մեզ հակառակ: [ո՞վ կարող է լինել մեր թշնամին, եթե Աստված մեր կողմից է]»:

— Հռոմեացիների 8.31, AMP

Աստված մեր կողմից է: Որքա՜ն հրաշալի է: Ինչպիսի՜ զորավոր ճշմարտություն, որն արժանի է մեր ուշադրությանը: Մաքս Լուկադոն օգնում է մեզ խորապես ընմբռնել այս ճշմարտությունը.

«Դանդաղորեն կարդացեք այս արտահայտությունը. «Աստված մեր կողմից է»: Խնդրում եմ, կա՛նգ առեք մի պահ մինչև շարունակելը: Կրկի՛ն կարդացեք այն, այս անգամ բարձրաձայն: (Ներողություն խնդրեք իմ անունից ձեր կողքին գտնվող մարդուն:) «Աստված մեր կողմից է»: Կրկնե՛ք այս արտահայտությունը չորս անգամ՝ ամեն անգամ փոխելով շեշտը մի բառից մյուսը: (Դե լավ, դուք այնքան էլ չեք շտապում):

Աստված մեր կողմից է: Աստված **մեր** կողմից է: Աստված մեր **կողմից** է: Աստված մեր կողմից **է**:

Աստված ձեր կողմից է: Միգուցե ձեր ծնողները մոռացել են ձեզ, ձեր ուսուցիչներն անտեսել են ձեզ, իսկ ձեր հասակակիցներն ամաչում են ձեզնից, բայց պարզապես աղոթքի միջոցով դուք կարող եք հասնել Նրան, Ով ստեղծել է օվկիանոսները՝ Աստծուն:

Աստված ձեր կողմից **է**: Ո՛չ թե «միգուցե կլինի», ո՛չ թե «եղել է», «եղել էր», և ո՛չ էլ «կլինի», այլ՝ «Աստվա՛ծ **է**»: Նա ձեր կողմից է այսօր, այս ժամին, այս րոպեին: Երբ դուք կարդում եք այս նախադասությունը, կարիք չկա հերթ կանգնել կամ գալ վաղը. Նա ձեզ հետ է և չի կարող ավելի մոտ լինել ձեզ, քան այս վայրկյանին է: Նրա հավատարմությունը չի ավելանա, եթե դուք ավելի լավը դառնաք, և չի նվազի, եթե դուք ավելի վատը դառնաք: Նա ձեր կողմից է»»[13]:

Աստված ձեր կողմից է: Ի՞նչ են ասում այս խոսքերը ձեր սրտին հենց հիմա:

_____

_____

_____

Ո՞վ կամ ի՞նչ է ձեզ դեմ այժմ: Այն փաստը, որ Աստված ձեր կողմից է, ինչպե՞ս է օգնում ավելի պարզ և խոստումնալից կերպով նայել ձեր ներկա իրավիճակին:

_____

_____

_____

Դանդաղորեն կարդացեք Դավթի խոսքերը Սաղմոս 18.1-19-ում, որտեղ գրված է, թե ինչպես Աստված ազատեց նրան թշնամիներից: Ինչպե՞ս կարող եք համեմատել դա ձեր իրավիճակի հետ: Ինչպե՞ս է Դավիթն իր խոսքերով պատկերում Աստծուն: Ինչպե՞ս են դրանք խրախուսում ձեզ:

_____

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Սաղմոս 3.3-8, 20.6,7, 27.1-5, 118.6,7, Եսայի 41.10-14, Եբրայեցիների 13.5,6

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Աստծո արքայությունը նյութական վայր չէ, այլ Նրա զորության և բնավորության դրսևորումն է: Աստված պարզապես չի ցանկանում, որպեսզի մենք տեսնենք Նրա արքայությունը կամ տեղյակ լինենք դրա մասին. Նա ցանկանում է, որպեսզի մենք մտնենք դրա մեջ: Նա ցանկանում է, որպեսզի մենք փորձառաբար կանգնենք և մուտք գործենք Նրա գերագույն, զորավոր իշխանության մեջ: Մենք անում ենք սա նեղությունների ժամանակ: Ճիշտ վարվելու դեպքում նեղությունները կվերափոխեն մեզ ըստ Քրիստոսի պատկերի և կբարձրացնեն՝ կյանքում իշխելու ավելի բարձր մակարդակի վրա:

Նշումներ

(1) Սթրոնգի *«Աստվածաշնչի լիակատար համաբարբառ»*, Ջեյմս Սթրոնգ՝ Իրավագիտության և Աստվածաբանության դոկտոր (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishers», 1990թ.): (2) Հատվածն օգտագործված է Ջոն Բիվերի *«Անկոտրում հոգի»* գրքից (Կոլորադո Սփրինգս՝ Կոլորադո. «WaterBrook Press», 2011թ.), էջեր 68-71: (3) Դոկտոր Մայլս Մոնրո, *«Հասկանալ աղոթքի նպատակը և զորությունը»*, (Նյու Քենսինգթոն՝ Փենսիլվանիա, «Whitaker House», 2002թ.) էջ 120: (4) Տե՛ս նշում 1-ը: (5) Նույնը: (6) Թայերի *«Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան»*, Ջոզեֆ Հ. Թայեր (Grand Rapids, MI: «Baker Book House Company», 1977թ.) էջ 291: (7) Հատվածն օգտագործված է Ջոն Բիվերի *«Անկոտրում հոգի»* գրքից (Կոլորադո Սփրինգս՝ Կոլորադո. «WaterBrook Press», 2011թ.), էջեր 75-78: (8) Հաննա Ուիթալ Սմիթ. *«Քրիստոնյայի երջանիկ կյանքի գաղտնիքը»* (Գայնեսվիլ՝ Ֆլորիդա. «Bridge-Logos», 1998թ.) էջ 127: (9) Դեյվիդ Ջերեմայա, *«Հափշտակված շնորհքով»*, (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson, Inc.», 2006թ.), էջ 90: (10) Մայր Թերեզա, *«Չկա ավելի մեծ սեր»*, (Նովատո՝ Կալիֆոռնիա. «New World Library», 1997թ., 2001թ.), էջեր 136,137: (11) Սմիթ Վիգլսվորդ, *«Հաղթանակող հավատք»*, (Սփրինգֆիլդ՝ Միսսուրի. «Gospel Publishing House», 1938թ., 1966թ.), էջ 36: (12) Հատվածն օգտագործված է Ռիկ Ռենների *«Հունարենի գանձերը»* գրքից (Տալսա՝ Օկլահոմա. «Teach All Nations», 2003թ.) էջ 644: (13) Մաքս Լուկադո. *«Շնորհքի գրկում»* (Դալլաս՝ Տեխաս. «Word Publishing», 1996թ.), էջեր 173,174:

«Գողի նպատակը գողանալը, սպանելն ու կործանելն է: Իմ նպատակն է՝ տալ նրանց առատ և բավականություն պատճառող կյանք»:

— Հովհաննես 10.10, NLT

Գլուխ 5

Ո՞Վ Է ԿԱՆԳՆԱԾ ՆԵՂՈՒԹՅԱՆ ԵՏԵՎՈՒՄ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 5-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 7-րդ գլխից:

Խ 1. Անչափ կարևոր է, որ մենք գիտակցենք, որ լինելով հավատացյալ՝ մենք հոգևոր զինվորներ ենք և հոգևոր պատերազմի մեջ ենք: Բոլորս անցնում ենք հիմնական մարզումներ և ստանում հատուկ սպառազինություն, որը զորացնում և պաշտպանում է մեզ: Ուշադի՛ր կարդացեք այս խոսքերը: Ինչպիսի՞ հիմաստություն է տալիս ձեզ Սուրբ Հոգին՝ ավելի լավ զինվոր դառնալու համար:

«Մենք մարդիկ ենք, բայց պատերազմ չենք վարում մարդկային ծրագրերով և հնարքներով: Մենք օգտագործում ենք Աստծո զորավոր զենքերը, ոչ թե սոսկ մարդկային զենքեր՝ փլուզելու համար սատանայի բերդերը»:

— Բ Կորնթացիների 10.3,4, NLT

«Հագե՛ք Աստծո ամբողջ սպառազինությունը [լիովին զինված զինվորի սպառազինությունը, որ Աստված մատակարարում է], որպեսզի կարողանաք հաջողությամբ հակառակ կանգնել սատանայի [բոլոր] մարտավարություններին և խաբեություններին: …Սա ցերեկային սպորտային մրցույթ չէ, որտեղից կարելի է գնալ և մի քանի ժամ հետո մոռանալ այդ մասին: Սա կյանքի ու մահվան մշտական պայքար է մինչև վերջ սատանայի և նրա հրեշտակների դեմ»:

— Եփեսացիների 6.11,12, AMP, MSG

«Վերցրո՛ւ չարչարանքի քո մասը՝ որպես Հիսուս Քրիստոսի բարի զինվոր, ինչպես և ես, և որպես Քրիստոսի զինվոր՝ թույլ մի՛ տուր քեզ՝ կապված լինել այս աշխարհի գործերից, որովհետև այդ ժամանակ դու չես կարող հաճեցնել Նրան, Ով հավաքագրել է քեզ Իր բանակում»:

— Բ Տիմոթեոս 2.3,4, TLB

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ իր պատերազմը ֆիզիկական, բնական կամ մարմնավոր չէ: …Ձեր պատերազմը հոգևոր աշխարհում խավարի իշխանների դեմ է: Բոլոր ռազմաճակատներով ռազմատենչ պատերազմ է ընթանում անտեսանելի և շատ վտանգավոր թշնամիների դեմ: Եկեղեցին պետք է գործադրի իր իշխանությունը հոգևոր աշխարհի ուժերի դեմ, որպեսզի Քրիստոսի համար կարողանա շահել բոլոր մարդկանց»:

— Լեսթեր Սամրալ[1]

_____

_____

_____

_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Եթե դուք Քրիստոսում եք, ապա իսկապես որ *զինվոր* եք: Հիսուս Քրիստոսի սերմը ձեր մեջ է, այսինքն՝ դուք ունեք Նրա բնությունը: Նա մեծագույն պատերազմողն է, որ երբևէ քայլել է այս երկրի վրա: Քանի որ Քրիստոսը պատերազմող է, **դուք նույնպես պատերազմող եք**:

«Ամբարիշտը փախչում է առանց մեկին հալածելու, բայց արդարներն առյուծի պես ապահով են»:
— Առակաց 28.1

ԽՍ 2. Աստված ցանկանում է, որպեսզի մենք պատերազմենք *հավատքի* բարի *պատերազմը*՝ ամուր հարելով հավիտենական կյանքին, որի մեջ Նա մեզ կանչել է (տե՛ս Ա Տիմոթ. 6.12): Նա չի ցանկանում, որ մենք ընտրենք վախկոտի ճանապարհը՝ խուսափելով կամ փախչելով պատերազմից: Փոխարենը՝ Նա ցանկանում է, որ մենք քայլենք հերոսի ճանապարհով՝ խիզախորեն մտնելով պատերազմի մեջ և հաղթանակ տոնելով:

Մտորե՛ք Տիրոջ՝ այս խոստումների շուրջ.

«Բայց ես գոհանում եմ Աստծուց, որ միշտ առաջնորդում է մեզ հաղթանակի մեջ Քրիստոսի միջոցով»:

— Բ Կորնթացիների 2.14, GW

«Ձախջախիչ հաղթանակը մերն է Քրիստոսի միջոցով, Ով սիրեց մեզ»:

— Հռոմեացիների 8.37, NLT

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Որպես Քրիստոսի բանակի մաս՝ դուք համաքայլ գնում եք քաջարի հոգիների շարքերում: Ձեր կողքին գտնվող զինվորներից յուրաքանչյուրը Թագավորի զավակն է: Ոմանք, ինչպես և դուք, թեժ մարտի մեջ են՝ բոլոր կողմերից պաշարված դժվարություններով և գայթակղություններով: Մյուսներն իրենց հավատքի բազմաթիվ գրոհներից, հակագրոհներից և նորոգումներից հետո արդեն կանգնած են Երկնքի պարսպի վրա՝ որպես հաղթողներ: Այդտեղից նրանք նայում են և հորդորում ձեզ՝ երկրի վրա գտնվող իրենց ընկերներին՝ նրանց ետևից բարձրանալ սարը: Ահա նրանց աղաղակը. «**Կռվե՛ք** մինչև մահ, և այս Քաղաքը ձերը կլինի, ինչպես այժմ մերն է»:

— Վիլյամ Գարնալ[2]

«Յուրաքանչյուրը, որ ծնվել է Աստծուց, հաղթել է այս աշխարհը: Մեր հավատքն է, որ հաղթում է այս աշխարհը»:

— Ա Հովհաննես 5.4, GW

«Բայց ոչ մի զենք, որ շինված է քեզ դեմ, չի հաջողվի, և դու ցույց կտաս սխալմունքն ամեն լեզվի, որ բարձրանա ընդդեմ քեզ դատաստանի համար: Այս [խաղաղությունը, արդարությունը, անվտանգությունը, հաղթանակը՝ հակառակության հանդեպ] Տիրոջ ծառաների ժառանգությունն է [նրանց, որոնց մեջ Տիրոջ կատարյալ Ծառան վերարտադրում է Իրեն]. սա այն արդարությունը կամ արդարացումն է, որ նրանք ստանում են Ինձնից [սա այն է, ինչ Ես փոխանցում եմ նրանց՝ որպես նրանց արդարացումը],- ասում է Տերը»:

— Եսայի 54.17, AMP

Ո՞րն է այս խոսքերի կրկնվող թեման: Արդյո՞ք այս խոսքերը բորբոքում են քո սիրտը:

_____
_____
_____
_____
_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Ղուկաս 10.19

«Վկաների ինչպիսի՜ մեծ բազմություն է շրջապատում մեզ: Այնպես որ, մենք պետք է ազատվենք ամեն ինչից, որ դանդաղեցնում է մեր ընթացքը, հատկապես մեղքից, որը պարզապես բաց չի թողնում: Եվ մենք պետք է վճռականորեն վազենք այն ընթացքը, որ մեր առջևում է»:

— Եբրայեցիների 12.1, CEV

3. Հիսուսը պատվիրեց Իր աշակերտներին մտնել նավակը և անցնել մյուս ափը, այլ ոչ թե անցնել ճանապարհի կեսը և մահանալ փոթորկի պատճառով: Աշակերտները ստացել էին Նրա խոսքը և կարող էին կատարել Նրա առաջադրանքը: Եթե ինչ որ հարցում Աստված ասել է Իր խոսքը, ապա ամեն ինչ արդեն որոշված է: Միգուցե դուք խոսք կամ առաջնորդություն եք ստացել Աստծուց ինչ-որ հարցի վերաբերյալ, բայց դեռ քայլ չեք արել: Եթե այո՛, ապա ինչի՞ վերաբերյալ է այդ խոսքը և ի՞նչն է խոչընդոտում ձեզ անելու դա:

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Ղուկաս 4.1-4, Մատթեոս 14.25-32

«Մարդը չի ապրում միայն հացով, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Տիրոջ բերանից»:

— Երկրորդ Օրինաց 8.3, AMP

4. Բախվելով կյանքի փոթորիկներին և պայքարելով դրանց դեմ՝ դուք մեծ հաղթանակներ եք տոնում: Հիշե՛ք ձեր կյանքի փորձությունները: Անցնելով դժվարին իրավիճակներով՝ ինչպիսի՞ իմաստություն ստացաք, որն այսօր օգնում է ձեզ: Որքա՞ն մարդկանց կյանքում եք դրական ազդեցություն թողել այն պատճառով, որ դիմացել եք փորձությանը և հաղթել այն: Ինչպիսի՞ օգնություն եք ցուցաբերել նրանց:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Աստված երբեք չի առաջնորդի մեզ դեպի այն փոթորիկը, որը հաղթահարելու համար Նա զորություն, այսինքն՝ շնորհք չի տվել: Հավիտյան դաջե՛ք այս ճշմարտությունը ձեր սրտի վրա, որովհետև այն կզորացնի ձեզ, երբ նեղությունների հանդիպեք:

Այն *իմաստությունը*, որ Աստված սովորեցրեց ինձ դժվարին ժամանակներում.

_____

_____

_____

_____

Այն *մարդիկ*, ովքեր օգնություն ստացան, քանի որ ես անկորտրում կերպով հարատևեցի.

_____

_____

_____

_____

_____

«Ինչպիսի՜ հրաշալի Աստված ունենք. Նա մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրն է՝ ամեն ողորմության աղբյուրը, և Նա, Ով այսպես հրաշալիորեն մխիթարում և զորացնում է մեզ մեր դժվարությունների և փորձությունների ժամանակ: Եվ ինչո՞ւ է Նա անում սա: Որպեսզի երբ ուրիշները մտահոգված լինեն և մեր կարեկցանքի ու խրախուսանքի կարիքն ունենան, կարողանանք ցուցաբերել նրանց նույն օգնությունը և մխիթարությունը, որ Աստված տվեց մեզ»:

— Բ Կորնթացիների 1.3,4, TLB

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Կարևոր չէ, թե ինչպիսի դժվարություն, սատանայական դավադրություն կամ մեղադրանք է ուղղված մեր դեմ. այն ամենը, ինչ սատանան կօգտագործի կործանելու համար, փրկագնված է Աստծո սիրով, և նույն այդ միջոցն օգտագործվում է՝ մեզ կատարյալ դարձնելու համար: Եթե մենք հավատարմորեն փնտրենք Տիրոջը, հակառակությունը կլինի ինչպես վառելանյութ՝ լցված մեր սրտում վառվող Աստծո կրակի վրա»:

— Ֆրենսիս Ֆրենջիփեյն[3]

Խ 5. Աստված **չէ** աղբյուրը, հեղինակը կամ սադրիչն այն դժվարությունների *(թլիփսիսի)*, որոնց դուք բախվում եք, այլ՝ սատանան և նրա դիվային ուժերը: Ինչո՞ւ է հույժ կարևոր, որպեսզի դուք հասկանաք սա: Ի՞նչ տեղի կունենա, եթե դուք մտածեք, որ Աստված է դրանց աղբյուրը:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Խ 6. Շատ մարդկանց համար գլորման քար է եղել փորձությունների և գայթակղությունների աղբյուրը որոշելը: Ժամանակ *հատկացրե՛ք և մտորե՛ք* Հակոբոսի 1.13-17 խոսքերի շուրջ: Արդյո՞ք այս հատվածն օգնում է ձեզ իմանալ, որ Աստված չէ ձեր նեղությունների աղբյուրը: Որտեղի՞ց է գալիս մեղք գործելու ցանկությունը:

«Թույլ մի՛ տվեք որևէ մեկին, ով չարին տեղի տալու ճնշման տակ է, ասել. «Աստված փորձում է ծուղակ սարքել ինձ համար»: Աստված անթափանցելի է չարի համար, և Նա չարիք չի դնում ոչ մեկի ճանապարհին:

Չարին տեղի տալու գայթակղությունը [ցանկությունը] գալիս է մեզնից և միայն մեզնից: Մենք չպետք է մեղադրենք ոչ մեկին, բայց միայն մեր սեփական կրքի ցանկասիրական, հրապուրիչ բռնկմանը: Կիրքը հղանում է և երեխա ծնում, որը մեղքն է: Մեղքը մեծանում է և իսկական մարդասպան դառնում:

Այնպես որ, իմ սիրելի՛ ընկերներ, մի՛ շեղվեք ճիշտ ճանապարհից: Յուրաքանչյուր ցանկալի և օգտակար պարգև գալիս է Երկնքից: Այս պարգևները լույսի գետեր են, որոնք իջնում են Լույսի Հորից: Աստծո մեջ խաբուսիկ, երկերեսանի կամ անհաստատ ոչինչ չկա»:

— Հակոբոս 1.13-17, MSG

_____
_____
_____
_____

«Գողը գալիս է միայն գողանալու և սպանելու և կործանելու համար: Ես եկա, որպեսզի նրանք ունենան և վայելեն կյանքը, և ունենան այն առատությամբ (բերնեբերան լցված, մինչև եզրերից թափվելը)»:
— Հովհաննես 10.10, AMP

7. *Մեղքի* զգացումը և ամոթը թշնամու գլխավոր գործիքներն են, որ նա օգտագործում է մեր դեմ, որպեսզի թույլ չտա մեզ տարածել Աստծո արքայությունը: Գոհություն Աստծուն՝ Հիսուսը ոչ միայն ազատեց մեզ մեղքից, այլ նույնպես այն ամոթից ու մեղքի զգացումից, որ կապակցված են միմյանց: Ինչպիսի՞ բացահայտումներ կարող եք անել այս կենսատու ճշմարտություններից և ինչպե՞ս կարող եք օգտագործել դրանք թշնամու դեմ:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Սա այնքան պարզ է: Ցանկացած փորձություն, որ կապված է սպանելու, գողանալու կամ կործանելու հետ, թշնամու ձեռքի գործն է՝ նա է դրա աղբյուրը: Մյուս կողմից՝ Աստծո կամքը ձեզ համար կյանքն է իր ողջ լիությամբ: Երբ դուք բախվում եք ցանկացած փորձության, ճնշման կամ չարչարանքի, **օգտագործե՛ք Հովհաննես 10.10-ի** զտիչը՝ որոշելու համար՝ արդյո՞ք դրա հեղինակն Աստված է, թե՞ թշնամին:

«Ինչպես Սուրբ գիրքն է ասում՝ «Յուրաքանչյուրը, ով վստահում է Նրան, երբեք չի ամաչի»»:
— Հռոմեացիների 10.11, NIV

«Եվ այսպիսին էին ձեզանից ոմանք [մի ժամանակ]: Բայց դուք մաքուր լվացվեցիք (մաքրվեցիք մեղքի կատարյալ քավությամբ և ազատվեցիք մեղքի զգացումից), և դուք սրբագործվեցիք (առանձնացվեցիք, սրբացվեցիք), և դուք արդարացվեցիք [արդար հռչակվեցիք՝ վստահելով] Տեր Հիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծո [Սուրբ] Հոգու անունով»:
— Ա Կորնթացիների 6.11, AMP

«Բայց եթե մենք [իրականում] ապրում և քայլում ենք Լույսի մեջ, ինչպես Նա [Ինքը] Լույսի մեջ է, ապա մենք ունենք [ճշմարիտ, անխաթար] շփում իրար հետ, և Հիսուս Քրիստոսի՝ Նրա Որդու արյունը մաքրում (հեռացնում) է մեզ ողջ մեղքից և մեղքի զգացումից [մաքրված է պահում մեզ մեղքից իր բոլոր ձևերով և դրսևորումներով]»:
— Ա Հովհաննես 1.7, AMP

_____

_____

_____

_____

ՄԵՂՔԻ ԶԳԱՑՈՒՄ - ԱՄՈԹ - ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Մեղքի զգացումը նշանակում է «հանցանք, վիրավորանք կամ պարտք»: Այն արմատական բառը, որից առաջացել է այս բառը, նշանակում է «վճարել»: Մարդու մեղքի զգացումը գոյություն ունի այն պահից, երբ նա գիտակցաբար որևէ օրենք է խախտում, և այն պարտական է դարձնում նրան օրենքին: **Ամոթը** սահմանվում է որպես «ցավոտ զգացում, որն առաջանում է մեղքի զգացումը գիտակցելուց. գործողություն, որը խայտառակություն և անպատվություն է բերում, ինչի պատճառով մարդու երեսը շիկնում է»: **Դատապարտությունը** դատապարտման գործողություն է, որը նշանակում է «հայտարարել ամբողջովին մեղավոր կամ հանցավոր. մատնել կամ ենթարկել պատժի. այն նկատի ունի բացարձակ մերժում»[4]:

Ո՞վ է համարձակվում մեղադրել մեզ, ում Աստված ընտրել է՝ որպես Իրենը: Արդյո՞ք Աստված: Ո՛չ. հենց Նա է ներել մեզ և արդար դիրք տվել Իր առջև: Այդ դեպքում ո՞վ կդատապարտի մեզ: Արդյո՞ք Քրիստոսը: Ո՛չ. որովհետև հենց Նա մահացավ մեզ համար և կրկին կենդանացավ մեզ համար և նստած է բարձրագույն պատվի վայրում՝ Աստծո կողքին՝ բարեխոսելով մեզ համար երկնքում»:

— Հռոմեացիների 8.33,34, TLB

8. Բացի այն, որ մենք ազատ ենք մեղքի զգացումից և ամոթից՝ մենք նույնպես ազատ ենք դատապարտությունից: Անվանե՛ք այն երեք գլխավոր բնագավառները, որտեղ թշնամին փորձում է դատապարտություն բերել ձեզ վրա:

_____

_____

_____

Հաջորդ անգամ, երբ թշնամին փորձի մեղադրել ձեզ այն մեղքերի համար, որ դուք արդեն ապաշխարել եք, պատասխանեք նրան Աստծո Խոսքով: **Մտորե՛ք** այս ճշմարտությունների շուրջ և դրանք օգտագործեք թշնամու դեմ.

«Ուրեմն այլևս դատապարտություն չկա ինձ համար... Քրիստոս Հիսուսում, որովհետև ես չեմ վարվում իմ մարմնով, այլ՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ: Որովհետև կյանքի Հոգու օրենքը Քրիստոս Հիսուսում ազատ է արձակել ինձ մեղքի և մահվան օրենքից»:

— Հռոմեացիների 8.1,2, AMP

«Որովհետև Աստված չուղարկեց Իր Որդուն, որ դատի [մերժի, դատապարտի, մեղադրի] ինձ, այլ որպեսզի ես կարողանամ փրկություն գտնել և ապահով ու անվտանգ լինել Իր միջոցով: Քանի որ ես հավատում եմ Նրան [ես հարում, վստահում եմ Նրան և հենվում եմ Նրա վրա], ես դատված չեմ [երբեք չի գա այնպիսի ժամանակ, երբ ես՝ վստահելով Նրան, կմոտենամ դատաստանի. ինձ համար չկա ոչ մի մերժվածություն և դատապարտություն, ես ոչ մի անեծք չեմ կրում]»:

— Հովհաննես 3.17,18, AMP

[Խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու համար, այն անձնական է դարձրած]:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Ընդունե՛ք որպես փաստ. դուք ներված եք Քրիստոս Հիսուսում: Ձեր գործած մեղքերից չկա այնպիսի մեղք, որ ջնջված չլինի Նրա արյունով: Այնպես որ, եթե ձեր ներսում դեռևս զգում եք ամոթի, մեղքի կամ դատապարտության զգացում ինչ-որ բանի վերաբերյալ, որ մտածել, ասել կամ արել եք անցյալում, իմացե՛ք, որ Աստված չէ դրա աղբյուրը. չէ՞ որ դուք արդեն խնդրել եք Աստծուն՝ ներել ձեզ:

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Եսայի 50.9, Հովհաննես 5.24

9. Ոչ թե հիվանդությունն է Աստծուց, այլ՝ առողջությունը: Կարդացե՛ք կույր Բարտիմեոսի և քանանացի կնոջ պատմությունները Մատթեոս 15.21-28-ում և Մարկոս 10.46-52-ում: Ի՞նչ կարող եք սովորել նրանց անկոտրում ձգտումից և ինչպե՞ս կարող եք կիրառել դա ձեր կյանքում:

_____

_____

_____

_____

10. Ամեն ինչից առավել Աստված ցանկանում է, որպեսզի Իր զավակները բարգավաճեն և առողջ լինեն (տե՛ս Գ Հովհ. 2): Նա հիվանդության կամ ֆինանսական դժվարությունների աղբյուրը չէ, բայց Նա օգտագործում է այդ իրավիճակները, որպեսզի բարձրացնի մեզ և ավելի մեծ իշխանություն տա:

Աստվածաշունչը շարունակաբար անվանում է մեզ հաղթողներ: Հաղթել նշանակում է «առավելություն ստանալ հակամարտության արդյունքում, անկարող կամ անզոր դարձնել (հակառակորդին), հաղթահարել (խոչընդոտները, առարկությունները և այլն), լինել հաղթանակող»[5]: Ինչպե՞ս կարող եք հաղթանակ ունենալու համար ոգեշնչել որևէ մեկին, ով պայքարում է դատապարտության, առողջական կամ ֆինանսական խնդիրների դեմ:

Դատապարտություն

_____
_____
_____
_____

Առողջություն

_____
_____
_____
_____

Ֆինանսներ

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Հիշե՛ք. գողանալու, սպանելու կամ կործանելու համար ցանկացած հակառակություն ոչ մի կապ չունի Աստծո հետ: Այն գալիս է սատանայից, ով ցանկանում է հուսահատեցնել, պարտության մատնել և կործանել ձեզ: Մենք պետք է անկոտրում կերպով պատերազմենք դրանց դեմ, որպեսզի տեսնենք Աստծո արքայության դրսևորումը երկրի վրա, ինչպես Երկնքում է:

Ծարաթական ԿՈՉ

Բացահայտե՛ք ձեր կյանքի այն բնագավառները, որտեղ խնդիրներ ունեք և հստակորեն չգիտեք Աստծո կամքը: Ուսումնասիրե՛ք Սուրբ գիրքը՝ գտնելով այն խոստումները կամ հայտնությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչ կա Աստծո սրտում տվյալ հարցի վերաբերյալ: Գրի՛ առեք կամ տպե՛ք այդ խոսքերը և փակցրե՛ք երևացող տեղերում: Բարձրաձայն հռչակե՛ք դրանք ամեն անգամ, երբ հանդիպում եք դժվարությունների կամ կասկածներ եք ունենում:

Օր 1. ԻՄԱՑԵ՛Ք, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՍԻՐՈՒՄ Է ՁԵԶ

«Բայց Աստված այնքան հարուստ է ողորմությամբ, և Նա այնքան շատ սիրեց մեզ, որ թեև մենք մահացած էինք մեր մեղքերի պատճառով, Նա կյանք տվեց մեզ, երբ հարություն տվեց Քրիստոսին մեռելներից: (Միայն Աստծո շնորհքով է, որ դուք փրկվել եք)»:

— Եփեսացիների 2.4,5, NLT

Մեզանից շատերը գիտեն, թե ինչ է գրված Հովհաննես 3.16-ում. «Որովհետև Աստված այնպես սիրեց այս աշխարհը…»: Բայց արդյո՞ք գիտեք, որ Նրա սերը հավիտենական է: Երեմիայի 31.3-ում Աստված ասում է. «Ես սիրել եմ քեզ հավիտենական սիրով. Ես մոտեցրել եմ քեզ սիրող ողորմությամբ»: Աստծո սերը հավիտյան է. այն այնքան զորավոր և մեծ է, որ չունի ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ:

Ինչպե՞ս կարող եք իմանալ, որ Աստված սիրում է ձեզ: Հավատացե՛ք Նրա Խոսքին: Մի՛ լսեք ձեր զգացմունքներին կամ թշնամուն: **Մտորե՛ք** այս հատվածների շուրջ.

«Աստծո **սերը** լցվեց մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ: Երբ մենք դեռ տկարության մեջ էինք [անզոր՝ օգնելու մեզ], հարմար ժամանակ Քրիստոսը մահացավ անաստվածների համար (փոխարեն): Ընդհանրապես արտասովոր երևույթ կլինի, եթե ինչ-որ մեկը տա իր կյանքը մարդու համար, թեև միգուցե ազնիվ, սիրող և առատաձեռն բարեգործի համար ինչ-որ մեկը համարձակվի մահանալ: Բայց Աստված ցույց է տալիս և պարզորոշ կերպով ապացուցում է Իր [իսկ] սերը մեզ՝ այն փաստով, որ **երբ մենք դեռ մեղավոր էինք,** Քրիստոսը (Մեսիան՝ Օծյալը) մահացավ մեզ համար»:

— Հռոմեացիների 5.5-8, AMP

«Մի ժամանակ մենք նույնպես հիմար և անհնազանդ էինք: Մենք մոլորված էինք և ստրուկներ էինք դարձել բազմաթիվ կրքերի և հաճույքների: Մեր կյանքերը լի էին չարով ու նախանձով, և մենք ատում էինք մեկս մյուսին: Բայց երբ Աստված՝ մեր Փրկիչը, **հայտնեց Իր բարությունն ու սերը**, Նա փրկեց մեզ ոչ թե այն արդար բաների համար, որ մենք արել էինք, այլ Իր ողորմության համար: Նա լվաց մեր մեղքերը՝ տալով մեզ վերստին ծնունդ և նոր կյանք Սուրբ Հոգու միջոցով: Նրա շնորհքի պատճառով Նա արդար հռչակեց մեզ և տվեց վստահություն, որ մենք կժառանգենք հավիտենական կյանքը»:

— Տիտոս 3.3-7, NLT

Կարդացե՛ք Հռոմեացիների 8-րդ գլուխը: Երբ դուք անհնազանդ եք կամ չունեք հավատք, ինչպե՞ս է Աստված նայում ձեզ:

_____

Կա՛նգ առեք և մտորե՛ք, թե որքան մեծ է Աստծո սերը ձեր հանդեպ: Դրանից հետո այն, ինչ Աստված արել է ձեզ համար, գովեստի խոսքեր գրեք Նրան այս մեկ պարբերության սահմանում:

_____

_____

_____

_____

_____

Օր 2. ՃԱՆԱՉԵ՛Ք ՁԵՐ ԹՇՆԱՄՈՒՆ

«Սատանան չի գերազանցի մեզ իր խորամանկությամբ… որովհետև մենք ծանոթ ենք նրա չար ծրագրերին»:

— Բ Կորնթացիների 2.11, NLT

Պատերազմի գնացող զինվորին սովորեցնում են այն թշնամու մասին, ում հետ նա պետք է կռվի: Զինվորը որքան ավելի լավ է տեղեկացված լինում թշնամու մարտավարության մասին, այնքան ավելանում է նրա հմտությունը: Նույնը ճշմարիտ է մեզ՝ հավատացյալներիս համար: Ինչպե՞ս մենք կարող ենք ծանոթ լինել սատանայի չար ծրագրերին. այն զտիչի միջոցով, որ Հիսուսը տվեց մեզ Հովհաննեսի 10.10-ում. «Գողի նպատակը գողանալը, սպանելն ու կործանելն է: Իմ նպատակն է տալ… առատ և բավականություն պատճառող կյանք» (NLT): Ռիկ Ռեննները վերլուծության է ենթարկում այս հատվածի մի քանի գլխավոր բառերի իմաստները:

«Գող» բառը հունարեն «կլեպտո»-ն է, որը նշանակում է «գողանալ»: Այս բառը պատկերում է ավազակի կամ գրպանահատի, ով այնքան հմտորեն է գողանում, որ նրան գրեթե անկարելի է բացահայտել: Հիսուսն օգտագործում է այս բառը, որպեսզի հայտնի մեզ, որ սատանան այնքան խորամանկ և մոլորեցնող է, որ նա հաճախ հասնում է իր նպատակին մինչև մարդը կհասցնի հասկանալ, թե ինչ տեղի ունեցավ:

«Սպանել» բառը հունարեն «թուո»-ն է, որը նշանակում է «կենդանիների զոհաբերում զոհասեղանի վրա, այսինքն՝ ինչ-որ թանկ և արժեքավոր բանի զոհաբերում»: Այս բառը որևէ կապ չունի սպանության հետ: Օգտագործելով այն՝ Հիսուսը նկատի ունի, որ եթե գողը դեռևս չի գողացել մեզ համար ամենաթանկ բանը, նա կփորձի համոզել մեզ, որպեսզի զոհաբերենք այն ամենը, որ նա դեռ չի հասցրել վերցնել:

Երրորդ բառը, որ Հիսուսն օգտագործում է՝ թշնամու նպատակը նկարագրելու համար, «կործանել»-ն է: «Կործանել» բառը հունարեն «ապոլլումի» բառն է և նշանակում է «ինչ-որ բան, որ ոչնչացվել, վատնվել, խոտանվել և ավերվել է»: Այստեղ Հիսուսն ասում է մեզ, որ եթե սատանան չի կարողանում գողանալ մեզանից կամ համոզել, որպեսզի մենք զոհաբերենք այն, ինչ թանկ է մեզ համար և խաղաղություն է պատճառում մեզ, նա կփորձի լիովին կործանել և ավերել դա:

Անգամ չկասկածեք՝ եթե մենք չկանգնեցնենք թշնամուն, նա լիովին կթալանի մեզ, կստիպի զոհաբերել ամեն բարի բան, որ Աստված տվել է խաղաղություն ունենալու համար և լիովին կկործանի մեր կյանքը[6]:

Ի՞նչ է հայտնում Սուրբ Հոգին թշնամու և ձեր կյանքում տեղի ունեցած՝ նրա հարձակումների մասին:

_____

_____

_____

Կարդացե՛ք Հովհաննես 8.44-ը: Սատանայի գործունեության ո՞ր տեսակն է Նա մատնանշում և ինչո՞վ դուք կարող եք զինվել՝ դրան հակառակ կանգնելու համար:

_____

_____

_____

_____

Օր 3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵ՛Ք ԱՍՏԾՈ ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«Թանկագի՛ն զավակս, մի՛ մերժիր Աստծո դաստիարակությունը, բայց նույնպես մի՛ կոտրվիր դրանից: Նա դաստիարակում է այն զավակին, ում սիրում է. այն զավակին, ում գրկում է, Նա նույնպես ուղղում է»:

— Եբրայեցիների 12.5,6, MSG

Դաստիարակությունն աստվածային կապն է ցանկության և կոչման միջև. սա այն կամուրջն է, որը տանում է մեզ այնտեղ, որտեղ մենք ցանկանում ենք գնալ: Ջեյմս Դոբսոնը ճիշտ կերպով նշում է. «Եթե ինչ-որ մեկը քննի որևէ հաղթանակող ֆուտբոլային թիմի, հիասքանչ նվագախմբի կամ հաջողակ ձեռնարկության գաղտնիքը, ապա գլխավոր բաղադրամասը մշտապես լինելու է դաստիարակությունը»[7]:

Հետաքրքիր է, որ թե՛ Աստծո հանդիմանությունը, թե՛ թշնամու դատապարտությունը հաճելի չեն, իսկ երբեմն՝ անչափ ցավոտ են: Սակայն կա մեծ տարբերություն այս երկուսի միջև. դատապարտությունը ելք չի տալիս մեզ: Այն միայն տալիս է մեղքի զգացում և ամոթ: Ի հակադրություն սրան՝ Աստծո ուղղումը մշտապես ելք է ցույց տալիս և կոչվում է ապաշխարություն: Նա ուղղում է մեզ Իր սիրուց ելնելով, որպեսզի վերականգնի մեր շփումն Իր հետ, դարձնի մեզ ավելի հասուն, այսինքն՝ ավելի նման Հիսուսին:

Ըստ Եբրայեցիների 12.10,11-ի՝ ինչպիսի՞ **օրհնություններ** կարելի է ստանալ՝ համագործակցելով Աստծո հանդիմանության հետ:

_____

_____

Հիսուսը և Մաղաքիան ինչի՞ հետ են համեմատում Աստծո հանդիմանությունը: Ինչպե՞ս մենք պետք է համագործակցենք Նրա հետ այս հարցում:
Կարդացե՛ք Հովհաննես 15.1-8 • Մաղաքիա 3.1-4

_____

_____

_____

Տե՛ս նաև Զաքարիա 13.8,9

Ունենալով Աստծո զորացնող շնորհքը՝ մեր նպատակը մեղք *չգործելն* է: *Բայց եթե* մենք մեղք ենք գործում, պետք է արագ հեռացնենք այն մեր կյանքից: *Կարդացե՛ք* Ա Հովհաննես 1.9, Սաղմոս 32.1-6 և Առակաց 28.13: Ձեր բառերով նկարագրե՛ք, թե ինչպիսին է ճշմարիտ ապաշխարությունը:

_____

_____

_____

Արդյո՞ք դուք հստակ գիտեք, թե ինչ կանի Աստված, երբ ապաշխարեք: Ինչպե՞ս է այդ գիտելիքը խրախուսում ձեզ:
Կարդացե՛ք Սաղմոս 103.2,3,12 • Ա Հովհաննես 1.9, 2.1,2 • Ա Պետրոս 2.24 • Կողոսացիների 2.13-15

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Երկրորդ Օրինաց 8.5, Հոբ 5.17, Սաղմոս 94.12,13, 119.67, Առակաց 3.11,12, Գործք 3.19

Օր 4. ԱՌՈՂՋ ԽԻՂՃ ՈՒՆԵՑԵ՛Ք

«Քրիստոսի արյունը, որ չուներ ոչ մի բիծ, անում է շատ ավելին: Հավիտենական Հոգու միջոցով Նա Իրեն զոհաբերեց Աստծուն և մաքրեց մեր խիղճը անպետք բաներից, որ արել էինք: Այժմ մենք կարող ենք ծառայել կենդանի Աստծուն»:

— *Եբրայեցիների 9.14, GW*

Մենք կարող ենք զբաղեցնել երկու դիրք մեղքի վերաբերյալ՝ ունենալով մեղքի կամ արդարության գիտակցմամբ լցված խիղճ: **Մեղքի գիտակցման** դեպքում մենք տեսնում ենք մեզ որպես «մեղավոր, ով փրկվել է շնորհքով» և մշտապես հիշում ցանկացած սխալմունքի կամ թերացման մասին: Այս մտածելակերպը մեղքի զգացումի, ամոթի և դատապարտության արդյունք է:

Սակայն **արդարության գիտակցումը** մշտապես հիշեցնում է մեզ, որ Քրիստոսը հաղթել է մեղքը: Այս դեպքում մենք գիտենք, որ ճիշտ դիրքում ենք Աստծո առջև: Մենք տեղյակ ենք, որ մեղքի զորությունը լիովին քանդված է մեր կյանքից այն աշխատանքի շնորհիվ, որ Քրիստոսը կատարեց խաչի վրա: Նրա շնորհքը զորություն է տալիս մեզ՝ լինել մեղքից ազատ թե՛ մեր սրտում, թե՛ գործերում: Երբ մենք գիտենք մեր արդարության մասին, ուրեմն լավագույն վիճակում ենք շնորհքի զորության մեջ աճելու համար:

Կարող եք այսպիսի փորձ անել. մի՛ մտածեք օձերի մասին: Մոռացեք բոլոր նկարները, որտեղ կոբրաները կորանալով ետ են քաշվում՝ պատրաստվելով խայթել: Ձեր մտքից դուրս նետեք մեծ պիթոնների և թունավոր իժերի պատկերները: Նույնիսկ մի՛ մտածեք նրանց թեփուկապատ, սահուն մարմինների մասին: Ձեզ հաջողվո՞ւմ է անել այդ՝ ո՛չ, ընդհակառակը՝ դուք ավելի շատ սկսեցիք մտածել նրանց մասին, այդպես չէ՞: Պատճառն այն է, որ դուք ձեռք բերեցիք «օձերի մասին գիտակցում»:

Ուրեմն ի՞նչ է կատարվում, երբ մենք կենտրոնանում ենք մեր անցյալի մեղքերի և տկարությունների վրա: Ձեր կարծիքով՝ ո՞վ է հիշեցնում ձեզ այդ ձախողումների մասին (տե՛ս Հայտն. 12.10, Զաքարիա 3.1,2): Ի՞նչ է պետք ձեռնարկել այդ մտքերից ազատվելու համար:

_____

_____

Մտածե՛ք այն մասին, թե ով եք դուք Քրիստոսի մեջ և բարձրաձայն հռչակե՛ք դա: Կարդացե՛ք ստորև նշված խոսքերը և գրե՛ք կարճ արտահայտություններ, որոնք ցույց են տալիս ձեր ճիշտ դիրքն Աստծո առջև:

Փիլիպեցիների 3.9 *«Ես Քրիստոսի մեջ եմ, և իմ արդարությունը գալիս է Աստծուց՝ հավատքով»:*

Բ Կորնթացիների 5.21 _____

Հռոմեացիների 6.6,7,14 _____

Հռոմեացիների 8.1,2 _____

_____

Եփեսացիների 2.1,4-6 _____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Ա Կորնթացիների 1.30, Բ Կորնթացիների 5.17, Գաղատացիների 3.13, Եփեսացիների 1.7, Կողոսացիների 1.13,14

Հետագա ուսումնասիրության համար
Գործք 24.16, Ա Կորնթացիների 8.7-13, Ա Տիմոթեոս 1.5,18,19, 4.1,2, Տիտոս 1.15,16, Եբրայեցիների 9.14, 10.19-22, Ա Պետրոս 3.15,16

Օր 5. ԱՍՏՎԱԾ ԲԺՇԿՈՒՄ Է

*«Եթե կամենաս, կարող ես բժշկել և մաքրել ինձ»,- ասաց նա: …Հիսուսը պարզեց ձեռքը և հպվեց նրան. «**Ես կամենում եմ**,- ասաց Նա,- եղի՛ր բժշկված»»:*

— Մարկոս 1.40,41, NLT

Նոր կտակարանում բազմաթիվ մարդիկ եկան Հիսուսի և Նրա աշակերտների մոտ՝ բժշկվելու: Նրանք չմերժեցին ոչ ոքի: Սուրբ գիրքն ասում է, որ մարդիկ բերում էին Հիսուսի մոտ «բոլոր հիվանդ մարդկանց: Եվ ցանկացած հիվանդությունից կամ տկարությունից… Հիսուսը բժշկեց նրանց բոլորին» (Մատթեոս 4.24, NLT):

Եթե Հիսուսը Հոր ճշգրիտ պատկերն է (Կողոսացիների 1.15, Եբրայեցիների 1.3), կատարում է միայն Հոր կամքը (Հովհաննես 5.19,20) և նույնն է երեկ, այսօր և հավիտյան (Եբրայեցիների 13.8), ապա ո՞րն է Աստծո կամքը ձեր բժշկության համար:

Ինչպես ներումը, բժշկությունը նույնպես փրկագնման մի մասն է: **Դանդաղորեն և բարձրաձայն կարդացե՛ք** այս զարմանալի, անձնական դարձրած խոստումները:

«Նա ներում է իմ բոլոր **մեղքերը** և բժշկում է իմ բոլոր **հիվանդությունները**»:

— Սաղմոս 103.2,3, NLT

«Հիրավի Նա կրեց իմ վշտերը (**հիվանդությունները, տկարությունները** և **մտատանջությունները**) և… այն խոցերով [որով վիրավորվեց] Նա, ես **բժշկված** եմ և **առողջ եմ»**:

— Եսայի 53.4,5, AMP

«Նա անձամբ կրեց իմ մեղքերն Իր [իսկ] մարմնում փայտի վրա [ինչպես զոհասեղանի վրա և զոհաբերեց Իրեն]… Նրա վերքերով ես բժշկվել եմ»:

— Ա Պետրոս 2.24, AMP

Ի՞նչ է Սուրբ Հոգին ասում ձեզ այս խոսքերով:

Միգուցե ձեզ համար դժվա՞ր է հավատալ ինչ-որ մեկի բժշկության համար: Ո՞րն է ձեր հավատքի մեծագույն խոչընդոտը: Ինչո՞ւ ձեր հավատքը պետք է հիմնված լինի Նրա Խոսքի, ոչ թե փորձառության վրա:

Հետագա ուսումնասիրության համար

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ)	ՀԻՍՈՒՍԸ ԲԺՇԿԵՑ ԲՈԼՈՐԻՆ, ՈՎՔԵՐ ԵԿԱՆ ԻՐ ՄՈՏ	ԱՌԱՔՅԱԼՆԵՐԸ ԲԺՇԿՈՒՄ ԷԻՆ
Ելից 15.26, 23.25,26	Մատթեոս 4.23,24, 8.16,17, 12.15	Գործք 3.1-10, 5.12-16, 9.32-42
Սաղմոս 107.19,20	Մատթեոս 14.35,36	Գործք 14.8-10, 19.11,12
Առակաց 4.20-22,	Մարկոս 3.7-12, Ղուկաս 4.40, 6.19	Գործք 28.7-9
Գ Հովհաննես 1.2		

Օր 6. ՀԱՎԱՏԱՑԵ՛Ք, ՈՐ ԱՍՏՎԱԾ ԿՄԱՏԱԿԱՐԱՐԻ

«Եվ Աստված շռայլորեն կլրացնի ձեր բոլոր կարիքները: Այդ ժամանակ դուք միշտ կունենաք այն, ինչի կարիքն ունեք, նույնիսկ ավելցուկով՝ այլ մարդկանց հետ կիսվելու համար»:

— Բ Կորնթացիների 9.8, NLT

Աստծո շնորհքը նույնպես նյութապես մատակարարում է մեզ: Եթե մենք հավատարմորեն տալիս ենք Նրան մեր ժամանակը, տաղանդները և գանձերը, Նա հավատարմորեն կտա մեզ այն, ինչի կարիքը մենք ունենք: Նա կմատակարարի մեզ ըստ *Իր* անսահման հարստության, ոչ թե ըստ բորսայի ցուցանիշների, տնտեսության վիճակի կամ մեր կուտակած միջոցների:

Մտորե՛ք այս զարմանալի խոստումների շուրջ:

«Եվ իմ Աստված առատաձեռնորեն կհոգա (լիքը կլցնի) ձեր յուրաքանչյուր կարիքը՝ Իր հարստության փառքով, Քրիստոս Հիսուսում»:

— Փիլիպեցիների 4.19, AMP

«Չկա ոչ մի կարիք նրանց համար, ովքեր երկյուղած են Նրա հանդեպ և երկրպագում են Նրան աստվածային վախով: Առյուծի կորյունները կերակուր չունեն և սովահար են լինում, բայց նրանք, ովքեր փնտրում են (տեղեկություններ են որոնում և կարիք ունեն) Տիրոջը [իրենց կարիքների համար և Նրա Խոսքի իշխանության հիման վրա], նրանցից ոչ ոք որևէ օգտակար բանի պակասություն չի ունենա»:

— Սաղմոս 34.9,10, AMP

«Ես երիտասարդ էի և այժմ ծեր եմ: Եվ իմ տարիների ընթացքում երբեք չտեսա, որ Տերը թողներ մեկին, ով սիրում է Իրեն. ո՛չ էլ տեսա, որ աստվածապաշտ մարդկանց երեխաները քաղցած լինեին»:

— Սաղմոս 37.25, TLB

«Տերը ոչ մի բարի բան չի պահի նրանցից, ովքեր արդարությամբ են վարվում»:

— Սաղմոս 84.11, NLT

«Եվ Աստված կարող է այնպես անել, որպեսզի բոլոր շնորհքը (յուրաքանչյուր բարեհաճություն և երկրային օրհնություն) գա ձեզ մոտ առատությամբ, որպեսզի դուք մշտապես և բոլոր հանգամանքներում և ցանկացած կարիքի դեպքում բավականություն ունենաք [ունենաք բավականին, որպեսզի չպահանջվի ոչ մի օգնություն կամ աջակցություն, և սպառազինված լինեք առատությամբ յուրաքանչյուր բարի գործի և բարեգործական նվիրատվության համար]»:

— Բ Կորնթացիների 9.8, AMP

Ի՞նչ է Տերն ասում ձեզ այս խոսքերով: Ինչպե՞ս են դրանք բորբոքում ձեր հավատքը:

_____
_____
_____
_____
_____
_____

Ուշադի՛ր կարդացեք Ղուկաս 6.38, Ժողովող 11.1, Առակաց 11.25 և Մաղաքիա 3.10-12-ը: Ինչպիսի՞ կարևոր սկզբունքներ կարող եք վերցնել այս խոսքերից՝ Աստծո մատակարարումը ստանալու համար:

_____

_____

_____

Մտածե՛ք Բ Կորնթացիների 9.8-12-ի շուրջ և ձեր բառերով նկարագրե՛ք, թե ինչ է ճշմարիտ բարգավաճումը և ինչպես է այն փառավորում Աստծուն:

_____

_____

_____

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Երկրորդ Օրինաց 8.18, 28.12, Սաղմոս 103.5, Եփեսացիների 3.20, Եբրայեցիների 13.5, Ա Տիմոթեոս 6.10

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Մենք հոգևոր զինվորներ ենք և հոգևոր պատերազմի մեջ ենք: Պատերազմելով հավատքի բարի պատերազմը՝ մենք կբախվենք բազմաթիվ դժվարությունների: Աստված չէ աղբյուրը, հեղինակը կամ սադրիչն այն դժվարությունների, որոնց դուք բախվում եք, այլ՝ սատանան և նրա դիվային ուժերը: Աստծո շնորհքով մենք պետք է անկոտրում կերպով հակառակվենք ողջ հակառակությանը, որը գալիս է գողանալու, սպանելու կամ կործանելու այն, ինչ Աստված վստահել է մեզ:

(1) Դր. Լեսթեր Սամրալ. *«Հավատք, որ կարող է փոխել ձեր աշխարհը»* (Սաութ Բենդ՝ Ինդիանա. «Sumrall Publishing», 1999թ.) էջ 187: (2) Ջոն Էլդրիջ. *«Վայրի սիրտ»* (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishers», 2001թ.) էջ 156: (3) Ֆրենսիս Ֆրենջիփեյն. *«Բարձրյալի ծածկոցը»* (Լեյք Մերի, Ֆլորիդա. «Charisma House, A Strang Company», 2008թ.) էջ 156: (4)) Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարան»-ի առաջին հրատարակություն* (1828թ.), պատճենման միջոցով վերահրատարակված «Foundation for Americal Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո՝ Կալիֆոռնիա, 2000թ.) (5) հաղթել. Dictionary.com. *«Colins English Dictionary – Complete & Unabridged 10th Edition»* («HarperCollins Publishers», http://dictionary.reference.com/browse/overcome, մուտքը՝ հուլիսի 14, 2011թ.: (6) Հատվածն օգտագործված է Ռիկ Ռեննների *«Հունարենի գանձերը»* գրքից (Տալսա՝ Օկլահոմա. «Teach All Nations», 2003թ.) էջեր 547,548: (7) *«Արագ ընդմիջում. հինգրոպեանոց ուղերձներ՝ ձեր օրը սկսելու համար»* («Parable», 2007թ.), Օր 272:

Նշումներ

«Այնպես որ, քանի որ Քրիստոսը չարչարվեց մեզ համար մարմնով, դուք նույնպես ***զինվեք*** *միևնույն մտքով, որովհետև Նա, որ չարչարվել է մարմնով, դադարել է մեղքից»:*

— Ա Պետրոս 4.1, NKJV

Գլուխ 6

ԶԻՆԵ՛Ք ԻՆՔՆԵՐԴ ԶԵՔ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 6-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 8-րդ գլխից:

Խ 1. Այն առանձնահատուկ չարչարանքը, որ կրեց Հիսուսը, մարդկանցից *անարդարացի վերաբերմունքն* էր: Բարեբախտաբար Նա թողեց մեզ Իր օրինակը, որին կարող ենք հետևել, երբ հանդիպենք նույն վերաբերմունքին: Ուշադի՛ր կարդացեք այս խոսքերը: Ի՞նչ կարող եք սովորել՝ Աստծո շնորհքով դժվարություններին պատասխանելու մասին և ինչպե՞ս կարող եք կիրառել դա ձեր կյանքում:

«Այդ ժամանակ Հիսուսն ասաց Իր աշակերտներին. «Եթե որևէ մեկը ցանկանում է Իմ աշակերտը դառնալ, ապա թող ուրանա իրեն [արհամարհի, անտեսի, մոռանա իրեն և իր շահերը], վերցնի խաչը և հետևի Ինձ [ամուր հարի Ինձ, լիովին նույնանա Իմ կյանքի օրինակին և, եթե պետք լինի, ապա նաև՝ մահվան]: Որովհետև ով նվիրված է իր [ժամանակավոր] կյանքը փրկելուն [իր հարմարավետությունն ու ապահովությունը այս աշխարհում], կկորցնի այն [հավիտենական կյանքը], իսկ ով կորցնում է իր կյանքը [իր հարմարավետությունն ու ապահովությունն այս աշխարհում] Ինձ համար, կգտնի այն [հավիտենական կյանքը]»:

— Մատթեոս 16.24,25, AMP

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Շատ հավատացյալներ անզեն են: Երբ վրա են հասնում անսպասելի նեղությունները *(թլիփսիսները)*, նրանք հանկարծակիի են գալիս՝ զարմանալով, տարակուսելով և շփոթվելով: Որպես արդյունք՝ նրանք գործում են ըստ իրավիճակի, փոխանակ պատասխան քայլեր ձեռնարկեն: Սուրբ Հոգու ոգեշնչմամբ Պետրոսը հորդորում է մեզ՝ **զինվել** չարչարվելու համար ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսն էր զինված:

«Նա երբեք մեղք չգործեց, ոչ էլ երբևէ խաբեց ինչ-որ մեկին: Նա չհակառակվեց, երբ Նրան հայհոյում էին, ո՛չ էլ սպառնաց վրեժխնդրությամբ չարչարվելիս. Նա հանձնեց Իր գործը Աստծո ձեռքերի մեջ, Ով միշտ արդարացի է դատում»:

— Ա Պետրոս 2.22,23, NLT

«Նա ենթարկվեց ֆիզիկական չարչարանքի և պատժվեց, բայց չբացեց Իր բերանը: Նրան տարան ինչպես գառ՝ մորթվելու համար: Նա ոչխարի նման էր, որ լուռ է մնում, երբ խուզում են իր բուրդը. Նա չբացեց Իր բերանը»:

— Եսայի 53.7, GW

«Մի՛ վճարեք չարով չարի փոխարեն: Մի՛ պատասխանեք հայհոյանքներով, երբ մարդիկ հայհոյում են ձեզ: Փոխարենը՝ հատուցե՛ք նրանց օրհնությամբ:

Ահա թե ինչ է Աստված կանչել ձեզ անելու, և Նա կօրհնի ձեզ դրա համար: Որովհետև Սուրբ գիրքն ասում է. «Եթե դու ցանկանում ես վայելել կյանքը և տեսնել շատ երջանիկ օրեր, պահի՛ր քո լեզուն չար խոսք ասելուց, և քո շուրթերը՝ ստելուց: Խաղաղություն փնտրիր, և ջանա՝ պահպանել այն»»:

— Ա Պետրոս 3.9-11, NLT

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Մատթեոս 11.28-30, Եբրայեցիների 12.2

«Սա այն տեսակի կյանքն է, որին դուք հրավիրված եք, այն տեսակի կյանքը, որով ապրում էր Քրիստոսը: Նա կրեց այն ամենը, ինչի հետ բախվեց, որպեսզի դուք իմանաք, որ դա հնարավոր է անել և նույնպես իմանաք՝ ինչպես անել դա՝ քայլ առ քայլ»:

— Ա Պետրոս 2.21, MSG

ԽՍ 2. Աստծո Խոսքը պարզ ասում է, որ եթե մենք ապրենք աստվածապաշտ կյանքով, ապա դժվարություն և հալածանք ենք կրելու: Սակայն եթե մարդը միայն անվանապես է քրիստոնյա և *ապրում է՝ ինչպես աշխարհը*, նա չի հալածվի: Ո՞րն է պատճառը: Ինչո՞ւ է սատանան հանգիստ թողնում նրանց: Եթե դուք անցնում եք դժվարություններով, ապա ի՞նչ կարող եք վստահորեն իմանալ:

_____

_____

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Աստված, Ով կանխավ տեսավ ձեր փորձությունը, հատուկ կերպով զինել է ձեզ, որպեսզի դուք անցնեք դրանով՝ ոչ առանց ցավի, բայց առանց հետքերի»:

— Կ. Ս. Լյուիս[1]

Չորս սկզբունք, որով կարող ենք զինվել

1. Նեղություններն անխուսափելի են:
2. Այն նեղությունները, որոնց դուք կբախվեք, բոլորովին նոր չեն:
3. Դուք կարող եք ոչ մի պարտություն չկրել:
4. Աստծո շնորհքը ձեր կյանքում բավական է ցանկացած պատերազմ հաղթելու համար:

3. Ինչպես ավիաուղիների օդաչուներն են խստորեն և պարբերաբար մարզվում թռիչքային սիմուլյատորի մեջ, նույնպես Աստված է մարզում և զինում մեզ այն փորձությունների մեջ, որ Նա թույլ է տալիս մեր կյանքում: Որքան էլ ամեն ինչ անվերահսկելի թվա՝ *Աստված մշտապես վերահսկում է փորձության ընթացքը*: Ուշադի՛ր մտորեք Ա Կորնթացիների 10.13-ի շուրջ: Ի՞նչ կարող եք հասկանալ այս արտասովոր խոստումից:

«Ձեր կյանքի փորձությունները ոչնչով չեն տարբերվում այն բաներից, որ կրում են այլ մարդիկ: Եվ Աստված հավատարիմ է: Նա թույլ չի տա, որպեսզի փորձությունը լինի ավելին, քան դուք կարող եք կրել: Երբ դուք փորձվում եք, Նա ելքն էլ ցույց կտա, որպեսզի կարողանաք դիմանալ»:

NLT

«Ոչ մի փորձություն ձեր կյանքում չի տարբերվում նրանից, ինչին բախվել են այլ մարդիկ: Դուք պարզապես պետք է հիշեք, որ Աստված երբեք հուսախաբ չի անի ձեզ. Նա երբեք թույլ չի տա, որ դուք հայտնվեք այնպիսի իրավիճակում, որին չկարողանաք դիմանալ: Նա մշտապես կհասնի և կօգնի, որպեսզի անցնեք դրա միջով»:

MSG

«Ձեր կրած փորձությունների մեջ չկա այնպիսի փորձություն, որ անսովոր լինի մարդկանց համար: Աստված, Ով հավատարմորեն պահում է Իր խոստումները, թույլ չի տա, որպեսզի դուք փորձվեք ավելի, քան ձեր դիմադրելու զորությունն է: Բայց երբ դուք փորձվում եք, նա նույնպես այդ փորձությանը դիմանալու կարողություն կտա, որը հենց կլինի ձեր ելքը»:

GW

_____

_____

_____

«Տերը գիտի, թե ինչպես փրկել աստվածապաշտ մարդկանց իրենց չարչարանքներից և պատժել չար մարդկանց, մինչ նրանք սպասում են դատաստանի օրվան»:

— Բ Պետրոս 2.9, CEV

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Սատանան չունի ազատ մուտք ձեր կյանքում: Այն հարձակումները, որ նա ծրագրում է, նախ պետք է ստանան Ամենակարողի թույլտվությունը: Ձեր երկնային Հայրը բնավ չի ծրագրում փորձությունները կամ դրանք բերում ձեր կյանք: Սակայն երբեմն Նա թույլ կտա դրանք, որպեսզի կարողանաք պարտության մատնել թշնամուն և փառք բերել Աստծուն՝ ընդլայնելով Նրա արքայությունը:

ԽՍ 4. Արդյո՞ք թշնամին շշնջացել է ձեզ այսպիսի մի բան. *«Ո՛չ ոք չգիտի, թե ինչով ես անցնում: Ո՛չ ոք չի կրել այն, ինչ դու ես կրում: Դու այնքա՜ն վատ վիճակում ես»*: Եթե դա այդպես է, ապա վերհիշեք Ա Կորնթացիների 10.13-ը՝ այն ճշմարտությունը, որ գրված է Սուրբ գրքում:

«Հաստա՛տ կանգնեք նրա [սատանայի] դեմ և զորավոր եղեք ձեր հավատքի մեջ: Հիշե՛ք, որ ձեր քրիստոնյա եղբայրները և քույրերն ամբողջ աշխարհում կրում են նույն տեսակի չարչարանքներ, ինչպես և դուք»:

— Ա Պետրոս 5.9, NLT

«Պատմությունը պարզապես կրկնվում է: Այս ամենը եղել է անցյալում: Իսկապես որ արեգակի տակ ոչ մի նոր բան չկա»:

— Ժողովող 1.9, NLT

«Այնպես որ մենք մեծապես խրախուսվեցինք մեր նեղությունների և չարչարանքների մեջ, թանկագի՛ն ընկերներ և քույրեր, որովհետև դուք մնացիք ուժեղ ձեր հավատքի մեջ: Մեր կյանքը նորոգվում է՝ իմանալով, որ դուք հաստատ կանգնած եք Տիրոջ մեջ»:

— Ա Թեսաղոնիկեցիների 3.7,8, NLT

[Քառակուսի փակագծում գրված բառը պարզեցնելու համար է]:

Արդյո՞ք դուք ավելի պատրաստակամորեն եք դիմանում փորձություններին՝ իմանալով որ այլ հավատացյալներ ողջ աշխարհում կրում են նույնը:

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. հիշե՛ք Հիսուսի սթափեցնող արտահայտությունը Հովհաննես 8.44-ում:

Խ 5. Պատկերացրե՛ք, որ ապաշխարության եք բերում ձեր աշխատակցին, ում համար շատ երկար եք աղոթել: Ինչո՞ւ է կարևոր ասել, որ՝ դառնալով Քրիստոսի հետևորդը, նա նեղություններ է կրելու: Ի՞նչ կարող եք ավելացնել, որպեսզի նա քաջալերվի և հասկանա այն ճշմարիտ հույսը, որ կա Քրիստոսի մեջ:

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. հիշե՛ք սերմնացանի առակի մեկնությունը Մարկոս 4.14-20-ում և Մատթեոս 13.18-23-ում:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Փորձությունները, որոնք հաճախ պատահում են քրիստոնյայի կյանքում, ծառայում են Աստծո շնորհալի նպատակի իրականացմանը, քանի որ Նա ձգտում է դարձնել մեզ այնպիսի մարդիկ, ինչպիսին ծրագրել է այն ժամանակ, երբ որոշել է ստեղծել մեզ: Ինչպես քանդակագործ՝ Նա սկսում է աշխատել մարմարի անձև մի կտորի հետ: Բայց մտքում ունի այն պատկերը, որ ցանկանում է ստեղծել: Նա կոտրում, ճաքեցնում, հատում և հղկում է, մինչև մեկ օր Իր տեսլիքն իրականություն դառնա: …Այս պահին Նրա արձանը, այսինքն՝ մենք, անպատրաստ է: Աստված դեռևս չի ավարտել Իր աշխատանքը մեզանում»:

— Բիլլի Գրեհեմ[2]

6. Եվս մեկ սկզբունք, որով կարող ենք զինվել ընդդեմ թշնամու. մենք կարող ենք ոչ մի պարտություն չկրել: Մենք ստացել ենք զորություն և իշխանություն Քրիստոսի մեջ, որը շատ ավելի բարձր է, քան սատանայի և նրա ընկած հրեշտակների ունեցածը: Մենք նույնպես նստած ենք Քրիստոսի հետ շատ ավելի բարձր, քան սատանան և նրա ընկած հրեշտակները:

Մտորե՛ք ձեր երկնային Հոր հետևյալ խոստումների շուրջ.

«Ահա ես իշխանություն և զորություն եմ տվել ձեզ [ֆիզիկական և մտավոր կարողություն] տրորել օձերին և կարիճներին և թշնամու ողջ զորության վրա [որ նա ունի], և ոչինչ որևէ կերպով չի վնասի ձեզ»:

— Ղուկաս 10.19, AMP

«Փոքրի՛կ երեխաներ, դուք Աստծուց եք [դուք պատկանում եք Նրան] և [արդեն] պարտության եք մատնել և հաղթել եք նրանց [հակաքրիստոսի գործակալներին], որովհետև Նա, Ով ապրում է ձեր մեջ, ավելի մեծ է [ավելի զորավոր է], քան նա, ով այս աշխարհում է»:

— Ա Հովհաննես 4.4, AMP

«Ես ցանկանում եմ իմանալ այն մեծ և կարող զորության մասին, որ Աստված տալիս է Իրեն հավատացողներին: Դա նույն հրաշալի զորությունն է, որ Նա օգտագործեց, երբ հարություն տվեց Քրիստոսին և թույլ տվեց Նրան նստել Իր աջ կողմը՝ Երկնքում: Այդտեղ Քրիստոսն իշխում է բոլոր ուժերի, իշխանությունների, զորությունների և տերությունների վրա: Նա իշխում է բոլոր էակների վրա այս աշխարհում և կիշխի նաև գալիք աշխարհում: Աստված ամեն ինչ դրել է Քրիստոսի իշխանության ներքո և եկեղեցուն լավ լինելու համար Նա դարձրել է Նրան ամեն ինչի Գլուխը»:

— Եփեսացիների 1.19-22, CEV

«Ո՛չ մի զենք, որ պատրաստված է քո դեմ օգտագործվելու համար, չի հաջողվի: Դու պատասխան կունենաս յուրաքանչյուրի համար, ով մեղադրում է քեզ: Սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը: Նրանց հաղթանակը Ինձանից է»,- հռչակում է Տերը»»:

— Եսայի 54.17, GW

Ինչպե՞ս են այս ճշմարտությունները զինում և խրախուսում ձեզ թշնամու դեմ պայքարելու համար:

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Բ Կորնթացիների 2.14, Ա Հովհաննես 5.4

7. Ողջ հակառակությունը, որ գալիս է թշնամուց, հնարավորություն է երկու դրական իրադարձությունների համար: Ուշադի՛ր կարդացեք այս հատվածները Պետրոսի և Հակոբոսի թղթերից և հայտնաբերեք այն երկու օրհնությունները, որոնց մասին գրված է այստեղ:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

«Հիսուսն արտոնություն տվեց մեզ կատարել Իր առաջադրանքը՝ տարածելով Իր ավարտված աշխատանքը մինչև երկրի ծայրերը: Թշնամին հակառակվում է կատաղի վրիժառությամբ, ինչի պատճառով չարչարանքներ են գալիս, բայց այդ չարչարանքները *հաղթական* են: Ամենակարևորը, որ դուք պետք է հիշեք, հետևյալն է. ցանկացած դժվարություն, որին դուք բախվում եք, ինչ-որ մեկն արդեն հաղթահարել է»:

«Թանկագի՛ն ընկերներ, մի՛ զարմացեք այն կրակոտ փորձությունների համար, որոնցով անցնում եք, ասես թե ինչ-որ տարօրինակ բան է կատարվում ձեզ հետ: Փոխարենը՝ մեծապես ուրախ եղեք, որովհետև այս փորձությունների միջոցով Քրիստոսի գործակիցներն եք դառնում Նրա չարչարանքի մեջ, որպեսզի Նրա փառքը տեսնելու անպատմելի ուրախությունն ունենաք, երբ այն հայտնվի ողջ աշխարհին: Այնպես որ ուրախացե՛ք, երբ ձեզ վիրավորում են քրիստոնյա լինելու համար, որովհետև այդ ժամանակ Աստծո փառավոր Հոգին հանգչում է ձեզ վրա: Բայց ամոթ չէ չարչարվել քրիստոնյա լինելու համար: Փա՛ռք Աստծուն Նրա անունով կոչվելու արտոնության համար: Այնպես որ, եթե դուք չարչարվում եք այնպես, ինչպես հաճելի է Աստծուն, ապա շարունակե՛ք արդարությամբ վարվել, և վստահե՛ք ձեր կյանքը Նրան, Ով ստեղծել է ձեզ, որովհետև Նա երբեք ձեզ չի թողնի»:

— Ա Պետրոս 4.12-14,16,19, NLT

«Իրական պարգև համարեք, ընկերնե՛ր, երբ փորձությունների և դժվարությունների հանդիպեք բոլոր կողմերից: Դուք գիտեք, որ ճնշման ներքո ձեր հավատքի կյանքը հարկադրված է դրսևորվել և ցույց տալ իր ճշմարիտ գույները: Այնպես որ մի՛ փորձեք ազատվել ցանկացած փորձությունից և դժվարությունից, քանի դեռ այն չի ավարտվել: Թո՛ւյլ տվեք, որ այն կատարի իր աշխատանքը ձեզանում, որպեսզի դուք հասունանաք և զարգանաք և թերի չլինեք ոչ մի առումով»:

— Հակոբոս 1.2-4, MSG

_____

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Ա Պետրոս 1.6,7

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Ո՞րն էր նրա շարունակական նեղությունների արդյունքը… Պողոսը հասկացավ՝ որքան էլ նեղությունները խիստ լինեին, դրանք պարզապես ավելի էին օգնելու իրեն վերափոխվել ըստ Քրիստոսի պատկերի: Ցանկացած բան, որով այս աշխարհը կարող է դուրս գալ մեր դեմ, Աստված կօգտագործի Իր փառքի և մեր հավիտենական ուրախության համար»:

— Դեյվիդ Ջերեմայա[3]

8. Պողոսը գերազանցում էր բոլորին Աստծո
ԽՍ արքայության մասին ունեցած հայտնություններով: Բայց այդ գիտության հետ մեկտեղ հայտնվեց «մարմնի խայթը» (նաև՝ փուշ կամ տատասկ)՝ սատանայի հրեշտակը, որի նպատակն էր տանջել նրան: Դանդաղորեն կարդացեք Բ Կորնթացիների 11.23-12.10-ը: Ըստ այս հատվածի համատեքստի…

Ո՞րն էր այդ խայթն ըստ Պողոսի *(ուշադրություն դարձրեք 11.23-33 խոսքերին)*:

_____

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. այստեղ մեջբերված են այլ հատվածներ Սուրբ գրքից, որտեղ գրված է խայթի (փշերի կամ տատասկների) մասին. Թվոց 33.55, Հեսու 23.13, Դատավորաց 2.1-3

Որտեղի՞ց և ումի՞ց էր գալիս այդ խայթը: *(Վերանայե՛ք Հակոբոս 1.13,16,17 խոսքերը)*:

_____

_____

ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս խոսքը գրված է Բ Կորնթացիների 12.9-ում: Այն հունարեն *«ասթենիա»*[4] բառն է: Ավետարաններում այս բառը հիմնականում նշանակում է ֆիզիկական տկարություն կամ հիվանդություն: Սակայն Պողոսի նամակների մեծ մասում՝ ներառյալ Բ Կորնթացիների թուղթը, այն օգտագործվում է «մարդկային բնության տկարության» իմաստով, հատկապես երբ խոսքը «փորձություններին ու նեղություններին» դիմանալու մասին է[5]: Ահա մի քանիսն այն հատվածներից, որտեղ առկա է *«ասթենիա»* բառը. Հռոմեացիների 6.19, 8.26, 15.1 և Եբրայեցիների 4.15:

9. Հիսուսի պատասխանը Պողոսին այն չորրորդ սկզբունքն է, որով մենք պետք է զինվենք. *Աստծո շնորհքը բավական է ցանկացած պատերազմ հաղթելու համար:* Արդյո՞ք ձեր կյանքում կա նման հարձակում: Արդյո՞ք դուք խնդրել եք Աստծուն հեռացնել այն, բայց Նա չի կատարել ձեր խնդրանքը: Կարճ նկարագրե՛ք այդ հարձակումը, իսկ հետո աղոթե՛ք և խնդրեք, որպեսզի Տերը շնորհք տա ձեզ դիմանալու համար և ցույց տա իրավիճակն Իր տեսանկյունից:

_____

_____

10. Երբ Տերը պատասխանեց Պողոսին, նա հիմնավոր փոփոխություն վերապրեց: Աստծո շնորհքի զորությունը շրջադարձային կերպով փոխեց

նրա տեսանկյունն այն փորձությունների և նեղությունների վերաբերյալ, որ կային իր կյանքում. փոխարենը խնդրեր Աստծուն հեռացնել նեղությունները՝ Պողոսը հավանությամբ ընդունեց բոլորը՝ Աստծուն ավելի շատ փառք բերելու համար:

Մտորե՛ք Աստծո՝ այս **խոստումների շուրջ**.

«Որովհետև Ես՝ քո Տեր Աստված, բռնում եմ քո աջ ձեռքը. Ես Տերն եմ, Ով ասում է քեզ՝ մի՛ վախեցիր, Ես կօգնե՛մ քեզ: Ահա, Ես կդարձնեմ քեզ նոր, սուր, ատամնավոր կալսող գործիք. դու կկալսես սարերը և կմանրացնես դրանց, և կդարձնես բլուրները թեփի պես: Դու քամուն տալով կմաքրես դրանք, և քամին կքշի-կտանի, և մրրիկը կամ պտտահողմը կցրի դրանք: Եվ դու կցնծաս Տիրոջ մեջ, կպարծենաս Իսրայելի Սուրբով»:

— Եսայի 41.13,15,16, AMP

«Տեր Աստվածն իմ Զորությունն է, իմ արիությունը և իմ անպարտելի բանակը. Նա դարձնում է իմ ոտքերը եղնիկի ոտքերի պես և այնպես կանի, որ ես քայլեմ [ոչ թե սարսափած կանգնեմ, այլ՝ քայլեմ] և [հոգևոր] առաջընթաց ունենամ իմ բարձր վայրերում [փորձանքի, չարչարանքի կամ պատասխանատվության]»:

— Ամբակում 3.19, AMP

«Ո՞վ է ժայռը՝ բացի մեր Աստծուց՝ Աստծուց, Ով գոտեպնդում է ինձ զորությամբ և կատարյալ դարձնում իմ ճանապարհը: Նա դարձնում է իմ ոտքերը եղնիկի ոտքերի պես [որոնք կարող են ամուր կանգնել կամ առաջ սլանալ փորձությունների և դժվարությունների վտանգավոր բարձունքներում], Նա ապահով կերպով հաստատում է ինձ իմ բարձր վայրերում: Նա սովորեցնում է իմ ձեռքերը պատերազմի, որպեսզի իմ ձեռքերը կարողանան պղնձե աղեղ ծալել»:

— Սաղմոս 18.31-34, AMP

Ի՞նչ է Տերը հայտնում ձեզ այն մասին, թե որքան է ցանկանում զորացնել և փոխել ձեզ:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Ինչ-որ տեղ կյանքում մեր մարմինը խոցվում է որևէ մարդու կողմից կամ ինչ որ խնդրի պատճառով: Եվ հաստատուն ու մեծ քայլեր անելու փոխարեն մենք կաղում ենք, մեր եռանդուն ընթացքը կտրուկ դադարեցվում է և փորձում ենք կրկին քայլել, բայց ընդամենը ընկրկում ենք յուրաքանչյուր փորձի ժամանակ: Ի վերջո, մենք օգնություն ենք խնդրում Աստծուց: Սա կատարվեց Պողոսի հետ: ...Որովհետև թեև մենք չգիտենք ամեն ինչ փշերի մասին, սակայն կարող ենք վստահ լինել, որ Աստված գերադասում է, որ մենք երբեմն կաղանք, քան մշտապես օգտվենք հենակներից: Եվ եթե Նա պետք է փուշ օգտագործի՝ Իր նպատակին հասցնելու համար, ապա Նա բավականին սիրում է մեզ, որպեսզի չհանի այն»:

— Մաքս Լուկադո[6]

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Կյանքի դժվարությունները չպետք է անտանելի լինեն: Մենք ենք որոշում, թե ինչպիսին են դժվարությունները, երբ նայում ենք դրանց կա՛մ հավատքով, կա՛մ անհավատությամբ: Մենք պետք է համոզված լինենք, որ մեր Հայրը մեր հանդեպ լցված է սիրով, և Նա թույլ է տալիս, որ փորձությունները գան միայն մեզ բարին անելու համար»:

— Եղբայր Լոուրենս[7]

Արդյո՞ք դուք ատում եք դժվարությունները: Միգուցե դուք ընկճվում եք գալիս այն մտքից, որ պետք է պատերազմել թշնամու հետ դժվարին իրավիճակներում: Այդ դեպքում դուք հիմնավոր փոփոխության կարիք ունեք: Ինչպես Պողոսին, այնպես էլ ձեզ պետք է Աստծո շնորհքի կարողությունը՝ դժվարություններին նայել որպես հնարավորություններ, այլ ոչ թե խոչընդոտներ: Աստված կարող է գերբնականորեն կատարել այս գործը ձեր կյանքում Սուրբ Հոգու զորությամբ: Աղոթե՛ք և խնդրե՛ք Նրան այս մասին:

Աղոթք նոր մարտերակերպի համար

Հա՛յր, շնորհակալություն այն ճշմարտությունների համար, որ Դու սովորեցրիր ինձ այս դասի ընթացքում: Ես ցանկանում եմ լինել սպառազինված թշնամու հարձակումների դեմ և հաղթող՝ Քո փառքի համար: Օգնի՛ր ինձ, Տե՛ր, որ այն փորձությունները և դժվարությունները, որոնք թույլ ես տալիս իմ կյանքում, տեսնել որպես հնարավորություններ Քեզ փառավորելու համար, այլ ոչ թե խոչընդոտներ: Ես Քո շնորհքի կարիքն ունեմ: Ես Քո հիմնավոր փոփոխության կարիքն ունեմ, ինչպես և Պողոսը: Զորացրո՛ւ և փոխի՛ր իմ սիրտը: Շնորհակալություն, որ սիրում ես ինձ և համբերատար ես իմ նկատմամբ իմ հոգևոր հասունության ընթացքում, Հիսուսի անունով: Ամե՛ն:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մի՛ դիտարկեք փորձությունները որպես խոչընդոտներ. տեսե՛ք դրանք որպես հնարավորություններ: Մենք զինված ենք այն ժամանակ, երբ սրտով ու մտքով դրական ենք տրամադրված փորձություններին՝ նախքան դրանց լինելը, դրանց ընթացքում և հետո: Մենք գիտենք, որ հաղթանակն արդեն մերն է, և երկնքի ողջ իշխանությունն ու զորությունը մեր կողմից է:

Ծարաթական

ԿՈՉ

Այս շաբաթվա ընթացքում աղոթե՛ք ինչ-որ մեկի կամ ձեզ համար: Խրախուսե՛ք ձեզ շրջապատող մարդկանց՝ սովորեցնելով, որ իրենք մենակ չեն և կարող են հաղթել: Խոնարհություն ունեցեք, որպեսզի կարողանաք ընդունել նույն խրախուսանքն այն ծառայողներից, ում հետ շփվում եք: Միասին դուք կարող եք ստեղծել մարդկանց մի մեծ խումբ, ովքեր լավատես են և վստահություն ունեն այն իշխանության հանդեպ, որ ստացել են Աստծուց:

Օր 1. ԿԱՊԵ՛Ք ՁԵՐ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆ

«Ուրեմն հաստա՛տ կանգնեք: Կապե՛ք ճշմարտությունը ձեր գոտկատեղին՝ գոտու պես»:

— Եփեսացիների 6.14, GW

Մեր սպառազինության առաջին ու ամենակարևոր մասը, որ ունենք, ճշմարտության գոտին է, այսինքն՝ ճշմարտության վարդապետությունը, որ կա Սուրբ գրքում[8]: Դա Աստծո գրված Խոսքն է՝ այն հիմքը, որի վրա կառուցված է մեր փրկությունը և նոր կյանքի յուրաքանչյուր բնագավառը, որ Քրիստոսի մեջ է:

Հռոմեական գոտին անհրապուրիչ էր և գրեթե չէր նկատվում: Սակայն այն զինվորի սպառազինության ամենակարևոր մասն էր, քանի որ պահում էր մնացած բոլոր մասերն իրենց տեղում: Սուրը կախում էին գոտուց: Վահանը դրվում էր գոտու վրա, իսկ զրահն ամրանում էր գոտուն՝ չճոճվելու համար: Այն նույնպես ծածկում և պաշտպանում էր տղամարդու վերարտադրողական կարողությունը[9]:

Ձեր Աստվածաշունչը նման է հռոմեական գոտուն: Թեև այն հասարակ թվա, սակայն կենսականորեն կարևոր է: Աստծո համար պտղաբեր լինելու՝ ձեր կարողությունն ուղղակիորեն կապված է այն բանից, թե որքան եք շփվում Նրա Խոսքի հետ: Խոսքը թույլ չի տալիս, որպեսզի դուք հոգևորում անպտուղ լինեք: Կապել ճշմարտությունը գոտու պես նշանակում է լինել Խոսքի մեջ ամեն օր: Սուրբ գիրքը կարդալով, ուսումնասիրելով, Աստծո Խոսքի շուրջ մտորելով և հատվածներն անգիր անելով՝ մենք հագնում ենք ճշմարտությունը: Երբ Խոսքը ձեր կյանքի հիմքն է, դուք զինված և պատրաստ եք ձեր սպառազինությունն արդյունավետ կերպով օգտագործելու համար:

Ձեր գոտին անբաժան կերպով կապակցված է ձեր՝
արդարության զրահին ..... կարդացե՛ք Սաղմոս 119.40
խաղաղության կոշիկներին ..... կարդացե՛ք Կողոսացիների 3.15,16
փրկության սաղավարտին..... կարդացե՛ք Բ Տիմոթեոս 3.15,16
հավատքի վահանին..... կարդացե՛ք Հռոմեացիների 10.17
հոգու սրին ..... կարդացե՛ք Եբրայեցիների 4.12

Արդյո՞ք ավելի եք արժևորում Աստծո Խոսքը՝ նորովի հասկանալով, թե ինչ է անում ճշմարտությունը ձեր կյանքում:

_____

_____

Պատահե՞լ է, որ դուք օրեր, շաբաթներ և ամիսներ շարունակ անցկացնեք առանց Խոսքի հետ շփվելու: Ինչպե՞ս է դա անդրադարձել ձեր վերաբերմունքի, զգացմունքների և մտածելակերպի վրա:

_____

_____

Եթե դուք նկատել եք, որ ձեր կյանքում պակասել են ուրախությունը, խաղաղությունը, համբերությունը, բարությունը, և դուք ավելի դժվարությամբ եք վերահսկում ձեզ, ապա ուշադրությո՛ւն դարձրեք, թե որքա՞ն ժամանակ եք անցկացնում Սուրբ գրքի հետ: Ինչպիսի՞ փոփոխություններ է Սուրբ Հոգին դրդում կատարել՝ ճշմարտության գոտին ամուր կապելու համար:

_____

_____

_____

Օր 2. ՀԱԳԵ՛Ք ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՀԸ

«Ուրեմն հաստա՛տ կանգնեք՝ ամրացնելով ճշմարտության գոտին ձեր գոտկատեղին և արդարության զրահն՝ իր տեղում»:

— Եփեսացիների 6.14, NIV

Արդարության զրահը սպառազինության հաջորդ մասն է, որը մեզ պատվիրված է կրել: Խոսքն այն արդարության մասին է, որ մեզ տրվել է Քրիստոսի մեջ: «[Աստված] հանուն մեզ [փաստորեն] մեղք դարձրեց Քրիստոսին, Ով չգիտեր մեղքը, որպեսզի Նրանում և Նրա միջոցով մենք կարողանանք դառնալ [ստանալ՝ որպես պարգև, համարվել, որ դրա մեջ ենք և լինել օրինակ] Աստծո արդարությունը [այն, ինչ մենք պետք է լինենք, **հաստատված** և **ընդունելի** և **ճիշտ փոխհարաբերությունների մեջ Նրա հետ**, Նրա բարության շնորհիվ]» (Բ Կորնթացիների 5.21, AMP):

Արդարությունը պահպանում և պաշտպանում է մեր կենսականորեն կարևոր օրգանները, հատկապես՝ մեր սիրտը կամ զգացմունքները: Եթե մենք չենք զգում, որ հաստատված ենք, ընդունված ենք կամ ճիշտ դիրք ունենք Աստծո առջև, ապա հաջողությամբ չենք պայքարի թշնամու դեմ:

Հռոմեական զինվորի զրահը նրա սպառազինության ամենափայլուն մասն էր: Սովորաբար այն պատրաստված էր լինում արույրից, սկսվում էր վզի վերնամասից և իջնում մինչև ծնկները՝ ծածկելով մարմնի և՛ առջևի, և՛ ետևի մասերը: Զրահը հաճախ պատրաստում էին մետաղի գծավոր կտորներից, որոնք նմանվում էին ձկան թեփուկների: Այն ծանր էր՝ մոտավորապես 20 կիլոգրամ: Հետաքրքիր է՝ որքան երկար էր զինվորը կրում իր զրահը, այնքան ավելի էր այն փայլում: Մետաղը քսվում էր մետաղին՝ առաջացնելով զարմանալի փայլ, որը կուրացնում էր թշնամուն: Պարզապես պատկերացրեք, թե ինչպիսի տեսք ուներ զինվորական լեգեոնը[10]:

Ինչպիսի՞ նոր բաներ է Տերը ցույց տալիս ձեզ արդարության զրահի մասին:

_____

_____

Ինչպե՞ս կարող է արդարության մեջ ավելի հաստատվելը ազդել ձեր պատերազմելու կարողության վրա:

_____

_____

Ի՞նչ տեղի կունենա, *եթե դուք չիմանաք*, որ Աստծո արդարությունն եք Քրիստոսի մեջ: Ինչպե՞ս սատանան կհարձակվի ձեզ վրա և ինչպե՞ս դա կազդի ձեր աղոթքների վրա:

_____

_____

_____

Հավատքով հագե՛ք ձեր արդարության զրահը: Դուք արդարացել եք Քրիստոսում: Սովորե՛ք մտածել ձեր մասին ըստ այն աշխատանքի, որ Հիսուսն ավարտեց խաչի վրա:

Հետագա ուսումնասիրության համար
Եսայի 59.17, 61.10
Ա Կորնթացիների 1.30
Հռոմեացիների 5.16-21, 10.4 Փիլիպեցիների 3.9

Օր 3. ՀԱԳԵ՛Ք ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՇԻԿՆԵՐԸ

*«Ձեր ցանկությունը **խաղաղության** բարի լուրը պատմելու մասին պետք է լինի ինչպես կոշիկներ՝ ձեր ոտքերին»:*

— Եփեսացիների 6.15, CEV

Հաջորդը՝ մենք պետք է հագնենք մեր խաղաղության կոշիկները: Կարևոր չէ՝ որքան թիկնեղ կամ ուժեղ էր զինվորը կամ որքան վարպետորեն էր նա տիրապետում սրին. առանց կոշիկների նա բոկոտն կլիներ, ինչը մարտի դաշտում աղետալի հետևանքներ կունենար:

Հռոմեական զինվորի կոշիկները բաղկացած էին երկու մասից՝ կոշիկից և ոտնակից՝ այն մետաղյա ծածկույթից, որ պաշտպանում էր ոտքը ծնկից վեր: Ներսից կոշիկը չմաշվող կաշվից էր, իսկ դրսից պատված էր արույրով: Ներքևի մասում երկուսից վեց սանտիմետր երկարությամբ սուր ցցեր էին, որոնց շնորհիվ զինվորը կարող էր հաստատ կանգնել: Դրանք շատ ծիգ կապված էին զինվորի ոտնաթաթին[11]:

Ինչպե՞ս է այս պատկերաշարն օգնում ձեզ ավելի լավ հասկանալ, թե որքանով դուք Աստծո խաղաղության կարիքն ունեք:

_____

_____

Ի՞նչ սովորեցիք ոտնակների և սուր ցցերի նշանակության մասին:

_____

_____

Ինչպե՞ս է թշնամին փորձել գողանալ, սպանել կամ կործանել ձեր խաղաղությունը:

_____

_____

Եթե ձեր խաղաղությունը նվազել կամ կորսվել է, ապա կա՛նգ առեք և աղոթե՛ք: **Մտորե՛ք** այս խոսքերի շուրջ: Խնդրե՛ք Աստծուն՝ վերականգնել Իր խաղաղությունը և ասեք, որ կրկին հագնում եք ձեր կոշիկները:

«Խաղաղություն եմ թողնում ձեզ. Իմ [իսկ] խաղաղությունն եմ ես այժմ տալիս և ավանդում ձեզ: Ոչ թե ինչպես աշխարհն է տալիս, ես տալիս եմ ձեզ: Թույլ մի՛ տվեք, որպեսզի ձեր սրտերը խռովվեն, ո՛չ էլ թույլ տվեք, որ վախենան: [Դադարե՛ք անհանգստանալ և տագնապել, թույլ մի՛ տվեք ձեզ անվճռական, երկչոտ, վախկոտ և անհաստատ լինել]»:

— Հովհաննես 14.27, AMP

«Մի՛ անհանգստացեք ոչնչի համար, փոխարենը՝ աղոթե՛ք ամեն ինչի համար: Պատմե՛ք Աստծուն, թե ինչի կարիք ունեք և գոհացե՛ք Նրանից այն ամենի համար, որ Նա արել է: Եթե դուք անեք սա, ապա կվերապրեք Աստծո խաղաղությունը, որը շատ ավելի հրաշալի է, քան մարդկային միտքը կարող է հասկանալ: Նրա խաղաղությունը կհսկի ձեր սիրտը և միտքը, քանի որ դուք ապրում եք Քրիստոս Հիսուսում»:

— Փիլիպեցիների 4.6,7, NLT

«Դու կպահես կատարյալ խաղաղության մեջ բոլոր նրանց, ովքեր վստահում են Քեզ՝ բոլոր նրանց, ում մտքերը կենտրոնացած են Քեզ վրա»:

— Եսայի 26.3, NLT

Օր 4. ՊԱՀԵ՛Ք ՀԱՎԱՏՔԻ ՎԱՀԱՆԸ

*«Թող ձեր **հավատքը** լինի վահանի պես, և դուք կկարողանաք կանգնեցնել չարի բոլոր կրակոտ նետերը»:*

— Եփեսացիների 6.16, CEV

Աստծո սպառազինության չորրորդ մասը *հավատքի վահանն* է: Ինչպես արդեն ասվեց՝ վահանը դրվում էր գոտու վրա գտնվող փոքրիկ ամրակին, երբ չէր օգտագործվում: Սա ցույց է տալիս, որ մեր հավատքն անբաժանելիորեն կապված է Աստծո Խոսքի հետ: Եթե մարդը չի սնվում Աստծո Խոսքով, նա չի կարող հավատք ունենալ[12]:

Վահանը հունարեն *«տուրեոս»*-ն է: Այս բառը նշանակում է երկար և լայն դուռ: Վահանը դռան չափ էր. այն ամբողջովին ծածկում էր մարդուն: Յուրաքանչյուր մարդուց, որ հավաքագրվում էր հռոմեական բանակ, չափսեր էին վերցնում, որպեսզի իր համար պատրաստվող վահանն ամբողջովին ծածկեր իրեն[13]:

Հիմնականում վահանը պատրաստվում էր կենդանու կաշվի վեց շերտից, որոնք ամուր կարվում էին իրար և ամրացվում փայտի վրա: Այն անչափ դիմացկուն էր և գրեթե անթափանցելի: Ամեն առավոտ զինվորները ձեթ էին քսում կաշվե ծածկույթի վրա, որպեսզի այն փափուկ ու ճկուն մնար: Առանց յուղի վահանն ի վերջո պնդանում, ճաքում և կոտրվում էր հարվածների ներքո՝ անպաշտպան թողնելով զինվորին մարտի թեժ պահին: Մինչև մարտի գնալը զինվորները նույնպես ընկղմում էին իրենց վահանները ջրի մեջ, մինչև որ դրանք լիովին չէին հագեցնում խոնավությամբ: Եթե թշնամու կրակոտ նետը հարվածեր ջրի մեջ ընկղմված վահանին, այն կհանգցներ կրակը[14]:

Ի՞նչ է Աստված հայտնում ձեզ հավատքի մասին հռոմեական վահանի *կառուցվածքի* միջոցով:

_____

_____

Կարդացե՛ք Հռոմեացիների 12.3-ը: Ինչպե՞ս է ձեր հավատքը պատկերում այն փաստը, որ զինվորից *չափսեր* էին վերցնում իր վահանի համար: Ի՞նչ եք դուք հասկանում սրանից:

_____

_____

Կարդացե՛ք Ա Թագավորաց 16.13-ը, Հուդա 20-ը և Եփեսացիների 5.26-ը: Զինվորը հոգում էր իր վահանի մասին *ձեթի* և *ջրի* միջոցով: Ի՞նչ կապ ունի դա ձեր հավատքի հետ:

_____

_____

Արդյո՞ք դուք հասկանում եք, թե որքան կարևոր է ձեզ համար պահել ձեր հավատքի վահանը: Ի՞նչ տեղի կունենա, եթե դուք մի կողմ դնեք դա կամ դադարեք հոգալ դրա մասին: *Կարդացե՛ք* Ա Տիմոթեոս 1.18,19-ը և Եբրայեցիների 11.6-ը:

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Ի՞նչ եք դուք ստանում հավատքի միջոցով: Հռոմեացիների 1.17, 3.21, 22, 28, 5.1,2, Գաղատացիների 3.11,14,26, Եփեսացիների 3.12, Բ Կորնթացիների 5.7

Օր 5. ԿՐԵ՛Ք ՁԵՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՍԱՂԱՎԱՐՏԸ

*«Հագե՛ք **փրկությունը** սաղավարտի պես»:*

— Եփեսացիների 6.17, NLT

Աստված տալիս է *փրկության սաղավարտը*՝ մեր գլուխը պաշտպանելու համար: Մեր միտքը վերահսկում է մեր կյանքը, քանի որ որոշում է մեր հետագա գործողությունները: Այդ իսկ պատճառով միտքը նույնպես պետք է հսկել:

Ձինվորի բրոնզե սաղավարտը զարդարված էր ձիու մազից պատրաստված խայտաբղետ փետրափնջով, ինչի պատճառով նրան շատ հեշտ էր նկատել: Այն զարդարված էր փորագրություններով և ծածկում էր գլուխն ունքերից մինչև վզի ներքևի մասը: Մետաղի երկու լայն կտորներ իջնում էին դեմքի վրա՝ պաշտպանելով այտերը, ծնոտը և ականջները: Սաղավարտն այնքան ամուր և ծանր էր, որ նույնիսկ մարտական կացինը չէր կարող ճեղքել այն: Առանց սաղավարտի զինվորը հավանաբար կկորցներ իր գլուխը[15]:

Ձեր կարծիքով՝ ի՞նչ է նշանակում «հանել սաղավարտը»: Ինչո՞ւ է դա վտանգավոր:

_____

_____

_____

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ.

«Ուրեմն հաստատե՛ք ձեր մտքերը. սթա՛փ (շրջահայաց, բարոյապես զգոն) եղեք. ձեր հույսն ամբողջովին և անփոփոխ կերպով դրեք այն շնորհքի (աստվածային բարեհաճության) վրա, որը գալիս է ձեր կյանք, երբ Հիսուս Քրիստոսը (Մեսիան) բացահայտվում է»:

— Ա Պետրոս 1.13, NLT

«Ուղղե՛ք ձեր մտքերը և սևեռե՛ք այն բաների վրա, որ վերևում են (վերին բաների), ոչ թե այն բաների վրա, որ այս երկրի վրա են»:

— Կողոսացիների 3.2, AMP

«Եվ մշտապես նորոգվե՛ք ձեր մտքի հոգով [ունենալով թարմ մտավոր և հոգևոր կեցվածք] և հագե՛ք նոր բնությունը (վերածնված անձը), որը ստեղծված է Աստծո պատկերով [աստվածանման]՝ ճշմարիտ արդարությունով և սրբությունով»:

— Եփեսացիների 4.23,24, AMP

Ի՞նչ է Տերն ասում ձեզ փրկության գիտության մեջ ավելի հաստատվելու մասին:

_____

_____

_____

Հետագա ուսումնասիրության համար
Ի՞նչ է Սուրբ գիրքն ասում փրկության մասին: Մտորե՛ք այս ճշմարտությունների շուրջ.
Սաղմոս 27.1, 37.39, Եսայի 12.2, Գործք 4.12, 13.26, Հռոմեացիների 1.16, 10.9,10,13, Ա Կորնթացիների 15.1,2, Բ Տիմոթեոս 3.15-17, Հակոբոս 1.21, Եփեսացիների 2.8,9

Օր 6. ՊԱՀԵ՛Ք ՁԵՐ ՁԵՌՔՈՒՄ ՀՈԳՈՒ ՍՈՒՐԸ

*«Վերցրե՛ք Հոգու սուրը, որն **Աստծո Խոսքն** է»:*

— Եփեսացիների 6.17, NLT

Պատահական չէ, որ Աստծո Խոսքը ներկայացված է մեր սպառազինության մեջ երկու անգամ: Այս խոսքում օգտագործվող հունարեն բառը տարբերվում է այն բառից, որն օգտագործվում է, երբ խոսքը ճշմարտության գոտու մասին է: Այստեղ գրված է *«ռեմա»* բառը, որը նշանակում է «որոշակի, հստակ և անհերքելի խոսք՝ ասված պարզ և արտահայտիչ կերպով»: Սուրբ Հոգին տալիս է մեզ *«ռեմա»*-ն, երբ Աստվածաշնչից որևէ խոսք կենդանանում է մեզ համար կամ գերբնականորեն խոսում մեր սրտին: Այսպիսի խոսքն *առանձնահատուկ* է և զորավոր. այն փոխում է մեր կյանքը և տրված է հատուկ նպատակով: Կրկին՝ *«ռեմա»*-ն՝ սուրը, ամրացված է *գոտուն*: Չկա *«ռեմա»*՝ առանց գրված Խոսքի[16]:

Հինգ տարբեր տեսակի սրերից, որոնք օգտագործում էին հռոմեացի զինվորները, Աստված մասնավորապես ընտրեց մեկը՝ նկարագրելու համար Հոգու սուրը: Այն մոտ կես մետր երկարություն ուներ և սրված էր *երկու կողմից*. երկու սայրերն էլ ածելիի պես սուր էին: Թշնամու որովայնից հանելուց սուրը պտտում էին, և նրա փորոտիքը թափվում էր: Սա բոլոր սրերից ամենամահացուն էր[17]:

Պատահե՞լ է, որ երբ դժվարին իրավիճակում եք եղել, Սուրբ Հոգին ինչ-որ բան է հայտնել ձեր սրտում: Ինչպե՞ս սպառազինվեցիք այդ ժամանակ:

_____

_____

_____

Երբ Սուրբ Հոգին *«ռեմա»* խոսք է խոսում մեր սրտերին, ապա ավելի լավ է հիշել այն. կա՛նգ առեք և մտածեք: Որո՞նք են այն երեք *«ռեմա»* խոսքերը, որ դարձել են ձեր *կյանքի սյունները*: Ինչպե՞ս են դրանք փոխում ձեր և այլ մարդկանց կյանքերը:

_____

_____

_____

_____

Շատ հավատացյալներ *կարդում* են Խոսքը. ոմանք *ուսումնասիրում* են այն, բայց Խոսքի *ամբողջական զորությունը* չի ազատագրվում, քանի դեռ այն **ասված** չէ: Երբ դուք խոսում եք թշնամու դեմ, մահացու հարված եք հասցնում նրան Հոգու սրով: *Կարդացե՛ք* Հայտնություն 1.16, 2.16, Երեմիա 23.28,29, Եբրայեցիների 4.12 և Առակաց 18.21 խոսքերը: Ի՞նչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ այն զորության մասին, որն ազատագրվում է, երբ դուք խոսում եք Խոսքը:

_____

_____

_____

_____

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հիսուսը մարդկանցից կրեց անարդարացի վերաբերմունք, և մեզ հետ դա նույնպես կատարվելու է: Այդ իսկ պատճառով մենք պետք է զինվենք՝ հիշելով հետևյալը. (1) նեղություններն անխուսափելի են, (2) այն նեղությունները, որոնց մենք բախվում ենք, պատահում են բոլոր հավատացյալներին, (3) մենք կարող ենք չկրել ոչ մի պարտություն, որովհետև (4) Աստծո շնորհքը մեր կյանքում ավելի, քան բավական է ցանկացած պատերազմ հաղթելու համար: Այնպես որ հագե՛ք Աստծո լրիվ սպառազինությունը և սկսե՛ք տեսնել փորձությունները որպես հնարավորություններ՝ Քրիստոսի մեջ աճելու և Նրան փառավորելու համար:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մի՛ թերագնահատեք Աստծո Խոսքը սովորելու, դրա շուրջ մտորելու և դրանով աղոթելու կարևորությունը: Սովորելը, մտորելը և աղոթելն այն կենսականորեն կարևոր աշխատանքներ են, որոնց միջոցով Խոսքը դառնում է ձեր ներսի մարդու մասը: Երբ այս կերպով Աստծո Խոսքի ճշմարտությունն արմատանում է ձեր սրտում և սկսում ազատագրել իր վերափոխող զորությունը ձեր մտքում, դուք կարող եք դավանել Աստծո Խոսքը՝ ազատագրելով աներևակայելի հոգևոր զորություն: Նման դավանությունն իսկապես հավասար է երկայրի սրով ձեր թշնամու սիրտը խողխողելուն»:

— Ռիկ Ռեններ[18]

(1) *«Մեջբերումներ Լյուիսից»*, Ուեյն Մարթինդեյլ և Ջերի Ռութ՝ խմբագիրներ (Քերոլ Սթրիմ՝ Իլինոյս. «Tyndale House Publishers, Inc.», 1990թ.), էջ 587: (2) Բիլլի Գրեհեմ *«Հույս՝ տագնապած սրտի համար»* (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson», 1991թ.), էջեր 79,80: (3) Դեյվիդ Ջերեմայա, *«Հափշտակված շնորհքով»*, (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson, Inc.», 2006թ.), էջ 91: (4) Սթրոնգի *«Աստվածաշնչի լիակատար համաբարբառ»*, Ջեյմս Սթրոնգ՝ Իրավագիտության և Աստվածաբանության դոկտոր (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishers», 1990թ.): (5) Թայերի *«Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան»*, Ջոզեֆ Հ. Թայեր (Grand Rapids, MI: «Baker Book House Company», 1977թ.) էջ 80: (6) Մաքս Լուկադո. *«Շնորհքի գրկում»* (Դալլաս՝ Տեխաս. «Word Publishing», 1996թ.), էջեր 132,137: (7) Եդբայր Լոուրենս. *«Հարատևել Աստծո ներկայության մեջ»* (Նյու Քեսինգթոն՝ Փենսիլվանիա. «Whitaker House», 1982թ.), էջ 55: (8) Տե՛ս նշում 4: (9) Հատվածն օգտագործված է *«Հագնված՝ սպանելու համար»*, Ռիկ Ռեններ (Տալսա՝ Օկլահոմա. «Teach All Nations», 2007թ.) էջեր 262,276: (10) Նույնը, էջեր 292-294: (11) Նույնը, էջեր 313-315,321,322: (12) Նույնը, էջ 343: (13) Նույնը, էջ 347: (14) Նույնը, էջեր 348-351: (15) Նույնը, էջեր 374-376: (16) Նույնը, էջեր 406,407: (17) Նույնը, էջեր 404-406: (18) Նույնը, ուղիղ մեջբերում, էջ 421:

Նշումներ

Աշխատանք

*«Իսկ դու, որդի՛ս, **ուժեղ եղիր այն շնորհքի միջոցով**, որ մերն է Հիսուս Քրիստոսի հետ՝ միաբանության մեջ»:*

— Բ Տիմոթեոս 2.1, GNT

Գլուխ 7

ՇՆՈՐՀՔԻ ԶԵՆՔԵՐԸ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 7-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 9-րդ և 10-րդ գլուխներից:

Խ 1. Շնորհքը զարմանալի՞ է: Այն Աստծո զորացումն է՝ Հիսուսի նման ապրելու և Նրա արքայությունը տարածելու համար: Աստծո շնորհքն ընդունելու համար մենք պետք է *հնազանդ* լինենք մեկս մյուսին: Ըստ էության՝ սա նշանակում է, *որ մենք պետք է միաբանվենք մեկ առաքելության շուրջ*: Նախ՝ մենք պետք է հնազանդվենք Աստծուն. որպես արդյունք՝ մենք կհնազանդվենք նաև մարդկանց: Քննե՛ք ձեր փոխհարաբերությունները ձեր կնոջ կամ ամուսնու, տնօրենի, աշխատակիցների, եկեղեցու ավագների, անդամների և այլոց հետ:

Ո՞ւմ եք ավելի հեշտությամբ հնազանդվում և ինչու: Ինչպիսի՞պտուղ է տալիս այդ հնազանդությունը:

_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ո՞ւմ եք ավելի դժվարությամբ հնազանդվում և ինչու: Ինչպիսի՞պտուղ է տալիս այդ անհնազանդությունը:

_____
_____
_____
_____
_____
_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Պատշաճ կերպով զինված լինելու մեկ այլ կարևոր պայմաններից մեկն այն է, որ կարողանանք օգտագործել այն զենքերը, որ ունենք: Պողոսն ասում է մեզ. «Այն զենքերը, որոնցով մենք պատերազմում ենք, այս աշխարհի զենքերը չեն: Ընդհակառակը՝ դրանք աստվածային զորություն ունեն բերդեր քանդելու համար» (Բ Կորնթացիների 10.4, NIV): Ո՞րն է այն «աստվածային զորությունը», որ բերդեր է քանդում: Այդ զենքը միմիայն Աստծո զարմանալի **շնորհքն է**:

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Հակոբոս 4.7, Եփեսացիների 5.21-24, Եբրայեցիների 13.17, Ա Պետրոս 5.5, Հռոմեացիների 13.1,2

ՀՆԱԶԱՆԴՎԵԼ

«Հնազանդվել» կամ *«հպատակվել»* բառը հունարեն *«հուպոտասսո»*-ն է: Այն հիմնականում ռազմական տերմին է, որը նշանակում է «ցածր դիրք գրավել» («հուպո»-ն նշանակում է «ներքև», իսկ «տասսո»-ն՝ «կարգավորել»)[1]: Հնազանդվելով մենք կարգավորում ենք մեզ՝ հայտնվելով մեկ այլ մարդու իշխանության ներքո և հնազանդվելով նրա ցուցումներին[2]: Հետաքրքիր է, որ Վեբսթերը *«հնազանդվել»* բառը սահմանում է որպես «տեղի տալ կամ անձնատուր լինել սեփական անձը և կարծիքը մեկ այլ մարդու իշխանությանը՝ առանց տրտնջալու»[3]: Հնազանդության հիմքը խոնարհությունն է. այն զորավոր զենք է թշնամու դեմ:

«...ամենդ իրար հնազանդվելով խոնարհությունը հագեք, որովհետև «Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին ***շնորհք*** *[զորություն] է տալիս»: Այդ պատճառով խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ ձեզ բարձրացնի պատշաճ ժամանակին»»:*

— Ա Պետրոս 5.5,6, NKJV

2. Աստծո շնորհքն է զորություն տալիս իրար հնազանդվելու համար: Մենք ընդունում ենք շնորհքը՝ *խոնարհությունը հագնելով*: Մտածե՛ք այն մասին, որ ամեն օր դուք հագնվում եք: Դա արվում է կանխամտածված, ոչ թե մեխանիկորեն: Մտորե՛ք այս խոսքերի շուրջ և ձեր բառերով կարճ նկարագրեք, թե ինչ է նշանակում հագնել խոնարհությունը:

«Փոխարենը՝ հագե՛ք Տեր Հիսուս Քրիստոսի ներկայությունը: Եվ թույլ մի՛ տվեք ձեզ մտածել ձեր չար ցանկություններին տրվելու ճանապարհների մասին»:

— Հռոմեացիների 13.14, NLT

«Թո՛ղ Տեր Հիսուս Քրիստոսը ձեզ այնքան մոտ լինի, որքան այն հագուստը, որը դուք կրում եք: Այդ ժամանակ դուք չեք փորձի բավարարել ձեր եսասիրական ցանկությունները»:

— Հռոմեացիների 13.14, CEV

.....

«Ես խաչվել եմ Քրիստոսի հետ. և ես այլևս չեմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ: Եվ այն իրական կյանքը, որ այժմ ունեմ այս մարմնի մեջ, Աստծո Որդուն վստահելու արդյունքն է, Ով սիրեց ինձ և տվեց Իրեն ինձ համար»:

— Գաղատացիների 2.20, TLB

«Բոլորը, ովքեր պահում են Նրա պատվիրանները [ովքեր հնազանդվում են Նրա հրահանգներին և հետևում Նրա ծրագրին, ապրում են և շարունակում են ապրել, մնում են և], բնակվում են Նրանում, և Նա՝ նրանց մեջ: [Նրանք թույլ են տալիս Քրիստոսին լինել իրենց տունը, և իրենք նույնպես Քրիստոսի տունն են]: Եվ սրանով մենք գիտենք և հասկանում ենք և ապացույց ունենք, որ Նա [իրականում] ապրում է և բնակություն հաստատում մեր մեջ. այն [Սուրբ] Հոգով, Ում Նա տվել է մեզ»:

— Ա Հովհաննես 3.24, AMP

_____

_____

ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

Սուրբ գրքում *«խոնարհությունը»* նշանակում է «հասարակ մտածել սեփական անձի մասին. սեփական մարդկային (բարոյական) փոքրության խորը զգացում կամ մտքի համեստություն»[4]: Վեբսթերը գրում է, որ խոնարհությունը «ազատություն է հպարտությունից և ամբարտավանությունից. հնազանդության քայլ»[5]: Ճշմարտապես խոնարհ լինել նշանակում է հավատալ, վստահել և հնազանդվել Աստծո Խոսքին առավել այն ամենից, ինչ մենք մտածում, զգում կամ ցանկանում ենք:

3. *Խոնարհությունն* առաջին բանն է, որն անհրաժեշտ է Աստծո շնորհքը ստանալու համար: Այն հատկանիշ չէ, որը մենք ներքուստ ունենք կամ կարող ենք անձամբ զարգացնել: Այն Աստծո շնորհքի հատկանիշներից մեկն է, որը փոխանցվում է մեզ անձամբ Քրիստոսի կողմից, քանի որ Նրա Հոգին ապրում է մեր մեջ և մենք սովորում ենք ապրել Նրա մեջ:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Ճշմարիտ խոնարհությունը բացարձակ հնազանդություն և կախվածություն է Աստծուց: Այն ամեն ինչում Աստծուն դնում է առաջին տեղում, մյուսներին՝ երկրորդ, իսկ մեզ՝ երրորդ: Խոնարհությունը կապված չէ տկար լինելու, ցածր խոսելու կամ սեփական անձը նսեմացնելու հետ, սակայն անմիջականորեն կապված է համարձակ, անկոտրում և Աստծո շնորհքի ձրի պարգևով ապրելու հետ:

Մտորե՛ք Հիսուսի խոսքերի շուրջ.

«Եկե՛ք Ինձ մոտ, բոլո՛րդ, ովքեր ծանր աշխատում եք, բեռնավորված եք և գերծանրաբեռնված, և Ես կհանգստացնեմ ձեզ: [Ես կթեթևացնեմ և կազատեմ և կթարմացնեմ ձեր անձերը]: Վերցրե՛ք Իմ լուծը ձեզ վրա և սովորե՛ք Ինձանից, որովհետև Ես մեղմ (հեզ) և խոնարհ (համեստ) եմ սրտով, և դուք հանգիստ կգտնեք (թեթևություն և ազատություն և թարմություն և ուժերի վերականգնում և օրհնված անդորր) ձեր անձերի համար: Որովհետև Իմ լուծը բարերար է (օգտակար, բարի՝ ոչ խիստ, դժվար, սուր կամ ճնշող, այլ՝ հարմարավետ, դուրեկան և հաճելի), և Իմ բեռը թեթև է և հեշտ՝ կրելու համար»:

— Մատթեոս 11.28-30, AMP

Մտորե՛ք Հիսուսի մասին գրված խոսքերի շուրջ.

«Հիսուսը գիտեր, որ եկել էր Աստծուց և վերադառնալու էր Աստծո մոտ: Նա նույնպես գիտեր, որ Հայրը տվել էր Իրեն կատարյալ իշխանություն: Այնպես որ ճաշի ընթացքում Հիսուսը կանգնեց, հանեց Իր վերնազգեստը և սրբիչ փաթաթեց Իր մեջքին: Նա ջուր լցեց մեծ կոնքի մեջ: Հետո սկսեց լվանալ աշակերտների ոտքերը և չորացնել դրանք այն սրբիչով, որ փաթաթել էր մեջքին»:

— Հովհաննես 13.3-5, CEV

«Թող նույն վերաբերմունքը և դիտավորությունը և [խոնարհ] միտքը լինի ձեզանում, որը Քրիստոս Հիսուսում էր. [Թող Նա լինի ձեր՝ խոնարհության օրինակը]: (AMP) Թեև Նա Աստված էր, բայց չմտածեց Աստծո հետ հավասարության մասին՝ ասես մի բանի, ինչից պետք է ամուր բռնվել: Փոխարենը՝ Նա թողեց Իր աստվածային արտոնությունները, զբաղեցրեց ստրուկի խոնարհ դիրք և ծնվեց՝ որպես մարդ: Երբ Նա հայտնվեց մարդկային մարմնով, Նա խոնարհեցրեց Իրեն՝ հնազանդվելով Աստծուն, և մահացավ հանցագործի կյանքով խաչի վրա: Այդ իսկ պատճառով Աստված բարձրացրեց Նրան բարձրագույն պատվի վայրը և տվեց այնպիսի անուն, որը վեր է բոլոր այլ անուններից»:

— Փիլիպեցիների 2.5-9, NLT

Խոնարհության ինչպիսի՞ պատկեր է ձևավորվում ձեր սրտում այս խոսքերը կարդալիս:

_____
_____
_____

4. Անչափ կարևոր է հասկանալ ճշմարիտ խոնարհության արժեքը: Մի պահ դանդաղորեն կարդացե՛ք վերը նշված խոնարհության սահմանումը: Կյանքի ո՞ր բնագավառում եք դժվարանում խոնարհվել Աստծո առջև: Վախը սովորաբար վստահության պակասի գլխավոր պատճառն է: Աղոթե՛ք և խնդրե՛ք Աստծուն՝ ցույց տալ, թե ինչից եք դուք վախենում և ինչու: Դրանից հետո հանձնե՛ք դա Նրա ձեռքերի մեջ:

Ինձ համար դժվար է վստահել Աստծուն հետևյալ բնագավառներում…

_____
_____
_____

Աստված ցույց է տալիս ինձ, որ ես անհանգստանում կամ վախենում եմ, որովհետև…

_____
_____
_____

«Ես օգնություն խնդրեցի Տիրոջից, և Նա փրկեց ինձ իմ բոլոր վախերից: Մի՛ հեռացրեք ձեր հայացքը Տիրոջից: Դուք կշողաք արևի պես և երբեք չեք շիկնի ամոթից»:
— Սաղմոս 34.4,5, CEV

5. Հպարտությունը հակառակ է խոնարհությանը, և ոչ ոք պաշտպանված չէ դրա վարակից. նույնիսկ այն մարդիկ, ովքեր մոտ են Աստծուն: Լյուցիֆերը մոտ էր Աստծուն. նա զորավոր հրեշտակ էր և ծառայում էր Նրա ներկայության մեջ: Բայց երբ հպարտության անօրինություն գտնվեց նրա սրտում, Աստված արտաքսեց նրան:

Մտորե՛ք այս հատվածների շուրջ.

«Կա վեց բան, որ Տերն ատում է, հիրավի՝ յոթը գարշելի են Նրա համար. հպարտ հայացքը [այն ոգին, որ դրդում է մարդուն գերագնահատել իրեն և թերագնահատել ուրիշներին]…»:
— Առակաց 6.16,17, AMP

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մենք ունենք ճշմարիտ խոնարհության արմատը և բնությունը: …Մենք պետք է սովորենք Հիսուսից՝ լինել Նրա պես սրտով հեզ ու խոնարհ: Նա սովորեցնում է մեզ, թե որտեղից է ծագում և զորություն ստանում ճշմարիտ խոնարհությունը. գիտությունից, *որ Աստված է անում ամեն ինչ ամենուր, և որ մենք պետք է կատարելապես անձնատուր լինենք Նրան և կախված լինենք Նրանից՝ ամեն ինչում համաձայն լինենք Նրա հետ* և մեզանից ոչինչ չանենք: Քրիստոսը եկել է, որպեսզի հայտնի և փոխանցի մեզ հենց այս կյանքը… որովհետև մեր մեջ բնակվող Քրիստոսն է, որ կապրի այս հեզ և խոնարհ կյանքը մեզանում»:
— Էնդրյու Մյուրի[6]

«Ես հավատում եմ, որ Աստված ցանկանում է մեզ համար իրական դարձնել խոնարհության տիպարը, երբ մենք այն աստիճան կգիտակցենք մարդու անօգնական վիճակը և անկարողությունը, որ այլևս մեզ ապահով չենք զգա մարդկային ծրագրերով, մարդկային հնարքներով և մարդկային զորությամբ, այլ շարունակաբար կսպասենք Աստծուն՝ փնտրելով Նրա միտքը, Նրա ձայնը, Նրա զորությունը, Նրա ամենակարողությունն ամեն ինչում»:
— Սմիթ Վիգլսվորդ[7]

«Դու հանդիմանում ես հպարտներին՝ այն անիծվածներին, ովքեր խոտորվում են Քո պատվիրաններից»:

— *Սաղմոս 119.21, NKJV*

«Հպարտությունը գալիս է կործանումից առաջ, ամբարտավան հոգին՝ անկումից առաջ: Ավելի լավ է լինել հոգով հեզ հարստահարվածների մեջ, քան բաժանել ավարը հպարտների հետ»:

— *Առակաց 16.18,19, NIV*

«Հպարտությունն ընդհարում է առաջացնում. նրանք, ովքեր խորհուրդ են ընդունում, իմաստուն են»:

— *Առակաց 13.10, NLT*

«Երբ գոռոզությունը և հպարտությունը գալիս են, դատարկությունը և ամոթը գալիս են նույնպես, բայց խոնարհների հետ (նրանց հետ, ովքեր հեզ են, ովքեր էտվել կամ հղկվել են փորձություններով և ուրանում են իրենց անձը) հմուտ և աստվածապաշտ Իմաստությունն ու ողջամտությունն են»:

— *Առակաց 11.12, AMP*

Ի՞նչ է Աստված ցույց տալիս ձեզ հպարտության մասին. ո՞րն է դրա պատճառը, արդյունքը և ինչպե՞ս դա կարելի է կանխել:

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Լյուցիֆերն ընկավ, ինչպես գրված է Եսայի 14.12-17-ում և Եզեկիել 28.11-19-ում:

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

«*Հպարտ*» բառը նշանակում է «սեփական անձը մյուսներից ավելի ցուցադրող, նշանավոր դարձնող. մարդկանց միջոցների կամ արժանիքների հանդեպ ամբարտավան գնահատական ունեցող. մարդկանց անարգող կամ արհամարհանքով վերաբերվող»[8]: Այս բառի հոմանիշներն են. «*ինքնահավան, ինքնագոհ և ինքն իրեն արդարացնող*»: Հպարտությունը դրսևորվում է մեծամտությամբ, կոպտությամբ և անհամբերությամբ:

Խ 6. Սուրբ գիրքը *հպարտությունը* շարունակաբար կապակցում է *անհավատության*, իսկ *խոնարհությունը՝ հավատքի* հետ: Կա՛նգ առեք և մտորե՛ք այս բառերի նշանակության շուրջ: Ըստ ձեզ՝ ի՞նչ կապ ունեն հպարտությունը և Աստծո հանդեպ ունեցած հավատքի պակասը, կամ՝ խոնարհությունն ու հավատքը:

Հպարտության և անհավատության կապը հետևյալն է…

_____

_____

_____

Խոնարհության և հավատքի կապը հետևյալն է…

_____

_____

_____

_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Հպարտությունը շատ խաբուսիկ է. այն խավարի ամենաարդյունավետ զենքն է, որը թույլ չի տալիս մարդկանց բարեհաջող կերպով ավարտել իրենց ընթացքը: Հպարտ մարդիկ կուրանում են, որովհետև չեն կարողանում տեսնել թշնամու առաջխաղացումը: Երբ մեր կարծիքը բարձր ենք դասում Աստծո կարծիքից, ընկնում ենք հպարտության մեջ՝ կորցնելով մեր թիկունքի պաշտպանությունը, և այն բաց է մնում թշնամու համար:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Կա մի արատ, որից ոչ մի մարդ այս աշխարհում ազատ չէ, և որը բոլորն ատում են՝ տեսնելով ուրիշի մեջ, և որի մեջ հազիվ թե ինչ-որ մեկը մեղավոր համարի իրեն՝ բացի քրիստոնյաներից: ...Այդ ներքին արատը՝ վատագույն չարիքը, **հպարտությունն** է: Անմաքրությունը, զայրույթը, ագահությունը, հարբեցողությունը և նման բաները պարզապես ճանճեր են դրա համեմատ. հպարտությունն էր, որ սատանային սատանա դարձրեց: Հպարտությունը բերում է մնացած բոլոր չարիքները: Դա մտքի կատարյալ անաստված վիճակ է: ... Քանի դեռ դուք հպարտ եք, չեք կարող ճանաչել Աստծուն: Հպարտ մարդը մշտապես վերևից է նայում մարդկանց և ամեն ինչին: Եվ, քանի դեռ դուք վերևից ներքև եք նայում, դուք չեք կարող տեսնել այն, ինչ ձեր վերևում է»:

— Կ. Ս. Լյուիս[9]

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Հագնել խոնարհությունը նշանակում է կրել Աստծո սպառազինությունը, ոչ թե մերը: Հավատք ունենալու համար անհրաժեշտ է իրական խոնարհություն, որովհետև լինելով խոնարհ՝ դուք հենվում և վստահում եք Աստծո կարողությանը (շնորհքին), ոչ թե ձեր սեփական ուժերին:

7. Կարդացե՛ք, թե ինչպես Իսրայելը լրտեսեց Խոստման երկիրը Թվոց 13.27-33-ում և 14.6-9-ում: Ինչի՞ վրա էին կենտրոնանում և իրենց հաղթանակի հնարավորությունը հիմնում այդ տասը լրտեսները, և ինչո՞ւ էր դա հպարտության դրսևորում: Իսկ ինչի՞ վրա էին կենտրոնանում Հեսուն ու Քաղեբը. ո՞րն էր նրանց հաղթանակի հույսը: Ինչո՞ւ էր նրանց պատասխանը խոնարհ և հավատքով լի: Ի՞նչ կարող եք սովորել սրանից:

Տասը լրտեսները կենտրոնանում և իրենց հաղթանակի հնարավորությունը հիմնում էին...

_____
_____
_____

Քաղեբը և Հեսուն կենտրոնանում և իրենց հաղթանակի հույսը դնում էին...

_____
_____
_____

Այս օրինակը, որտեղ հպարտությունն ու անհավատությունը հակադրվում են խոնարհությանն ու հավատքին, սովորեցնում է ինձ...

_____
_____
_____

*«Կա ճանապարհ, որ մարդուն ճիշտ է **թվում**, բայց վերջում այն մահվան է տանում»:*
— Առակաց 14.12, NIV

8. Մենք վստահում ենք կա՛մ Աստծուն, կա՛մ մարդուն. մեր և մեր կարողությունների հանդեպ ունեցած վստահությունը մարդուն վստահելու մեջ է: Ուշադի՛ր կարդացեք այս հատվածները և ուշադրությո՛ւն դարձրեք այն օրինություններին, որոնք գալիս են Աստծուն խոնարհաբար վստահելուց, և այն անեծքներին, որոնք գալիս են մարդուն վստահելուց: Որո՞նք են ավելի հետևողականորեն դրսևորվում ձեր կյանքում:

«Ես՝ Տերս, անեծք եմ դրել նրանց վրա, ովքեր շրջվում են Ինձանից և վստահում մարդկային ուժին: Նրանք կչորանան՝ ինչպես թուփ,

աղի անապատային հողում, որտեղ ոչինչ չի կարող աճել: Բայց Ես կօրհնեմ նրանց, ովքեր վստահում են Ինձ: Նրանք կլինեն ծառերի նման, որոնք աճում են գետի մոտ՝ ծառեր, որոնց արմատները հասնում են ջրին, այնպիսի տերևներով, որոնք մշտապես կանաչ են: Նրանք պտուղ են բերում ամեն տարի և երբեք չեն անհանգստանում անձրևի բացակայության պատճառով»:

— Երեմիա 17.5-8, CEV

«Վստահի՛ր Տիրոջը քո ամբողջ սրտով. կախված մի՛ եղիր քո հասկացողությունից: Փնտրի՛ր Նրա կամքը ամեն ինչում, որ անում ես, և Նա ցույց կտա քեզ, թե ինչպիսի ճանապարհ ընտրես: Մի՛ տպավորվիր քո սեփական իմաստությամբ: Փոխարենը՝ վախեցի՛ր Տիրոջից և շրջվի՛ր չարից: Այդ ժամանակ դու բժշկություն կունենաս քո մարմնի համար և զորություն՝ քո ոսկորների համար»:

— Առակաց 3.5-8, NLT

Տիրոջը խոնարհաբար վստահելու օրհնություններն են…

_____
_____
_____

Մարդուն հիմարաբար վստահելու անեծքներն են (նաև այն օրհնությունները, որոնք ես բաց եմ թողնում)…

_____
_____
_____
_____
_____
_____
_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Առակաց 28.26, Սաղմոս 146.3-10:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Ոչինչ այդքան անհասանելի չի դարձնում մարդուն սատանայի համար, որքան *խոնարհությունը*»:

— Ջոնաթան Էդվարդս[10]

«Նրանք, ովքեր մտածում են, որ կարող են ամեն ինչ անել իրենց սեփական ուժերով, միայն տարվում են իրենց բարոյական կարողությունները չափելով՝ այդպես էլ չկիրառելով դրանք իրական կյանքում: Նրանք, ովքեր հավատում են, որ Աստված կգործի իրենց մեջ, հայտնաբերում են, որ Աստծո Հոգին, այսինքն՝ կենդանի Աստված, իրենց մեջ է: Երբ նման հարցերում մարդը տարվում է իրենով, նա հայտնվում է փակուղու մեջ, իսկ կենտրոնանալով Աստծո վրա՝ մենք հայտնվում ենք բաց տարածության՝ անսահման, ազատ կյանքի մեջ: Սեփական անձի վրա կենտրոնանալը հակադիր է Աստծո վրա կենտրոնանալուն: Ցանկացած մարդ, ով լիովին կլանված է իր անձով՝ անտեսելով Աստծուն, ի վերջո ավելի շատ մտածում է իր, քան Աստծո մասին: Այդ մարդն անտեսում է Աստծուն և Նրա գործերը: Իսկ Աստծո համար հաճելի չէ անտեսված լինելը»:

— Հռոմեացիների 8.5-8, MSG

9. Որքա՞ն կարևոր է ձեզ համար ձեր կամ այլ մարդկանց կարծիքը: Փողի, առողջության, ծառայության, քաղաքականության, երեխաների դաստիարակության և այլ հարցերում ո՞ւմ խոսքն է որոշիչը ձեր կյանքում՝ ձե՞ր,

ձեր ընկերների՞, ձեր ընտանիքի՞, թե՞ Աստծո: Երբ ինչ-որ մեկը խորհուրդ է հարցնում ձեզանից, ի՞նչ եք ասում այդ մարդուն՝ ձեր կարծի՞քը, թե՞ Աստծո Խոսքը: Ինչպիսի՞ կոչ է անում ձեզ խոնարհության մասին այս դասը:

_____
_____
_____

*«Խոնարհությո՛ւն հագեք (գոգնոց կապեք) բոլորդ [ինչպես ծառայի համազգեստ, որպեսզի այն ոչ մի կերպ չկարողանան հանել ձեր վրայից՝ ազատ լինելով հպարտությունից և ամբարտավանությունից]՝ մեկդ մյուսի հանդեպ: Որովհետև **Աստված հակառակ է կանգնում հպարտներին** (մեծամիտներին, իշխել սիրողներին, արհամարհանք ցուցաբերողներին, հանդուգն մարդկանց, սնապարծներին), [և Նա հակառակվում, խափանում և պարտության է մատնում նրանց], բայց շնորհք (բարեհաճություն, օրհնություն) է տալիս խոնարհներին»:*

— Ա Պետրոս 5.5, AMP

10. Սուրբ գիրքը պնդում է, որ Աստված հակառակվում է հպարտներին և խափանում նրանց ծրագրերը: Արդյո՞ք դուք այնպիսի վիճակում եք, որ թվում է՝ կանգնած եք աղյուսե պատի առջև. ցանկանում եք առաջ շարժվել, բայց չեք կարողանում: Եթե այո, ապա խոնարհվե՛ք Աստծո առջև և աղոթե՛ք: Խնդրե՛ք Նրան ցույց տալ ձեր սիրտը տվյալ իրավիճակում: Եթե Նա ցույց տա, որ ձեր մեջ հպարտություն կա, ապա հավանաբար հենց դա էլ հակառակվում է ձեզ: Ապաշխարե՛ք և Աստծուց իմաստություն ու շնորհք խնդրեք՝ խոնարհությամբ վարվելու համար: Գրե՛ք այն ամենը, ինչ Նա հայտնում է:

_____
_____
_____

Աղոթք

Հա՛յր, խնդրում եմ Քեզ, ների՛ր ինձ հպարտությամբ վարվելու համար: Ների՛ր ինձ այլ մարդկանց հանդեպ կոպիտ ու անհամբեր լինելու համար: Շնորհակալություն ողորմության, ներման և խոնարհության մասին սովորեցնելու համար: Շարունակի՛ր սովորեցնել ինձ և զարգացնել այս թանկարժեք առաքինությունն ինձանում: Օգնի՛ր ինձ՝ ամեն օր ասել, որ այլևս «ես» չեմ ապրում, այլ Դո՛ւ, Հիսո՛ւս, ապրում ես իմ մեջ Քո Հոգով: Տո՛ւր ինձ հնազանդ լինելու շնորհք մարդկանց հետ շփվելիս: Օգնի՛ր ինձ լիովին վստահել Քեզ և չհենվել իմ սեփական հասկացողության վրա: Ես չեմ ցանկանում կեղծավոր լինել: Ես ցանկանում եմ իրական լինել: Ես սիրում եմ Քեզ, Հա՛յր, Հիսուսի անունով: Ամե՛ն:

Ճաքաթական

ԿՈՉ

Բոլորս արդեն տեսել ենք հրաշքներ մեր կյանքում, որոնցից մեծագույնը մեր փրկությունն է մեղքից ու մահից: Հիշելով այն աշխատանքը, որ կատարեց Աստված՝ մենք կարող ենք խոնարհաբար կախված մնալ Նրա շնորհքից, երբ մեր կյանքում դժվարություններ են գալիս: Այս շաբաթ առնվազն երեք մարդու պատմեք, թե ինչ է Աստված արել ձեզ համար: Ձեր պատմությունը կխրախուսի ձեր եղբայրների և քույրերի հավատքը և կմոտեցնի Աստծուն նրանց, ովքեր հեռու էին Նրանից: Դուք նույնպես կզորանաք հոգով՝ հիշելով, թե ինչ արեց Նա ձեր կյանքում:

Օր 1. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ Է ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ

*«Ես կհեռացնեմ բոլոր հպարտ և ամբարտավան մարդկանց ձեր միջից… Մնացողները կլինեն հեզ և **խոնարհ**, որովհետև **նրանք են, որ վստահում են Տիրոջ անվանը**»:*

— Սոփոնիա 3.11,12, NLT

Հավատքը և վստահությունը նույնն են: Հավատալ նշանակում է վստահել Աստծուն: Ամեն ինչ՝ բառացիորեն ամեն ինչ, ինչ մենք ստանում ենք Աստծուց, գալիս է հավատքի միջոցով: Իր աներևակայելի սիրո շնորհիվ Նա ուղարկեց Հիսուսին՝ մեր փոխարեն մահանալու և մեր մեղքերի դիմաց վճարելու համար, որպեսզի մենք կարողանանք վերականգնվել և հավիտյան ճիշտ դիրք ունենալ Նրա առջև: Ահա համառոտ Ավետարանը՝ Հովհաննես 3.16-ը: Բայց այս անգին պարգևը ստանալու համար մենք պետք է հավատանք, որ այն, ինչ Նա ասում է Իր Խոսքում, ճշմարիտ է, այսինքն՝ վստահենք Նրան. ամեն ինչ հանգեցնում է վստահությանը:

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Վստահել նշանակում է «համոզված լինել, հենվել մեկ այլ անձնավորության անկեղծության, ճշմարտացիության, արդարության, ընկերության կամ ողջամիտ սկզբունքների վրա, կամ՝ մտքով հանգիստ լինել այդ առումով»[11]: Երբ մենք վստահում ենք Աստծուն, մենք հավատում ենք Նրա Խոսքին: Վստահության հոմանիշներն են *«հավատք ունենալ, հենվել, կախված լինել, ակնկալել, հուսալ և համոզված լինել»*:

Աստվածաշունչը Կողոսացիների 1.4-ում հավատքը սահմանում է հետևյալ կերպ. *«Որովհետև մենք լսեցինք Քրիստոս Հիսուսի հանդեպ ունեցած ձեր **հավատքի** մասին [թե ինչպես եք դուք հարում Նրան ձեր ողջ մարդկային անհատականությունով՝ **բացարձակ վստահությամբ** և համոզվածությամբ Նրա զորության, իմաստության և բարության հանդեպ]…»* (AMP):

Աստված արժանի է ձեր վստահությանը: Արդյո՞ք դուք մեղադրել եք Աստծուն այն բաների համար, որ, ինչպես այժմ հասկանում եք, թշնամու հարձակումներն էին: Նշե՛ք որոշ բաներ, որոնց համար դուք վստահել եք Աստծուն, և Նա պատասխանել է ձեզ: Մտորե՛ք Նրա հավատարմության շուրջ:

_____
_____
_____
_____

Այն անձնական փորձառությունը, որը չի համապատասխանում Սուրբ գրքին, կարող է մեծ խոչընդոտ դառնալ Աստծուն վստահելու համար:

_____
_____
_____
_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Սուրբ գրքում Աստծո ձեռքը մշտապես նշանակում է Նրա կարողությունը, զորությունը կամ ուժը: Դա Նրա սպառազինությունն է: Գործնականում մենք պետք է խոնարհվենք Աստծո զորության և ուժի ներքո՝ հրաժարվելով թույլ տալ, որպեսզի մարդկային գաղափարները կամ փորձառությունը (թե՛ մեր, թե՛ այլ մարդկանց) բարձրանան ավելի, քան Աստծո Խոսքը: Փոխարենը՝ *հավատում* ենք Աստծո Խոսքին՝ անկախ մեր բնական դատողությունից կամ տրամաբանությունից, և թույլ ենք տալիս, որպեսզի այն թելադրի մեր քայլերը:

Օր 2. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂՆ Է

«Ճշմարիտ խոնարհությունը և Տիրոջ երկյուղը բերում են հարստություն, պատիվ և երկար կյանք»:

— Առակաց 22.4, NLT

Տիրոջ երկյուղն ունենալը չի նշանակում վախենալ Նրանից, այլ նշանակում է ունենալ երկյուղածություն և խորին ակնածանք Նրա մեծության հանդեպ: Դա նշանակում է մեծապես հիանալ և հարգանք տածել Նրա հանդեպ՝ իմանալով, որ Նա ճիշտ այնպիսին է, ինչ որ պատմում է Իր մասին և անելու է ճիշտ այն, ինչ ասում է: Ինչպես Սողոմոնն է ասում. «Աստծո երկյուղը հմտորեն կյանք վարելու դպրոց է. նախ՝ դուք սովորում եք խոնարհություն, իսկ հետո վերապրում եք Նրա փառքը» (Առակաց 15.33, MSG):

Երբ մենք վախենում ենք Տիրոջից, մենք չունենք այլ «աստվածներ» Նրա առջև, այսինքն՝ Նա զբաղեցնում է պատվի բարձրագույն դիրքը մեր կյանքում: Երբ մենք վախենում ենք Աստծուց, մենք նախ՝ փնտրում ենք Նրա արքայությունը և տալիս Նրան բաժին մեր եկամուտից: Մենք հոժարությունով ողորմած և ներողամիտ ենք լինում մարդկանց հանդեպ՝ ցանկանալով հաճեցնել Նրան մեր բոլոր ճանապարհներում: Եթե մենք մեղանչում ենք, ապա չենք փախչում Նրանից. մենք վազում ենք Նրա մոտ, որպեսզի շտկենք մեր փոխհարաբերությունները. Տիրոջ երկյուղն իսկապես որ իմաստության սկիզբն է:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Տիրոջ երկյուղը զարգացման փուլ չէ, որով մենք անցնում ենք: Տիրոջ երկյուղն Աստծո հետ մեր ընթացքի մշտական մասն է: Այն ջերմեռանդորեն բխում է նրանց սրտերից, ովքեր փափագում են լինել Աստծուն մոտ և լինել Նրա նման»:

— Նիլ Թ. Անդերսոն և Ռիչ Միլլեր[12]

Ձեր բառերով բացատրեք, թե ինչպես է Տիրոջ երկյուղն անբաժանելի կերպով կապված խոնարհության հետ: Ինչպե՞ս կարող եք տեսնել, որ հպարտ մարդիկ չունեն Աստծո երկյուղը:

_____
_____
_____

Մտորե՛ք Սաղմոս 34.11-14-ի, Երկրորդ Օրինաց 10.12,13-ի և Առակաց 8.13-ի շուրջ: Ինչպե՞ս են այս խոսքերն օգնում ձեզ ավելի լավ հասկանալ Տիրոջ երկյուղը:

_____
_____
_____

Դանդաղորեն կարդացե՛ք Սաղմոս 104, 147.4,5 և Եսայի 40.12, 66.1,2 խոսքերը: Արդյո՞ք Աստծո մեծության շուրջ մտածելը երկյուղածություն է ներշնչում ձեզ:

_____
_____

Հետագա ուսումնասիրության համար…
Տիրոջ երկյուղի օրհնությունները
Սաղմոս 25.12-14, 31.19, 33.18,19, 34.7-10, 103.11-13, 112.1-3, 115.11-13, 128.1-4, 145.19, Առակաց 10.27, 14.26,27

Օր 3. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐՈ ՄԵՋ ՔԱՅԼԵԼՆ Է

«Եվ քայլե՛ք սիրո մեջ [գնահատելով իրար և հիանալով մեկդ մյուսով], ինչպես Քրիստոսը սիրեց մեզ»:

— Եփեսացիների 5.2, AMP

Մեր երկնային Հոր համար ամենից հաճելին տեսնելն է, թե ինչպես են Իր զավակները քայլում սիրո մեջ: Հոգու բոլոր պտուղներից մեծագույնը սերն է: Քրիստոսը դրսևորեց Աստծո սերը ճշմարիտ խոնարհությամբ: Մինչև խաչը բարձրանալը՝ ավելի պակաս, քան 24 ժամվա ընթացքում Հիսուսը չորս անգամ պատվիրեց մեզ՝ «սիրել միմյանց»: Ակնհայտ է, որ սա կարևոր է:

Յուրաքանչյուր աստվածային հատկանիշ զարգանում է Աստծո սիրուց: Մենք սիրո կարիքն ունենք, որպեսզի բարի և համբերատար լինենք, ներենք մարդկանց և ձգտենք խաղաղության: Առանց սիրո չկա փրկություն կամ արդարություն Քրիստոսի մեջ: Մենք գիտակցում ենք սիրո կարևորությունը՝ հասկանալով, որ **Աստված սեր է** (տե՛ս Ա Հովհ. 4.8): Սերը Նրա համար պարզապես գործողություն չէ. դա Նրա ինքնությունն է:

Ինչպիսի՞ն է սերը: Ա Կորնթացիների 13.4-8 (AMP)-ը սիրո ազդեցիկ պատկեր է: Դանդաղորեն կարդացե՛ք այն մաս առ մաս:

«Սերը երկար է դիմանում, համբերատար ու բարի է. սերը երբեք չի նախանձում կամ եփվում խանդից, այն պարծենկոտ կամ սնափառ չէ, այն մեծամտորեն չի ցուցադրում իրեն:

Այն սնապարծ չէ (ամբարտավան և լցված հպարտությամբ). այն կոպիտ (ոչ սիրալիր) չէ և չի վարվում անպարկեշտ ձևով: Սերը (Աստծո սերը մեզանում) չի պնդում իր իրավունքները կամ իր ճանապարհը, որովհետև այն իրենը չի փնտրում. այն շուտ նեղացող, կամակոր կամ զայրացկոտ չէ. այն չի հաշվում չարիքը, որ արվել է իր հանդեպ [այն ուշադրություն չի դարձնում սխալ տեղը կրած չարչարանքի վրա]: Այն չի ուրախանում անարդարության համար, այլ ուրախանում է, երբ հաղթում է ճշմարտությունը:

Սերը դիմանում է ցանկացած բանի, ամեն ինչի, որ գալիս է. յուրաքանչյուր մարդու մեջ մշտապես պատրաստ է հավատալ լավագույնին: Սիրո հույսը չի մարում ցանկացած իրավիճակում. այն կրում է ամեն ինչ [առանց տկարանալու]: Սերը երբեք չի վերջանում [երբեք չի մարում կամ դառնում անգործածական կամ ավարտվում]»:

Ինչպե՞ս են կապակցված սերը և խոնարհությունը: Սերն ինչո՞վ է հակառակ հպարտությանը:

_____

_____

_____

Աստված սիրում է մեզ և տալիս է *Իր* սերը, որպեսզի մենք կարողանանք սիրել մարդկանց (տե՛ս Հռոմ. 5.5, Ա Հովհ. 4.19): Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիների 3.12-ը և Ա Հովհաննես 4.12,16,17-ը և նկարագրե՛ք, թե ինչպես է Աստծո սերն աճում մեզանում:

_____

_____

_____

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Սերը պտուղ է, որը հասած է տարվա բոլոր ժամանակներին, և այնպիսի բարձրության վրա է, որ ամեն պարզած ձեռք կարող է քաղել: Յուրաքանչյուրը կարող է քաղել այն՝ առանց սահմանափակման»:

— Մայր Թերեզա[13]

Օր 4. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆԸ ՀԵՏԵՎԵԼՆ Է

*«Եթե հնարավոր է, որքան որ ձեզանից է կախված, **խաղա՛ղ ապրեք** յուրաքանչյուրի հետ»:*

— Հռոմեացիների 12.18, AMP

Աստված տվել է մեզ խաղաղության կոշիկները, որոնք մեր սպառազինության մասն են: Մենք պետք է հաստատ կանգնենք և վարվենք խաղաղությամբ ամենուր: Աստված ասում է. «Փնտրի՛ր խաղաղություն (ներդաշնակություն. անվրդով վիճակ վախերից, խռնվող կրքերից և բարոյական ընդհարումներից) և ջանասիրաբար որոնիր այն: *[Պարզապես մի՛ ցանկացիր խաղաղությամբ լի փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ, կողքիններիդ հետ և քո ներսում, այլ հետամուտ եղիր, ձգտիր, որ ձեռք բերես դա]*» (Ա Պետրոս 3.11, AMP): Խաղաղությունը միաբանություն է բերում և ազատագրում է Աստծո զորությունը: Թեև հպարտությունը ձգտում է ամեն ինչ անել իր ցանկությամբ և հոգում է միայն իր մասին, սակայն խաղաղությունը նախ՝ մտածում է Աստծո մասին, հետո՝ մյուսների, և վերջում՝ իր:

Ուշադրությամբ կարդացեք այս իմաստուն և խաղաղություն բերող խոսքերը:

«Մի՛ մտածեք, որ դուք ավելի լավն եք, քան իրականում: Ազնի՛վ եղեք ձեզ գնահատելու հարցում՝ չափելով ձեզ ըստ այն հավատքի, որ Աստված տվել է»:

— Հռոմեացիների 12.3, NLT

«Ապրե՛ք ներդաշնակությամբ իրար հետ. մի՛ եղեք ամբարտավան (փառասեր, մեծամիտ և բացառիկ մի՛ համարեք ձեզ), այլ պատրաստակամորեն հարմարվեք [մարդկանց, իրավիճակներին] և արե՛ք այնպիսի բաներ, որոնք կխոնարհեցնեն ձեզ: Երբեք մի՛ թերագնահատեք ձեզ, ո՛չ էլ մեծամտորեն իմաստուն համարեք ձեզ»:

— Հռոմեացիների 12.16, AMP

«Աղաչում եմ ձեզ ապրել այնպես, ինչպես արժանի է Աստծո ընտրյալներին: Միշտ խոնարհ և հեզ եղեք: Համբերատար հանդուրժեք և սիրեք իրար: Արեք ամեն ինչ, որպեսզի թույլ տաք Աստծո Հոգուն՝ միաբան պահել ձեր սրտերը: Կատարե՛ք սա՝ ապրելով խաղաղության մեջ»:

— Եփեսացիների 4.1-3, CEV

Խոնարհության ո՞ր հիմնական սկզբունքներն են կրկնվում այս խոսքերում:

_____

_____

Կարդացե՛ք Հիսուսի խոսքերը Մատթեոսի 6.14,15-ում և Մարկոսի 11.25,26-ում: Խաղաղության ո՞ր անփոխարինելի սկզբունքի մասին է գրված այստեղ: Ինչպե՞ս է դա կապված խոնարհության հետ:

_____

_____

Կա՞ ինչ-որ մեկը, ում հետ դժվարանում եք խաղաղությամբ ապրել: Բերե՛ք այդ իրավիճակն Աստծո առջև և բա՛ց թողեք ձեզանից աղոթքի միջոցով: Խնդրե՛ք Նրան՝ ներել ձեզ չներելու համար և աղոթե՛ք, որպեսզի այդ մարդու կամ մարդկանց կյանքը օրհնություններով լցվի: Արեք սա այնքան հաճախ, որքան բացասական մտքերը և զգացմունքները վերադառնում են: Ժամանակի ընթացքում դրանք կդադարեն:

Հետագա ուսումնասիրության համար
Խրախուսանք միաբանության մեջ ապրելու համար.
Ա Կորնթացիների 1.10,
Բ Կորնթացիների 13.11,
Փիլիպեցիների 1.27,
Ա Պետրոս 3.8-12

Օր 5. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ Է

*«Այդ ժամանակ Հիսուսն ասաց աշակերտներին. «Եթե ձեզանից որևէ մեկը ցանկանում է լինել Իմ հետևորդը, **դուք պետք է մի կողմ դնեք ձեր եսասիրական ձգտումները**, դնեք ձեր խաչը ձեր ուսին և հետևեք Ինձ»»:*

— Մատթեոս 16.24,25, NLT

Խոնարհությունն անձնազոհություն է: Հիսուս Քրիստոսն այս երկուսի մարմնավորումն էր: Այն պահից, երբ Նա թողեց Երկինքը և մինչև այնտեղ վերադառնալը Նրա կյանքը կենտրոնացած էր մեկ բանի շուրջ. կատարել Հոր կամքը: Սուրբ գրքում հաճախ են կրկնվում Հիսուսի այսօրինակ խոսքերը. «Ես եկա երկնքից ոչ թե Իմ կամքն անելու համար, այլ՝ Նրա կամքը, Ով ուղարկեց Ինձ» (Հովհաննես 6.38, NIV):

Հիսուսն ուներ մեկ առաջադրանք և մեկ նպատակ, որը դրդում էր Իրեն կատարել Հոր կամքը նույնիսկ մինչև մահ: Թող որ յուրաքանչյուրը սովորի խոնարհաբար ապրել և փառք բերել Հորն ամեն ինչում:

Մտորե՛ք այս զարմանալի խոսքերի շուրջ.

«Ես ոչինչ չեմ կարող անել Ինձանից [անկախ, իմ սեփական նախաձեռնությամբ, այլ միայն ինչպես Աստված է սովորեցրել ինձ և այն ժամանակ, երբ ես ստանում եմ Նրա հրամանները]: Ինչպես լսում եմ, այնպես եմ դատում [ես որոշում եմ՝ ինչպես Ինձ հրամայվում է որոշել: Ինչպես Նրա ձայնը գալիս է Ինձ մոտ, այնպես էլ որոշում եմ կայացնում], և Իմ դատաստանը ճշմարիտ է (շիտակ, արդար), որովհետև ես չեմ փնտրում Իմ կամքը կամ խորհրդակցում դրա հետ [ես ցանկություն չունեմ անել այն, ինչ հաճելի է Ինձ, Իմ նպատակին, Իմ մտադրությանը], այլ միայն այն, ինչ Ինձ ուղարկող Հոր կամքն է և ինչ հաճելի է Նրան»:

— Հովհաննես 5.30, AMP

Տվե՛ք ձեզ այս հարցերը և անկեղծորեն պատասխանեք.

Ի՞նչն է առաջնորդում իմ կյանքը: Ի՞նչն է դրդում ինձ վեր կենալ անկողնուց ամեն առավոտ և անել այն, ինչ անում եմ:

_____
_____
_____

Ես եսասե՞ր եմ, թե՞ անձնազոհ: Ի՞նչն է վկայում այն մասին, որ իմ պատասխանը ճիշտ է:

_____
_____
_____

Արդյո՞ք ես առաջնորդում եմ մարդկանց դեպի հավիտենությունը: Եթե այո, ապա ինչպե՞ս: Եթե ոչ, ապա ի՞նչ կարող եմ անել՝ դա փոխելու համար:

_____
_____
_____

Լռությամբ եկեք Տիրոջ առջև և խնդրե՛ք Նրա իմաստությունը: Նա այնքա՜ն շատ է սիրում ձեզ: Նա ցանկանում է պարգևել ձեզ լիարժեք կյանք, որն ավելին է, քան ձեր ամենախելահեղ երազանքները:

Օր 6. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏԾՈՒՑ ԼԻՈՎԻՆ ԿԱԽՎԱԾ ԼԻՆԵԼՆ Է

*«Ես որթն եմ: Դուք ճյուղերն եք: Նրանք, ովքեր ապրում են Ինձանում, իսկ ես՝ նրանցում, շատ պտուղ կբերեն: Բայց **դուք չեք կարող որևէ պտուղ բերել առանց Ինձ»:***

— Հովհաննես 15.5, GW

Այն նորածինը, ում մայրը քնեցնում է իր գրկում, անօգնական է: Նա լաց է լինում, երբ քաղցած է, քանի որ անկարող է կերակրել ինքն իրեն: Նա լաց է լինում, երբ կեղտոտվում է և ցանկանում է մաքրվել: Նա լաց է լինում ջերմություն և մխիթարություն ստանալու համար: Կատարյալ կախվածության ինչպիսի՜ օրինակ է… Մենք կախված ենք Աստծուց նույն կերպով: Թեև մենք հասունանում ենք և սովորում տարածել Աստծո արքայությունը, մենք դեռևս կախված ենք Նրանից: Ինչո՞ւ, որպեսզի խոնարհ մնանք:

«Որովհետև Նրանում մենք ապրում ենք և շարժվում ենք և կանք»:
— Գործք 17.28, AMP

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ.

«Մենք [քրիստոնյաներս]… չունենք վստահություն կամ կախվածություն [այն բանից, թե ինչպիսին ենք մենք] մարմնով, և արտաքնապես երևացող արտոնություններից և ֆիզիկական առավելություններից և դրսևանց ստեղծվող տպավորություններից»:

— Փիլիպեցիների 3.3, AMP

«Որովհետև ես գիտեմ, որ ոչ մի բարի բան չի բնակվում… իմ մարմնում: Ես կարող եմ կամենալ այն, ինչ ճիշտ է, բայց չեմ կարող կատարել դա»:

— Հռոմեացիների 7.18, AMP

«Հոգին է, որ կյանք է տալիս [Նա է Կյանք պարգևողը]. մարմինը ոչնչի չի նպաստում [դրանում օգուտ չկա]: Այն բառերը (ճշմարտությունները), որ ես խոսել եմ ձեզ, հոգի են և կյանք»:

— Հովհաննես 6.63, AMP

Ինչպիսի՜ խոնարհեցնող հայտնություն է Աստված տալիս ձեր մարմնի մասին: Ինչպե՞ս է Փիլիպեցիների 4.13-ը հավասարակշռություն և խրախուսանք բերում:

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մեզ ասված է, որ մեր կյանքը լավագույն դեպքում վաղանցիկ է. ինչպես վարդերը՝ դրանք թառամում և փտում են: Այդ դեպքում եկե՛ք բարի գործենք, քանի դեռ այս պարգևը մերն է, լինենք օգտակար, քանի դեռ այստեղ ենք»:

— Ֆեննի Քրոսբի[14]

Արդյո՞ք ձեր ներկա իրավիճակը հիշեցնում է, որ կատարելապես կախված եք Աստծուց: Եթե այո, ապա կարճ նկարագրե՛ք, թե ինչի եք բախվել: Հետո լռությամբ մոտեցեք Տիրոջը: Խնդրե՛ք Նրան՝ զորացնել ձեզ Իր շնորհքով, և մի ակնթարթ ցույց տալ այն փառքը, որի համար Նա պատրաստում է ձեզ:

_____

_____

_____

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Որպես Աստծո զավակ՝ դուք պատերազմի մեջ եք: Բայց Նա զինել է ձեզ շնորհքի զենքերով և խոնարհությունն այդ զենքերից մեկն է: Այն սպառազինում է ձեզ անկոտրում կյանքի համար: Հագնելով խոնարհությունը, այսինքն՝ թույլ տալով, որպեսզի Հիսուս Քրիստոսը գործի ձեր միջոցով, դուք զորանում եք Աստծո շնորհքով:

Նշումներ

(1) Վայնի *«Հին և Նոր կտակարանների խոսքերի բացատրական բառարան»*, Վ. Ի. Վայն (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishing», 1996թ.), էջ 606: (2) Թայերի *«Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան»*, Ջոզեֆ Հ. Թայեր (Grand Rapids, MI: «Baker Book House Company», 1977թ.) էջ 645: (3) Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարան»-ի առաջին հրատարակություն* (1828թ.), պատճենման միջոցով վերահրատարակված «Foundation for American Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո՝ Կալիֆոռնիա, 2000թ.): (4) Տե՛ս Նշում 2, էջ 614: (5) Տե՛ս Նշում 3: (6) Էնդրյու Մյուրի. *«Խոնարհություն»* (Ֆորտ Վաշինգթոն՝ Փենսիլվանիա. «CLC Publications», 1997թ.), էջ 28: (7) Սմիթ Վիգլսվորդ *«Հաղթանակող հավատք»*, (Սփրինգֆիլդ՝ Միսսուրի. «Gospel Publishing House», 1966թ.), էջ 50: (8) Տե՛ս Նշում 2, էջ 641: (9) *«Մեջբերումներ Լյուիսից»*, (վերցրած 8/13/11, http://dailychristianquote.com/dcqpride.html կայքէջից): (10) *«Քրիստոնեական մեջբերումներ հպարտության և խոնարհության մասին»* (վերցրած 7/23/11, http://dailychristianquote.com/dcqpride.html կայքէջից): (11) Տե՛ս Նշում 3: (12) Նիլ Թ. Անդերսոն և Ռիչ Միլլեր. *«Ազատություն վախից»* (Յուջին, Օրեգոն. «Harvest House Publishers», 1999թ.), էջ 261: (13) Մայր Թերեզա. *«Չկա ավելի մեծ սեր»*, (Նովատո՝ Կալիֆոռնիա. «New World Library», 1997թ., 2001թ.), էջ 22: (14) *«Արագ ընդմիջում. հինգրոպեանոց ուղերձներ՝ ձեր օրը սկսելու համար»* (Սան Լուի Օբսիպո՝ Կալիֆոռնիա, «Parable», 2007թ.), Օր 342:

*«Այդ իսկ պատճառով, քանի որ մենք շրջապատված ենք հավատքի կյանքի վկաների այսպիսի մեծ բազմությամբ, **եկե՛ք դեն նետենք ամեն ծանրություն, որը դանդաղեցնում է մեր ընթացքը**, հատկապես՝ մեղքը, որի պատճառով մենք հեշտությամբ սայթաքում ենք: Եվ եկե՛ք համբերությամբ վազենք այն ընթացքը, որ Աստված դրել է մեր առջև»:*

— Եբրայեցիների 12.1, NLT

Գլուխ 8

ԴԵ՞Ն ԳՑԵՔ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 8-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 11-րդ գլխից:

1. Մեր քրիստոնեական կյանքը մարաթոնյան մրցավազքի նման է: Ընթացքն անցնելու և ետ չմնալու համար մենք պետք է *դե՛ն գցենք ամեն* անպետք ծանրություն: Կա՛նգ առեք և մտածեք՝ ի՞նչ անօգուտ գործեր, մոտեցումներ, փոխհարաբերություններ կամ կարծիքներ են խոչընդոտում և վտանգում ձեր առաջընթացը Քրիստոսի մեջ: Ի՞նչ է ցույց տալիս Սուրբ Հոգին և ինչպիսի՞ քայլերի է մղում:

Սուրբ Հոգին ցույց է տալիս ինձ հետևյալ **անօգուտ ծանրությունները**...

_____
_____
_____
_____

Մտածե՛ք. ի՞նչն է *շեղում* ձեզ, *գողանում ձեր ժամանակը և հեռացնում ձեր ուշադրությունն* Աստծուց և Նրա կոչումից:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Աստծո Խոսքը նորից ու նորից հաստատում է այս փաստը. եթե դուք պատրաստվում եք ավարտել այն ընթացքը, որ Աստված որոշել է ձեզ համար, ապա պետք է տաք Նրան ձեր հոգսերի և մտահոգությունների ծանրությունը: Նրա ճանապարհը հաճախ հակառակ է ապահովության և հարմարավետության թելադրանքներին, սակայն լի է արկածներով, հավատքով և մեծ վարձատրությամբ:

Նա ցանկանում է, որպեսզի ես **անեմ հետևյալը՝** այս ծանրությունները դեն գցելու համար...

_____
_____
_____

Մտածե՛ք. ինչպե՞ս կարող եք ազատվել այս բաներից, թեթևացնել ձեր բեռը և զորացնել ձեր հոգին՝ մրցավազքի վերջնագիծը հատելու համար:

2. Աստված նույնպես ցանկանում է, որպեսզի մենք դե՛ն գցենք յուրաքանչյուր *մեղք*, որը հեշտությամբ որսում է մեզ և, որի պատճառով սայթաքում ենք: Կա՛նգ առեք և մտածե՛ք. ինչպիսի՞ մեղքերի մեջ եք դուք հեշտությամբ ընկնում: Դուք պիղծ մտքե՞ր ունեք, թե՞ անհանգստանում ու վախենում եք: Դուք բամբասո՞ւմ եք, թե՞ արագ վիրավորվում եք: Խնդրե՛ք Աստծուն՝ ցույց տալ այդ մեղքը, դրա պատճառը՝ թե ինչու է այն հեշտությամբ որսում ձեզ, և դրանից խուսափելու միջոցը:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մի կողմ դրեք ոչ չափավոր սերը և մտահոգությունը մարմնի մասին, ներկա կյանքի և այս աշխարհի մասին: Ոչ չափավոր [չափազանց մեծ] հոգսն այս կյանքի մասին կամ սերը դրա հանդեպ մահացու ծանրություն է անձի համար: Այդ հոգսը ներքև է քաշում նրան և ետ է մղում, այնինչ այն պետք է վեր բարձրանա և առաջ սլանա: Այդ հոգսը դարձնում է պարտականություններն ու դժվարություններն ավելի բարդ, քան իրականում»:

— Մեթյու Հենրի[1]

[Քառակուսի փակագծում գրված բառերը պարզեցնելու համար են]:

Այն մեղքերը, որոնք հեշտությամբ որսում են ինձ, հետևյալն են…

_____

_____

_____

Ինչո՞ւ են այդ մեղքերը հեշտությամբ որսում ինձ և ինչպե՞ս կարող եմ խուսափել դրանց ծուղակից…

_____

_____

_____

«Ուրեմն խոնարհվե՛ք [ցածրացրե՛ք ձեր ինքնագնահատականը] Աստծո զորավոր ձեռքի ներքո, որպեսզի հարմար ժամանակին Նա կարողանա բարձրացնել ձեզ՝ ***գցելով ձեր ողջ հոգսը*** *[ձեր բոլոր անհանգստությունները, ձեր բոլոր հոգսերը, ձեր բոլոր մտահոգությունները մեկընդմիշտ] Նրա վրա, որովհետև Նա սիրով և աչալրջորեն հոգում է ձեր մասին»:*

— Ա Պետրոս 5.6,7, AMP

3. Երբեմն ոչ անհրաժեշտ ծանրությունները, որոնք գերծանրաբեռնում են մեզ, այս կյանքի հոգսերն են: Դրանք մտահոգություններ, անհանգստություններ, կասկածներ և վախեր են առաջացնում: Ի՞նչն է մշտապես ծանրացնում ձեր ընթացքը՝ խեղդելով Քրիստոսի կյանքը ձեր մեջ և գողանալով ձեր խաղաղությունը, ուրախությունը, համբերությունն ու ինքնավերահսկողությունը:

Այն **հոգսերը**, որոնք խեղդում են Քրիստոսի կյանքն իմ մեջ և ծանրացնում իմ ընթացքը, հետևյալն են…

_____

_____

_____

Այժմ բարձրաձայն աղոթեք, գցե՛ք ձեր հոգսերը Հիսուսի վրա և ընդունե՛ք Նրա խաղաղությունը: Շնորհք խնդրեք, որպեսզի վստահեք, որ Նա կհոգա ամեն ինչի համար և կենտրոնացեք այն առաջադրանքների վրա, որոնց համար Նա կանչել է ձեզ: Արե՛ք սա, մինչև չզգաք, որ ծանրությունն իսկապես գնացել է:

ԳՑԵ՛Ք ՁԵՐ ՀՈԳՍԵՐԸ

«Գցել» բառը հունարեն *«էպիրիպտո»* բառն է, որը *«էպի»* և *«ռիպտո»* բառերի համադրությունն է: *«Էպի»* նշանակում է «ինչ-որ բանի վերևում», *«ռիպտո»* նշանակում է «գցել, նետել և շպրտել», և հաճախ՝ «ուժգին թափով կամ մեծ ուժ գործադրելով»: Աշխարհիկ գրականության մեջ այս բառը հաճախ պատկերում է ճանապարհորդի, ով իր հանդերձը, պարկը կամ ավելորդ ծանրությունն իր ուսերից գցում է ծանրություն տեղափոխող անասունի մեջքին, օրինակ՝ ուղտի, էշի կամ ձիու:

«Հոգսեր» բառը հունարեն *«մերիմնա»*-ն է, որը նշանակում է «անհանգստություն»: Այս բառով նկարագրվում է ցանկացած փորձանք, դժբախտություն, դժվարություն, բարդություն կամ խճճված հանգամանքներ, որ պատահում են մեր կյանքում: Ըստ էության՝ *ձեր հոգսերը գցելը* նշանակում է «ցանկացած բան, որ անհանգստություն կամ մտահոգություն է պատճառում ձեզ, նաև՝ ուժ գործադրելով գցել Հիսուսի ուսերին և թույլ տալ, որպեսզի Նա՛ կրի դա»: Ինչո՞ւ, որովհետև Նա հոգում է ձեր մասին[2]:

ԽՍ 4. Հիսուսը *չի* ցանկանում, որպեսզի մենք անհանգստանանք, նույնիսկ մեր և մեր ընտանիքի առօրյա կարիքների վերաբերյալ: Փոխարենը Նա ցանկանում է, որպեսզի մենք *գցենք մեր հոգսերն* Իր վրա: Երբ մենք Նրա վրա ենք գցում մեր հոգսերը, դա խոնարհության նշան է: Երբ մենք փորձում ենք ինքներս լուծել ամեն ինչ և ինքներս հոգալ մեր մասին, դա հպարտության նշան է: Ուշադի՛ր կարդացեք Մատթեոս 6.25-34-ը: Ի՞նչ է Տերն ասում ձեզ հոգս չանելու վերաբերյալ:

_____
_____
_____
_____

5. Աստված հատուկ ընթացք կամ «վազքուղի» ունի, որը հենց ձեզ համար է: Ձեր սրտում ցանկություն է վառվում ինչ-որ բան անելու համար, և դա կապ ունի ձեր ընթացքի հետ: Ձեր կարծիքով՝ ինչի՞ համար է Աստված կանչել ձեզ: Ինչպե՞ս է Նա հաստատել դա: Ինչպե՞ս եք դուք համագործակցում Նրա հետ՝ այդ կոչումն իրականացնելու համար:

_____
_____
_____
_____
_____

«Ես վստահում եմ Քեզ, ո՜վ Տեր: Ես ասում եմ. «Դո՛ւ ես իմ Աստվածը»: Իմ ժամանակները Քո ձեռքերի մեջ են. ազատի՛ր ինձ իմ թշնամիներից և այն մարդկանցից, ովքեր հետապնդում են ինձ: Թո՛ղ Քո երեսը փայլի Քո ծառայի վրա. փրկի՛ր ինձ Քո անսպառ սիրով»:
— Սաղմոս 31.14-16, NIV

ԽՍ 6. Երբ Աստված ինչ-որ բան է ասում մեր սրտում, սակայն դա արագ չի կատարվում, երբեմն մենք հակված ենք լինում օգնել Աստծուն՝ դա իրականացնելու համար: Սա նույնպես հոգս է, որը մենք պետք է գցենք Նրա վրա, որովհետև մեր ժամանակները Նրա ձեռքերի մեջ են. արդ-

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Աստծո ծրագրի մեջ չի մտնում այն, որ դուք գիշերն անկողնում արթուն պառկած՝ շուռումուռ գալով՝ մտածեք. *«Ինչպե՞ս եմ վճարելու հաշիվները, եթե կորցնեմ աշխատանքս: Ի՞նչ եմ անելու, եթե թոշակի անցնելուց հետո բորսայի անկումը շարունակվի: Ինչպե՞ս եմ կերակրելու ընտանիքս, եթե այն ընկերությունը, որտեղ աշխատում եմ, սնանկացել է»*, կամ ցանկացած մտահոգություն, որ կարող եք ունենալ: ...Աստվածաշունչը սկզբից մինչև վերջ պարզ ասում է, որ Աստված է հոգում ձեր բոլոր կարիքները: Ոչ մի կարիք չափազանց մեծ, դժվարին կամ լուրջ չէ Հիսուսի համար»:

— Չարլզ Սթենլի[3]

յո՞ք դուք փորձում եք օգնել Աստծուն և հասնել ձեր կոչմանը սեփական կարողությամբ: Ի՞նչ կարող եք սովորել Աբրահամի և Սարայի օրինակից և ինչպե՞ս կարող եք կիրառել սովորածը ձեր կյանքում (տե՛ս Ծննդ. 16, 21.8-13 և Գաղատ. 4.22-31):

_____

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մարմինը նույնպես կարող է կրոնական դառնալ և փորձել օգնել Աստծուն: Աբրահամը և Սառան մեծ օրինակ են այս հարցում, քանի որ տարիներ շարունակ սպասում էին, որպեսզի Աստված կատարեր Իր խոստումը և երեխա տար իրենց... Աբրահամի և Սառայի դրդապատճառները բարի էին: Բայց խնդրում եմ, հաշվի՛ առեք, որ եթե, նույնիսկ, փորձեք մարմնավոր կերպով ինչ որ բարի բան անել, միևնույն է՝ Աստված մերժելու է դա»:

— Թոնի Էվանս[4]

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մեր կյանքի տարբեր պահերին մեզանից յուրաքանչյուրը պետք է ընտրի ապահովությունը կամ Աստծո կամքը: Արդյո՞ք մենք կընտրենք այն ճանապարհը, որ կբարձրացնի մեզ, թե՞ կփորձենք պահպանել այն կյանքը, որ ունենք: Եթե դուք ընտրեք ինքնապահպանման ճանապարհը, ապա, ի վերջո, չեք կատարի Աստծո կոչումը: Միգուցե ձեզ հաջողվի ապրել բարեկեցիկ և ապահով կյանքով, բայց կանգնելով Քրիստոսի դատաստանի գահի առջև՝ դուք կհայտնաբերեք, որ բաց եք թողել կյանքի առատությունը, որ պատկանում էր ձեզ:

7. Շատ կարևոր է, որ պատրաստ լինեք անելու այն, ինչի համար, ըստ ձեզ, դուք կանչված եք: Բայց իմաստուն չեք վարվի այն դեպքում, եթե չծառայեք ոչ մի տեղ՝ պարզապես սպասելով այն ծառայությանը, որ կա ձեր սրտում: Ինչպիսի՞ հնարավորություններ է Աստված տվել ձեզ Իրեն ծառայելու համար: Արդյո՞ք դուք օգտագործում եք դրանք: Եթե ոչ, ապա ո՞րն է պատճառը և ինչի՞ եք սպասում:

_____

_____

_____

«Եթե սպասեք կատարյալ պայմանների, ապա երբեք ոչինչ չեք անի»:
— Ժողովող 11.4, TLB

8. Երբ մենք հնազանդությամբ քայլ ենք անում՝ հիմնվելով Աստծո Խոսքի վրա, Նա սկսում է հրաշքով մատակարարել մեզ համար: Պատմե՛ք երեք դեպք, երբ Աստված միջամտել և օրհնել է ձեզ: Ինչպե՞ս են այդ հուշերն արթնացնում ձեր հավատքը և դյուրազգաց դարձնում ձեր սիրտը Նրա հանդեպ:

Աստված միջամտեց և օրհնեց ինձ, երբ...

_____

_____

_____

Աստված միջամտեց և օրհնեց ինձ, երբ...

_____

_____

_____

Աստված միջամտեց և օրհնեց ինձ, երբ...

_____

_____

_____

***«Աստված հավատարիմ է** (հուսալի, վստահելի, այդ իսկ պատճառով Նա մշտապես պահում է Իր խոստումը, ինչը թույլ է տալիս կախվածության մեջ լինել Նրանից): Դուք կանչված եք Նրա կողմից հաղորդակցության և համագործակցության մեջ Նրա Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ»:*

— Ա Կորնթացիների 1.9, AMP

9. Արդյո՞ք դուք հանդիպել եք հարձակումների՝ կատարելով այն, ինչի համար Աստված կանչել է ձեզ: Բարձրացրե՛ք ձեր հավատքի վահանը և վերցրե՛ք Հոգու սուրը: Աղոթե՛ք և խնդրեք Սուրբ Հոգուն հիշեցնել ձեզ հատուկ խոսքեր (ռեմա խոսքեր), որոնք Նա կենդանացրել է ձեզ համար՝ ձեր ներկա իրավիճակին համապատասխան: *Գրե՛ք* դրանք և բարձրաձայն խոսե՛ք ձեր կյանքի համար և թշնամու դեմ:

Ահա մի քանիսն այն **ռեմա խոսքերից**, որ Սուրբ Հոգին տվել է ինձ…

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

10. Երբ որևէ փորձանք է գալիս, Աստված չի ցանկանում, որ դուք անհանգստանաք, տագնապեք կամ տրտնջաք: Նա չի ցանկանում, որ դուք բնազդորեն բացասաբար տրամադրվեք, այլ՝ որ գործեք դրականորեն՝ հավատալով, որ Նա հաղթանակ կտա ձեզ այդ իրավիճակում:

Մտորե՛ք այս խոսքերի շուրջ: Թո՛ւյլ տվեք, որպեսզի դրանք դառնան ձեր սրտի պաստառները.

«Մի՛ անհանգստացեք ոչնչի համար, փոխարենը՝ աղոթե՛ք ամեն ինչի համար: Պատմե՛ք Աստծուն, թե ինչի կարիք ունեք և գոհացե՛ք Նրանից ամեն ինչի համար, որ Նա արել է: Եթե դուք անեք սա, ապա կվերապրեք Աստծո խաղաղությունը, որը շատ ավելի հրաշալի է, քան մարդկային միտքը կարող է հասկանալ: Նրա խաղաղությունը կհսկի ձեր սրտերը և մտքերը, քանի որ դուք

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«[Աստված] հավատարիմ է Իր սիրո մեջ: …Նա հավատարիմ է Իր մտադրության մեջ և չի սկսում ինչ-որ գործ, իսկ հետո անավարտ թողնում: Նա հավատարիմ է շփման մեջ: Որպես Հայր՝ Նա երբեք չի հրաժարվի Իր զավակներից: Որպես Ընկեր՝ երբեք չի ուրանա Իր ժողովրդին: Որպես Արարիչ՝ երբեք չի թողնի Իր ձեռքի գործը. Նա հավատարիմ է Իր խոստումներին և երբեք թույլ չի տա, որ ցանկացած հավատացյալի կյանքում դրանցից մեկն անգամ չկատարվի»:

— Չարլզ Սփերջեն[5]

[Քառակուսի փակագծում գրված բառը պարզեցնելու համար է]:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Հռոմեացիների 10.17-ը ցույց է տալիս, որ այն նյութը, որով շինվում է հավատքը, ավելին է, քան պարզապես Աստծո Խոսքն ընթերցելը. «Հավատքը գալիս է լսելուց, իսկ լսելը՝ Աստծո Խոսքից»: Այս մեջբերման մեջ «Խոսք»-ը ոչ թե լոգոսն է, այլ *ռեման*: Հավատքը հատկապես գալիս է *«ռեմա»* խոսքը լսելուց: …Ուշադի՛ր ուսումնասիրեք Աստվածաշունչը Ծննդոցից մինչև Հայտնություն, թեկուզ այն բանի համար, որպեսզի տրամադրեք Սուրբ Հոգուն այն նյութը, որի կարիքը Նա ունի ձեզ հետ աշխատելու համար: Այդ ժամանակ, երբ դուք սպասեք Տիրոջը, Սուրբ Հոգին կփոխանցի ձեզ Իր հավատքը»»:

— Դր. Փոլ Յոնգի Չո[6]

ապրում եք Քրիստոս Հիսուսում: Իսկ հիմա, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, թո՛ւյլ տվեք ասել ևս մեկ բան այս նամակն ավարտելիս: Կենտրոնացրե՛ք ձեր մտքերն այն բաների վրա, որ ճշմարիտ, պատվական և արդար են: Մտածե՛ք այն բաների մասին, որոնք մաքուր, հաճելի և հիացմունքի արժանի են: Մտածե՛ք գերազանց և գովեստի արժանի բաների մասին»:

— *Փիլիպեցիների 4.6-8, NLT*

«Խորասուզե՛ք ձեր կյանքն Աստծո իրականության, Աստծո նախաձեռնության, Աստծո մատակարարման մեջ: Մի՛ անհանգստացեք, որ կարող եք հնարավորություններ բաց թողնել: Դուք կհայտնաբերեք, որ ձեր բոլոր առօրյա կարիքները բավարարված են: Տվե՛ք ձեր ողջ ուշադրությունն այն բանին, ինչ Աստված անում է հենց հիմա, և մի՛ լցվեք հոգսերով՝ մտածելով, թե ինչ կպատահի կամ չի պատահի վաղը: Անկախ այն բանից, թե ինչպիսի դժվարության դուք կբախվեք՝ Աստված կօգնի ձեզ, երբ դա պատահի»:

— *Մատթեոս 6.33,34, MSG*

Արդյո՞ք դուք նորովի կարծագանքեք անհանգստությանը և վախին՝ հիմնվելով այս խոսքերի վրա:

_____

_____

_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մեր Հայրը գիտի լավագույն մարզման ընթացքը մեզանից յուրաքանչյուրի համար, և չնայած որ Նա չէ դժվարությունների հեղինակը, Նա թույլ է տալիս դրանք, որպեսզի զորացնի մեզ այն կոչման համար, որ մենք ունենք: *Մի՛ շրջանցեք ձեր մարզման ընթացքը*: Այն փորձություններ, որոնց դուք բախվում եք այսօր, պատրաստում են ձեզ այն մեծ սխրանքների համար, որ գործելու եք վաղը:

Ծաքրաքական

ԿՈՉ

Սուրբ Հոգին ավելի լավ գիտի, թե ինչպես կառուցել ձեր հավատքը: Միայն Նա կարող է սովորեցնել ձեզ՝ գերադասել Աստծո կոչումն ապահովությունից, և բարձրանալ իշխանության նոր մակարդակի վրա Աստծո արքայության մեջ: Այս շաբաթ ժամանակ հատկացրեք աղոթքի համար և հարցրեք Սուրբ Հոգուն, թե ինչպես է Նա սովորեցնելու ձեզ՝ գցել ձեր հոգսերն Իր վրա: Միգուցե Նա խնդրի ավելացնել ձեր նվիրատվությունը եկեղեցում, դառնալ որևէ ծառայության գործընկեր, հովանավորել որևէ երեխայի՝ օտար երկրում կամ անակնկալ պարգև տալ որևէ մեկին: Երբ դուք աստվածային առաջնորդություն եք զգում և անում այս բաները, ապա, անկախ իրավիճակներից, հաստատուն հիմք կունենաք հավատքով գործելու համար:

Օր 1. ՀՍԿԵ՛Ք ՁԵՐ ՍԻՐՏԸ

*«Ամենից առավել հսկի՛ր քո սիրտը, որովհետև այն **ազդեցություն է թողնում ամեն ինչի վրա**, որ դու անում ես»:*

— Առակաց 4.23, NLT

Երբ մենք հնազանդությամբ հետևում ենք Աստծո Խոսքին, հաճախ թշնամին հարձակվում է մեզ վրա: Հարձակումներից մեկը Աստծուց վիրավորվելու գայթակղությունն է: Հաճախ մենք սպասումներ ունենք, թե *ինչպես* և *երբ* պետք է Նա գործի: Երբ մեր սպասումները չեն իրականանում, մենք հիասթափվում ենք: Եվ «խիստ հիասթափությունը վիատեցնում է» (Առակաց 13.12, MSG):

Եթե մենք դեն չնետենք հիասթափությունը՝ տալով այն Աստծուն, այն կարող է խորանալ և վերք առաջացնել մեր ներսում: Սա տեղի ունեցավ պատմության մեջ մեծագույն մարդկանցից մեկի՝ Հովհաննես Մկրտչի հետ: Նա սիրում էր Աստծուն և ամբողջովին նվիրված էր Նրան, բայց բանտարկվելուց հետո նրա հավատքը խիստ տատանվեց:

Ուշադի՛ր կարդացեք Մատթեոսի 11.2-6-ը: Համեմատե՛ք 3-րդ խոսքում գրված Հովհաննեսի հարցը Հովհաննեսի 1.29-36 խոսքերի հետ. ինչո՞ւ էր նա փոխել իր կարծիքը: Արդյո՞ք դուք վերապրել եք նման բան:

_____

_____

_____

Ի պատասխան Հովհաննեսի՝ Հիսուսը հայտնեց կատարվող հրաշքների և Ավետարանը քարոզելու մասին: Դրանից հետո Նա ասաց. «Եվ օրհնված է նա, ով գայթակղված չէ Ինձանից» (Մատթեոս 11.6, ESV):

_____

_____

_____

*«Դրա համար էլ ես մշտապես մարզում և խրատում եմ ինձ... որպեսզի մաքուր (անսասան, անմեղ) խիղճ ունենամ՝ **առանց վիրավորանքի** Աստծո հանդեպ»:*

— Գործք 24.16, AMP

Միգուցե դուք չե՞ք կարողանում հասկանալ, թե ինչու Աստված թույլ տվեց, որպեսզի ձեր կյանքում որոշ բաներ կատարվեն: Դուք բարկացա՞ծ եք Նրա վրա: Եթե այո, ապա աղոթե՛ք: Պատմե՛ք Նրան այն, ինչ զգում եք: Խնդրե՛ք Նրան շնորհք տալ ձեզ, որպեսզի վստահեք Նրան այդ իրավիճակում և շարունակեք անկոտրում լինել: Որոշ ժամանակ առանձնացրեք և սպասեք Նրա ներկայության մեջ: Ընդունե՛ք Նրա սերը և հավանությունը: Գրե՛ք այն ամենը, ինչ Նա խոսում է ձեր սրտին:

_____

_____

_____

_____

Օր 2. ԴՈՒՔ ԱՃՈՒՄ ԵՔ՝ ՀԱՎԱՏՔԻՑ՝ ՀԱՎԱՏՔ ԳՆԱԼՈՎ

«Որովհետև Քրիստոսի Ավետարանն ամոթ չեմ համարում, որովհետև Աստծո զորություն է փրկելու համար ամեն հավատացողին: ...Որովհետև Աստծով արդարությունը նրանով հայտնվում է՝ ***հավատքից հավատքի*** *մեջ. ինչպես գրված է, թե՝ Արդարը հավատքից կապրի»:*

— Հռոմեացիների 1.16,17

Աճն Աստծո մեջ աստիճանաբար է, ինչպես երեխայի առաջխաղացումը դպրոցում: Նա չի սկսում տասներորդ դասարանից, երբ դեռ հինգ տարեկան է: Նա սկսում է զարգացման այն մակարդակից, որը հասկանալի է իր համար: Յուրացնելով հանձնարարված նյութը՝ նա ստուգվում է: Անցնելով բոլոր ստուգումներն իրեն հասկանալի մակարդակի վրա՝ նա փոխադրվում է: Ահա թե ինչ նկատի ունի Պողոսը, երբ ասում է, որ Աստծո արդարությունը հայտնվում է մեզանում հավատքից՝ հավատք:

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ հավատքից՝ հավատք աճելն անմիջապես կապված է Ավետարանի հետ: Խոսքը բոլոր դասագրքերի Դասագրքի մասին է, իսկ մեր գլխավոր ուսուցիչը Սուրբ Հոգին է: Նա մշտապես գիտի ճիշտ այն, ինչ հարկավոր է մեզ. Նա նույնպես գիտի, թե ինչպես անհրաժեշտ ստուգումներ անցկացնել, որպեսզի սպառազինված լինենք այն բաների համար, որ առջևում սպասվում են:

Հավատքի կառուցումը շատ է նման բոդիբիլդինգին: Բոդիբիլդինգի մեջ մկանները չեն լցվում ուժով՝ թեթև քաշերի բազմաթիվ կրկնությունից: Մկաններն աճում են ծանր քաշերի սակավաթիվ կրկնությունից: Ինչպե՞ս եք դուք հասկանում սա հոգևոր իմաստով:

_____

_____

Ո՞ւմ է Տերն օգտագործում ձեր կյանքում ձեզ հոգևորապես մարզելու, սովորեցնելու և օգնելու համար: Նրանց ո՞ր գործողություններն են օգնում ձեզ անկոտրում կերպով առաջ գնալ:

_____

_____

Ինչպե՞ս է ձեր անձնական մարզիչը՝ Սուրբ Հոգին, դրդել ձեզ «հրել առավելագույն քաշը»: Արդյո՞ք դուք հոգևորապես աճեցիք այդ արդյունքում:

_____

_____

_____

Սուրբ Հոգին տեսնում է ձեզանում այն ուժը, որը դուք չեք կարողանում տեսնել: Ժամանակ հատկացրեք, որպեսզի շնորհակալություն հայտնեք Նրան համբերության, բարության, անսահման իմաստության համար: Շնորհակալություն հայտնեք Նրան ձեր «հոգևոր մկանների» համար, որ Նա օգնում է զարգացնել:

«Աստված պահում է Իր խոստումը, և Նա թույլ չի տա, որպեսզի դուք փորձվեք ավելի, քան կարող եք. այն ժամանակ, երբ փորձվեք, Նա ուժ կտա ձեզ դիմանալու համար և դրանով իսկ ելք կտա ձեզ»:

— Ա Կորնթացիների 10.13, TEV

Օր 3. ՈՒՂՂԵ՛Ք ՁԵՐ ՀԱՅԱՑՔԸ ՀԻՍՈՒՍԻՆ

«Եկե՛ք ուղղենք մեր հայացքը Հիսուսին՝ մեր հավատքի հեղինակին ու կատարողին...»:

— Եբրայեցիների 12.2, NIV

Անմիջապես այն բանից հետո, երբ մեզ պատվիրվում է «դեն գցել» ամեն անօգուտ ծանրություն և մեղք, մենք կարգադրություն ենք ստանում ուղղել մեր հայացքը Հիսուսին: Սա շատ կարևոր հրահանգ է: Մտածե՛ք այս մասին: Ի՞նչ է կատարվում ձեզ հետ, երբ ուղղում եք ձեր հայացքը խնդրի վրա. ճի՛շտ է, այն մեծանում է և, ինչին մենք ուշադրություն ենք դարձնում՝ ավելանում է:

Նույնը կատարվում է, երբ մենք ուղղում ենք մեր հայացքը Հիսուսին: Երբ մենք կենտրոնացնում ենք մեր ուշադրությունը Հիսուսի, Նրա մեծ սիրո, բարության, խոնարհության, իմաստության, զորության և իշխանության վրա, այդ ամենն ավելանում է մեր ներսում: Հենց սա էր Դավիթը խրախուսում անել Սաղմոս 34.3-ում. «Օ՜, **մեծարե՛ք Տիրոջն** ինձ հետ, և եկե՛ք միասին բարձրացնենք Նրա անունը» (AMP):

Դե՛ն գցել ծանրությունը և մեր հայացքն ուղղել Հիսուսին. ինչո՞վ են կապակցված այս երկուսը:

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 34.5, 105.4, Բ Կորնթացիների 3.16-18

***Կարդացե՛ք* Թվոց 14.21-38-ը և մտածեք, թե ինչ կատարվեց երկիրը լրտեսող մարդկանց հետ:**

Ի՞նչ կատարվեց այն տասը մարդկանց հետ, ովքեր իրենց հայացքն ուղղեցին իրենց սեփական կարողության վրա և չվստահեցին Աստծուն: (Խոսքեր 36,37): Ի՞նչ ժառանգեցին նրանց ընտանիքները: (Խոսքեր 28-34):

_____

Ի՞նչ կատարվեց Քաղեբի և Հեսուի հետ, ովքեր իրենց հայացքն ուղղեցին Աստծո վրա: Իսկ ի՞նչ կատարվեց նրանց ընտանիքների հետ (տե՛ս Թվոց 14.38 և Հեսու 14.6-15, 19.49,50):

_____

Ի՞նչ մարտահրավեր է այս օրինակը նետում և ի՞նչ է ասում անձամբ ձեզ:

_____

_____

Լռությամբ մոտեցեք Տիրոջը: Խնդրե՛ք Նրան՝ հայտնել, թե ինչպես կարող եք ձեր հայացքն ուղղել Հիսուսին:

_____

«Երբ ինչ-որ մեկը դառնում է Տիրոջը, այդ քողը վերցվում է: Բայց մենք բոլորս բաց երեսով, տեսնելով Տիրոջ փառքը՝ ինչպես թե հայելու մեջ, վերափոխվում ենք նույն պատկերով փառքից՝ փառք, ասես՝ Տիրոջ Հոգուց»:

— Բ Կորնթացիների 3.16, NKJV

Օր 4. ԳՈՀԱՑԵ՛Ք ԱՄԵՆ ԻՆՉՈՒՄ

«Գոհացե՛ք [Աստծուց] ամեն ինչում [անկախ հանգամանքներից՝ գոհացեք և շնորհակալություն հայտնեք], որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար [ովքեր] Քրիստոս Հիսուսում [են]...»:

— Ա Թեսաղոնիկեցիների 5.18, AMP

Աստծուց գոհանալու մեջ զորություն կա: Մենք չենք անում սա տարին մեկ անգամ, այլ անում ենք սա ամեն օր: Գոհությունը մեր հոգսերն Աստծո վրա գցելու լավագույն միջոցներից մեկն է: Այն կենտրոնացնում է մեր ուշադրությունը Հիսուսի վրա և օգնում է մեզ կենտրոնանալ լուծման և ոչ թե խնդրի վրա:

Նոր կտակարանի հունարեն բնագրում այն բառը, որ ամենուր թարգմանվում է որպես «գոհություն», «եվխարիստիա»-ն է: Այն առաջացել է «խարիս» բառից, որը հունարեն նշանակում է **շնորհք**[7]: Սա նշանակում է, որ ամեն իրավիճակում գոհանալու կարողությունն Աստծո շնորհքի արդյունքն է: Մենք չենք գոհանում կամքի ուժ գործադրելով. մենք գոհանում ենք Աստծո զորությամբ:

Կարդացե՛ք 105, 106, 107 և 136 Սաղմոսների առաջին երկու խոսքերը: Ի՞նչ է շարունակ պնդում սաղմոսերգուն:

_____

_____

Երբ մարդիկ անկեղծորեն արտահայտում են իրենց շնորհակալությունը և երախտագիտությունը ձեր հանդեպ, ինչպե՞ս եք դուք զգում ձեզ: Ի՞նչ եք ցանկանում անել նրանց հանդեպ: Իսկ ի՞նչ է կատարվում, երբ մարդիկ անշնորհակալ են:

_____

_____

Ըստ ձեզ՝ ինչպե՞ս է Աստված զգում Իրեն, երբ մենք սրտանց շնորհակալություն և երախտագիտություն ենք հայտնում Նրան:

_____

_____

«Մտե՛ք Նրա դռները շնորհակալություն հայտնելով, և գոհության զոհով՝ Նրա փառաբանության սրահները: Շնորհակալ եղեք և ասե՛ք դա Նրան, օրհնե՛ք և սրտանց փառաբանե՛ք Նրա անունը: Որովհետև Տերը բարի է. Նրա ողորմությունը, սերն ու բարությունը հավիտյան են, Նրա հավատարմությունը և ճշմարտությունը մնում են բոլոր սերունդների համար»:

— Սաղմոս 100.4,5, AMP

Կազմե՛ք ցուցակ առնվազն 25 կետից բաղկացած, որոնց համար դուք շնորհակալ եք: Այդ ցուցակն ավարտելուց հետո դանդաղորեն կարդացե՛ք այն և ժամանակ հատկացրեք, որպեսզի շնորհակալություն հայտնեք Աստծուն յուրաքանչյուր օրհնության համար:

Սա շատ լավ «վարժություն» է: Այն կարելի է անել ամեն օր կամ ամեն անգամ, երբ սկսում եք համեմատել ձեզ կամ մրցել ուրիշների հետ: Մենք իսկապես շատ բաների համար կարող ենք շնորհակալ լինել Նրանից:

Հետագա ուսումնասիրության համար
Եփեսացիների 5.2, Փիլիպեցիների 4.6, Կողոսացիների 3.15,17, Եբրայեցիների 13.15, Ա Տիմոթեոս 4.4

Օր 5. ՏԻՐՈՋ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ Է

«Եվ մի՛ տրտմեք կամ ընկճվեք, որովհետև Տիրոջ ուրախությունը ձեր զորությունն ու ամրոցն է»:

— Նեեմիա 8.10, AMP

Տիրոջ ուրախությունն այս աշխարհի ուրախությունը չէ, որը հիմնված է հանգամանքների վրա կամ առաջանում է դրանցից: Տիրոջ ուրախությունը պարզապես Տիրոջ ուրախությունն է: Հունարեն ուրախությունը «խարա» բառն է և «գոհություն» բառի պես այն առաջացել է «խարիս»-ից՝ հունարեն **շնորհք** բառից[8]: Ուրախությունն Աստծո շնորհքի գերբնական կողմերից մեկն է. այն անսասան և անսահման է:

*«Որովհետև Աստծո արքայության էությունը ուտելը և խմելը չէ, այլ՝ արդարությունը, խաղաղությունը և **ուրախությունը Սուրբ Հոգու մեջ**»:*

— Հռոմեացիների 14.17, NIV

Հովհաննես 15.11-ում (AMP) Հիսուսն ասում է. «Ես ասացի ձեզ այս բաները, որպեսզի **Իմ ուրախությունը** և բերկրանքը կարողանան լինել ձեզանում, և որպեսզի ձեր ուրախությունը և զվարթությունը լիակատար, կատարյալ և հորդացող լինեն»: Կարդացե՛ք Հովհաննես 15.1-10-ը: Պարզե՛ք, թե ինչի մասին էր պատմում Հիսուսն աշակերտներին: Ի՞նչն է ուրախություն պատճառում Նրան:

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Հովհաննես 16.23,24

Ըստ Սուրբ գրքի, որտեղի՞ց է գալիս ուրախությունը, ինչպե՞ս եք ստանում դա և ինչպե՞ս եք լցված մնում դրանով: Կարդացե՛ք Սաղմոս 4.6,7, 16.8-11, 43.4, Հռոմեացիների 15.13 և Գաղատացիների 5.22 հատվածները:

Տիրոջ ուրախությունը *գալիս է*…

_____

Ես *ստանում եմ* Տիրոջ ուրախությունը հետևյալ կերպով…

_____

Ես *լցված եմ մնում* Տիրոջ ուրախությամբ հետևյալ կերպով…

_____

Մեզ պատվիրված է *մշտապես ցնծալ Տիրոջ մեջ* (տե՛ս Փիլիպ. 4.4): Ո՞րն է ձեր ուրախության պատճառը:

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Սաղմոս 5.11, 37.4, Եսայի 61.10, Ղուկաս 10.20, Ա Պետրոս 4.12,13

Օր 6. ԾԻԾԱՂԵԼԸ ԲՆԱԿԱՆ Է

«Ուրախ սիրտը լավ դեղամիջոց է»:

— Առակաց 17.22, NIV

Ծիծաղն ամենալավ դեղամիջոցներից մեկն է, որ կարելի է ընդունել: Այն անվճար է, չի թողնում բացասական ազդեցություն և բարելավում է ձեր առողջությունը ֆիզիկապես, զգացմունքայնորեն, մտավոր և հոգևոր առումով: Բժշկական գիտությունների դոտկոր **Դոն Կոլբերտը** պատմում է ծիծաղի մասին՝ բացահայտելով մեզ համար դրա իրական զորությունը.

> Մի հետազոտողի խոսքերով՝ ծիծաղը նման է «ներսի վազքի»: Ինչպես և աէրոբիկ վարժությունների դեպքում՝ ծիծաղը ժամանակավորապես արագացնում է սրտի բաբախման հաճախականությունը, ավելացնում արյան ճնշումը, ուժեղացնում է արյան շրջանառությունը և բարձրացնում թթվածնի ներհոսքն ու արտահոսքը մարմնի մեջ: Լիաթոք ծիծաղը մարզում է թոքերը, սիրտը, ուսերը, ձեռքերը, որովայնը, ստոծանին և ոտքերը: …Տասը րոպե տևող լիաթոք ծիծաղը գրեթե հավասար է երեսուն րոպե տևող աէրոբիկ վարժություններին:
> …Ծիծաղը խթանում է վարակամերժ համակարգը և կրճատում վնասակար սթրեսային հորմոնների քանակը մարմնում: Մի հետազոտության ընթացքում տասնվեց տղամարդ անչափ ծիծաղելի տեսանյութ էին դիտել: Լավ լիաթոք ծիծաղից հետո սթրեսային հորմոնի (կորտիզոլի) քանակը կրճատվել էր 39 տոկոսով, իսկ ադրենալինի մակարդակն ընկել 70 տոկոսով: Միևնույն ժամանակ «դրական զգացողության» հորմոնը (էնդորֆինը) բարձրացել էր 27 տոկոսով, իսկ աճի հորմոնի (որը նույնպես հայտնի է որպես «երիտասարդության հորմոն») մակարդակը բարձրացել 87 տոկոսով:

Աստված Ժողովող 3.4-ում ասում է, որ կա ծիծաղելու ժամանակ: Առակաց գրքում Նա ասում է. «Ուրախ սիրտը զվարթացնում է դեմքը» և «նա, ով ուրախ սիրտ ունի, մշտական խնջույքի մեջ է [անկախ հանգամանքներից]» (15.13, NIV, 15.15, AMP): Իսկապես որ ուրախ սիրտը լավ դեղամիջոց է:

Ո՞վ է ծիծաղեցնում ձեզ: Ո՞ւմ հումորը կամ անհատականությունն է ոգեշնչում ձեզ:

Ինչպիսի՞ ոչ պիղծ ֆիլմեր, գրքեր, մուլտֆիլմեր են ծիծաղեցնում ձեզ: Ինչպե՞ս կարող եք ապահովել ուրախության՝ ձեր օրական չափաբաժինը:

Սովորե՛ք ծիծաղել ամեն օր: Համապատասխան հնարավորություններ փնտրեք ձեր ծիծաղն ազատորեն արտահայտելու համար: Ծիծաղը կթեթևացնի ձեր բեռը և ընդհանուր կերպով կբարելավի ձեր առողջությունը: Այս մասին խորհուրդ են տալիս բժիշկները:

Գիտե՞ք, որ ծիծաղը՝

Մեղմացնում է սթրեսը • Իջեցնում է արյան ճնշումը • Խթանում է վարակամերժ համակարգը • Բարելավում է ուղեղի աշխատանքը • Պաշտպանում է սիրտը • Հանգստություն է պատճառում • Օգնում է շփվել մարդկանց հետ[10]

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Անկոտրում կյանքով ապրելու համար դուք պետք է ազատվեք յուրաքանչյուր մեղքից կամ անօգուտ ծանրությունից: Անօգուտ ծանրությունները կարող են լինել վերաբերմունքներ, գործողություններ, մտածելակերպեր կամ կյանքի հոգսեր: Աստված ցանկանում է, որ դուք ձեր հոգսերը գցեք Հիսուսի վրա, որ լցվեք Իր խաղաղությամբ և ուրախությամբ, ոչ թե մտահոգությամբ, հոգսերով կամ վախով: Մեր ծանրությունը գցելը մեկանգամյա քայլ չէ, այլ շարունակական գործընթաց: Այն իրականացվում է Աստծո շնորհքի օգնությամբ:

Նշումներ

(1) Մեթյու Հենրիի *«Ուսումնական Աստվածաշունչ*, KJV», Ա. Քեննեթ Աբրահամ, գլխավոր խմբագիր («World Bible Publishers, Inc.», 1994թ.), էջ 2601: (2) Ռիկ Ռեններ. *«Հունարենի գանձերը»* (Տալսա՝ Օկլահոմա. «Teach All Nations», 2003թ.) էջ 325: (3) Չարլզ Սթենլի, *«Գտնել խաղաղությունը»* (Նեշվիլ՝ Տենեսի, «Thomas Nelson, Inc.», 2003թ.), էջ 48: (4) Թոնի Էվանս *«Վերջապես ազատ»* (Չիկագո՝ Իլինոյս. «Moody Publishers», 2001թ.) էջ 104: (5) Չարլզ Սփերջեն. *«Ողջ շնորհքը»* (Նյու Քենսիգթոն՝ Փենսիլվանիա. «Whitaker House», 1981թ.) էջ 160: (6) Դր. Փոլ Յոնգի Չո, *«Չորրորդ չափումը»* (Փլեյնֆիլդ՝ Նյու Ջերսի. «Logos International», 1979), էջեր 91, 113: (7) Անգերի *«Նոր Աստվածաշնչի բառարան»*, Մերիլ Ֆ. Անգեր (Չիկագո՝ Իլինոյս. «Moody Press», 1988թ.) էջ 1271: (8) Տե՛ս Նշում 2, էջեր 528,529: (9) Բժշկ. Գիտ. Դոկտոր Դոն Կոլբերտի *«Ծիծաղի հրաշագործ դեղամիջոցը»* («Enjoying Everyday Life» ամսագիր, հմ. 19, էջ 11, նոյեմբերի 11, 2005թ. «Joyce Meyer Ministries, Inc.», Ֆենտոն՝ Միսսուրի), էջ 22: (10) Հատվածն օգտագործված է *«Առողջության յոթ սյուները»* գրքից, Բժշկական գիտությունների դոկտոր Դոն Կոլբերտ (Լեյք Մերի՝ Ֆլորիդա. «Siloam, A Strang Company», 2007թ.), էջ 246:

«Այդ իսկ պատճառով, քանի որ մենք շրջապատված ենք հավատքի կյանքի վկաների այսպիսի մեծ բազմությամբ, եկե՛ք դեն նետենք ամեն ծանրություն, որը դանդաղեցնում է մեր ընթացքը, հատկապես՝ մեղքը, որի պատճառով մենք հեշտությամբ սայթաքում ենք: Եվ եկե՛ք համբերությամբ ***վազենք այն*** *ընթացքը, որ Աստված դրել է մեր առջև»:*

— Եբրայեցիների 12.1, NLT

Գլուխ 9

ՀԱԿԱՌԱ՛Կ ԿԱՆԳՆԵՔ ՍԱՏԱՆԱՅԻՆ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 9-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 12-րդ և 13-րդ գլուխներից:

ՀԱԿԱՌԱԿՎԵԼ

«Հակառակվել» բառը հունարեն *«անտիստեմի»*-ն է: Այն նշանակում է «կանգնել ընդդեմ, ընդդիմանալ կամ դիմադրել»[1]: Խոսքն այնպիսի մարդու մասին է, ով կատաղի հակառակության է հանդիպել և լրջորեն մտադրված է հնարավորինս անել ամեն ինչ՝ հակառակությանն ընդդեմ կանգնելու և դրան չենթարկվելու համար[2]: *«Հակառակվել»* բառի սահմանումներից են. *հրաժարվել՝ տեղի տալ, հրաժարվել՝ համակերպվել՝* և *հրաժարվել ընունել*:

*«Ահա, ես իշխանություն և զորություն եմ տվել **ձեզ**՝ կոխ տալու օձերին և կարիճներին և [ֆիզիկական ու մտավոր ուժ և կարողություն] ողջ զորության վրա, որ թշնամին [ունի]. և ոչինչ որևէ կերպով չի վնասի ձեզ»:*

— Ղուկաս 10.19, AMP

Խ 1. Կենսականորեն անհրաժեշտ է հասկանալ, որ Աստված կանչել և սպառազինել է ձեզ թշնամու դեմ ճակատային պայքար մղելու համար: Նա տվել է ձեզ ողջ զորությունը և իշխանությունը՝ սատանային և նրա ուժերին կատաղի դիմադրություն ցույց տալու համար:

Ուշադի՛ր կարդացեք այս հատվածները.

«Ուժե՛ղ եղեք Տիրոջ մեջ [եղե՛ք զորացված միաբանությամբ Նրա հետ]. վերցրե՛ք ձեր ուժը Նրանից [այն ուժը, որ մատակարարում է Նրա անսահման կարողությունը]: Հագե՛ք Աստծո ամբողջ սպառազինությունը [լավ զինված զինվորի սպառազինությունը, որ Աստված տրամադրում է], որպեսզի կարողանաք բարեհաջող կերպով դիմակայել սատանայի [բոլոր] մարտավարություններին և խաբեություններին: Որովհետև մենք չենք մարտնչում մարմնի և արյան դեմ [պայքարելով միայն ֆիզիկական հակառակորդների դեմ], այլ ընդդեմ տերությունների, զորությունների, ընդդեմ [իշխող հոգիների, ովքեր] այս ներկա խավարի աշխարհակալներն են, չարության հոգևոր ուժերի դեմ երկնային (գերբնական) ոլորտում: Այդ իսկ պատճառով հագե՛ք Աստծո կատարյալ սպառազինությունը, որպեսզի կարողանաք դիմակայել և պահպանել ձեր դիրքը [վտանգի] չար օրում, և, անելով ամեն բան [որ պահանջում է ճգնաժամը], կանգնել [հաստատ ձեր դիրքում]»:

— Եփեսացիների 6.10-13, AMP

«Պատերազմի՛ր բարի պատերազմը հավատքի համար: Պի՛նդ բռնիր հավիտենական կյանքը, որի համար Աստված կանչել է քեզ, որը դու այնքան լավ ես դավանել բազում վկաների առջև»:

— Ա Տիմոթեոս 6.12, NLT

Ինչպե՞ս են այս և Ղուկաս 10.19-ի խոսքերը անվավեր դարձնում այն գաղափարը, որ դուք պետք է աղոթեք և խնդրեք Աստծուն՝ հեռացնել թշնամուն ձեր կյանքից:

_____

_____

_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Դուք պետք է իմանաք, որ թշնամին վախենում է ձեզանից: Երբ նա նայում է ձեզ, նա չի տեսնում այն, ինչ ձեր ընկերները. նա տեսնում է Քրիստոսին: Դուք Քրիստոսի մարմինն եք. դուք Աստծո օծյալ եք: Դուք ստեղծված եք Նրա պատկերով, Ով կործանեց սատանային և խլեց ողջ նրա մարտական հանդերձանքն ու զենքերը. դուք սպառնալիք եք թշնամու համար:

2. Երբ անապատում սատանան հարձակվեց Հիսուսի վրա, Հիսուսը չաղոթեց Հորը՝ խնդրելով՝ կասեցնել հարձակումը, այլ՝ անձամբ հակառակվեց թշնամուն: Կարդացե՛ք Մատթեոսի 4.1-11-ը և բացահայտե՛ք այն երեք սկզբունքները, որ Հիսուսը գործադրեց թշնամուն հակառակվելով: Դուք նույնպես կարող եք կիրառել դրանք ձեր կյանքում:

Այն երեք սկզբունքները, որ գործադրեց Հիսուսը, և ես նույնպես պետք է գործադրեմ, հետևյալն են...

_____

_____

_____

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Հոգևոր պատերազմը կարողություն է՝ զանազանել, թե երբ է սատանան խոսում: Որովհետև երբ նա խոսում է, նրա մայրենի լեզուն սուտն է: ...Դուք պետք է հոգևոր պատերազմի մեջ հասնեք այնպիսի մակարդակի, որ պայքարեք սատանայի դեմ ճշմարտությամբ: ...Թշնամուն հանդիմանելու և ձեր կյանքից նրան հեռացնելու ամենաարագ միջոցը պարզապես ճշմարտությունը խոսելն է»:

— Լերի Սթոքսթիլ[3]

3. Կա կարևոր կապ Հակոբոսի 4-րդ գլխի 6-րդ և 7-րդ խոսքերի միջև: Ուշադի՛ր կարդացեք այս հատվածը և հայտնաբերե՛ք կարևոր կապը Աստծո առջև խոնարհ դիրք ունենալու և թշնամուն հակառակվելու կարողության (շնորհքի) միջև:

*«Բայց Նա ավելի ու ավելի ուժ [շնորհք] է տալիս բոլոր նման չար ձգտումներին հակառակ կանգնելու համար: Ինչպես Սուրբ գիրքն ասում է, Աստված ուժ [շնորհք] է տալիս խոնարհներին, բայց հակառակ է կանգնում հպարտներին և ամբարտավաններին: Այնպես որ խոնարհությամբ տվե՛ք ձեր անձերն Աստծուն: **Հակառակվե՛ք սատանային**, և նա կփախչի ձեզանից»:*

— Հակոբոս 4.6,7, TLB

[Քառակուսի փակագծերում գրված բառերը պարզեցնելու համար են]:

Ինչո՞ւ է անհրաժեշտ խոնարհությունը՝ թշնամուն հակառակվելու համար: Արդյո՞ք դուք հագել եք այն:

_____

_____
_____
_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. կարդացե՛ք Հիսուսի խոսքերը Հովհաննես 15.5-ում և Պողոսինը՝ Հռոմեացիների 7.18-ում:

ՓԱԽՉԵԼ

«Փախչել» բառը հունարեն *«ֆեուգո»*-ն է: Այն շատ նման է հայերեն *«փախստական»* բառին[4]: Նշանակում է «փախչել, խուսափել, չքանալ կամ փախուստի դիմել»[5]: Հունարեն գրականության մեջ այն օգտագործվում էր՝ նկարագրելու համար մի մարդու, ով խախտել էր օրենքը և փախուստի դիմել քրեական հետապնդումից խուսափելու համար[6]:

4. Արդյո՞ք դուք երկար ժամանակ է, ինչ պայքարում եք թշնամու դեմ կյանքի որևէ մասնավոր բնագավառում: Եթե այո, ապա դուք մենակ չեք: Նկարագրե՛ք ձեր պայքարը՝ որոշ օրինակներ բերելով: Ինչպե՞ս եք դուք հաջողությամբ հակառակվել սատանային և փախուստի մատնել նրան:

_____
_____
_____

Ինչպե՞ս է սատանան փորձել խափանել ձեր հակառակությունը: Ինչպիսի՞ հիասթափության, կասկածի կամ վախի մտքեր է նա փորձել ներշնչել ձեզ: Ինչպե՞ս է այս դասը բացահայտում նրա ստերը և ավելացնում ձեր հավատքը, որպեսզի դուք անկոտրում կերպով հակառակվեք նրան:

Այն մտքերը և զգացումները, որ սատանան հաճախ ներշնչում է ինձ, հետևյալն են…

_____
_____
_____
_____
_____

Այս դասը խրախուսում և զորացնում է ինձ հետևյալ կերպով…

_____
_____
_____
_____
_____

6. Անվանե՛ք երեք բնագավառ, որտեղ սատանան շարունակ հարձակվում է ձեզ վրա: Օգտագործելով Աստվածաշնչի համաբարբառ կամ biblegateway.com կայքէջի պես ինտեր-

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Միայն այն պատճառով, որ ձեր առջև կանգնած հսկան նման է նախորդին, որին դուք արդեն պարտության եք մատնել, մի՛ հավատացեք այն ստին, որ իրականում չեք հաղթել առաջին պայքարում: Աստծո շնորհքի զորությամբ դուք վստահել եք Ամենակարողին և տապալել ձեր Գողիաթին: Առաջին հսկան մահացած է: Սատանան դիմակավորվում է ձեր նախկին թշնամու կերպարանքով, որպեսզի շրջանցի ձեր հավատքը և կրկին մուտք գործի ձեր կյանք. հակառակվե՛ք նրան»:
— Ֆրենսիս Ֆրենջիփեյն[7]

նետային միջոցներ՝ գտե՛ք սուրբգրային հատվածներ, որոնք զորացնում են ձեզ՝ այդ հարձակումներին հակառակվելու համար: Ուսումնասիրության ընթացքում գրի առեք այն խոսքերը, որոնք ասես «դուրս են թռչում էջից»: Դրանք ռեմա խոսքեր են Սուրբ Հոգուց: Թաքցրե՛ք այդ խոսքերը ձեր սրտում, մտորե՛ք դրանց շուրջ և բարձրաձայն հռչակե՛ք դրանք:

Հարձակման բնագավառ_____ Աստծո Խոսքը, որը խափանում է այդ հարձակումը. _____

_____

_____

Հարձակման բնագավառ_____ Աստծո Խոսքը, որը խափանում է այդ հարձակումը. _____

_____

_____

Հարձակման բնագավառ_____ Աստծո Խոսքը, որը խափանում է այդ հարձակումը. _____

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Դուք պարտության կմատնեք սատանային միայն այն ժամանակ, երբ հիմնվեք Աստծո Խոսքի վրա և գործեք ըստ Խոսքի: Աստվածաշնչում ասվում է (խոսելով սատանայի մասին). «Որին հակառա՛կ կանգնեք հավատքով հաստատված...» (Ա Պետրոս 5.9): Ձեր հավատքի մակարդակն այնքան է, որքանով Աստծո Խոսքը բնակվում է ձեր սրտում, այսինքն՝ այն Խոսքը, որը իրական է ձեզ համար և որի մեջ դուք ամեն օր քայլում եք»:

— Քենեթ Ի. Հեգին[8]

ՀԱՍՏԱՏ

Ա Պետրոս 5.9-ում գրված *«հաստատ»* բառը հունարեն *«ստերեոս»*-ն է: Այն նշանակում է «հաստատ, հավասարակշիռ, ուժեղ, կայուն»[9]: Այս բառն անկոտրում բառի հոմանիշն է: Նա, ով հաստատուն կերպով հակառակվում է թշնամուն, անսասան, հաստատակամ, հավատարիմ, վստահելի, կայուն և անշարժ է իր հավատքի մեջ:

ԽՍ 7. Հաստատակամությունը որոշիչ դեր է խաղում սատանային հակառակվելու հարցում և նշանակում է *հաստատված լինել, ամուր բռնել* և *ապրել անկոտրում*: Այն միսիոները, ով աղոթեց նորածնի համար և հանդիմանեց մահվան ոգուն՝ քշելով նրան տասնվեց անգամ, հաստատակամության մեծ օրինակ է:

Մտորե՛ք այս հատվածների շուրջ, որոնք հարատևելու մասին են.

«Իմ թանկագի՛ն, թանկագի՛ն ընկերներ, հաստա՛տ կանգնեք: Եվ անվստահ մի՛ եղեք: Ամբողջովին տրվեք Տիրոջ գործին՝ վստահ լինելով, որ այն, ինչ անում եք Նրա համար, ժամանակի կամ ուժերի վատնում չէ»:

— Ա Կորնթացիների 15.58, MSG

«Քրիստոսն ազատել է մեզ՝ ազատ կյանքով ապրելու համար: Այնպես որ հաստա՛տ կանգնեք: Այլևս թույլ մի՛ տվեք որևէ մեկին՝ ստրկության լուծ դնել ձեզ վրա»:

— Գաղատացիների 5.1, MSG

«Այսպիսով, մի՛ հոգնեք գործելուց այն, որ բարի է: Մի՛ հուսահատվեք և մի՛ հանձնվեք, որովհետև մենք օրհնության հունձք կհնձենք պատշաճ ժամանակին»:

— Գաղատացիների 6.9, NLT

«Այնպես որ գոտեպնդե՛ք ձեր միտքը, եղե՛ք սթափ (շրջահայաց, բարոյապես աչալուրջ). *ձեր հույսն ամբողջությամբ և անփոփոխ կերպով (առանց երերալու) դրեք այն շնորհքի վրա* (աստվածային բարեհաճության), որը ձեր կյանք է գալիս այն ժամանակ, երբ Հիսուս Քրիստոսը (Մեսիան) հայտնվում է»:

— Ա Պետրոս 1.13, AMP

«Որովհետև դու հսկեցիր և պահեցիր Իմ հարատև համբերության խոսքը [ամուր բռնեցիր Իմ համբերության դասը այն *սպասողական հարատևությամբ, որ ես տալիս եմ քեզ*], ես նույնպես կպահեմ քեզ [ապահով] փորձության (ստուգման) ժամից, որը գալիս է ողջ աշխարհի վրա, որպեսզի փորձի նրանց, ովքեր բնակվում են երկրի վրա: Ես շուտով գալիս եմ. ամուր պահիր այն, ինչ ունես, որպեսզի ոչ ոք չկարողանա թալանել քեզ և զրկել քո պսակից»:

— Հակոբոս 3.10,11, AMP

Ինչպե՞ս եք հասկանում հարատևել բառը՝ կարդալով այս խոսքերը: Որտեղի՞ց է գալիս հարատևելու կարողությունը:

_____

_____

_____

ԽՍ 8. Թշնամու հետ պայքարելու հարցում հավատացյալների միջև գոյություն ունեն երկու ծայրահեղ մտածելակերպեր. կա՛մ մարդիկ փնտրում են սատանային ամեն խնդրի մեջ, կա՛մ որոշում են անտեսել նրան՝ հավատալով, որ ի վերջո նա պարզապես կհեռանա: Ինչպիսի՞ վտանգ են ներկայացնում այս մտածելակերպերից յուրաքանչյուրը: Ինչպե՞ս կարող եք պաշտպանվել դրանցից:

Սատանային յուրաքանչյուր խնդրի մեջ փնտրելը վտանգավոր է, որովհետև…

_____

_____

_____

_____

_____

_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Աստվածաշունչը չի սովորեցնում, որ եթե մենք հակառակ ենք կանգնում թշնամուն մեկ անգամ, նա այլևս չի կարող վերադառնալ և կրկին հարձակվել: Ո՛չ, ընդհակառակը, նա համառ է և նորից կփորձի: Շատ քրիստոնյաներ հուսահատվում են և համակվում պարտության զգացումով: Նրանք մտածում են. *«Երևի, սա չի գործում, կամ էլ՝ ես չեմ կարողանում հաղթահարել այս խնդիրը»*: Այս մտքերը մեծ ստեր են, և մեզ համար անթույլատրելի է ընդունել դրանք:

Թշնամուն անտեսելը՝ հավատալով, որ նա պարզապես կհեռանա, վտանգավոր է, որովհետև…

_____

_____

_____

ՍԹԱՓ ԵՎ ԶԳՈՆ

«Սթափ» բառը հունարեն *«նեֆո»*-ն է[10]: Այն նշանակում է «ազատ լինել արբեցնող նյութերի ազդեցությունից»[11]: Թայերը գրում է, որ լինել սթափ նշանակում է «լինել հանգիստ և կենտրոնացած հոգով, սեփական անձը վերահսկող, զգուշավոր»[12]: Ըստ էության՝ սթափ լինելը նշանակում է, որ մենք ողջամիտ ենք և կապված չենք այն բաներից, որ առաջարկում է այս աշխարհը: Մենք բավականություն չենք ստանում այդ բաներից ավելի, քան Աստծուց: Հիսուսն է մեր առաջին սերը, և մենք Նրան ենք ձգտում:

«Զգոն» բառը հունարեն *«գրեգորեո»*-ն է: Այն նշանակում է «աչալուրջ, զգույշ և *ուշադիր լինել»* և նկարագրում է այնպիսի մարդու, ով հսկում է, որպեսզի ոչ մի թշնամի չկարողանա անարգել մուտք ստանալ իր տանը կամ կյանքում[13]:

9. Թեև սատանան պարտություն է կրել, բայց նա դեռևս արժանի հակառակորդ է: Այդ իսկ պատճառով Աստված պատվիրում է մեզ՝ մշտապես սթափ լինել: Սա պարզապես չի վերաբերում ոգելից խմիչք չօգտագործելուն, այլ կապված է նաև հարբեցողության հետ, որն առաջանում է այս աշխարհի հաճույքներով չափից շատ տարվելուց: Կա՛նգ առեք և անկեղծ հայացք գցեք ձեր կյանքի վրա: Միգուցե դուք այս աշխարհում հարբա՞ծ եք ինչ որ բանով: Եթե այո, ապա՝ ի՞նչ է Աստված դրդում անել դա փոխելու համար:

Մտածե՛ք *աշխատանքի կամ գործարարության, սպորտի, որևէ նախասիրության, սննդի, ինտերնետի, հեռուստատեսության, ֆիլմերի, երաժշտության, հակառակ սեռի ներկայացուցիչների, գնումների և այլ բաների մասին:*

Ես հարբած եմ հետևյալ բաներով…

_____

_____

Այն քայլը, որ Աստված խնդրում է ինձ անել հավասարակշռություն ձեռք բերելու համար, հետևյալն է…

_____

_____

_____

«Մի՛ ապրեք անհոգ, անմտածված: Համոզվե՛ք, որ դուք հասկանում եք, թե ինչ է ցանկանում Տերը: Չափից շատ գինի մի՛ խմեք [որը մտնում է այս աշխարհի հաճույքների մեջ]*: Դա էժանացնում է ձեր կյանքը. խմե՛ք Աստծո Հոգին մեծ ումպերով»:*

—Եփեսացիների 5.17,18, MSG

[**Քառակուսի փակագծում գրված բառերը պարզեցնելու համար են**]:

Խ 10. Մենք չպետք է *զգոն* լինենք ժամանակ առ ժամանակ: Դա հոգևոր աչալրջության վիճակ է, որը մենք զարգացնում ենք և դրանում հարատևում: Զգոնությունը պաշտպանում է մեզ, հատկապես փորձությունների և գայթակղությունների ժամանակ: Հիսուսը պատվիրեց Իր աշակերտներին՝ հսկել, այսինքն՝ զգոն լինել և աղոթել Իր հետ այն գիշեր, երբ Իրեն ձերբակալեցին: Ուշադի՛ր կարդացեք, թե ինչ ասաց Նա աշակերտներին, երբ քնած գտավ նրանց:

«Բոլորդ պետք է արթուն մնաք (լինեք խիստ ուշադիր, զգուշավոր և գործուն) և հսկեք ու աղոթեք, որպեսզի չմտնեք փորձության մեջ: Հոգին իսկապես կամենում է, բայց մարմինը թույլ է»:

— ***Մատթեոս 26.41, AMP***

«Արթո՛ւն մնացեք և հսկե՛ք ու աղոթե՛ք [մշտապես], որպեսզի չմտնեք փորձության մեջ. հոգին իսկապես կամենում է, բայց մարմինը թույլ է»:

— ***Մարկոս 14.38, AMP***

Ի՞նչ կապ է Սուրբ Հոգին ցույց տալիս ձեզ զգոն և ուշադիր լինելու և հաղթանակ տանելու միջև:

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Գեթսեմանիում Հիսուսի մասին պատմությունը գրված է Մատթեոս 26.36-56-ում, Մարկոս 14.32-53-ում, Ղուկաս 22.39-53-ում, Հովհաննես 18.1-12-ում:

«Դուք Լույսի որդիներն եք, Ցերեկվա դուստրերը: Մենք ապրում ենք բաց երկնքի տակ և գիտենք, թե որտեղ ենք կանգնած: Այնպես որ, եկե՛ք անտեղյակ չլինենք այս կյանքում, ինչպես մյուսները: Եկե՛ք բաց պահենք մեր աչքերը և խելամիտ լինենք: Մարդիկ քնում են գիշերը և հարբում են գիշերը, բայց՝ ո՛չ մենք: Քանի որ մենք Ցերեկվա ստեղծագործություն ենք, եկե՛ք վարվենք ինչպես ցերեկը: Դո՛ւրս եկեք ցերեկվա լույսի մեջ, սթափ, հագնելով հավատքը, սերը և փրկության հույսը:

—Ա Թեսաղոնիկեցիների 5.5-8, MSG

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Այն, ինչին դուք չեք հակառակվում, չի փոխվի: Դուք պետք է ավելի վճռական լինեք գերությունից ազատվելու համար, քան թշնամին՝ ձեզ գերելու և կործանելու համար: Անկոտրում հակառակություն ցուցաբերեք սատանային: Անմիջապես և անդրդվելիորեն հանդիմանեք նրան այն իշխանությունով, որով Տեր Հիսուս Քրիստոսը պսակել է ձեզ:

Արդյո՞ք դուք հոգնել եք թշնամու հաճախակի հարձակումներից: Դուք պատրա՞ստ եք հակառակ կանգնել նրան: Դուք պատրա՞ստ եք անկոտրում կերպով հակառակվել նրան, մինչև որ նա փախչի: Գտե՛ք մեկուսի վայր ձեր տանը կամ այլ վայրում և սկսե՛ք պատերազմել թշնամու դեմ: Օգտագործե՛ք Հոգու սուրը և ամենայն վճռականությամբ խոսե՛ք Աստծո Խոսքն ընդդեմ սատանայի: Թերթե՛ք այս Սերտողության ձեռնարկը և գտե՛ք այն խոսքերը, որոնք Աստված կենդանացրեց ձեզ համար այս դասերի ընթացքում: Գրե՛ք դրանք առաջին դեմքով և բարձրաձայն հռչակե՛ք թշնամու դեմ:

Աղոթք՝ թշնամուն անկոտրում կերպով հակառակվելու համար

Հա՛յր, շնորհակալություն այս դասի համար, որը սովորեցրեց ինձ՝ ինչպես հակառակվել սատանային: Ես այլևս չեմ ցանկանում լուռ մնալ: Օգնի՛ր ինձ, Աստված: Վառի՛ր Քո կրակն իմ մեջ, այն կրակը, որը բորբոքվում է Սուրբ Հոգու կողմից: Տո՛ւր ինձ Քո հավատքը. հավատք՝ տեսնելու ավելին, քան հանգամանքներն են: Թող Քո սուրբ ցասումը բարձրանա ինձանում այն ժամանակ, երբ թշնամին հարձակվի ինձ վրա կամ էլ ինձ շրջապատող մարդկանց վրա, և սաստկորեն խոսի նրա դեմ: Ես այլևս չեմ ցանկանում պարզապես մտածել աստվածաշնչյան խոսքերի մասին, այլ ցանկանում եմ դավանել դրանք համարձակությամբ: Ների՛ր ինձ, որ երբևէ զայրացել եմ Քեզ կամ մարդկանց վրա: Օգնի՛ր՝ ուղղել իմ զայրույթը թշնամու դեմ: Թո՛ղ իմ խոսքերը լինեն Քո խոսքերը: Քանդի՛ր սատանայի գործերն իմ միջոցով: Քո շնորհքով ես անկոտրում եմ: Շնորհակալությո՛ւն, Հա՛յր, Հիսուսի անունով: Ամե՛ն:

Ճարտարական

ԿՈՉ

Կրկին կարդացեք հարձակումների մասին աստվածաշնչյան խոսքերի ցուցակը, որ գրել եք 6-րդ կետում: Միգուցե դուք պայքարում եք ամեն օր կամ անտեղյակությունից անտեսում եք գրոհները՝ հուսալով, որ սատանան կհոգնի և կհեռանա: Այս շաբաթ հակառակվե՛ք սատանային այդ բնագավառներում: Հիշե՛ք, որ պետք է հառեք ձեր հայացքը Հիսուսի վրա. դուք չեք որոնում դևերի, այլ հակառակվում եք այնպիսի խոչընդոտի, որ ակնհայտորեն կանգնած է ձեր և Աստծո օրհնությունների միջև: Մտորե՛ք այն սուրբգրային հատվածների շուրջ, որոնք խոսում են ձեր իշխանության մասին և այն խոստումների, որ Աստված տվել է ձեր իրավիճակի համար: Համոզվածությամբ խոսելով՝ հակառակվե՛ք սատանային և հռչակե՛ք Աստծո Խոսքի ճշմարտությունը ձեր կյանքում:

Օր 1. ԱՐԹՆԱՑԵ՛Ք

«Արթնացի՛ր, ո՛վ քնած, և բարձրացի՛ր մեռելներից, և Քրիստոսը կշողա (օրը կծագեցնի) քեզ վրա և լույս կտա քեզ: Ուրեմն ուշադի՛ր եղեք, թե ինչպես եք գնում: Ապրե՛ք նպատակասլաց և արժանավայել, ոչ թե ինչպե՛ ոչ իմաստուն և ոչ խելացի մարդիկ, այլ՝ ինչպես իմաստուններ (խելամիտ, բանիմաց մարդիկ), վերցնելով առավելագույնը ձեր ժամանակից [օգտվելով յուրաքանչյուր հնարավորությունից], որովհետև օրերը չար են: Այդ իսկ պատճառով մի՛ եղեք անորոշ, անմիտ և հիմար, այլ՝ Աստծո կամքը հասկացող և ըմբռնող: Եվ մի՛ հարբեք գինով... մշտապես լցված եղեք և խրախուսվե՛ք Սուրբ Հոգով»:

— Եփեսացիների 5.14-18, AMP

Դուք կարդացի՞ք այս խոսքը: Այն կարծես ձայն է, որ ամեն առավոտ պատվիրում է ձեզ արթնանալ և առաջ շարժվել: Հենց հիմա Աստված տագնապի ազդանշան է հնչեցնում հոգու մեջ՝ պատվիրելով մեզ՝ արթնանալ, հագնվել և անցնել գործի: Աստված չի ցանկանում, որպեսզի Իր մարմինը քնի: Նա ցանկանում է, որպեսզի մենք արթուն, սթափ և զգոն լինենք՝ իշխելով այս կյանքում և տարածելով Նրա Արքայությունը:

Ամեն առավոտ, երբ ձեր զարթուցիչը միանում է, դուք արթնանում եք, հագնվում և գնում աշխատանքի: Ինչպե՞ս է սա համեմատելի հոգևոր կյանքի հետ: Կարդացե՛ք Հռոմեացիների 13.11-14-ը, Եփեսացիների 6.10-18-ը և Հովհաննես 9.4-ը:

_____

_____

_____

Հաշվի առնելով այն փաստը, որ Քրիստոսը վերադառնում է՝ ինչո՞ւ է վտանգավոր քնած լինելը: Ինչպիսի՞ վարձատրություն կստանան նրանք, ովքեր արթուն են: Կարդացե՛ք Մատթեոս 24.36-51, Հայտնություն 3.2,3, 16.15 և Ա Թեսաղոնիկեցիների 4.13-18, 5.1-11 հատվածները:

Քնած լինելու վտանգը հետևյալն է...

_____

_____

_____

Արթուն լինելու վարձատրությունը հետևյալն է...

_____

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Ղուկաս 12.35-40:

Բարձրյալի զավա՛կ, Աստծո Հոգին տագնապի ազդանշան է հնչեցնում՝ Իր Մարմինը հարություն տալու համար: Ձուր մի՛ վատնիր ժամանակդ. զգուշացումն արդեն տրվել է, վերջը մոտ է: Մի՛ փոխիր զարթուցիչի ազդանշանի ժամանակը: Արթնացի՛ր, հագնվի՛ր և անցի՛ր գործի:

Օր 2. ՀԱՍԿԱՑԵ՛Ք, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՍԱՏԱՆԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Ի վերջո մենք չենք ցանկանում անմտորեն տեղ տալ սատանային՝ ավելի մեծ վնաս հասցնելու համար. մենք անտեղյակ չենք նրա խորամանկ գործելակերպին»:

— Բ Կորնթացիների 2.11, MSG

Կան որոշ հետաքրքիր ճշմարտություններ, որոնք կապված են սատանա բառի նշանակության հետ: Հասկանալով այս բառի իմաստը՝ մենք կհասկանանք, թե ինչպես է հիմնականում սատանան գործում: Հեղինակ, հովիվ և հունարենի գիտակ **Ռիկ Ռենները** տալիս է այս ազդեցիկ բացատրությունը.

«*«Սատանա»* բառը կազմված է «դիա» և «բալոս» բառերից: *«Դիա»* բառը... նշանակում է «միջով»՝ մի կողմից մյուսը անցք բացելու իմաստով: *«Բալոս»* բառը նշանակում է «նետել» և կիրառվում է, երբ ինչ-որ մեկը նետում է գնդակ, քար կամ այլ առարկա: Այս երկուսը միասին նշանակում են շարունակաբար *նետել ինչ-որ բան՝ հարվածելով կրկին ու կրկին, մինչև առարկայի մակերեսը վնասվի և դրանում ի վերջո անցք բացվի*:
...[Թշնամին] գալիս է գրոհելու **միտքը**. ո՛չ մեկ անգամ, այլ շատ անգամներ: ...Հենց որ զոհը դադարեցնում է մտավոր դիմադրությունը, սատանան ուժգին հարվածում է ևս մեկ՝ վերջին անգամ, և վերջապես թափանցում նրա միտքը»[14]:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է երկակի խնդիր լուծի իր մտքում: Նախ՝ նա պետք է արմատախիլ անի և ոչնչացնի այն մտքերը, որ միգուցե երբեք կապանքներ չի համարել: Նա չի կարող անել սա առանց որևէ մեկի օգնության: Երկրորդը՝ նա պետք է ձգտի նոր արմատներ գցել Հոգու մեջ, Քրիստոսի մտքի մեջ: ... Քրիստոսի միտքը մեզանում հավիտենական իմաստության և մտքի ազատության աղբյուր է: Բայց մենք պետք է ազատվենք հին մտքերից, սովորենք խորացնել մեր արմատները Հիսուսի մեջ և միջոցներ ձեռնարկենք՝ թույլ տալով, որպեսզի Նրա միտքը լցնի մեր բոլոր մտածողական աղբյուրները»:

— Ջոն Լ. և Ռ. Լորեն Սեդֆորդ[15]

Հենց որ թշնամին անցք է բացում և թափանցում մարդու միտքը, նա հեղեղում է այն ստերով, կասկածով, վախով, անհանգստությամբ, զայրույթով և նույնիսկ Սուրբ գրքի սխալ մեկնությամբ: Ինչո՞ւ: Նա ցանկանում է վերահսկել մեր մտքերը, քանի որ մեր մտքի պարունակությունը լցնում է մեր սիրտը և առաջնորդում մեր կյանքի ընթացքը:

Ի՞նչ նոր բան սովորեցրեց ձեզ Սուրբ Հոգին՝ սատանայի անվան նշանակության միջոցով:

_____

_____

Կարո՞ղ եք հիշել որևէ դեպք, երբ դուք հակառակ եք կանգնել սատանային, և նա փախչել է: Նկարագրե՛ք, թե ինչպես է դա կատարվել:

_____

_____

Իմանալով, որ սատանայի գլխավոր գործելակերպը շարունակաբար ձեզ վախով, կասկածով և խաբեությամբ հարվածելն է՝ ինչո՞ւ է կարևոր նորոգել ձեր միտքն Աստծո Խոսքով:

_____

_____

Օր 3. ՈՒՂՂԵ՛Ք ՁԵՐ ԶԱՅՐՈՒՅԹԸ ՃԻՇՏ ՀՈՒՆՈՎ

«Բարկանաք՝ մի՛ մեղանչեք. թող արեգակը ձեր բարկության վրա չմտնի: Եվ տեղի չտա՛ք սատանային»:

— Եփեսացիների 4.26,27

Պարտադիր չէ, որ բարկությունը մեղք համարվի: Մարդը փորձանքի մեջ հայտնվում է բարկության ժամանակ կատարած քայլերից, այլ ոչ թե բուն բարկությունից: Ինչպես արդեն իմացանք՝ մենք հոգևոր պատերազմի մեջ ենք և չենք պայքարում մարդկանց դեմ: Մենք պատերազմում ենք սատանայի և դիվային ուժերի դեմ: Հասկանալով սա՝ մենք չենք պայքարի մարդկանց դեմ և չենք ընկնի սատանայի ծուղակը:

Արդար զայրույթը տեղին է և կարող է դրդել մեզ՝ տարածել Աստծո արքայությունը: Աստված անձամբ շատ անգամ ցույց է տվել Իր արդար զայրույթը: Հիսուսը բարկացավ, սակայն չմեղանչեց: Իր ծառայության թե՛ սկզբում, թե՛ վերջում Նա տեսանելիորեն դրսևորեց Իր զայրույթը, երբ մաքրեց տաճարը (տե՛ս Մատթ. 21.12,13, Մարկոս 11.15-19, Ղուկաս 19.41,46, Հովհաննես 2.13-17): Եթե մենք բարկանում ենք այն բաների վրա, որոնք նույնպես բարկացնում են Աստծուն, և տիրապետում ենք մեզ այնպես, ինչպես Նա, ապա բարկությունը կարող է դրական լինել:

Ի՞նչն է բարկացնում Աստծուն՝ ըստ Սուրբ գրքի: Կարդացե՛ք Թվոց 11.1-10, 12.1-9, 25.1-3, Հեսու 7.1, Դատավորաց 2.11-14, Առակաց 6.16-19, Եբրայեցիների 10.26,27 խոսքերը:

_____

_____

Ակնհատ է՝ Աստված չի ցանկանում, որպեսզի մենք զայրացած լինենք և զայրույթն ուղղենք մարդկանց դեմ: Կարդացե՛ք Եփեսացիների 4.26,27-ը: Ինչպե՞ս և ե՞րբ եք հանդարտեցնում զայրույթը մարդկանց հանդեպ: Ինչո՞ւ է սա այդքան կարևոր և ի՞նչ տեղի կունենա հակառակ դեպքում:

_____

_____

Ի՞նչն է մշտապես և հեշտությամբ բարկացնում ձեզ: Արդյո՞ք դա լինում է փորձությունների ժամանակ:

_____

_____

Արդյո՞ք դուք հակված եք բարկանալ Աստծո վրա, երբ ձեր կյանքում փորձանքներ են պատահում: Եթե այո, ապա՝ ինչո՞ւ: Խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ պատճառները ձեր սրտում: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է և հրաժարվե՛ք դրանցից՝ այդ ամենը հանձնելով Նրան:

_____

_____

Ինչպե՞ս կարող եք ավելի արդյունավետ ուղղել ձեր զայրույթն թշնամու դեմ, ով բոլոր փորձությունների աղբյուրն է:

_____

_____

Օր 4. ԱԶԱՏԱԳՐԵ՛Ք ԱՅՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՆ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՁԵՐ «ՔԹԻ ՏԱԿ Է»

«Լեզուն ունի կյանքի և մահվան զորությունը, և նրանք, ովքեր սիրում են դա, կուտեն դրա պտուղը»:

— Առակաց 18.21, NIV

Քանի՞ անգամ եք ամենուր փնտրել ինչ-որ բան, իսկ հետո պարզել, որ այն հենց «ձեր քթի տակ» է: Նման բան է տեղի ունենում, երբ պայքարում ենք թշնամու դեմ: Մեր խնդիրները լուծվում են, երբ շփվում ենք Հոր հետ. պատասխանները Նրա Խոսքի զորության և Նրա Հոգու ներկայության մեջ են: Մենք ազատագրում ենք այդ զորությունը մեր կյանքում խոսքերի միջոցով: Ծառայող և հեղինակ **Չարլզ Քեփսն** ասում է.

«Քրիստոսի մարմինը պետք է սկսի ապրել Խոսքի իշխանության մեջ, որովհետև Աստծո Խոսքը ստեղծարար զորություն է: Ստեղծարար զորությունն առաջանում է սրտում, ձևավորվում լեզվի միջոցով և ազատագրվում շուրթերից՝ խոսքերի տեսքով»[16]:

Սատանան ցանկանում է, որպեսզի դուք համաձայնեք իր՝ կասկած, վախ և մահ բերող խոսքերի հետ և դավանեք դրանք: Իսկ Աստված ցանկանում է, որպեսզի դուք համաձայնեք Իր՝ հավատք, զորություն և կյանք բերող խոսքերի հետ, որոնք գրված են Սուրբ գրքում և, որոնք Սուրբ Հոգին ասում է մեզ, և դավանեք դրանք: Բարձրաձայն ասված այն ռեմա խոսքերը, որոնք Նա դնում է մեր սրտում, նման են միջուկային ռումբերի, որոնք ուղղված են թշնամու դեմ:

Երբ թշնամին հարձակվում է ձեզ վրա, ինչպե՞ս եք դուք պատասխանում: Ի՞նչ է դուրս գալիս ձեր շուրթերից:

_____

_____

Խնդրե՛ք Աստծուց օգնություն՝ ձեր շուրթերը պահպանելու համար. Սաղմոս 141.3, Առակաց 13.21-23, Փիլիպեցիների 2.14, Ա Պետրոս 3.10-12

Թշնամուն արդյունավետ կերպով հակառակվելու համար դուք պետք է հակառակվեք նրան Խոսքով: Արդյո՞ք այդպես եք վարվում: Եթե ոչ, ապա՝ ո՞րն է պատճառը: Խնդրե՛ք Տիրոջը՝ ցույց տալ, թե ինչն է խոչընդոտում ձեզ և ինչը կարող է փոխել դա:

_____

_____

*«**Աստծուց ո՛չ մի խոսք առանց զորության չի լինի** և չի կարող չիրականանալ»:*

— Ղուկաս 1.37, AMP

Դանդաղորեն կարդացե՛ք Հռոմեացիների 4.17, Եփեսացիների 5.1 և Երեմիա 23.28,29 խոսքերը: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչպիսին են մեր երկնային Հոր բնավորությունը, խոսքերը և ինչպիսին պետք է լինի մեր պատասխանը: Ի՞նչ են սովորեցնում այս հատվածները Աստծո Խոսքը դավանելու մասին:

_____

_____

Երբ դուք հարձակման եք ենթարկվում, պարզապես մի՛ կարդացեք Խոսքը. **դավանե՛ք** այն: Պարզապես մի՛ մտածեք աստվածաշնչյան հատվածների մասին, այլ **դավանե՛ք** դրանք: Աստծո հավիտենական Խոսքը վերածե՛ք անպարտելի զենքի այնպես, ինչպես Նա նախատեսել է: Օգտագործե՛ք այն՝ թշնամուն հակառակվելու համար, և նա կփախչի:

Օր 5. ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԻՐԱԿԱՆ Է

«Ահա՛ Առյուծը Հուդայի ցեղից՝ Դավթի արմատը, հաղթեց և արժանացավ բացելու մագաղաթի գալարը և կոտրելու դրա յոթ կնիքները»:

— Հայտնություն 5.5, TLB

Սատանան առյուծ չէ: Հիսուսն է Հուդայի ցեղի Առյուծը: Եվ Հիսուսի ու սատանայի միջև ոչ մի նմանություն չկա: Հիսուս Քրիստոսն իրական է:

Հիշե՛ք, որ սատանան և նրա ընկած հրեշտակները զինաթափված են: Կողոսացիների 2.15-ում ասվում է, որ Աստված խաչի վրա «զրկեց տիեզերքի հոգևոր բռնակալներին իրենց ձևական իշխանությունից և մերկ վիճակում քայլեցրեց նրանց փողոցներով «Մեսիջ»: Աստված պարտության մատնեց թշնամուն:

Թեև սատանան զինաթափվել է, սակայն նա և նրա դևերը դեռևս ահեղ թշնամիներ են: Ինչպե՞ս կարող եք կիրառել այն հաղթանակը, որ Քրիստոսը տարավ Գողգոթայում: Այս հարցին պատասխանելու համար եկե՛ք նայենք բնության մեջ առկա երեք սկզբունքի՝ մռնչացող առյուծից պաշտպանվելու համար.

1. **Վա՛ռ պահեք ձեր ճամբարի կրակը**: Առյուծները վախենում են կրակից[17]:

2. **Մնացե՛ք ձեր խմբի հետ: Մի՛ առանձնացեք**: Առյուծները հարձակվում և սպանում են ետ մնացածներին, ովքեր առանձին են գնում[18]:

3. **Եթե դուք առյուծի հանդիպեք, հանդարտ և հաստատ կանգնեք: Մի՛ փախչեք:** Նայե՛ք անմիջապես առյուծի աչքերի մեջ, բարձրացրեք ձեր ձեռքերը և գոչե՛ք այնքան բարձր, որքան կարող եք: Եթե փախչեք, առյուծը կցատկի ձեզ վրա և կենդանի-կենդանի կհոշոտի[19]:

Կիրառե՛ք այս սկզբունքները ձեր քրիստոնեական կյանքում՝ թշնամուն հակառակվելու համար:

Ձեր կարծիքով՝ ի՞նչ է նշանակում վառ պահել «ձեր ճամբարի կրակը» և՝ ինչպե՞ս է դա պաշտպանում ձեզ: Կարդացե՛ք Մատթեոս 3.11, Ղուկաս 12.49, 24.27-32, Գործք 2.1-4, 4.8-13 և Երեմիա 20.9 խոսքերը:

_____

_____

Ինչպե՞ս է «ձեր խմբի հետ մնալու» սկզբունքը կիրառելի ձեզ համար՝ որպես Քրիստոսի մարմնի մաս: Կարդացե՛ք Եբրայեցիների 10.25, Ժողովող 4.9-12, Գործք 4.31-35 և Ա Կորնթացիների 12.12-27 խոսքերը:

_____

_____

Ինչպե՞ս եք պաշտպանվում «հանդարտ կանգնելով» և թշնամուց *չփախչելով*: Կարդացե՛ք Եփեսացիների 6.13, Ա Կորնթացիների 15.58, Գաղատացիների 5.1 և Ա Պետրոս 5.8,9 խոսքերը:

_____

_____

Օր 6. ԹՈՂ ՔՐԻՍՏՈՍԸ ԼԻՆԻ ՁԵՐ ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

«Ե՛տ դարձիր: Վերականգնի՛ր այն թանկ սերը, որ սկզբում էր: Ժամանակ չկորցնենք»:

— Հայտնություն 2.5, MSG

Հիշո՞ւմ եք, երբ նոր էիք ընդունել Քրիստոսին որպես Տեր և Փրկիչ: Որքա՜ն քաղցր էին այդ առաջին օրերը: Այն հայտնությունը, թե ինչ է Նա արել ձեզ համար, լցնում էր ձեր աչքերը շնորհակալության արցունքներով: Բայց միգուցե կյանքի դժվարությունների պատճառով, ժամանակի ընթացքում ձեր սերը կորցրել է իր փայլը: Այն այնպիսին չէ, ինչպիսին առաջ էր:

Եթե թշնամին ազդեցություն ունի ձեր կյանքում, և ձեր հավատքի ու զորության մակարդակը նվազել է, դուք, հավանաբար, կորցրել եք առաջին սերը: Միգուցե այն սերը, որը պատկանում էր Աստծուն, այժմ պատկանում է որևէ անձնավորության, ձեր նոր ընկերոջը կամ ընկերուհուն կամ էլ զվարճանքին և հանգստին: Մտապահե՛ք, որ քաղցն առաջանում է այն բաների նկատմամբ, ինչով սնվում եք: Քանի դեռ թշնամին հաջողության է հասնում, նրան չի մտահոգում, թե որքան ժամանակ և ջանք է պետք ներդնել՝ խզելու համար ձեր շփումը Տիրոջ հետ:

Անկեղծ հայացք գցեք Քրիստոսի հետ ունեցած ձեր փոխհարաբերություններին: Ինչպե՞ս կնկարագրեիք դրանք. կրակո՞տ, թույլ կրակ ունեցո՞ղ, թե՞ հազիվ առկայծող: Խնդրե՛ք Աստծուն՝ ցույց տալ պատճառը:

_____

_____

Ձեր փափագը Քրիստոսի և Նրա Խոսքի հանդեպ կրկին բոցավառվում է ապաշխարության միջոցով: Այն բանից հետո, երբ Հիսուսն ասաց Եփեսոսի եկեղեցուն, որ այն կորցրել էր իր առաջին սերը, Նա պատվիրեց. «ապաշխարի՛ր և արա՛ այն գործերը, որ անում էիր սկզբում» (Հայտնություն 2.5, NIV): Ինչպիսի՞ գործեր էիք անում նախկինում՝ Աստծո կրակը ձեր սրտում պահելու համար: Ի՞նչ պետք է փոխվի, որպեսզի կրկին անեք դրանք:

_____

_____

_____

Անկարելի է թշնամու դեմ հաստատ կանգնելու կարողություն ունենալ՝ առանց Քրիստոսին հարելու և Նրանում բնակվելու: Ուշադի՛ր կարդացեք Հիսուսի խոսքերը Հովհաննես 15.1-17-ում: Ինչպիսի՞ նոր բաներ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ Տիրոջ հետ կենդանի փոխհարաբերություններ ունենալու մասին:

_____

_____

_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Անհրաժեշտ չէ Աստծո ներկայության մեջ լինելու համար մնալ եկեղեցում: Մենք մեր սրտերը կարող ենք դարձնել անձնական տաճարներ, որտեղ ամեն ժամանակ կարող ենք մտնել և թաքուն զրուցել Տիրոջ հետ: Այս զրույցները կարող են սիրով հագեցած և հեզաբարո լինել, և յուրաքանչյուր մարդ կարո՛ղ է անել դա: Կա՞ արդյոք որևէ պատճառ չսկսելու համար: Միգուցե Նա սպասում է, որպեսզի մենք առաջին քայլն անենք: ...Խնդրելով Նրա շնորհքը՝ աստիճանաբար վարժեցրե՛ք ձեզ՝ ձեր սերը Նրա հանդեպ ցուցաբերելու հարցում: Ամեն ժամանակ ձեր սիրտը նվիրեք Նրան: Մի՛ սահմանափակեք ձեր սերը Նրա հանդեպ կանոններով կամ հատուկ պաշտամունքային ձևերով: Առա՛ջ գնացեք հավատքի մեջ սիրով և խոնարհությամբ»:

— Եղբայր Լոուրենս[20]

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Մենք հոգևոր պատերազմի մեջ ենք, և Աստված ցանկանում է, որ ամեն ինչում աչալուրջ ու զգոն լինենք: Երբ թշնամին հարվածում է, Աստված ցանկանում է, որ մենք վերցնենք Իր տրամադրած զենքերը և աննկուն կերպով հակառակվենք թշնամուն այնքան ժամանակ, մինչև որ նա փախչի: Մենք պետք է բացենք մեր բերանները և անզիջում կերպով հռչակենք Աստծո Խոսքը սատանայի և նրա ընկած հրեշտակների դեմ, մինչև որ նրա հարձակումը խափանվի:

Նշումներ

(1) Սթրոնգի *«Աստվածաշնչի լիակատար համաբարբառ»*, Ջեյմս Սթրոնգ՝ Իրավագիտության և Աստվածաբանության դոկտոր (Նեշվիլ, Տենեսի. «Thomas Nelson Publishers», 1990թ.): (2) Ռիկ Ռեններ. *«Հունարենի գանձերը»* (Տալսա՝ Օկլահոմա. «Teach All Nations», 2003թ.) էջ 942: (3) *«Փրկված առյուծից»*, Լերի Սթոքսթիլի աուդիո դասընթացները, «Մաս 2. Ճշմարտությունը» (Բեյթն Ռուժ՝ Լոս Անջելես, «Bethany World Prayer Center»): (4) Վայնի *«Հին և Նոր կտակարանների խոսքերի բացատրական բառարան»*, Վ. Ի. Վայն (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishing», 1996թ.), էջ 242: (5) Տե՛ս Նշում 1: (6) Տե՛ս Նշում 2, էջ 943 (7) *«Քրիստոնեական մեջբերումներ հոգևոր պատերազմի մասին»* (վերցրած 8/5/11 http://dailychristianquote.com/dcqspiritwarfare2.html կայքէջից): (8) Քեննեթ Հեգին. *«Հավատացյալի իշխանությունը»* (Տալսա՝ Օկլահոմա. «RHEMA Bible Church», 2007թ.) էջ 62: (9) Տե՛ս Նշում 1: (10) Նույնը: (11) Տե՛ս Նշում 4, էջ 583: (12) Թայերի *«Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան»*, Զոզեֆ Հ. Թայեր (Grand Rapids, MI: «Baker Book House Company», 1977թ.) էջ 425: (13) Տե՛ս Նշում 2, էջ 652: (14) Նույնը, էջ 942: (15) Զոն L. և Ռ. Լորեն Սեդֆորդ, *«Մտքի նորոգում»* (Տալսա՝ Օկլահոմա, «Victory House Publishers», 1991թ.), էջեր 19,20: (16) Չարլզ Քեփս. *«Աստծո ստեղծարար զորությունը»* (Տալսա՝ Օկլահոմա, «Victory House Publishers», 1991թ.), էջ 8: (17) *«Փրկված առյուծից»*, Լերի Սթոքսթիլի աուդիո դասընթացները, «Մաս 1. Սատանայի զենքերը» (Բեյթն Ռուժ՝ Լոս Անջելես, «Bethany World Prayer Center»): (18) Նույնը: (19) Հատվածն օգտագործված է *«Քո ժամանակն ավարտվեց, սատանա՛»* Փերի Սթոունի աուդիո ուղերձից (Կլիվլենդ՝ Տենեսի, «Voice of Evangelism», www.perrystone.org): (20)) Եղբայր Լոուրենս. *«Հարատևել Աստծո ներկայության մեջ»* (Նյու Քեսինգթոն՝ Փենսիլվանիա. «Whitaker House», 1982թ.), էջեր 37,38:

*«Ուրեմն **հնազանդվե՛ք** Աստծուն: Հակառակվե՛ք սատանային, և նա կփախչի ձեզանից»:*

— Հակոբոս 4.7, NIV

Գլուխ 10

ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՁԵՎԸ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 10-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 14-րդ գլխից:

Խ 1. Հնազանդվել Աստծուն նշանակում է *հպատակվել* Նրան, այսինքն՝ անել այն, ինչ Նա ասում է, հաշվի չառնելով, թե մեզ դո՞ւր է գալիս, արդյո՞ք մենք հասկանում ենք: Ինչպե՞ս եք դուք օրհնվել անցյալում *ձեր* հնազանդության շնորհիվ:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Սատանայի դեմ պայքարելու գլխավոր մեթոդն **Աստծուն հնազանդվելն** է: Սա նշանակում է՝ մշտապես վստահել և հնազանդվել Նրան:
Եթե այսպես վարվենք, մենք կարող ենք հայտնել Նրա ճանապարհները, Նրա մտածելակերպը և Նրա սկզբունքները մեզ շրջապատող աղավաղված և այլասերված աշխարհում: Բացարձակ հնազանդությունը թշնամու բերդերը քանդելու և նրա հարձակումներին դիմակայելու գլխավոր միջոցն է: Նմանօրինակ հնազանդությամբ մենք կարող ենք բարձրանալ իշխանության նոր մակարդակի վրա:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

«Հնազանդվել» նշանակում է «ենթարկվել վերադասի պատվերներին կամ կարգադրություններին ըստ օրենքի պահանջների. թե՛ բարոյական, թե՛ քաղաքական. հպատակվել կառավարությանը, այլ մարդու առաջնորդությանը կամ հսկողությանը»: «Հնազանդվել» նույնպես նշանակում է «չանել այն, ինչ արգելված է»: Երբ մենք հնազանդվում ենք Աստծուն կամ այն իշխանություններին, որ Նա հաստատել է, մենք «հպատակվում ենք Նրան՝ կատարելով այն, ինչ պահանջվում է և հրաժարվում ենք այն բաներից, որ արգելված են»[1]: Կենսականորեն անհրաժեշտ է գիտակցել, որ **անկոտրում կերպով հնազանդվելու զորությունը Աստծո շնորհքի մեջ է**:

Խ 2. Հնազանդվել Աստծուն՝ նշանակում է հնազանդվել այն մարդկանց, ում Նա իշխանություն է տվել մեզ վրա՝ տանը, աշխատավայրում և ծառայության մեջ: Ինչպիսի՞ իրավիճակներում մենք չպետք է հնազանդվենք մեզ վրա դրված մարդկանց: Ուշադրությո՛ւն դարձրեք Հիսուսի կարգադրություններին և առաքյալների խոսքերին այս հատվածներում.

«[Հիսուսն] ասաց նրանց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով և քարոզե՛ք Բարի լուրը ողջ ստեղծագործությանը»»:

— *Մարկոս 16.15, NIV*

«Ուրեմն գնացե՛ք և աշակերտնե՛ր պատրաստեք բոլոր ազգերից՝ մկրտելով նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով՝ սովորեցնելով նրանց՝ պահել ամեն ինչ, որ ես պատվիրել եմ ձեզ»:

— *Մատթեոս 28.19,20, AMP*

«Եվ նրանք ետ կանչեցին առաքյալներին և պատվիրեցին նրանց՝ այլևս չխոսել կամ չսովորեցնել Հիսուսի մասին: Բայց Պետրոսը և Հովհաննեսը պատասխանեցին. «Մի՞թե կարծում եք, որ Աստված ավելի ցանկանում է, որ մենք հնազանդվենք ձեզ, քան Իրեն: Մենք չենք կարող դադարել պատմել այն հրաշալի բաների մասին, որ տեսել և լսել ենք»»:

— *Գործք 4.18-20, NLT*

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Աստված Աստված է: Քանի որ Նա Աստված է, *արժանի է իմ վստահությանը և հնազանդությանը*: Ես ոչ մի տեղ հանգիստ չեմ գտնի՝ բացի Նրա սուրբ կամքից. կամք, որն անպատմելիորեն ավելին է, քան իմ ամենալայն պատկերացումներն այն մասին, թե ինչ է Նա ծրագրում»:

— ***Էլիզաբեթ Էլլիոտ***[2]

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մենք հոգևոր աճ չենք ունենում այն ժամանակ, երբ արևը վառ շողում է կամ մեր մասին լավն են խոսում և հաճելի վերաբերմունք ցուցաբերում մեր նկատմամբ: Ո՛չ, մենք հոգևորապես աճում ենք, երբ ողջ դժոխքը հարձակվում է մեր կյանքի վրա, սակայն այդ հարձակումների ընթացքում, *միևնույն է, որոշում ենք հնազանդվել* Աստծուն:

_____

_____

_____

3. Կա՞ արդյոք ինչ-որ բան, որ Աստված խնդրել է ձեզ անել, իսկ դուք չեք արել: Կա՞ արդյոք ինչ-որ բան, որ Աստված խնդրել է ձեզ չանել, իսկ դուք անում եք: Խոնարհեցրե՛ք ձեզ Նրա առջև և խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ ձեզ ցանկացած հրահանգ, որին դուք չեք հնազանդվել: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է, խնդրե՛ք Նրա շնորհքը այդ հրահանգը կատարելու համար:

_____

_____

_____

_____

_____

Խ 4. Աստծո արքայության մեջ մենք չենք ծնվում որպես հոգևոր հասուն մարդիկ, այլ՝ որպես մանուկներ: Բնակվելով Քրիստոսում՝ մենք սկսում ենք հոգևորապես աճել Աստծո շնորհքի մեջ: Ֆիզիկական աճը տեղի է ունենում ժամանակի ընթացքում, մտավոր աճը՝ սովորելու, իսկ **հոգևոր աճը՝** չարչարանքի և հնազանդության արդյունքում:

Ա ՊԵՏՐՈՍ 4.1,2,

«Ուրեմն, քանի որ Քրիստոսը չարչարվեց մարմնով մեզ համար, ձեզ համար, զինվե՛ք նույն մտքով և մտադրությունով [համբերատար չարչարվելու, ոչ թե Աստծուն չգոհացնելու]: Որովհետև ով չարչարվում է մարմնով [ունենալով Քրիստոսի միտքը], վերջ է տվել [միտումնավոր] մեղքին [դադարել է հաճեցնել իրեն և աշխարհին, և հաճեցնում է Աստծուն], որպեսզի նա այլևս չկարողանա վատնել իր երկրային կյանքի մնացած մասը՝ապրելով [իր] մարդկային հակումներով և ցանկություններով, այլ [նա ապրում է] այն բանի համար, ինչ Աստված է կամենում»:

— AMP

«Քանի որ Հիսուսն անցավ այն ամենի միջով, որ դուք եք անցնում, և ավելի շատ բաների միջով, սովորե՛ք մտածել Նրա նման: Մտածե՛ք, որ ձեր չարչարանքները կտրում են ձեզ հին մեղավոր սովորությունից, ըստ որի դուք միշտ ձգտում եք անել ամեն ինչ ձեր ցանկությամբ: Դրանից հետո, փոխարենը տանջվեք ձեր ցանկությունների բռնակալությունից, դուք կկարողանաք ազատ ապրել՝ ձգտելով այն բանին, ինչ Աստված է ցանկանում՝ »:

— MSG

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5.8

«Թեև Հիսուսն Աստծո Որդին էր, բայց Նա հնազանդություն սովորեց այն բաներից, որ կրեց»:

— NLT

Հիսուսն Աստծո Որդին է, բայց և այնպես նա պետք է չարչարվեր, մինչև որ կարողանար սովորել, թե ինչ է իրականում նշանակում հնազանդվել Աստծուն:

— CEV

Ինչպե՞ս են այս խոսքերը բացատրում և ավելի հասկանալի դարձնում հոգևորապես աճելու սկզբունքը:

_____

_____

_____

«Երբ ես երեխա էի, խոսում էի երեխայի նման, ես հասկանում էի երեխայի նման, մտածում էի երեխայի նման, բայց երբ ես տղամարդ դարձա, մի կողմ դրեցի երեխայական բաները»:

— Ա Կորնթացիների 13.11, NKJV

Խ 5. Ուշադի՛ր կարդացեք Ա Կորնթացիների 2.15,16, 3.1-3, Եփեսացիների 4.13-15, Եբրայեցիների 5.12-14, Բ Թեսաղոնիկեցիների 1.3,4 և Հակոբոս 3.2 խոսքերը: Որո՞նք են *մարմնավոր* ու *ոչ հասուն* հավատացյալի և *հոգևոր* ու *հասուն* հավատացյալի առանձնահատկությունները: Ձեր կարծիքով՝ որի՞ն եք դուք ավելի նման, և ի՞նչն է ձեր կյանքում հաստատում դա:

Մարմնավոր, ոչ հասուն հավատացյալ…

_____

_____

_____

Հոգևոր, հասուն հավատացյալը…

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. մտածե՛ք այն խոսքերի շուրջ, որ Հիսուսն ասաց Պետրոսին Հովհաննես 21.18-ում:

Ըստ իս՝ ես ավելի _____ եմ: Սա հաստատող վկայությունը հետևյալն է.

_____

_____

_____

Բնութագիր

ՀՈՎՍԵՓ

Կյանքի տևողությունը. հարյուր տասը տարի՝ մ.թ.ա. 1915 - մ.թ.ա. 1805թթ.[3]

Զբաղվածությունը. ըստ պաշտոնի՝ հովիվ, ստրուկ, բանտի վերակացու, երկրորդ մարդը ողջ Եգիպտոսում:

Ծառայության վայրը. Քանան և Եգիպտոս

Հարազատներ. ծնողները՝ Հակոբ և Ռաքել, պապը՝ Իսահակ, եղբայրները՝ տասնմեկ եղբայր (տե՛ս անունները ստորև), մեկ քույր՝ Դինա, կինը՝ Ասանեթ, որդիները՝ Եփրեմ և Մանասե:

Դանիելին նկարագրող բառեր. հավատարիմ, փոխզիջման չգնացող, նեղող, ողորմած, զանազանող, իմաստուն, անկոտրում:

Հովսեփի անունը նշանակում է «Թող Աստված ավելացնի»: Ավելի ուշ փարավոնը փոխեց նրա անունը՝ կոչելով Փսոմփթոմփահնե, այսինքն՝ «գաղտնիքներ հայտնող»[4]: Նա Հակոբի տասնմեկերորդ որդին էր և տասնմեկ եղբայր ուներ, որոնք Իսրայելի ցեղերի իշխաններն էին: Ահա նրանց անունները՝ ըստ ծննդյան հաջորդականության. Ռուբեն, Շմավոն, Ղևի, Հուդա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն և Բենիամին: Հայրն անչափ համակրում էր Հովսեփին հիմնականում այն պատճառով, որ նա իր սիրելի կնոջ՝ Ռաքելի առաջնեկն էր: Նա այնքան էր սիրում Հովսեփին, որ որդեգրեց նրա որդիներին՝ Եփրեմին և Մանասեին՝ թույլ տալով, որպեսզի Հովսեփի տոհմը երկու բաժին ունենա Իսրայելի ժառանգության մեջ (տե՛ս Ծննդ. 48.1-6):

Հովսեփի անկոտրում հավատքը և հնազանդությունը դժվարությունների մեջ, նույնպես և երկրում տիրող սովի ժամանակ, դարձրին նրան աշխարհի ամենազորավոր կառավարիչներից մեկը: Հովսեփը հնարավորություն ստեղծեց իր հոր՝ Հակոբի և Իսրայելի բոլոր ցեղերի համար ոչ միայն ապահով լինել նաև՝ մեծապես շատանալ: Մատակարարումը և պաշտպանությունը Եգիպտոսում, որը թեև դարձավ նրանց գերության երկիրը՝ ըստ մարգարեության (տե՛ս Ծննդ. 15.13), Իսրայելը պատրաստեց պատմության հաջորդ խոշոր փուլի՝ Ելիցի համար:

Հովսեփը Եգիպտոսում իշխեց մոտավորապես **80 տարի** (տե՛ս Ծննդ. 41.46, 50.26): Կարդացե՛ք նրա կյանքի ամբողջ պատմությունը Ծննդոց 30-50 գլուխներում: Ի՞նչ կարող եք սովորել նրա կյանքից և կիրառել ձեր կյանքում:

6. Հովսեփի հայրն անչափ համակրում էր նրան, իսկ Աստված տեսիլք տվեց, որ նա իշխելու է կյանքում: Սակայն եղբայրները, ատելով նրան, ստրկության վաճառեցին: Տարիներ շարունակ նա ծառայեց Պետափրեսին, իսկ

հետո բանտ նետվեց չգործած հանցանքի համար: Իսկ ձեզ երբևէ անարդար վերաբերվե՞լ են, ինչպես Հովսեփին:

_____

_____

_____

7. Ծառայելով Պետափրեսին՝ Հովսեփը որոշեց հնազանդվել Աստծուն և մերժեց՝ Պետափրեսի կնոջ հետ սիրով զբաղվելու առաջարկը: Արդյունքում նա բանտ գցվեց: Իսկ ձեր կյանքում եղե՞լ է դեպք, երբ, հնազանդվելով Աստծուն, պատժվել եք: Թշնամին հարձակվե՞լ է ձեզ վրա՝ մեղադրելով Աստծուն և վիրավորանքներ ուղղելով Նրան: Արդյո՞ք դուք գիտակցում էիք, որ, եթե վարվում եք արդարությամբ, ուրեմն ծառայում եք Աստծուն: Ուշադի՛ր մտորեք Աստծո Խոսքում գրված այս ճշմարտությունների շուրջ:

«Ես գիտեմ այն ծրագրերը, որ ունեմ ձեզ համար,- ասում է Տերը,- դրանք ծրագրեր են խաղաղության, ոչ թե դժբախտության համար. ծրագրեր, որոնք ձեզ տալիս են հուսալի ապագա»:

— Երեմիա 29.11, GW

«Որքա՜ն թանկ են Քո մտքերն իմ մասին, ո՜վ Աստված: Դրանք անկարելի է հաշվել: Ես չեմ կարող նույնիսկ թվել. դրանք ավելի շատ են, քան բոլոր ավազահատիկները: Եվ երբ արթնանում եմ, Դու դեռ ինձ հետ ես»:

— Սաղմոս 139.17,18, NLT

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Ցանկացած փորձության մեջ, ցանկացած ծանր իրավիճակում դուք մենակ և անօգնական չեք, դուք զոհ չեք: Կա մի խաչափայտ, որ Գողգոթայի Ամենակարող Տերը ցույց է տալիս ձեզ: Ինչպիսի փորձություն կամ գայթակղություն էլ լինի, այն ավելին չէ, քան դուք կարող եք կրել: Այն տանելի է, և դուք կարո՛ղ եք դիմանալ դրան: Ինչպես Հովսեփը, դուք նույնպես կարող եք իմանալ. «Թեպետ դուք ինձ դեմ չարություն խորհեցիք, բայց Աստված այն լավի դարձնել խորհեց, որ աներ այսօրվա եղածի պես, այսինքն որ շատ ժողովուրդ ապրեցներ» (Ծննդոց 50.20)»:

— Քեյ Արթուր[5]

«Այն ամենը, ինչ Աստված անում է, ճիշտ է. սա Նրա արած սիրո գործերի ապրանքանիշն է: Աստված ներկա է և լսում է նրանց, ովքեր աղոթում են, նրանց, ովքեր աղոթում և լրջորեն են վերաբերվում իրենց աղոթքին: Նա անում է լավագույնը նրանց համար, ովքեր վախենում են Իրենից. լսում է, երբ նրանք կանչում են և փրկում է նրանց: Աստված բոլոր նրանց հետ է, ովքեր սիրում են Իրեն»:

— Սաղմոս 145.17-20, MSG

«Իմ մտքերն ընդհանրապես նման չեն ձեր մտքերին,- ասում է Տերը,- և Իմ ճանապարհները շատ ավելի են գերազանցում ցանկացած բան, որ դուք կարող եք պատկերացնել: Որովհետև ինչպես որ երկինքներն են ավելի բարձր, քան երկիրը, այնպես էլ Իմ ճանապարհներն են ավելի բարձր, քան ձեր ճանապարհները, և Իմ մտքերն ավելի բարձր են, քան ձեր մտքերը»:

— Եսայի 55.8,9, NLT

«Օ՜, որքան հրաշալի Աստված ունենք: Որքա՜ն մեծ է Նրա իմաստությունը և գիտությունը և հարստությունները: Որքա՜ն անհնար է մեզ համար հասկանալ Նրա որոշումները և Նրա գործելակերպերը»:

— Հռոմեացիների 11.33, TLB

Ինչպե՞ս կարող են այս հատվածներն օգնել ձեզ՝ իրավիճակին նայել ավելի հույս ներշնչող տեսանկյունից:

_____

_____

Մտածե՛ք այս մասին.

Դոկտոր Վիկտոր Է. Ֆրանկլը, ով եղել է Աուսվիցի համակենտրոնացման ճամբարում և այլ նացիստական բանտերում, գրել է այս դիտարկումը հիտլերյան ճամբարների կյանքից.

«Մենք՝ համակենտրոնացման ճամբարներում ապրողներս, կարող ենք հիշել նրանց, ովքեր քայլում էին բարաքներով և մխիթարում ուրիշներին՝ բաժանելով իրենց վերջին կտոր հացը: Նրանք քիչ էին, սակայն բավական՝ *ապացուցելու համար, որ մարդուց կարելի է խլել ամեն ինչ՝ բացի մի բանից, որը մարդու ազատություններից վերջինն է՝ ստեղծված իրավիճակում իր վերաբերմունքն ընտրելը*»[6]:

8. Այն ժամանակ, երբ Աստված Հովսեփին երազով ցույց տվեց, որ նա պետք է իշխի կյանքում, նա ոչ հասուն, մարմնավոր բնավորության գծեր ուներ, որոնք պետք է մահանային, որպեսզի Աստծո ծրագիրն իրականանար: Միգուցե դուք փորձության մեջ եք և զգում եք, որ ներքուստ մահանում եք: Եթե այո, ապա ձեր բնավորության ո՞ր գծերն է Աստված փորձում մեռցնել, որպեսզի կարողանա Իր ծրագիրը կյանքի կոչել: Ինչպե՞ս կարող եք ավելի համագործակցել Նրա հետ:

Իմ բնության ոչ հասուն գծերը, որոնք պետք է մահանան, հետևյալն են…

_____

_____

Ես հավատում եմ, որ կարող եմ ավելի համագործակցել Աստծո հետ, եթե…

_____

_____

_____

Մտածե՛ք այս մասին.

Եթե Հովսեփը վրեժ լուծեր և սպաներ իր եղբայրներին, ապա տեսեք, թե ով չէր ծնվի.

Ղևիի ակնառու ժառանգները՝ Ահարոնը, Մովսեսը, Եզրասը և Հովհաննես Մկրտիչը:

Բենիամինի ակնառու ժառանգները՝ Սավուղը, Եսթերը և Պողոս առաքյալը:

Հուդայի ակնառու ժառանգները՝ Քաղեբը, Դավիթը, Սողոմոնը և Հիսուս Քրիստոսը:

Ի՞նչ կլիներ այսօր, եթե այս մարդիկ չծնվեին:

ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մեզանից շատերը հասկանում են, որ *բնավորությունը* «մարդու եզակի հատկանիշներն են, որոնք առանձնացնում են նրան մյուսներից. ամենից հաճախ գնահատանքի և հարգանքի են արժանանում դրական հատկանիշները»: Հետաքրքիր է, որ հունարեն «բնավորություն» բառը բառացիորեն նշանակում է «փորագրել, հատել կամ քանդակել»[7]: Ունենալ Քրիստոսի բնավորությունը նշանակում է, որ Նա կնքել կամ դրոշմել է մեզանում Իր անձը: Լինելով Նրա ներկայության մեջ և անցնելով կյանքի դժվարություններով՝ Նրա պատկերը *փորագրվել, հատվել* կամ *քանդակվել* է մեր անհատականության վրա:

9. Ե՛տ նայեք այն փորձություններին, որոնցով Աստված անցկացրել է ձեզ: Ինչպիսի՞ ոչ հասուն կամ մեղսալի բնավորության գծեր է Նա հեռացրել ձեզանից, երբ դուք որոշում եք կայացրել հնազանդվել չարչարանքների ժամանակ: Ինչպիսի՞ մտածելակերպեր և վարքագծեր են եղել, որոնք բերդեր էին ձեր կյանքում, բայց այլևս գոյություն չունեն: Արդյո՞ք, երբ հիշում եք այն մասին, թե ինչ է Աստված արել ձեր կյանքում, դուք զորանում եք՝ ցանկանալով առաջ գնալ:

Անցած փորձություն	*Ոչ հասուն, մեղսալի մտածելակերպեր և վարքագծեր, որ Աստված հեռացրել է*	*Ինչպե՞ս է Աստված ձևավորել ինձ և ավելի նման դարձրել Քրիստոսին*

Ես զորանում եմ առաջ գնալու համար՝ հիշելով այն, ինչ Աստված արել է, որովհետև…

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մենք պետք է նայենք դժվարություններին ճիշտ տեսանկյունից: Դժվարություններն Աստծուց չեն, սակայն Աստված թույլ է տալիս դրանք: Դժվար պահերին ճիշտ վարք ցուցաբերելը շահավետ է մեզ համար: Դժվարին իրավիճակները նախատեսված են տեղափոխելու մեզ այնտեղ, որտեղ մենք կզբաղեցնենք մեր իշխանական դիրքը: Դժվարությունների ժամանակ ձեր հնազանդությունն Աստծո Խոսքին՝ *կկատարարելագործի, կհաստատի, կզորացնի* և *կհիմնի* ձեզ՝ ձեր կոչումը կատարելու համար:

10. Դուք պատրա՞ստ եք բարձրանալ ձեր ներկա իրավիճակից վեր: Այդ դեպքում, անբարենպաստ պայմանների ժամանակ, փոխարենը Աստծուն հարցնեք, թե՝ «Ինչո՞ւ է սա տեղի ունենում», սկսե՛ք հարցնել. «Ի՞նչ պետք է անեմ, Տե՛ր»: Կարո՞ղ եք փորձությունն ընկալել որպես քայլ դեպի առաջ, ոչ թե դիտարկել այն որպես արգելք: Աղոթե՛ք և իմաստություն խնդրեք Աստծուց: Գրի առեք այն, ինչ Նա ասում է ձեզ:

ՉՈՐՍ ԴԱՏԱՐԿ ՏՈՂ

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«**«Տիրոջ բոլոր ճանապարհները ողորմություն են և ճշմարտություն»** (Սաղմոս 25.10): Վերջերս ես մտորում էի այս խոսքի շուրջ և հայտնաբերեցի, որ այն սնուցում է իմ հոգին: «Բոլոր» բառը չի նշանակում «բոլորը՝ բացի այն ճանապարհներից, որոնցով ես քայլում եմ հիմա» կամ «գրեթե բոլորը՝ բացառությամբ այս դժվար և ցավոտ ճանապարհի»: «Բոլորը» պետք է նշանակի՝ բոլորը: Այսպիսով, ձեր ճանապարհն իր անբացատրելի վշտերով կամ խառնաշփոթ վիճակներով, և իմը՝ իր սուր քարերով և տատասկներով, և մեր ճանապարհները միասին՝ իրենց անբացատրելի խոչընդոտներով և անհասկանալի իրադարձություններով Նրա ճանապարհներն են, որոնցում Նա կհայտնի որ սիրող և հավատարիմ է: Ուրիշ ոչինչ և ոչինչ՝ սրանից պակաս»:

— Էմի Քարմայքլ[8]

Ճաքարթակի ԿՈՉ

Մտաբերե՛ք որևէ կարևոր մարդու ձեր կյանքում, միգուցե՝ ընտանիքի անդամի, ում հետ խաթարված փոխհարաբերություններ ունեք: Հնարավոր է՝ դուք թույլ եք տվել, որպեսզի վիրավորանքները և վեճերը վերջնականորեն խափանեն ձեր շփումը: Եղե՛ք անկոտրում՝ փորձելով հաշտվել այդ մարդու հետ: Աղոթե՛ք և շնորհք խնդրեք, որպեսզի հրաժարվեք անցյալի հիասթափությունից կամ վիրավորանքից: Հիշե՛ք, թե ինչպես է Աստված վերաբերվում հաշտությանը և ջանք գործադրեք, որպեսզի սիրով վերականգնեք շփումն այդ մարդու հետ:

Օր 1. Ի՞ՆՉ ԵՆ ԲԵՐԴԵՐԸ

«Մենք մարմնավորապես չենք պատերազմում: Որովհետև մեր պատերազմի զենքերը մարմնավոր չեն, այլ՝ զորավոր Աստծով՝ ***բերդեր*** *քանդելու համար»:*

— Բ Կորնթացիների 10.3,4, NKJV

Մենք հոգևոր պատերազմի մեջ ենք, և միայն Աստծուց տրված հոգևոր զենքերը, որոնք զորացված են Իր շնորհքով, մեր կյանքում կկործանեն թշնամու գործերը՝ ներառյալ բերդերը: Ի՞նչ են բերդերը:

ԲԵՐԴ

«Բերդ» բառը հունարեն *«օխուրոմա»*-ն է, որը նշանակում է «պարսպապատել՝ ինչ-որ բան ապահով պահելու համար»: Այս բառը նույնպես նշանակում է «ամրոց»[9]: Բ Կորնթացիների 10.4-ում բերդերը նշանակում են «մտքի ամրոցներ՝ փաստարկներ կամ դատողություններ, որոնք թշնամին զարգացնում և ամրացնում է մեր մտքում»[10]: Հետաքրքիր է, որ *օխուրոմա* բառը Նոր Կտակարանի ժամանակներում նշանակում էր *«բանտ»*: Այսպիսով, բերդերը և՛ ամրոցներ են, և՛ բանտեր. դրանք ներս չեն թողնում ճշմարտությունը և դուրս չեն թողնում սուտը: Բերդերը մտածելակերպեր են, որոնք այն աստիճան են տպավորված մեր մտքում, որ ազդում են մեր կյանքի որոշ բնագավառների վրա և վերահսկում են դրանք[11]:

Եվս մեկ անգամ ուշադրությամբ կարդացեք բերդ բառի սահմանումը: Ձեր կյանքի ո՞ր բնագավառներն են համապատասխանում այս նկարագրությանը: Որտե՞ղ եք դուք *բնականորեն հակված՝* հավատալ, խոսել և գործել թշնամու կամքին համաձայն:

_____

Ինչպե՞ս են այդ բերդերը դրսևորվում ձեր կյանքում որպես *ամրոցներ*: Արդյո՞ք դրանք հեռացրել են ձեզ շատ մարդկանցից և թույլ չեն տվել օգտագործել որոշ հնարավորություններ:

_____

Ինչպե՞ս են այդ բերդերը դրսևորվում ձեր կյանքում որպես *բանտեր*: Արդյո՞ք դրանք խանգարել են ձեզ իրականացնել ձեր կոչումը և իշխել կյանքում:

_____

Այն նեղությունները *(թլիփսիսը)*, որ Տերը թույլ է տալիս մեր կյանքում, ճնշումներ են գործադրում մեր կյանքի որոշ բնագավառներում՝ բացահայտելու համար այն ամրությունները, որ մեր մտքում են: Ճնշման պահին դուրս է գալիս այն, ինչ մեր ներսում է: Երբ ողջ դժոխքը հարձակվում է մեր կյանքի վրա, մեր մտքերը, գործերը և խոսքերը ցույց են տալիս, թե որքանով մեր բնավորությունը չի համապատասխանում Աստծո բնավորությանը: Դժվարությունների միջոցով Աստված ձևավորում է մեզ՝ դարձնելով ավելի նման Քրիստոսին: Նա ցույց է տալիս այնպիսի բնավորության գիծ, որ պետք է փոխվի, որպեսզի մենք մուտք գործենք Նրա գերագույն, զորավոր իշխանության մեջ: Ահա նեղությունների դրական արդյունքը:

Օր 2. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ԲԵՐԴԵՐԸ

*«Ո՛չ էլ **տեղ տվեք** սատանային»:*

— Եփեսացիների 4.27, KJV

Ինչպե՞ս են բերդերը կառուցվում. թշնամուն *տեղ տալով*: Հունարեն «տեղ» բառը բառացիորեն նշանակում է «տարածություն, դիրք, ժամանակավորապես վարձակալված տարածք»[12]: Փոխաբերական իմաստով այն նշանակում է «հնարավորություն, իշխանություն կամ գործելու առիթ»: Երբ Աստված ասում է՝ տեղ մի՛ տվեք թշնամուն, Նա նկատի ունի. «Հնարավորություն մի՛ տվեք սատանային՝ ձեր կյանքում իր բնավորությունը ձևավորելու համար: Տեղ մի՛ տվեք նրան ձեր մտքում»:

Ամեն անգամ, երբ թշնամին բացասական, անաստված միտք է տալիս մեզ, նա փորձում է դիրք գրավել մեր մտածելակերպի մեջ: Նախ՝ մի փոքր կասկած, հետո՝ անհանգստություն, մեղադրանք որևէ մեկի հանդեպ կամ նախանձ… Սկզբում նա ոտնատեղ է շահում, որը բավական է կանգնելու համար, հետո՝ ամբողջ մի հենակետ, և ի վերջո բերդ է կառուցում: Ընդունելով նրա ստերը՝ մենք տեղ ենք տալիս նրան: Եթե չմերժենք դրանք, ապա նա կկառուցի իր ամրոցը մեր մտքում և կիշխի մեր կյանքի որոշ բնագավառներում:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Իրական սպառնալիքը մեր անբարենպաստ հանգամանքները չեն, այլ՝ սխալ համոզմունքները և մտքերը, որոնք փորձում են սողոսկել դժվարությունների ժամանակ: Մենք պետք է անկոտրում լինենք մեր հավատքի մեջ և հաստատակամ՝ ընդդիմանալու ցանկացած տրամաբանության կամ դատողության, որոնք հակառակ են Աստծո Խոսքին:

Իսկ հիմա խորհե՛ք. ինչպե՞ս է սատանան շարունակաբար գրոհում ձեր մտքի և զգացմունքների բնագավառ:

Սատանայի բերդը _____ է:
Սատանան բերում է հետևյալ մտքերը.
_____
_____

Սատանայի բերդը _____ է: Սատանան բերում է հետևյալ մտքերը. _____

Սատանայի բերդը _____ է: Սատանան բերում է հետևյալ մտքերը. _____

Քննե՛ք՝ ի՞նչ է կատարվում, երբ այդ մտքերը գալիս են: Ինչպիսի՞ հանգամանքներ են ձեր կյանքում: Ի՞նչ եք դուք կարդում, դիտում կամ լսում: Ո՞ւմ հետ եք շփվում: Խնդրե՛ք Աստծուն, որպեսզի զանազանություն պարգևի և սովորեցնի՝ ինչպե՞ս պաշտպանել ձեր միտքն ապագայում:

_____
_____

Հասկացե՛ք՝ եթե չեք մերժում թշնամու բերած մտքերը, ապա լռությամբ ընդունում եք: Չկա չեզոք գոտի. սատանան եկել է սպանելու, գողանալու և կործանելու համար: Սակայն դուք հարկադրված չեք լսել նրան: Աստծո շնորհքով դուք ստացել եք Տիրոջ սպառազինությունը՝ թշնամուն արդյունավետ կերպով պարտության մատնելու համար: Երբ ճանաչեք և հակառակվեք նրան, դուք կհաղթեք պայքարում:

Օր 3. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՔԱՆԴՈՒՄ ԲԵՐԴԵՐԸ

«Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ՝ Աստծով զորավոր՝ բերդեր քանդելու. խորհուրդներ ենք քանդում, և ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ, և գերի ենք բռնում ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար»:

— Բ Կորնթացիների 10.4,5

Անմիջապես բերդ հայտնաբերելիս քանդե՛ք այն Աստծո շնորհքով: Ենթադրենք՝ ձեր կյանքում *վախի* բերդ եք հայտնաբերել: Նախ՝ ապաշխարեք, որ տեղ եք տվել սատանային վախի միջոցով: Ապաշխարել նշանակում է լիովին մտափոխվել և ընդունել այն, ինչ Աստված ասում է՝ մերժելով մեր փորձառությունը կամ համոզմունքները: Ապաշխարելով և ընդունելով այն, ինչ Աստված է ասել, մեր միտքը նորոգվում է (Հռոմեացիների 12.2):

Հաջորդը՝ պետք է **խոսքերով** կործանեք վախի բերդը: Հենց այսպես եք *ազատագրում այն զորությունը, որն անմիջապես* «ձեր քթի տակ» է՝ կյանքի և մահվան զորությունը, որ ձեր խոսքերի մեջ է (Առակաց 18.21): Դուք կարող եք ասել. «Հիսուսի անունով, ինձ չի՛ տրվել վախի ոգի (Բ Տիմոթեոս 1.7): Վախի ոգի, հեռացի՛ր իմ կյանքից: Դու իշխանություն չունե՛ս իմ կյանքում: Աստված տվել է ինձ *ողջ* իշխանությունը՝ քեզ վրա (Ղուկաս 10.19), և այժմ ես գործադրո՛ւմ եմ այն»: Նմանօրինակ հակառակությունը կարելի է օգտագործել մտքում կառուցված ցանկացած բերդի դեպքում՝ թե՛ վախի, թե՛ զայրույթի, թե՛ վիճաբանությունների դեպքում և այլն:

Կորնթացիների երկրորդ թղթում գրված է, որ մենք «***խորհուրդներ*** ենք քանդում, և ամեն ***բարձրություն***, որ գոռոզանում է»: «Քինգ Ջեմյս» թարգմանության մեջ օգտագործվում է «***երևակայություններ***» բառը: Ինչպիսի՞ մտածելակերպեր են փորձում ձևավորվել ձեր ներսում և գրավել Աստծո Խոսքի տեղը:

_____

_____

Հիշե՛ք. բերդերը մտքի ամրոցներ կամ բանտեր են, որոնք *ավելի են ամրանում* թշնամու ստերով: Աղոթե՛ք և խնդրե՛ք Աստծուն ցույց տալ այն ազդեցությունները, գործերը կամ փոխհարաբերությունները, որ ամրացնում են ձեր ներսի բերդերը. դուք պետք է *դե՛ն գցեք* այդ ծանրությունները: Գրե՛ք, թե ինչ է Նա հայտնում:

_____

_____

Աստվածաշնչյան ո՞ր խոսքերն են ուղղակիորեն հակառակվում բերդերին, որոնց դեմ դուք պայքարում եք: Գրե՛ք և պահե՛ք դրանք ձեր սրտում ու դավանե՛ք թշնամու դեմ:

_____

_____

_____

Եթե չգիտեք որևէ խոսք Աստվածաշնչից, որը հակառակվում է թշնամու ստերին այն բնագավառներում, որտեղ բերդեր ունեք, ապա լրջորեն սերտե՛ք Աստծո Խոսքը և գտե՛ք համապատասխան հատվածներ: Օգտագործե՛ք Աստվածաշնչի համաբարբառ կամ որոնեք հատվածները ինտերնետային կայքերում՝ ըստ հիմնաբառերի:

Օր 4. ԿԱՌՈՒՅԵ՛Ք ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԴԵՐ

*«Կրկի՛ն **շինիր** ինձ Քո Խոսքով: Շրջափակի՛ր այն ճանապարհը, որ տանում է ոչ մի տեղ. շնորհի՛ր ինձ Քո պարզ հայտնությունը»:*

— Սաղմոս 119.28,29, MSG

Այն բանից հետո, երբ դուք որևէ բերդ հայտնաբերեցիք և իշխանությամբ քանդեցիք դրա զորությունը, կա ևս մեկ շատ կարևոր քայլ. Դուք պետք է **լցնեք այն տարածքը**, որ թշնամին անցյալում զբաղեցնում էր: Հիսուսը բացատրում է սա Մատթեոսի 12.43-45-ում. «Երբ որևէ չար ոգի թողնում է ինչ-որ մեկին, գնում է անապատ՝ հանգիստ փնտրելով, բայց չի գտնում: Հետո ասում է. «Ես կվերադառնամ այն մարդու մոտ, որից դուրս եկա»: Նա վերադառնում և գտնում է իր նախկին տունը դատարկ, ավլած և կարգի բերված: Հետո այդ ոգին գտնում է յոթ այլ ոգիներ, որոնք իրենից ավելի չար են, և բոլորը մտնում են այդ մարդու մեջ ու ապրում այնտեղ: Եվ այդ մարդը հայտնվում է ավելի վատ վիճակում, քան նախկինում էր» (NLT):

Սրանից խուսափելու համար մենք պետք է աղոթենք և խնդրենք Աստծուն՝ կանգնեցնել արդարության բերդ թշնամու կառույցի փոխարեն: Մենք պետք է Աստծո ներկայության և Նրա Խոսքի հաստատուն սննդակարգ պահպանենք՝ հատկապես սնվելով այն խոսքերով, որոնք հակառակվում են՝ մեզ գերի բռնող, աղավաղված մտածելակերպին: Յուրաքանչյուր խոսքը, որ մենք դնում ենք մեր սրտում, դառնում է քար, որով Սուրբ Հոգին սկսում է կառուցել:

Ուշադի՛ր կարդացեք Փիլիպեցիների 1.9-11, Մատթեոս 4.4, Հովհաննես 6.35,48-51, Կողոսացիների 3.16, Ա Պետրոս 2.2 և Երեմիա 15.16 խոսքերը: Ի՞նչ են ձեզ ասում այս խոսքերը արդարության բերդեր կառուցելու մասին:

_____

_____

Ըստ Հիսուսի՝ Մատթեոսի 7.24-27-ում գրված խոսքերի, ուրիշ ի՞նչ է կենսականորեն անհրաժեշտ հաջող ձևով կառուցելու համար:

_____

_____

Առնչվող սուրբգրային հատված. Հակոբոս 1.22-25:

*«Հերկե՛ք խոպան հողը: **Արդարություն տնկեք**, և հնձեք այն պտուղը, որ ձեր հավատարմությունը կբերի Ինձ համար»: Ժամանակն է փնտրել Տիրոջը: Երբ Նա գա, արդարություն կանձրևի ձեզ վրա»:*

— Ովսե 10.12, GW

Արդյո՞ք դուք սնվում եք այնպիսի բանով, որ փչացնում է ձեր ախորժակը:

_____

_____

Ինչպիսի՞ գործնական միջոցներ է կարելի կիրառել ձեր հոգևոր ախորժակն Աստծո ներկայության և Խոսքի հանդեպ գրգռելու համար:

_____

_____

Օր 5. ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԲԵՐԴԸ ՎԱՐՁԱՏՐՈՒՄ Է ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

«Եթե դուք հոժար եք և հնազանդ, ապա կուտեք երկրի լավագույնը»:

— Եսայի 1.19, NIV

Աստծուն հնազանդվելը թշնամուն հակառակվելու ամենաազդեցիկ միջոցն է:

Կարդացեք Ա Հովհաննես 3.24, Մատթեոս 12.50, Ելից 19.5, Երկրորդ Օրինաց 11.8,9 և Գ Թագավորաց 3.14 խոսքերը: Անվանեք այս խոսքերում գրված օրհնությունները, որոնք տրված են՝ Աստծուն հնազանդվելու համար:

_____

_____

Առնչվող սուրբգրային հատված. Երկրորդ Օրինաց 28.1-14

Ըստ Հովհաննես 14.23, Ա Հովհաննես 5.3 և Բ Հովհաննես 6-րդ խոսքերի՝ ի՞նչ է ցույց տալիս ձեր հնազանդությունը:

_____

Եթե մենք հնազանդվենք Աստծուն չարչարանքի ժամանակ, ապա օրհնված կլինենք: Մտորե՛ք այս խոստումների շուրջ: Ինչպե՞ս են դրանք դրդում ձեզ՝ հնազանդվել Տիրոջը:

«Կարո՞ղ է արդյոք որևէ մեկը վնաս հասցնել ձեզ պատրաստակամորեն բարի գործեր անելու համար: Նույնիսկ, եթե դուք հարկադրված լինեք չարչարվել բարի գործերի պատճառով, Աստված կօրհնի ձեզ: Այնպես որ դադարե՛ք վախենալ և մի՛ անհանգստացեք այն բանի համար, թե ինչ կարող են անել մարդիկ»:

— Ա Պետրոս 3.13,14, CEV

«Ընկերնե՛ր, երբ կյանքն իսկապես դժվարանում է, մի՛ եզրակացրեք, որ Աստված չի գործում: Փոխարենը՝ ուրա՛խ եղեք, որ գտնվում եք հոգևոր թեժ կետում՝ վերապրելով այն, ինչ Քրիստոսը: Սա հոգևոր զտման ընթացք է, և փառքն ընդամենը մի փոքր է հեռու: Այնպես որ ուրա՛խ եղեք, երբ հայհոյվում եք քրիստոնյա լինելու համար, որովհետև այդ դեպքում Աստծո փառավոր Հոգին հանգչում է ձեզ վրա»:

— Ա Պետրոս 4.12-14, MSG, NLT

«Իր բարությամբ Աստված կանչեց ձեզ Իր հավիտենական փառքին հաղորդակից լինելու Քրիստոս Հիսուսի միջոցով: Անպես որ այն բանից հետո, երբ մի փոքր չարչարվեք, Նա կվերականգնի, կաջակցի և կզորացնի ձեզ և կդնի հաստատ հիմքի վրա»:

— Ա Պետրոս 5.10, NLT

_____

_____

Կյանքի ո՞ր բնագավառներում է դժվար՝ հնազանդվել Աստծուն: Աղոթե՛ք և խնդրե՛ք Տիրոջը՝ ցույց տալ պատճառները: Խնդրե՛ք Նրան հայտնել Իր տեսանկյունը և համապատասխան քայլերը, որ ակնկալում է ձեզանից: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է ձեզ:

_____

Օր 6. ՄԻ՛ ՎԻԺԵՑՐԵՔ ՁԵՐ ԵՐԱԶԱՆՔԸ

*«Հետաձգված հույսը տկարացնում է սիրտը, բայց իրականացած **երազանքը** կյանքի ծառ է»:*

— Առակաց 13.12, NLT

Արդյո՞ք դուք հղիացել եք Աստծուց տրված երազանքով. ինչպես կինն է հղիանում իր ամուսնու հետ մտերիմ փոխհարաբերություն ունենալիս, այնպես էլ մենք ենք հղիանում աստվածային երազանքներով, երբ մտերիմ շփում ենք ունենում Քրիստոսի հետ: Նա սիրում է ձեզ և ցանկանում է նոր բաներ ծնել ձեր կյանքում և ձեր միջոցով: Ձեր կոչմանը հասնելու ճանապարհն անկոտրում *հավատքն* է Աստծո խոստումների հանդեպ: Եթե հավատաք այն բանին, որ Նա ասել է ձեզ Իր Խոսքում և Իր Հոգով, նույնիսկ դժվարության մեջ, ապա այդ երազանքները կիրականանան:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Երբ ողջ դժոխքը հարձակվում է ձեզ վրա և թվում է, թե ամեն ինչ սխալ է՝ կանգո՛ւն մնացեք: Կարևոր չէ, թե քանի շաբաթ կամ ամիս է անցել. կանգո՛ւն մնացեք: Այն ամենից հետո, երբ անեք անհրաժեշտ ամեն ինչ, կանգո՛ւն մնացեք: **Կանգնե՛ք ճշմարտության վրա**, որովհետև ճշմարտությունը դիմանում է ժամանակի փորձությանը: Ո՛չ մի տղամարդ, ո՛չ մի կին և ո՛չ մի դև չի կարող հեռացնել ձեզ Աստծո կամքից: Ձեր ընթացքը միմիայն Աստծո ձեռքերի մեջ է:

Արդյո՞ք Աստծո տված որևէ երազանք անհասկանալի է ձեր ընտանիքի անդամների կամ ընկերների համար: Կարճ նկարագրեք այն, ինչ Աստված տվել է ձեզ, ներառյալ այն խոսքերը, որ Նա հաստատել է ձեր կյանքում:

Ահա այն երազանքը և հաստատությունները, որ Աստված տվել է ինձ.

_____

_____

Ուշադի՛ր կարդացեք Եբրայեցիների 10.35-39-ը և Հակոբոս 1.3,4-ը: Ինչո՞ւ է ձեր երազանքը հետաձգվում: Ի՞նչ է Աստված ձևավորում ձեր մեջ:

_____

_____

Միայն մեկ մարդ կարող է խափանել ձեր կոչումը. այդ մարդը դո՛ւք եք: Մեծագույն սպառնալիքը ձեր երազանքի համար անհավատությունն է: Իսրայել ժողովուրդը չմտավ Խոստման երկիր հենց անհավատության պատճառով: Արդյո՞ք դուք տեղ եք տվել անհավատությանը: Եթե այո, ապա ինչպե՞ս:

_____

_____

Եթե Աստված ինչ-որ բան է խոստացել ձեզ, *այն կատարվելու է*: Հարցը հետևյալն է. արդյո՞ք դուք պատրաստ եք: Իր կյանքի շրջադարձային պահերին Հովսեփը ժամանակ չուներ «մի լավ աղոթելու համար», որպեսզի լսեր Աստծուց: Նա պետք է մշտապես *պատրաստ* լիներ: Ի՞նչ եք անում, որ պատրաստ լինեք այն ժամանակ, երբ Աստված գործի ձեր կյանքում: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի սնուցեք և պաշտպանեք ձեր երազանքը, մինչև այն ծնվի:

_____

_____

Ունեցե՛ք ձեր «երազանքի օրագիրը»՝ պարբերաբար գրառելով, թե ինչպես է այն զարգանում: Այս գրառումները կխրախուսեն և կհիշեցնեն ձեզ Աստծո հավատարմության մասին ապագայում:

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Թշնամուն հակառակվելու ամենաարդյունավետ ձևը հետևողական հնազանդությունն է: Երբ հնազանդվում եք Աստծուն փորձությունների ժամանակ, ձեզանում ձևավորվում է Քրիստոսի բնավորությունը: Բացարձակ հնազանդությունը նաև անաստված բերդերը քանդելու հիմնական նախապայմանն է: Այն կարողություն է տալիս ձեզ իշխանության ավելի բարձր դիրքեր զբաղեցնել Աստծո արքայության մեջ:

Նշումներ

(1) Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարանի» առաջին հրատարակություն* (1828թ.), պատճենման միջոցով վերահրատարակված «Foundation for Americal Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո՝ Կալիֆոռնիա, 2000թ.): (2) *«Քրիստոնեական մեջբերումներ վստահության մասին»* (վերցրած 8/13/11, http://dailychristianquote.com/dcqtrust.html կայքէջից): (3) *«Life Application Bible»* հեղ. իրավունքները՝ 1988, 1989, 1990, 1991 «Tyndale House Publishers, Inc.» Ուիտոն՝ Իլինոյս, 60189: Բոլոր իրավունքները պաշտպանված են: («New International Version» հրատարակություն, տարեթվեր՝ Աստվածաշնչյան և Համաշխարհային իրադարձությունների ժամանակագրության մեջ՝ անմիջապես Ծննդոցից առաջ): «New International Version» հրատարակությունը համատեղ հրատարակվում է «Tyndale House Publishers, Inc.» և «Zondervan Publishing House»-ի կողմից: (4) *«Word in LIfe™ Study Bible»*, հեղ. իրավունքները՝ 1993, 1996 «Thomas Nelson Inc.»-ի կողմից: Օգտագործված է ըստ թույլտվության «New King James Version», էջ 80: (5) *«Մեջբերումներ Քեյ Արթուրից»* (վերցրած 8/13/11, http://dailychristianquote.com/dcqarthur.html կայքէջից): (6) *«Պատմություններ սրտի համար»*, կազմված էլիս Գրեյի կողմից (Սիսթերս՝ Օրեգոն. «Multnomah Publishers, Inc.», 1996թ.) «Ընտրություն», էջ 66: (7) Տե՛ս Նշում 1: (8) *«Մեջբերումներ Էմի Քարմայքլից»* (վերցրած 8/13/11, http://dailychristianquote.com/dcqcarmichael.html կայքէջից): (9) Սթրոնգի *«Աստվածաշնչի լիակատար համաբարբառ»*, Ջեյմս Սթրոնգ՝ Իրավագիտության և Աստվածաբանության դոկտոր (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishers», 1990թ.): (10) Թայերի *«Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան»*, Ջոզեֆ Հ. Թայեր (Grand Rapids, MI: «Baker Book House Company», 1977թ.) էջ 471: (11) Հատվածն օգտագործված է Ռիկ Ռենների *«Հունարենի գանձերը»* գրքից (Տալսա՝ Օկլահոմա. «Teach All Nations», 2003թ.) էջեր 918,919: (12) Տե՛ս Նշում 9: (13) Տե՛ս Նշում 10, էջ 628:

«Արդար մարդու ջերմեռանդ (զգացմունքային և շարունակական) աղոթքն արձակում է անասելի զորություն [գործողության մեջ]»:

— Հակոբոս 5.16, AMP

Գլուխ 11

ԱՆԿՈՏՐՈՒՄ ԱՂՈԹՔ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 11-րդ դասից և «Անկոտրում հոգի» գրքի 15-րդ գլխից:

1. Աղոթքն անկոտրում կյանքի անբաժանելի մասն է: Այն առանձին գործողություն չէ, մեկ այլ կյանքի ոճ: Ահա թե ինչու է Ա Թեսաղոնիկեցիների 5.17-ը պատվիրում մեզ «անդադար աղոթք անել»: Կարճ նկարագրեք աղոթքի արժեքը և կարևորությունը ձեր կյանքում:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Աղոթքը քրիստոնեական կյանքի ակունքն է, քրիստոնյայի փրկարար պարանը: ...Սատանայի գլխավոր մարտավարությունն ընդդեմ Աստծո ժողովրդի մշտապես եղել է հետևյալը. նա շշնջացել է. «Մի՛ կանչեք, մի՛ խնդրեք, կախված մի՛ եղեք Աստծուց՝ մեծ բաներ անելու համար: Դուք կհաջողվեք, եթե պարզապես հենվեք ձեր խելամտության և ուժերի վրա»: Ճշմարտությունն այն է, որ սատանան չի սարսափում մեր մարդկային ջանքերից և արժանիքներից: Բայց նա գիտի՝ իր արքայությունը վնաս է կրելու, երբ մենք բարձրացնենք մեր սրտերն առ Աստված»:

— Ջիմ Սիմբալա[1]

ԱՂՈԹՔ
ԱՎԵԼԻ ԽՈՐ ԸՆԿԱԼՈՒՄ

Նոր կտակարանում կա ութ բառ *«աղոթք»*-ի նշանակության մասին: Ամենից հաճախ օգտագործվող բառը՝ *«պրոսյուխե»*-ն, հանդիպում է ավելի քան 125 անգամ: Այն առաջանում է երկու բառերից՝ *«պրոս»* և *«յուխե»*: *«Պրոս»*-ը նշանակում է «դեպի» և ունի «մոտ լինելու զգացում, մտերմություն, երես առ երես շփում» իմաստները:

«Յուխե»-ի իմաստն է՝ խոր ցանկություն կամ փափագ, որը միացված է ուխտի հետ: Այս բառը նկարագրում է այնպիսի մարդու, ով մեծ կարիք ունի և աղոթել է Աստծուն, ուխտելով՝ պատասխան ստանալու դեպքում, տալ Նրան մեծ արժեք ունեցող մի բան: Որդի ունենալու համար, Աննայի աղոթքը «յուխե»-ի կատարյալ օրինակ է (տե՛ս Ա Թագ. 2.1-11):

Աղոթքի *(յուխե)* այլ բաղկացուցիչ մասերն են՝ գոհությունը, փառաբանությունը և երկրպագությունը[2]: Այսպիսով հասկանում ենք, որ աղոթքը կապի և մտերիմ հաղորդակցման միջոց է: Աղոթքի միջոցով մենք երես առ երես շփվում ենք մեր երկնային Հոր հետ: Այն արտահայտում է մեր սերը և սրտանց գոհությունը, փառաբանությունն ու երկրպագությունը Նրան և Նրա կատարած գործերին:

ԽՍ 2. Մենք կարող ենք և պետք է մոտենանք Աստծուն ամենուր, ամեն ժամանակ և ամեն բանի համար: Աղոթքը պետք է շարունակական կենսատու փոխանակում դառնա մեր և մեր երկնային Հոր միջև: Ուշադի՛ր կարդացեք խոսքերն այն մասին, որ դուք հրավիրված եք Աստծո ներկայության մեջ:

«Ում մեջ (Հիսուսի) հանդեպ հավատքի պատճառով, մենք ունենք համարձակություն (խիզախություն և վստահություն) ազատ մուտք՝ գործելու համար (չսահմանափակված մուտք Աստծո մոտ՝ ազատությամբ և առանց վախի)»:

— Եփեսացիների 3.12, AMP

«Եկե՛ք, ուրեմն, անվախ և վստահորեն և համարձակությամբ մոտենանք շնորհքի գահին (Աստծո գահին, որտեղ կա բարեհաճություն մեր՝ մեղավորներիս հանդեպ, որին արժանի չենք), որպեսզի կարողանանք ողորմություն ստանալ [մեր ձախողումների համար] և շնորհք գտնել՝ որպես օգնություն բարենպաստ ժամանակներում յուրաքանչյուր կարիքի համար [պատշաճ օգնություն և ժամանակին օգնություն, որը գալիս է այն պահին, երբ մենք դրա կարիքն ունենք]»:

— Եբրայեցիների 4.16, AMP

«Այնպես որ, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, մենք կարող ենք համարձակ մուտք գործել Երկնքի Ամենասուրբ վայրը Հիսուսի արյան շնորհիվ: Իր մահով Հիսուսը բացեց նոր և կենսատու ճանապարհ՝ վարագույրի միջով դեպի Ամենասուրբ վայրը: Եվ քանի որ մենք ունենք մեծ Քահանայապետ, Ով իշխում է Աստծո տան վրա, եկե՛ք գնանք անմիջապես Աստծո ներկայության մեջ անկեղծ սրտով՝ լիովին վստահելով Նրան: Որովհետև մեր մեղավոր խիղճը ցողվել է Քրիստոսի արյամբ, որպեսզի մաքուր դարձնի մեզ, և մեր մարմինը լվացվել է մաքուր ջրով»:

— Եբրայեցիների 10.19-22, NLT

[Քառակուսի փակագծերում գրված բառերը պարզեցնելու համար են]:

Ինչպե՞ս է Աստված ցանկանում, որ դուք մոտենաք Իրեն: Ինչի՞ շնորհիվ եք դուք մուտք գործում Նրա ներկայության մեջ: Ի՞նչ է հասանելի Նրա ներկայության մեջ:

_____

_____

_____

«Եվ աղոթե՛ք Հոգով բոլոր դեպքերում ամեն տեսակ աղոթքներով և խնդրվածքներով: Մտապահելով սա՝ զգո՛ն եղեք և շարունակ աղոթե՛ք բոլոր սրբերի համար»:
— Եփեսացիների 6.18, NIV

ԽՍ 3. Հիսուսը գիտեր, թե ինչպիսի կենսական նշանակություն և արժեք ունի աղոթքը: Իր Լեռան քարոզի մեջ Նա սովորեցրեց մեզ, թե ինչ է պարունակում աղոթքը: Դանդաղորեն մտորե՛ք Նրա խոսքերի շուրջ և լսե՛ք, թե ինչ է հայտնում Նրա Հոգին աղոթքի մասին:

«Երբ աղոթում եք, անդադար մի՛ շաղակրատեք, ինչպես անում են այլ կրոնների պատկանող մարդիկ: Նրանք կարծում են, որ իրենց աղոթքները պատասխանվում են՝ ընդամենը նորից ու նորից իրենց խոսքերը կրկնելու պատճառով: Մի՛ եղեք նրանց նման, որովհետև ձեր Հայրը ճշտորեն գիտի, թե ինչի կարիք ունեք, մինչև դուք կխնդրեք Նրան: Աղոթե՛ք այսպես.

Մեր Հայր երկնքում, թո՛ղ Քո
անունը սուրբ պահվի,
Թո՛ղ Քո արքայությունը շուտով գա:
Թո՛ղ Քո կամքը կատարվի երկրի վրա,
ինչպես որ այն երկնքում է:
Տո՛ւր մեզ այսօր այն սնունդը, որի կարիքը
մենք ունենք,
և ների՛ր մեզ մեր մեղքերը, ինչպես մենք ներել ենք
նրանց, ովքեր մեղանչում են մեր դեմ:
Եվ թույլ մի՛ տուր՝ տեղի տալ գայթակղությանը,
այլ՝ փրկի՛ր մեզ չարից»:
— Մատթեոս 6.7-13, NLT

Ինչպիսի՞ աղոթքի սկզբունքներ է Սուրբ Հոգին ցույց տալիս ձեզ Հիսուսի խոսքերից:

_____
_____
_____
_____

4. Քանի որ աղոթքը հաղորդություն է Տիրոջ հետ, այն նշանակում է թե՛ խոսել, թե՛ լսել: Աստված խոսում է ձեզ հետ, և դուք կարող եք լսել Նրան: Ուշադի՛ր մտորեք այս խոսքերի շուրջ:

«Բայց դռնապանը բացում է դարպասը հովվի համար, և նա ներս է մտնում: Ոչխարները ճանաչում են իրենց հովվի ձայնը: Նա կանչում է նրանցից յուրաքանչյուրին անունով և դուրս տանում նրանց: Երբ նա դուրս է հանում իր բոլոր ոչխարներին, նա քայլում է նրանց առջևից, և նրանք հետևում են, որովհետև ճանաչում են

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Աղոթքը պարզապես գործողություն, ծես կամ պարտականություն չէ, ո՛չ էլ աղաչանք է Աստծուն՝ անելու այն, ինչ մենք ցանկանում ենք Նրանից: Դա *հաղորդություն* և *հաղորդակցում* է Աստծո հետ, որը հպվում է Նրա սրտին: Երբ հասկանաք աղոթքի արվեստի սկզբունքները, դուք կսկսեք հաղորդակցվել Աստծո հետ զորությամբ, շնորհքով և վստահությամբ: Աղոթքը նախատեսված է որպես հավատքի կյանքի ամենաոգեշնչող մասերից մեկը: Այն կյանքեր վերափոխելու, իրավիճակներ կարգավորելու, փորձության ժամանակ խաղաղություն և դիմացկունություն պարգևելու, ազգերի ընթացքը փոխելու և աշխարհը Քրիստոսի համար շահելու: Աղոթքի զորությունը հավատացյալի ժառանգությունն է»:
— Մայլս Մոնրո[3]

նրա ձայնը: Ոչխարները չեն հետևի օտարներին, քանի որ նրանք չեն ճանաչում օտարի ձայնը, և կփախչեն»:

— Հովհաննես 10.2-5, CEV

«Ես եմ բարի հովիվը: Ես ճանաչում եմ Իմ ոչխարներին, և նրանք ճանաչում են Ինձ, ինչպես որ Իմ Հայրը ճանաչում է Ինձ և Ես ճանաչում եմ Հորը: Ես զոհաբերում եմ Իմ կյանքը ոչխարների համար: Ես ունեմ ուրիշ ոչխարներ նույնպես, որոնք այս փարախից չեն: Ես նրանց նույնպես պետք է բերեմ: Նրանք կլսեն իմ ձայնը և կլինի մեկ հոտ՝ մեկ հովվի հետ: (NLT) Իմ ոչխարները լսում են Իմ ձայնը, և Ես ճանաչում եմ նրանց, և նրանք հետևում են Ինձ»: (NKJV)

— Հովհաննես 10.14-16, 27

«Դու ընդունակություն ես տվել ինձ լսելու և հնազանդվելու [Քո օրենքին, ինչն ավելի արժեքավոր ծառայություն է, քան] ողջակեզները և մեղքի զոհաբերությունը [որոնք] Դու չես պահանջում»:

— Սաղմոս 40.6, AMP

«Եվ եթե հեռանաս Աստծո շավիղներից և խոտորվես, դու կլսես մի Ձայն ետևիցդ, որ կասի. «Ո՛չ, սա՛ է ճանապարհը, գնա՛ այս կողմ»»:

— Եսայի 30.21, TLB

Ի՞նչ է Սուրբ Հոգին ցույց տալիս ձեզ Իր ձայնը լսելու վերաբերյալ:

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Աստված խոստանում է առաջնորդել մեզ Սաղմոս 25.9,12-14, 32.8, 48.14 և Մատթեոս 28.20 խոսքերում:

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մեր նպատակը ոչ թե շատախոսությունն է աղոթքի ժամանակ, այլ՝ պատասխան ստանալու մտադրվածությունը: Մենք պետք է խնդրենք անկոտրում, ջերմեռանդ, վստահ և համարձակ վերաբերմունքով: Մենք վստահորեն մոտենում ենք Աստծուն՝ իմանալով, որ խնդրում ենք Նրա կամքի համաձայն և, հետևաբար, չենք մերժվի:

5. Ճանաչիրաբար և համառորեն աղոթելու համար մենք պետք է ճանաչենք Նրա կամքը մեր իրավիճակների համար: Մենք ճանաչում ենք Աստծո կամքը Նրա Խոսքից, նաև այն խոսքերից, որ Նրա Հոգին ասում է մեզ, որոնք կարող ենք հաստատել Սուրբ գրքով: Դանդաղորեն կարդացե՛ք այս հատվածները.

«Բայց եթե դուք մնաք Ինձանում և Իմ խոսքերը մնան ձեզանում, դուք կարող եք խնդրել այն, ինչ ցանկանաք, և դա կշնորհվի ձեզ»:

— Հովհաննես 15.7, NLT

«Եվ սա է այն վստահությունը (հավաստիացումը, արտոնյալ համարձակությունը), որ մենք ունենք Նրանում. [մենք հավատացած ենք], որ եթե խնդրում ենք ինչ-որ բան (ցանկացած բան ենք հայցում) ըստ Նրա կամքի (Նրա ծրագրի համաձայն), Նա ականջ է դնում և լսում մեզ: Եվ եթե (քանի որ) մենք [վստահորեն] գիտենք, որ Նա լսում է մեզ ամեն ինչում, ինչ խնդրում ենք, մենք նույնպես գիտենք [հաստատ և բացարձակ գիտելիքով], որ Նրան արված հայցումները մեզ են պատկանում [շնորհված են մեզ՝ որպես սեփականություն, որ ներկայումս մերն է]»:

— Ա Հովհաննես 5.14,15, AMP

«Դուք կարող եք խնդրել Նրանից ամեն ինչ՝ օգտագործելով Իմ անունը, և Ես կկատարեմ, քանի որ սա փառք կբերի Հորը այն պատճառով, որ Ես կկատարեմ ձեզ համար: Այո՛, խնդրեք ինչ ցանկանաք՝ օգտագործելով Իմ անունը, և Ես կկատարեմ»:

— Հովհաննես 14.13,14, TLB

Ինչո՞ւ է կարևոր իմանալ Աստծո կամքը: Ինչո՞ւմ կարող եք համոզված լինել, երբ գիտեք այն:

_____

_____

_____

«Ինձ բերկրանք է պատճառում Քո կամքը կատարելը, ո՜վ իմ Աստված. այո՛, Քո օրենքն իմ սրտում է: Սովորեցրո՛ւ ինձ կատարել Քո կամքը, որովհետև Դու իմ Աստվածն ես. թո՛ղ Քո բարի Հոգին առաջնորդի ինձ դեպի հարթ տեղեր և ուղղության երկիր»:

— Սաղմոս 40.8,143.10, AMP

ՆԵՐԳՈՐԾՈՂ և ՋԵՐՄԵՌԱՆԴ

«*Ներգործող*» բառը հունարեն «*էներգեո*»-ն է: Այն նշանակում է «լինել շարժուն, գործուն և մեծապես արդյունավետ գործի մեջ»[4]: Վեբսթերը սահմանում է «*ներգործող*» բառը որպես «ցանկալի կամ նախատեսված արդյունք ստացող. համապատասխան զորություն կամ ուժ ունեցող՝ այդ արդյունքը ստանալու համար, հավաստի (ճշմարիտ, անկեղծ)» [5]:

«Ջերմեռանդ» բառը հունարեն «*զեո*»-ն է և նշանակում է «լինել շատ տաք, եռալ»: Անգլերեն «նախանձավորություն» *(«zeal»)* բառն առաջացել է հենց այս բառից[6]: «*Ջերմեռանդ աղոթք*» արտահայտությունն Աստվածաշնչի «Քինգ Ջեյմս թարգմանության» մեջ առաջացել է հունարեն «*դեյսիս*» բառից: Այն նշանակում է «կրակոտ, նախանձախնդիր, սրտանց, անկեղծ աղոթք», որը բարձրացվում է առ Աստված շատ լուրջ նպատակներով՝ աղաչելով Նրան՝ պատասխանել որոշակի կարիքի[7]:

ԽՍ 6. Կա մեծ տարբերություն՝ արդյո՞ք մենք ցանկանում ենք ինչ-որ բան ստանալ Աստծուց, թե՞ *մտադրված* ենք ստանալ: Երբ մտադրված ենք, մենք ջերմեռանդորեն ենք աղոթում: Ուշադի՛ր կարդացեք Ղուկաս 18.1-8-ում գրված պատմությունը այրիի և անիրավ դատավորի մասին: Ուշադրությո՛ւն դարձրեք՝ Հիսուսն ասում է, որ մենք պետք է սովորենք անիրավ *դատավորից*, ոչ թե այրի կնոջից: Այս պատմությունից ելնելով՝ ինչպե՞ս պետք է փոխվի ձեր մոտեցումն աղոթքին:

_____

_____

_____

_____

«Այնպես որ, Ես ասում եմ ձեզ, խնդրե՛ք և շարունակե՛ք խնդրել, և կտրվի ձեզ: Փնտրե՛ք և շարունակե՛ք փնտրել, և պիտի գտնեք, թակե՛ք և շարունակե՛ք թակել, և դուռը պետք է բացվի ձեր առջև: Բոլոր նրանք, ովքեր խնդրում և շարունակում

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մենք պետք է միշտ հիշենք, որ Աստված «կարող է առատությամբ անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում ներգործում է» (Եփես. 3.20): Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր սահմանափակ մտածելակերպն ու հավատքը սահմանափակեն Աստծուն: Եթե մենք իրոք հավատում ենք, ապա համառորեն կխնդրենք և կշարունակենք թակել այնքան ժամանակ, մինչև տեսնենք Նրա փառքը:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Դժվար պահերին ծածուկ վայրն անտեսելու գայթակղություն է գալիս: Սակայն Հիսուսն անում էր ճիշտ հակառակը: Նեղության ժամանակ Նա միշտ որևէ տեղ էր գտնում աղոթելու համար: Գեթսեմանիում անցկացրած ժամանակը այս փաստի մեծագույն օրինակն է... (Ղուկաս 22.44): Երբ Հիսուսը ծանրություն էր զգում, Նա աղոթում էր: Երբ Նա իսկապես դժվարին կացության մեջ էր, ավելի ուժգին էր աղոթում: *Ահա Հիսուսի գաղտնիքը, թե ինչպես Նա դիմացավ Իր սոսկալի չարչարանքներին: Աղոթքի միջոցով Նա պատրաստել էր Իրեն՝ ցավին դիմանալու համար:* Եթե մենք ճիշտ կերպով պատասխանենք իրավիճակներին, ապա տառապանքը կարող է իրական պարգև դառնալ: Ցավոտ իրավիճակները կարող են աղոթքի զորավոր ազդակ լինել, եթե մենք թույլ տանք դրանց՝ մոտեցնել մեզ Աստծուն, ոչ թե իսպառ հեռացնել Նրանից»:

— Բոբ Սորջ[8]

են խնդրել՝ ստանում են, և նրանք, ովքեր փնտրում և շարունակում են փնտրել՝ գտնում են, և նրանք, ովքեր թակում և շարունակում են թակել՝ դուռը պետք է բացվի»:

— Ղուկաս 11.9,10, AMP

7. Երբ Եղիան ջերմեռանդորեն աղոթեց անձրևի համար, Աստված հաստատեց, որ այն գալիս է՝ որպես նշան ուղարկելով փոքրիկ ամպ: Այսօր մենք չենք փնտրում նյութական ամպ՝ համոզվելու համար, որ մեր աղոթքները պատասխանվել են: Մենք սպասում ենք հաստատության՝ Սուրբ Հոգուց: Նկարագրե՛ք, թե ինչպես է Աստծո Հոգին հաստատել, որ ձեր աղոթքները պատասխանված են: Արդյո՞ք դուք գայթակղվել եք՝ անուշադրության մատնելով այն հաստատությունը, որ Աստված տվել է ձեզ: Եթե այո, ապա պատմե՛ք, թե ինչպես եք վարվել:

ԽՍ

_____

_____

_____

_____

_____

8. Արդյո՞ք դուք երկար ժամանակ է աղոթում եք, որպեսզի Աստված գործի որևէ իրավիճակում, սակայն ոչ մի փոփոխության նշույլ անգամ չեք տեսնում: Եթե այո, ապա կարճ նկարագրե՛ք իրավիճակը: Եղիան աղոթեց յոթ անգամ մինչև պատասխան ստանալը. ինչպե՞ս է այս պատմությունը խրախուսում ձեզ և տրամադրում, որ ձեր երեսը կայծքարի պես դարձնեք՝ բերելով ձեր խնդրանքներն Աստծո առջև:

_____

_____

_____

_____

_____

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. կարդացե՛ք Եղիայի պատմությունը Գ Թագավորաց 18.41-45 և Հակոբոս 5.17,18 խոսքերում:

*«Որովհետև Տեր Աստված օգնում է ինձ. այդ պատճառով ես չեմ ամաչել և շփոթվել: Այդ իսկ պատճառով **ես դարձրել եմ իմ երեսը կայծքարի պես**, և ես գիտեմ, որ չեմ ամաչի»:*

— Եսայի 50.7, AMP

9. Ջերմեռանդ աղոթքն արդյունավետ է. այն ծնվում է մեծ ցանկությունից: Կա՛նգ առեք և հարցրե՛ք ձեզ. *Հիմա ի՞նչ մեծ փափագ կա իմ սրտում: Ինչպիսի՞ անարդարություն կամ անօրեն գործեր կան իմ կյանքում կամ շուրջս ապրող մարդկանց կյանքերում, որ այլևս չեմ ցանկանում տեսնել: Ո՞ւմ կամ ինչի՞ համար է Աստված ցանկանում, որ ես լրջորեն բարեխոսեմ:* Լռությամբ մոտեցե՛ք Նրան և զանազանություն խնդրեք: Գրե՛ք այն, ինչ Նա ասում է ձեզ:

Աստված ցանկանում է, որպեսզի ես ջերմեռանդորեն աղոթեմ...

_____
_____
_____
_____
_____

10. Արդյո՞ք Աստված որևէ գաղափար է տվել ձեզ, որպեսզի իրականացնելով՝ Իրեն փառք բերեք, բայց թվում է՝ անկարող եք անել այդ: Այդ գաղափարը կապվա՞ծ է այն երազանքի հետ, որի մասին դուք գրել եք 10-րդ գլխում: Կարճ պատմեք այն: Աղոթե՛ք և խնդրե՛ք Աստծուն՝ հաստատել, որ այդ մտահղացումն Իրենից է: Եթե Նա պատասխանի և հաստատի, ապա խնդրե՛ք Նրանից շնորհք և առաջնորդություն յուրաքանչյուր քայլի համար, որ պետք է ձեռնարկեք՝ այդ նպատակին հասնելու համար:

Աստված սրտումս դրել է հետևյալ գաղափարը...

_____
_____
_____
_____
_____

Ես պետք է ձեռնարկեմ հետևյալ քայլերը, որպեսզի այն իրականանա...

_____
_____
_____
_____
_____

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Մենք բարեխոսում ենք, երբ աղոթում ենք ինչ-որ մեկի համար: Երբ կանխամտածված կերպով մոտենում ենք Աստծուն, որպեսզի աղոթենք մարդկանց համար, մենք մտովի ներգրավվում ենք նրանց կյանքերի մեջ: Պետք է խոստովանեմ, որ սա միայն աղոթքի տեսակներից մեկն է, բայց՝ չափազանց կարևոր: ...Չկա մարդու կյանքում միջամտելու ավելի ազդեցիկ միջոց, քան կանոնավոր և զորավոր աղոթքը: Այն ավելի օգտակար է, քան դրամական պարգևը. ավելի խրախուսող է, քան ազդեցիկ քարոզը. ավելի արդյունավետ է, քան հաճոյախոսությունը. ավելի հուսադրող է, քան գրկախառնությունը»:

— Չարլզ Ռ. Սուինդոլ[9]

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Մի՛ մոտեցեք Աստծուն անվճռականությամբ, և երկչոտությամբ մի՛ խնդրեք Նրանից: Եղե՛ք համարձակ, ուժեղ, անդրդվելի և հստակ: Մենք համառորեն մոտենում ենք Աստծուն ո՛չ այն պատճառով, որ հուսահատ ենք. մենք վստահ ենք, որ Նա մեր սիրող Հայրն է և կտա մեզ այն, ինչ մենք անդրդվելիորեն խնդրենք Նրա անունով: Ինչի՞ եք դուք սպասում. ձեր շուրջը մեծ կարիքներ կան: Ձեր շրջապատում այնքան մարդ կա, ում համար պետք է համարձակորեն բարեխոսեք Աստծո առջև: Եղե՛ք լույս նրանց համար: Մոտեցե՛ք Աստծուն անկոտրում համառությամբ հե՛նց հիմա:

Ծարաթական

ԿՈՉ

Գրանցե՛ք ձեր աղոթքները և դրանց պատասխանները նոթատետրի կամ օրագրի մեջ: Մեկ սյունակում գրեք ձեր խնդրանքները, ամսաթվերը՝ երբ սկսեցիք աղոթել դրանց համար: Ջերմեռանդորեն հռչակե՛ք Աստծո խոստումները յուրաքանչյուր իրավիճակի համար, մինչև կտեսնեք պատասխանը: Երկրորդ սյունակում գրանցեք, թե երբ է աղոթքը պատասխանվել և ինչպես: Մի՛ հանձնվեք, մտորե՛ք Աստծո Խոսքի շուրջ. դա կօգնի ձեզ՝ հարատևել աղոթքներում և ցնծությամբ տեսնել Աստծո պատասխանները: Գործե՛ք այսպես ամենաքիչը երեսուն օր:

Օրինակ

Իմ խնդրանքը	Աստծո պատասխանը
Փետրվարի 12. լրիվ դրույքով աշխատանք. անհրաժեշտ է երկու շաբաթվա ընթացքում: Փիլիպեցիներ 4.19, Մատթեոս 6.25-34:	*Փետրվարի 20. աշխատանքի առաջարկ գովազդային ընկերությունից:*

Օր 1. ՍՏԵՂԾԵԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՂՈԹՔԻ ՀԱՄԱՐ

«Լսի՛ր իմ աղաղակը, ո՜վ Աստված. լսի՛ր իմ աղոթքը»:

— Սաղմոս 61.1, AMP

Բոլորս ցանկանում ենք, որպեսզի մեր աղոթքներն արդյունավետ լինեն, որպեսզի Աստված լսի և պատասխանի, երբ մենք կանչում ենք Նրան: Սուրբ գիրքը պարզ ցույց է տալիս, թե ինչու են աղոթքները պատասխանվում կամ անպատասխան մնում: Թեև այս ցուցակը սպառիչ չէ, այն կհիշեցնի ձեզ որոշ բաներ, որ դուք մոռացել էիք, և կհայտնի նոր ճշմարտություններ:

Որո՞նք են **պատասխանվող աղոթքի պայմանները՝** ըստ հետևյալ խոսքերի:

Բ Մնացորդաց 7.14 _____
Սաղմոս 34.11-18 _____
Սաղմոս 91.14,15 _____
Երեմիա 29.12,13 _____
Մատթեոս 21.21,22, Մարկոս 11.24 _____
Հովհաննես 15.7, Ա Հովհաննես 3.21-24 _____

Այս հատկանիշներից որո՞նք են առկա ձեր կյանքում: Ինչպե՞ս կարող եք զարգացնել մյուսները:

_____

_____

Երբեմն թվում է, թե մեր աղոթքի պատասխաններն ուշանում են: Կարդացե՛ք Դանիել 10.10-14 և Հովհաննես 11.1-6 խոսքերը և գտե՛ք ուշացած պատասխանների երկու պատճառ:

_____

Որո՞նք են **չպատասխանվող աղոթքի պատճառները՝** ըստ հետևյալ խոսքերի:

Սաղմոս 66.18, Եսայի 59.1,2 _____
Առակաց 21.13 _____
Առակաց 1.28-31, 28.9 _____
Մարկոս 11.25, Մատթեոս 5.23,24 _____
Մարկոս 6.5,6, Հակոբոս 1.6,7 _____
Հակոբոս 4.3 _____

Լռությամբ եկեք Տիրոջ առջև: Հարցրե՛ք Նրան՝ արդյո՞ք այս բաներն առկա են ձեր կյանքում: Ապաշխարե՛ք և շնորհք խնդրեք՝ անելու համար այն, ինչ Նա կպատվիրի ձեզ: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է:

_____

_____

Օր 2. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Երկրպագի՛ր Տիրոջը՝ քո Աստծուն, և միայն Նրան: Ծառայի՛ր Նրան ամենայն անկեղծությամբ»:

— Մատթեոս 4.10, MSG

Աղոթքն ու երկրպագությունն անբաժանելի են: Այն երկու հունարեն բառերը, որոնք ամենից հաճախ են թարգմանվում որպես «աղոթք», ունեն նաև երկրպագության իմաստ[10]: Երկրպագելն ավելին է, քան երգելը: Հիսուսն ասաց. «Աստծո առջև կարևոր է, թե ով եք դուք և ինչպես եք ապրում: Ձեր երկրպագությունը պետք է դրդի ձեր հոգուն՝ հետևել ճշմարտությանը: Ահա թե ինչպիսի մարդկանց է փնտրում Հայրը. մարդիկ, ովքեր պարզ և անկեղծ են Իր առջև երկրպագության մեջ: Աստված անկեղծ և մաքուր է. Նա Հոգի է: Նրանք, ովքեր երկրպագում են Նրան, պետք է անեն դա իրենց ողջ էությունով, իրենց ողջ հոգով, իրենց անձով և մեծարանքով» (Հովհաննես 4.23,24, MSG):

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

«Երկրպագություն» բառը Նոր կտակարանում գրեթե բոլոր դեպքերում հունարեն *«պրոսկունեո»*-ն է՝ կազմված *«պրոս»* և *«կունեո»* բառերից: *«Պրոս»*-ը, որ նաև հունարեն *«աղոթք»* բառի բաղադրիչ մասն է, նշանակում է «դեպի» և ունի «մոտ լինելու, մտերմության, երես առ երես շփման» իմաստը: *«Կունեո»* բառը նշանակում է «համբուրել»[11]: Միասին այս բառերը նշանակում են «երեսնիվայր ընկնել հարգանքով, երկյուղածությամբ և մեծարանքով»[12]: *«Երկրպագել»* նշանակում է՝ «պատվել, մեծարել, շռայլ սեր և հնազանդություն պարգևել»[13]:

Վեբսթերը բացատրում է, որ անգլերեն լեզվում *«երկրպագություն»* (worship) բառն առաջացել է «արժանիք» (worth) բառից: Երկրպագել Աստծուն նշանակում է նայել Նրան՝ որպես մեծ արժանիք ունեցող և արտահայտել մեր գնահատականը գոհության և փառաբանության խոսքերով, մեր գործերով և կյանքով:

Ինչպե՞ս եք արտահայտում Աստծո հանդեպ ունեցած ձեր մեծ գնահատականը: Ինչպե՞ս է Նա արտահայտում ձեր հանդեպ ունեցած Իր սերը: Եթե դուք ժամանակ չեք հատկացնում երկրպագության համար, ապա ինչո՞ւ:

_____

_____

Ի՞նչ եք զգում, երբ ինչ-որ մեկն անկեղծորեն գովում է ձեր աշխատանքը կամ բնավորությունը՝ ավելի արժևորելով ձեզ: Ի՞նչ կարծիք է ստեղծվում ձեզ մոտ այդ մարդու մասին: Ձեր կարծիքով՝ ի՞նչ է զգում Աստված, երբ դուք երկրպագում եք Նրան:

_____

_____

Կարդացե՛ք Գործք 16.23-40-ը: Թվարկե՛ք Աստծո զորության դրսևորումները, երբ Պողոսն ու Շիղան երկրպագում էին Նրան չարչարանքի ժամանակ: Ի՞նչ է դա սովորեցնում ձեզ:

_____

_____

Օր 3. ՀԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՂՈԹԵԼՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Նույնպես այս պատճառով Աստված ...շնորհեց Նրան այն անունը, որ վեր է ամեն անունից, որպեսզի Հիսուսի անվանը խոնարհվի ամեն ծունկ»:

— Փիլիպեցիների 2.9,10, NASB

Հիսուսի անունը զորավոր զենք է: Այն ամենը՝ բացարձակապես այն ամենը, ինչ խոստացված է Սուրբ գրքում, այս անվան շնորհիվ դառնում է մերը: Այս անունը վեր է ամեն անունից, «և այլևս ոչ մեկում չկա փրկություն. որովհետև չկա այլ անուն երկնքի տակ ...որով մենք պետք է փրկվենք» (Գործք 4.12, NASB):

Մտորե՛ք Հիսուսի զարմանալի խոստումների շուրջ.

«Իմ Հայրը կտա ձեզ՝ ինչ որ խնդրեք Իմ անունով»:

— Հովհաննես 15.16, CEV

«Ահա թե ինչ եմ ցանկանում ձեզանից. Խնդրե՛ք Հորից ցանկացած բան, որը համապատասխանում է այն ամենին, որ Ես հայտնել եմ ձեզ: Խնդրե՛ք Իմ անունով, Իմ կամքի համաձայն, և Նա անպայման դա կտա ձեզ: Ձեր ուրախությունը կլինի ափերից վարարող գետի պես»:

— Հովհաննես 16.23,24, MSG

«Ես ճշմարտությունն եմ ասում ձեզ. յուրաքանչյուրը, ով հավատում է Ինձ, կանի նույն գործերը, որ Ես եմ արել և, նույնիսկ, ավելի մեծ գործեր, որովհետև Ես գնում եմ Իմ Հոր մոտ: Այո՛, խնդրե՛ք Ինձանից ամեն ինչ *Իմ անունով*, և Ես կանե՛մ դա»:

— Հովհաննես 14.12, NLT

Ի՞նչ է սովորեցնում ձեզ Սուրբ Հոգին՝ Հիսուսի անունով աղոթելու մասին:

_____

Կարդացե՛ք Գործք 2.38, 4.11,12, 10.43, Ղուկաս 23.47 և Ա Հովհաննես 2.12 խոսքերը: Համաձայն այս խոսքերի՝ Հիսուսի անունով ի՞նչ է պատկանում ձեզ և ողջ մարդկությանը:

_____

_____

Կարդացե՛ք Հովհաննես 1.12 և 20.31 խոսքերը: Համաձայն այս խոսքերի՝ ինչպիսի՞ օրհնություններ են պատկանում ձեզ:

_____

_____

Կարդացե՛ք, թե ինչ արեց Աստված Պետրոսի և Հովհաննեսի միջոցով Գործք 3.1-10-ում, և թե ինչպես Սինեդրիոնը պատասխանեց դրան Գործք 4.17,18-ում: Ի՞նչ է սա հայտնում ձեզ Հիսուսի անվան զորության մասին:

_____

_____

Օր 4. ԱՍՏԾՈ ԽՈՍՔՈՎ ԱՂՈԹԵԼՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Նրա զորավոր Խոսքը սուր է, ինչպես վիրաբույժի դանակը. այն կտրում-հեռացնում է ամեն ինչ. թե՛ կասկած, թե՛ պաշտպանական միջոցներ՝ թողնելով մեզ բաց վիճակում լսելու և հնազանդվելու համար: Ոչինչ և ոչ ոք անթափանցելի չէ Աստծո Խոսքի համար: Մենք չենք կարող փախչել դրանից, ինչ էլ անենք»:

— Եբրայեցիների 4.12,13, MSG

Աստծո Խոսքը կենդանի է: Նրա Խոսքը կյանք է: (Հովհաննես 6.63, Երկրորդ Օրինաց 32.45-47) Ի՞նչ Նա օգտագործեց՝ աշխարհը ստեղծելու համար՝ *Խոսքը* (Հովհաննես 1.1-3): Ի՞նչ Նա ուղարկեց՝ մարդկանց փրկելու համար՝ *Խոսքը* (Հովհաննես 1.14): Ի՞նչ տվեց Հիսուսը՝ մեզ փրկելու և սրբացնելու համար՝ *Խոսքը* (Սաղմոս 138.2):

Մտորե՛ք այս խոստումների շուրջ.

«Որովհետև Աստծո համար անհնարին ոչինչ չկա, և ոչ մի խոսք Աստծուց՝ չի գա առանց զորության, ինչպես և անհնարին է, որ այն չկատարվի»:

— Ղուկաս 1.37, AMP

«Այդ ժամանակ Տերն ասաց ինձ. «Դու լավ տեսար, որովհետև Ես հետևում եմ Իմ խոսքին, որ կատարեմ»»:

— Երեմիա 1.12, NASB

«Օրհնե՛ք Տիրոջը, դուք՝ Նրա հրեշտակներ, որ գերազանց եք զորությամբ, որ կատարում եք Նրա խոսքը՝ լսելով Նրա խոսքի ձայնին»:

— Սաղմոս 103.20, NKJV

Ի՞նչ է Աստված անձամբ խոստանում Երեմիա 1.12-ում՝ Իր Խոսքի վերաբերյալ: Ի՞նչ է սա սովորեցնում ձեզ:

_____

_____

Ինչպե՞ս են երկնային անտեսանելի, բայց զորավոր ուժերը կատարում Աստծո Խոսքը: Տե՛ս Եբրայեցիների 1.14-ը:

_____

Իսկ դուք հավատո՞ւմ եք սրան: Եթե այո, ապա արդյո՞ք այս խոսքերը ոգևորում են ձեզ: Եթե չեք հավատում՝ ի՞նչն է պատճառը: Խնդրե՛ք Աստծուն՝ ցույց տալ, թե ինչն է սահմանափակում ձեր հավատքը: Տվե՛ք այդ խնդիրը Նրան և մտորե՛ք Թվոց 23.19-ի շուրջ:

_____

_____

«Իմ Խոսքը, որ դուրս է գալիս Իմ բերանից, նման է անձրևի և ձյան: Այն չի վերադառնա Ինձ մոտ առանց արդյունքների, այլ՝ կիրականացնի ինչ որ Ես ցանկանամ և կհասնի այն ամենին, ինչի համար Ես ուղարկում եմ այն»:

— Եսայի 55.11, GW

Օր 5. ՀԻՍՈՒՍԻ ԱՐՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*«Մեր ժողովուրդը պարտության մատնեց սատանային **Գառան արյան** և Աստծո ուղերձի շնորհիվ: Նրանք կամենում էին թողնել իրենց կյանքերը»:*

— Հայտնություն 12.11, CEV

Հիսուս Քրիստոսի արյունը զորավոր է: Հավատալով, որ Նա վճարել է մեր մեղքերի պատիժը, մենք արդարանում ենք և *փրկվում Աստծո զայրույթից* (տե՛ս Հռոմ. 5.9): Նրա արյունը պարզապես չի ծածկում մեր մեղքերը՝ ինչպես ցուլերի և այծերի զոհերը, այլ մեկընդմիշտ հեռացնում է դրանք (տե՛ս Եբր. 10.4,11,12): Եթե մենք բնակվում ենք Նրանում, Նրա արյունը *մշտապես մաքրում է մեր խիղճը* (տե՛ս Եբր. 9.14, Ա Հովհաննես 1.7): Աղոթքի միջոցով, Նրա արյան շնորհիվ մենք կարող ենք վստահաբար մտնել Աստծո ներկայության մեջ (տե՛ս Եբր. 10.19): Փա՞ռք Աստծուն Հիսուսի թանկագին արյան համար:

Հետաքրքրական փաստեր արյան մասին

- Մարդու մարմնում կա մոտ *5 լիտր* արյուն:
- Յուրաքանչյուր բջիջ մշտապես *սնուցվում* և *մաքրվում* է արյամբ: Եթե արյունը դադարի հոսել, կյանքը նույնպես կդադարի:
- Արյան երկու գլխավոր բաղադրիչները *կարմիր* և *սպիտակ բջիջներն* են:
  - Արյան սպիտակ բջիջները *պաշտպանում են մարմինը*՝ սպանելով հիվանդությունները:
  - Արյան կարմիր բջիջները *թթվածին և սնունդ* են մատակարարում մարմնի բջիջներին:
- Արյան բջիջները *հավաքում են անպետք նյութերը* յուրաքանչյուր բջջից՝ հետագայում ազատվելով դրանցից:
- Հինգ լիտր արյունը ամբողջովին շրջանառվում է մեր արյունատար համակարգում *23 վայրկյանը* մեկ[14]:

Ուշադի՛ր կարդացեք այս փաստերն արյան մասին: Ինչպիսի՞ զուգահեռներ կարող եք տանել Հիսուսի արյան հետ, որը հոգևորապես գործում է մեր, այսինքն՝ Քրիստոսի մարմնի մեջ:

_____

_____

Կարդացե՛ք Ելից 12.1-13-ը: Այն, ինչ իսրայելացիներն արեցին ֆիզիկապես, մենք պետք է անենք հոգևորապես՝ հավատքով: **Գրե՛ք մի աղոթք**, որով կհռչակեք Հիսուսի արյունը ձեր, ձեր երեխաների, տան, ֆինանսների և այն ամենի վրա, ինչը ձեր պատասխանատվության տակ է:

_____

_____

Մտածե՛ք՝ արդյո՞ք Հիսուսի անունը զորություն կունենար՝ առանց Իր թափած արյան: Արդյո՞ք Աստծո Խոսքով աղոթքը զորություն կունենար՝ առանց Նրա արյան: Արդյո՞ք Աստծո սպառազինությունը զորություն կունենար՝ առանց Նրա արյան: Դանդաղորեն կարդացե՛ք առաջին պարբերությունը և **աղոթք գրեք Հիսուս Քրիստոսին՝ փառաբանելով** և գոհանալով Նրանից, որ թափել է Իր արյունը ձեզ համար:

_____

_____

_____

Օր 6. ՀՈԳՈՎ ԱՂՈԹԵԼՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*«Բայց դուք, իմ ընկերնե՛ր, շարունակե՛ք կառուցել ձեր անձերը ձեր ամենասուրբ հավատքի վրա: **Աղոթե՛ք Սուրբ Հոգու զորությունով**»:*

— Հուդա 20, GNT

Երբ մենք ընդունում ենք փրկությունը՝ Աստծո ձրի պարգևը, Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, մենք անմիջապես վերստին ծնվում ենք և հայտնվում Նրա արքայության մեջ: Հայր Աստծո և Քրիստոսի Հոգին գալիս է մեր մեջ բնակվելու համար (տե՛ս Հովհ. 14.23): Առաջին անգամ սա տեղի ունեցավ անմիջապես Հիսուսի հարությունից հետո, երբ Նա հայտնվեց Իր աշակերտներին, ովքեր միասին հավաքվել էին փակ դռների ետևում: Հովհաննես 20.21,22-ում գրված է. «Հիսուսն ասաց. «Խաղաղություն լինի ձեզ: Ինչպես Հայրն ուղարկեց Ինձ, Ես էլ ուղարկում եմ ձեզ», և այդ ասելով՝ փչեց նրանց վրա և ասաց. «Ընդունե՛ք Սուրբ Հոգին»» (NIV):

Մինչև Երկինք համբարձվելը Հիսուսը պատվիրեց Իր աշակերտներին՝ սպասել Երուսաղեմում Սուրբ Հոգով մկրտվելու համար (տե՛ս Գործք 1.4,5,8): Հիսուսն ասում է, որ Հոգով մկրտությունը **զորություն հագնել** է (տե՛ս Ղուկ. 24.49, NIV): Այո՛, Սուրբ Հոգին ապրում էր նրանց մեջ, բայց Հոգու մկրտությունը, անկասկած, այլ է (տե՛ս Գործք 8.12-17): Դա Աստծո գերագույն, զորավոր իշխանության ավելի մեծ դրսևորումն է: Թշնամաբար տրամադրված աշխարհում Հիսուսի վկան լինելու համար Նրա աշակերտները կարիք ունեին լիովին ընկղմվել Իր Հոգու մեջ: Նույնը այսօր ճշմարիտ է մեզ համար:

Ո՞վ է Սուրբ Հոգին ձեզ համար

Նա ձեր **Մխիթարիչն է, Խորհրդականը** և **Ճշմարտությունը հայտնողը.** .....Հովհաննես 14.16,17, 15.26, 16.7-15

Նա ձեր **Ուսուցիչն** է. ...Մատթեոս 10.19,20, Ղուկաս 12.11,12, Հովհաննես 14.26, Ա Հովհաննես 2.27

Նա ձեր **շնորհքի Աղբյուրն** է. .....Եբրայեցիների 10.29

Նա ձեր **Առաջնորդն** է. ..... Գործք 10.19,20, 13.2, Հռոմեացիների 8.14, Գաղատացիների 5.16-26

Նա ձեզ **կյանք Տվողն** է.....Հովհաննես 6.63, Հռոմեացիների 8.2,6,11, Բ Կորնթացիների 3.6

Նա ձեր **Զորությունն** է. .....Ղուկաս 24.49, Գործք 1.8

Ըստ Հիսուսի խոսքերի՝ ի՞նչ նշաններ են հետևում նրանց, ովքեր ընդունել են այս զորավոր լեցունությունը: Ո՞ւմ է այն խոստացված: Կարդացե՛ք Մարկոս 16.17, Գործք 2.4,38,39, 10.44-46 և 19.3-6 խոսքերը:

_____

_____

_____

Մինչև Պենտեկոստեի օրը աշակերտների Սուրբ Հոգով մկրտվելը՝ նրանք թաքնվում էին փակ դռների ետևում: Ինչպիսի՞ ազդեցություն թողեց նրանց կյանքում զորությունը հագնելը: Ինչպիսի՞ ազդեցություն այն կթողնի ձեր կյանքում: Կարդացե՛ք Գործք 4.8-13,31-35 և 5.27-42 խոսքերը:

_____

_____

_____

_____

Երբ փորձությունների ժամանակ դուք աղոթքի կարիք եք ունենում, ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ: Կարդացե՛ք Հռոմեացիների 8.26,27-ը:

_____

_____

_____

_____

Սուրբ Հոգով մկրտվելու պարգևը շարունակաբար լեցունություն է, ոչ թե մեկանգամվա վերապրում: Ահա թե ինչու է Պողոսն ասում. «**Մշտապես եղե՛ք լցված** և խրախուսվե՛ք [Սուրբ] Հոգով», իսկ Հուդան ասում է. «**Շարունակե՛ք** կառուցել ձեր անձերը ձեր ամենասուրբ հավատքի վրա: Աղոթե՛ք Սուրբ Հոգու զորությունով» (Եփեսացիների 5.18, AMP, Հուդա 20, GNT):

Արդյո՞ք դուք ընդունել եք Սուրբ Հոգով մկրտվելու պարգևը: Եթե ոչ, ապա կցանկանայի՞ք ընդունել: Դուք պետք է ընդամենը խնդրեք: Հիսուսն ասաց. «Ձեր երկնային Հայրը շատ ավելի պատրաստակամությամբ կտա Սուրբ Հոգին յուրաքանչյուրին, ով խնդրում է» (Ղուկաս 11.13, CEV): Դուք կստանաք Սուրբ Հոգին հենց այն պահին, երբ խնդրեք Նրանից: Գործք 2.4-ում գրված է. «Եվ նրանք բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել այլ լեզուներով, ինչպես Հոգին խոսել էր տալիս նրանց» (NKJV): «Խոսել» բառը նշանակում է «վանկեր, հնչյուններ կամ բառեր արտաբերել»: Աղոթելուց հետո դուք հավանաբար կզգաք ինչ-որ վանկ, հնչյուն կամ բառ, որ ցանկանում է դուրս գալ ձեզանից: Թեև այդ զգացումը կարող է թույլ լինել և ծիծաղելի թվալ ձեզ, ***բարձրաձայն արտասանե՛ք*** դա: Սուրբ Հոգին խոսել է տալիս ձեզ, բայց դուք պետք է *տրամադրեք* ձեր շուրթերը, լեզուն և ձայնալարերը, որպեսզի խոսեք այն, ինչ Նա դնում է ձեր մեջ:

Դուք պատրա՞ստ եք ընդունել: Դուք հավատո՞ւմ եք, որ կստանաք այն, ինչ խնդրում եք: Դուք ցանկանո՞ւմ եք տրվել Սուրբ Հոգուն: Այդ դեպքում աղոթեք…

Աղոթք Սուրբ Հոգու խոստացված պարգևի համար

Հա՛յր, ես գալիս եմ Քեզ մոտ Հիսուսի անունով: Նախ՝ ես ապաշխարում եմ ցանկացած մեղքի համար, որ կարող է արգելք դառնալ՝ Քեզանից ստանալու Սուրբ Հոգու պարգևը՝ ներառյալ՝ չներելու մեղքը: Քո շնորհքով և իմ կամքով ես բաց եմ թողնում բոլոր մարդկանց, ովքեր վիրավորել են ինձ, ես օրհնում եմ նրանց: Շնորհակալ եմ Քեզ, որ մաքրված եմ Հիսուսի արյունով:

Այժմ, որպես Քո զավակ, ես խնդրում եմ Քեզ Սուրբ Հոգու խոստացված պարգևի համար: Դու ասացիր, որ եթե խնդրեմ Քեզանից Սուրբ Հոգին, Դու կտաս ինձ, այնպես որ, հավատքով ես խնդրում եմ, մկրտի՛ր ինձ հիմա Քո Սուրբ Հոգով: Ես ընդունում եմ այն ամենը, ինչ Դու ունես ինձ համար՝ ներառյալ՝ նոր երկնային լեզվով խոսելու կարողությունը: Այժմ հավատքով ես կխոսեմ նոր լեզուներով, Հիսուսի անունով:

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Աղոթքը ձեզ համար Աստծո հետ հաղորդության և հաղորդակցման փրկարար պարանն է: Աղոթքի համար չկա հատուկ տեղ կամ ձև: Դուք կարող եք բարձրացնել ձեր ձայնը ցանկացած պահին, ցանկացած վայրում և ցանկացած հարցի վերաբերյալ: Միայն թե դուք պետք է խոնարհ սիրտ ունենաք: Անկոտրում աղոթքը ջերմեռանդ է և արդյունավետ. այն մեծ զորություն է ազատագրում ձեր կյանքի իրավիճակներում: Երբ ձեր կյանքում հայտնվում են այնպիսի հանգամանքներ, որոնք հակառակ են Աստծո կամքին, ջանք գործադրեք Աստծո ներկայության մեջ մտնելու համար. շարունակե՛ք խնդրել, փնտրել և թակել, մինչև ձեր աղոթքի պատասխանը հաստատվի Նրա Հոգու կողմից:

(1) Ջիմ Սիմբալա, *«Թարմ քամի, թարմ կրակ»* (Գրանդ Ռեփիդս՝ Միչիգան. «Zondervan Publishing House», 1997թ.), էջեր 50,56: (2) Հատվածն օգտագործված է Ռիկ Ռենների *«Յունարենի գանձերը»* գրքից (Տալսա՝ Օկլահոմա. «Teach All Nations», 2003թ.) էջեր 334,335: (3) Դոկտոր Մայլս Մոնրո, *«Հասկանալ աղոթքի նպատակը և զորությունը»*, (Նյու Քեսինգթոն՝ Փենսիլվանիա, «Whitaker House», 2002թ.) էջեր 22,23: (4) Սթրոնգի *«Աստվածաշնչի լիակատար համաբարբառ»*, Ջեյմս Սթրոնգ՝ Իրավագիտության և Աստվածաբանության դոկտոր (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishers», 1990թ.): (5) Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարանի» առաջին հրատարակություն* (1828թ.), պատճենման միջոցով վերահրատարակված «Foundation for Americal Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո՝ Կալիֆոռնիա, 2000թ.): (6) Վայնի *«Հին և Նոր կտակարանների խոսքերի բացատրական բառարան»*, Վ. Ի. Վայն (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishing», 1996թ.), էջ 233: (7) Տե՛ս Նշում 2, էջ 710: (8) Բոբ Սորջ. *«Ծածուկ վայրի գաղտնիքները»* (Գրինվուդ՝ Միսսուրի, «Oasis House», 2001թ.), էջ 122: (9) Չարլզ Ռ. Սուինդոլ. *«Բնավորության որոնումներ»* (Փորթլենդ՝ Օրեգոն. «Multnomah Press», 1987թ.) էջեր 130,132: (10) Տե՛ս Նշում 4: (11) Տե՛ս Նշում 6, էջ 686: (12) Տե՛ս Նշում 4: (13) Տե՛ս Նշում 5: (14) Հատվածն օգտագործված է Ջոյս Մայերի *«Խոսքը, անունը, արյունը»* գրքից (Նյու Յորք՝ Նյու Յորք. «Warner Faith», 2003թ.) էջեր 133,134:

Աշխատանք

«Երբեք մի՛ հանձվեք: *Պատ-
րաստակամորեն հետևե՛ք Սուրբ
Հոգուն և ծառայե՛ք Տիրոջը: Թող
որ ձեր հույսն ուրախացնի ձեզ:
Համբերատա՛ր եղեք նեղության
ժամանակ և երբեք մի՛ դադարեք
աղոթել»:*

**— Հռոմեացիների 12.11,12,
CEV**

Գլուխ 12

ԵՐԲԵ՛Ք ՉՀԱՆՁՆՎԵՔ

Խնդրում ենք՝ օգտվել ուսումնական դասընթացի 12-րդ դասի և «Անկոտրում հոգի» գրքի 16-րդ, 17-րդ և 18-րդ գլուխներից:

Խ 1. Հիսուսն ասաց, որ վերջին օրերում շատերը կհանձնվեն և Իր հանդեպ ունեցած հավատքը կթողնեն: Հալածանքներն ու նեղությունները կշատանան, և այն մարդիկ, ովքեր սխալ պատկերացում ունեն դրանց մասին, կնահանջեն (տե՛ս Մատթ. 24.9,10, Ա Պետրոս 4.1): Ինչպիսի՞ պատկերացում ունեք չարչարանքների և փորձությունների մասին: Ինչպե՞ս է այն փոխվել այս դասընթացների շնորհիվ:

_____
_____
_____
_____
_____
_____

2. Հանձնվելը դրսևորվում է տարբեր կերպերով, բայց հաճախ՝ *փոխզիջման* տեսքով, երբ մենք մի փոքր թերանում ենք ճշմարտության այն չափանիշից, որը հայտնի է մեզ: Արդյո՞ք դուք այսպես եք վարվում: Արդյո՞ք դուք որևէ կերպով փոխզիջման եք գնում ձեր մտքով, խոսքով կամ գործերով: *Լռությամբ մոտեցեք Աստծուն:* Խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ ձեր սիրտը: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է, ներառյալ՝ ցանկացած քայլ, որ Նա պատվիրում է ձեզ անել:

_____
_____
_____
_____
_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Ոչ ոք չի կարող հարկադրել ձեզ՝ հանձնվել: Աստված անկասկած չի անի դա, իսկ սատանան չի կարող: Միայն դո՛ւք կարող եք կայացնել այդ որոշումը: Այնպես որ, մի՛ հանձնվեք: Հաղթելու վարձատրությունը թե՛ այս, թե՛ հաջորդ կյանքում շատ ավելին է, քան այն հակառակությունները ու դժվարությունները, որոնց բախվում եք:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Ընդունե՛ք Աստծո տեսանկյունը: Կատարե՛ք այն, ինչ Աստծո Խոսքը պատվիրում է ձեզ: Հետևե՛ք Սուրբ Հոգու մղումներին, և դուք կիմանաք՝ ինչպես իմաստուն վարվել: Սրտանց որոշում կայացրեք, որ ամեն օր վստահելու եք Աստծուն: Շարունակե՛ք կատարել այն առաջադրանքները, որ Աստված տվել է ձեզ, և դուք իմաստությամբ կվարվեք ...ձեր ամբողջ կյանքում՝ մինչև հավիտենությանը հասնելը»:

— Չարլզ Սթենլի[1]

«Մի՛ դադարիր: Մի՛ հանձնվիր: Քո բոլոր ջանքերն արժեն այն ամենը, ինչ դու կստանաս վերջում»:
— Մատթեոս 10.22, MSG

Խ 3. Այսօր շատերը, ովքեր դավանում են, թե քրիստոնյա են, վերաձևավորում են Սուրբ գիրքը, որպեսզի այն համապատասխանեցնեն հասարակական միտումներին, փոխանակ թույլ տան, որ Սուրբ գրքի ճշմարտությունը ձևավորի իրենց: Այլ խոսքերով՝ նրանք Աստծո Խոսքում գտնում են այն, ինչ ցանկանում են, ոչ թե ընդունում են այն, ինչ իրականում ասվում է: Ինչո՞ւ է սա վտանգավոր: Ինչպե՞ս կարող եք պաշտպանվել սրանից:

_____
_____
_____

ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ և ՑԱՆԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Անօրինություն» նշանակում է «մարդու վիճակն առանց օրենքի՝ թե՛ անիրազեկության, թե՛ խախտման պատճառով. անարգանք (արհամարհանք, ատելություն) օրենքի նկատմամբ»[2]: Վեբսթերն այն սահմանում է որպես «օրենքի կողմից չսահմանափակված լինելու հատկանիշ կամ վիճակ. անկարգություն»[3]:

«Ցանկասիրություն» նշանակում է «սանձարձակություն, կենդանական ցանկությունների անբնական բավարարում, կրքոտություն և անառակություն՝ ավելորդ և անսահմանափակ կերպով»[4]: Սուրբ գրքում *«ցանկասիրություն»*-ը նույնպես նշանակում է «չսանձված կիրք, ավելորդություն, անամոթ վարք, անարգ վարք, կեղտոտ կապեր և անբարոյականություն»[5]: Անօրինությունը և ցանկասիրությունը շարունակաբար օգտագործվում են Սուրբ գրքում՝ նկարագրելու համար ոչ միայն աշխարհի, այլ նույնպես *եկեղեցու* վիճակը վերջին ժամանակներում:

Խ 4. Առաջին եկեղեցու մեծագույն խնդիրն օրինապաշտությունն էր: Սակայն ամենամեծ խնդիրները, որոնց մենք բախվել ենք վերջին օրերի եկեղեցում, անօրինությունն ու ցանկասիրությունն են: Ահա թե ինչու է քրիստոնյա լինելն այդքան դժվար: Ո՞րն է այս տեսակի կենսաոճի գլխավոր պատճառը այն մարդկանց կյանքում, ովքեր իրենց հավատացյալներ են համարում: Ինչո՞վ է վտանգավոր այս միտումը:

Անօրինության և ցանկասիրության գլխավոր պատճառը քրիստոնյաների կյանքում հետևյալն է…

_____
_____
_____

Այս միտումը վտանգավոր է, որովհետև…

_____
_____
_____

ԽՍ 5. Հիսուսն Իր վերադարձից առաջ ընկած ժամանակահատվածը համեմատեց *Նոյի օրերի* և *Ղովտի օրերի հետ*: Երկուսն էլ Աստծո հետևորդներ էին համարվում, սակայն նրանց բնավորությունն ու կենսակերպը տարբերվում էին: Որո՞նք էին այդ տարբերությունները: Ո՞ւմ եք ավելի շատ նմանեցնում ձեզ: Ինչո՞ւ:

Նոյի բնավորությունը և կենսակերպը Ծննդոց 6.1-7.5, 8.15-22	**Ղովտի բնավորությունը և կենսակերպը** Ծննդոց 13.10-13, 19.1-38

Ես ավելի շատ ինձ նմանեցնում եմ _____-ին, որովհետև…

Հավելյալ նյութ խմբակի ավագի համար. Հիսուսը խոսում է Նոյի և Ղովտի օրերի մասին Մատթեոս 24.36-39 և Ղուկաս 17.26-33 խոսքերում:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Քրիստոնեությունը մշտապես կվերարտադրվի ըստ իր տեսակի: Աշխարհիկ, ոչ հոգևոր եկեղեցին… տարածվելով այլ երկրներում՝ նույնպիսի քրիստոնեություն կձևավորի: Նորադարձի հատկանիշները որոշում է ոչ միայն Խոսքը, այլ նույնպես վկայողի բնավորությունը: Եկեղեցին չի կարող անել իրեն վերարտադրելուց ավելին: Ինչպիսին այն մի երկրում է, այնպիսին էլ կլինի մյուսում»:

— Ա. Ու. Թոզեր[6]

«Մենք ամեն կողմից նեղությունների մեջ ենք, բայց ճնշված կամ կոտրված չենք: Մենք շփոթված ենք, քանի որ չգիտենք, թե ինչու է ամեն ինչ այսպես դասավորվում, բայց չենք հանձնվում և չենք թողնում մեր գործը: Մենք հետապնդված ենք, բայց Աստված երբեք չի թողնում մեզ: Մեզ վայր են գցում, բայց մենք կրկին ոտքի ենք կանգնում և շարունակում ենք գնալ»:

— Բ Կորնթացիների 4.8,9, TLB

ԽՍ 5. Աստված չի ցանկանում, որ վերջին օրերում, քրիստոնյա լինելու պատճառով, դուք ընկճված զգաք: Փոխարենը՝ Նա ցանկանում է, որ դուք մոտենաք Իրեն, ստանաք Իր շնորհքը և ավելի խոր պատկերացում ունենաք Նրա զորության մասին, որ կարող է պահպանել ձեզ:

Մտորե՛ք այս զարմանալի խոստումների շուրջ.

«Ողջ փառքն Աստծուն, Ով կարող է պահպանել ձեզ նահանջելուց և մեծ ուրախությամբ բերել ձեզ Իր փառավոր ներկայության մեջ՝ առանց որևէ արատի»:

— Հուդա 24, NLT

«Տերը քո պահապանն է: Տերը քո շողքն է քո աջ կողմից [այն կողմը, որտեղ չի պահվում վահանը]: Արևը չի զարկի քեզ ցերեկվա, ո՛չ էլ լուսինը՝ գիշերվա ընթացքում: Տերը կպահպանի քեզ ամեն չարիքից. Նա կպահպանի քո կյանքը: Տերը կպահպանի քո դուրս գալը և քո ներս մտնելը՝ սկսած այս ժամանակվանից մինչև հավիտյան»:

— Սաղմոս 121.5-8, AMP

«Այն օրվանից, ինչ դուք ծնվեցիք, ես տանում էի ձեզ ձեռքերիս վրա: Ես նույնը կլինեմ, անգամ երբ դուք ծերանաք և ճերմակեք, և կհոգամ ձեր մասին: Ես ստեղծեցի ձեզ և ես կկրեմ ձեզ ու միշտ կպահպանեմ: Կարո՞ղ է որևէ մեկը համեմատվել Ինձ հետ: Մի՞թե ինչ-որ մեկը հավասար է Ինձ»:

— Եսայի 46.3-5, CEV

«Հայր Աստված Իր աչքը ձեզանից յուրաքանչյուրի վրա է պահում և մտադրված է Հոգու աշխատանքով հնազանդ պահել ձեզ Հիսուսի զոհի միջոցով: Թող Աստծուց եկող ամեն բարիք ձերը լինի»:

— Ա Պետրոս 1.2, MSG

Ի՞նչ նոր բան է Աստված ցույց տալիս այն մասին, որ կարող է պահպանել ձեզ:

_____

_____

_____

_____

*«Թող Ինքը՝ Աստված, Ով ամեն ինչ սուրբ և ամբողջական է դարձնում, սուրբ և ամբողջական դարձնի ձեզ, միասնաբար՝ ձեր հոգին, շունչը և մարմինը, և **պահի ձեզ պատշաճ վիճակում** մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գալուստի համար: Նա, Ով կանչեց ձեզ, կատարելապես արժանահավատ է: Եթե Նա ասաց, Նա կանի դա»:*

— Ա Թեսաղոնիկեցիների 5.23,24, MSG

7. Թեև Աստված խոստանում է, որ կպահպանի մեզ, ուրեմն կա ինչ-որ բան, որ մենք պետք է անենք: Ուշադիր կարդացե՛ք այս խոսքերը և պարզեք, թե ինչ պետք է անեք Աստծո պաշտպանությունն ունենալու համար: Ինչ-պե՞ս է դա կապակցվում այն բաների հետ, ինչ դուք արդեն սովորել եք այս դասընթացի ընթացքում:

«Որովհետև դու հսկեցիր և պահեցիր Իմ խոսքը համբերատար կերպով դիմանալու մասին [պինդ պահեցիր Իմ դասը համբերության և սպասումով դիմանալու մասին, որ տվեցի քեզ], ես նույնպես [ապահով] կպահեմ քեզ փորձության (ստուգման) ժամին, որը գալիս է ողջ աշխարհի վրա՝ փորձելու նրանց, ովքեր բնակվում են երկրի վրա: Ես շուտով գալիս եմ. պի՛նդ պահիր այն, ինչ ունես, որպեսզի ոչ ոք չկարողանա թալանել և զրկել քեզ քո թագից»:

— Հայտնություն 3.10,11, AMP

«Ես կփրկեմ քեզ նրանցից, ումից դու շատ ես վախենում: Քանի որ դու վստահեցիր Ինձ, ես կտամ քեզ քո կյանքը՝ որպես վարձատրություն: Ես՝ Տերս, խոսեցի»:

— Երեմիա 39.17,18, NLT

«Ես [դրականորեն] համոզված եմ, որ Նա կարող է պաշտպանել և պահպանել այն, ինչ վստահվել է ինձ և ինչը ես հանձնել եմ [Նրան] մինչև այն օրը: Պի՛նդ բռնիր այն ամբողջական և առողջ ուսմունքը, որ դու լսեցիր Ինձանից և հետևի՛ր դրան [ողջ] հավատքով և սիրով, որոնք [մեզ համար] Քրիստոս Հիսուսում են»:

— Բ Տիմոթեոս 1.12,13, AMP

Աստծո պահպանող զորությունն իմ կյանքում ապահովելու համար ես պետք է անեմ հետևյալը.

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ԽՍ

8. Երբեք չհանձնվելու մեծագույն դրդապատճառներից մեկն այն է, որ իմանաս՝ Աստված երբեք չի հանձնվի ձեզ հետ: Նա խոստացել է զորացնել ձեզ մինչև այն օրը, երբ Իր ծրագիրը ձեր կյանքում լիովին իրականանա: Ուշադի՛ր մտորեք այս աստվածաշնչյան խոսքերի շուրջ.

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Սուրբ գիրքն ասում է մեզ, որ Տերը մեր պահապանն է: Բայց այն, որ Նա պահում է մեզ, չի նշանակում, որ մենք չենք բախվի փորձություններին, քանի որ անգամ Հիսուսը փորձվեց: Ավելի ճիշտ՝ Աստված մեզ պահպանում է անմիջապես փորձությունների և նեղությունների ժամանակ: Եվ Նա պահում է մեզ Իր Խոսքով: Այդ իսկ պատճառով, եթե մենք ցանկանում ենք սուրբ լինել, ապա պետք է մտերմորեն ճանաչենք Նրան, Ով, ըստ Աստվածաշնչի, Խոսքն է»:

— Ֆրենսիս Ֆրենջիփեյլ[7]

«Այժմ դուք ունեք ամեն հոգևոր պարգևը, որ պետք է ձեզ, քանի որ պատրաստակամորեն սպասում եք մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերադարձին: Նա *կզորացնի ձեզ մինչև վերջ*, որպեսզի դուք ազատ լինեք ամեն մեղադրանքից այն օրը, երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսը վերադառնա: Աստված կանի սա, որովհետև Նա հավատարիմ է՝ անելու այն, ինչ ասում է, և Նա հրավիրել է ձեզ՝ համագործակցելու Իր Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ»:

— Ա Կորնթացիների 1.7-9, NLT

«Ես զորություն ունեմ ամեն բաների համար Քրիստոսի մեջ, Ով զորացնում է ինձ [ես պատրաստ եմ ամեն ինչի և հավասարապես եմ վերաբերվում ամեն ինչին Նրա միջոցով, Ով *ներարկում է ներքին զորություն իմ մեջ*. ես բավարարված եմ Քրիստոսի լիությամբ]»:

— Փիլիպեցիների 4.13, AMP

«Աստված չի գալիս և գնում: Աստված մնայուն է: Նա ամեն ինչի Արարիչն է, ինչ դուք տեսնում կամ պատկերացնում եք: Նա չի հոգնում, կանգ չի առնում՝ շունչ քաշելու համար: Եվ Նա մանրամասնորեն գիտի ամեն ինչ: *Նա ուժով է լցնում նրանց, ովքեր հոգնում են, թարմ ուժ է տալիս նրանց, ովքեր ետ են մնացել*: Որովհետև նույնիսկ երիտասարդները հոգնում են և ետ մնում, նրանք իրենց ուժերի կիզակետում սայթաքում և ընկնում են: Բայց ովքեր սպասում են Աստծուց, թարմ ուժ են ստանում: Նրանք տարածում են իրենց թևերը և սավառնում արծիվների պես, նրանք վազում են և չեն հոգնում, քայլում են և ետ չեն մնում»:

— Եսայի 40.28-31, MSG

«Ես աղոթում եմ, որ Իր փառավոր, անսահմանափակ պաշարներից *Նա*, Իր Հոգու միջոցով, *զորացնի ձեզ ներքին զորությամբ*: Այդ ժամանակ Քրիստոսը կբնակվի ձեր սրտերում, քանի որ դուք վստահում եք Նրան: Ձեր արմատները կաճեն Աստծո սիրո մեջ և ուժեղ կպահեն ձեզ: Եվ դուք, ինչպես և Աստծո ժողովուրդը, զորություն կունենաք հասկանալու համար, թե որքան լայն, որքան երկար, որքան բարձր և որքան խորն է Նրա սերը»:

— Եփեսացիների 3.16-18, NLT

Ինչպե՞ս են այս ճշմարտությունները խրախուսում ձեզ հավատալ Աստծուն՝ զորություն ստանալու համար: Կրկին՝ ի՞նչ պետք է անեք դրա համար:

_____

_____

_____

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Աստված հավատք է տվել՝ ձեզ հանդիպած ամեն դժվարության և հակառակության միջով անցնելու համար: Վազե՛ք այն ընթացքը, որ ձեր առջև է, անկոտրում կերպով՝ վստահորեն պայքարելով ցանկացած հակառակության դեմ, որ կհանդիպեք ճանապարհին: Դուք հաղթո՛ղ եք: Ձեր մեջ Նրա սերմն է, Ով կրեց մեծագույն հակառակությունը: Նրա զորությունը ձեզանում է: Դուք ունեք Նրա բնությունը: Դուք ստեղծված չեք հանձնվելու, ընկրկելու, թուլանալու և փոխզիջման գնալու համար: Դուք օրհնվել եք Աստծո զարմանալի շնորհքով: Կարևոր չէ, թե որքան մեծ է հակառակությունը ձեր կյանքում. դիտարկե՛ք այն որպես աստիճան՝ իշխանության հաջորդ մակարդակ բարձրանալու համար:

9. Անմիջապես այն բանից հետո, երբ Պողոսը հորդորում է մեզ՝ *հարատևել Սուրբ գրքի ճշմարտության մեջ*, որպեսզի չնահանջենք հավատքից և չմերժենք Աստծո շնորհքը, Նա անչափ կարևոր պատվեր է տալիս: Դանդաղորեն կարդացե՛ք նրա խոսքերը՝ ընդունելով այնպես, ասես անձամբ Աստված դիմում է ձեզ:

«Ես պատվիրում եմ [քեզ] Աստծո և Քրիստոս Հիսուսի ներկայությամբ, Ով պետք է դատի կենդանիներին և մեռելներին, նաև Նրա գալուստով և արքայությամբ (դրանց լույսի ներքո). Ազդարարի՛ր և քարոզի՛ր Խոսքը: Պահի՛ր հրատապության զգացումը [հետևի՛ր, մարդկանց մոտ եղիր և պատրաստ եղիր]՝ անկախ այն բանից, հնարավորությունը բարենպա՞ստ է, թե՞ ոչ: [Անկախ այն բանից՝ հարմա՞ր է, թե՞ ոչ, ընդունելի՞ է, թե՞ անընդունելի, դու՝ որպես Խոսքի քարոզիչ, պետք է ցույց տաս մարդկանց, թե ինչն է նրանց կյանքում սխալ]: Եվ համոզի՛ր նրանց, հանդիմանի՛ր և ուղղի՛ր, զգուշացրո՛ւ և հորդորի՛ր և խրախուսի՛ր՝ չքուլանալով ու չսպառվելով համբերությամբ և ուսմունքով»:

— Բ Տիմոթեոս 4.1,2, AMP

Ի՞նչ է Աստված ասում անձամբ ձեզ այս պատվերով: Ինչպե՞ս է դա դրդում ձեզ գործել:

_____

_____

_____

10. Մոտենալով այս դասընթացի ավարտին՝ կա՛նգ առեք և տվե՛ք ձեզ այս կարևոր հարցը. *«Արդյո՞ք ես ապրում եմ անկոտրում կյանքով, թե՞ հանձնվել եմ: Ես իրականո՞ւմ ձգտում եմ վերին կոչմանը, որ Աստված տվել է իմ կյանքի համար, թե՞ պարզապես ձևական կյանքով եմ ապրում:* Լռությամբ մոտեցե՛ք Տիրոջը և խնդրեք Նրան՝ քննել ձեր սիրտը և ցույց տալ, թե որ դիրքում եք դուք: Եթե դուք նահանջել եք կամ դադարել եք առաջ շարժվելուց, խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ պատճառը: Գրե՛ք այն, ինչ Նա ասում է ձեզ:

_____

_____

_____
_____
_____
_____
_____
_____

«Մնա՛ Աստծո հետ: Եղի՛ր համարձակ: Մի՛ հանձնվիր: Ես կրկին կասեմ սա. Մնա՛ Աստծո հետ»:

— Սաղմոս 27.14, MSG

Աղոթք

Հա՛յր, շնորհակալություն, որ այս հրաշալի դասընթացի ժամանակ սովորեցնում էիր ինձ: Իմ սրտի ցանկությունն է՝ ապրել Քեզ համար անկոտրում կյանքով և երբե՛ք չհանձնվել: Խնդրում եմ, տո՛ւր ինձ Քո շնորհքն ամեն օր, որպեսզի համբերեմ և ապրեմ Քեզ համար: Օգնի՛ր ինձ՝ հարատևել Քո Խոսքի ճշմարտության մեջ և տեղի չտալ փոխզիջմանը: Թող ես լինեմ Քո սիրո, խաղաղության և զորության վառվող կրակը երկրի վրա: Ապրի՛ր ինձանով, Սո՛ւրբ Հոգի: Օգնի՛ր ինձ՝ լսել Քո ձայնը և հնազանդորեն հետևել Քեզ: Օգնի՛ր ինձ՝ պատրաստ լինել ամեն ժամանակ Քո վկան լինելու համար, և պատրաստ լինել Քո վերադարձին, Հիսուսի անունով: Ամե՛ն:

ՀԱՐԹԵԼՈՎ ՈՒՂԻՆ

«Ահա այն սովորությունները, որոնց շնորհիվ դուք կապրեք լիարժեք քրիստոնեական կյանքով: Առաջինը՝ ձեր Աստվածաշունչն ամեն օր ուսումնասիրելը և դրա շուրջ խորհելն է: Երկրորդը՝ աղոթքի մարդ լինելն է՝ մշտապես և կարգապահությամբ աղոթելով: Կատարեք սրանք նորից ու նորից, ամեն իրավիճակի համար: Կլինեն օրեր, երբ դուք չեք ցանկանա վարվել այսպես: Բայց հետևողական լինելու որոշումը կառանձնացնի ձեզ գաղջ հավատացյալների խմբից: Դրանց պատճառով դուք կվերապրեք Աստծուն այնպես, որ անգամ չէիք էլ պատկերացնում: Կարդացե՛ք, աղոթե՛ք, ծառայե՛ք, կրկնեք այս ամենը: Կատարեք սա ամեն օր, և այն զարմանալի օրը, երբ Քրիստոսը վերադառնա, դուք կկանգնեք Նրա առջև առանց ամոթի»:

— Դեյվիդ Ջերեմայա[8]

Ծարաթական ԿՈՉ

Կա չեմպիոնների սերունդ, ովքեր չեն գնում փոխզիջման. նրանց վիճակված է աճել մեր ժամանակվա եկեղեցում: Հավատացյալների ժողովը ոչ միայն պետք է վայելի հաղորդակցությունը և փրկության ուրախությունը, այլ նույնպես հակառակվի խաբեությանը և օգնի մարդկանց՝ հաստատուն լինել Քրիստոսի մարմնում: Միացե՛ք կամ առաջնորդե՛ք մի խումբ մարդկանց, ովքեր մարզում և զորացնում են միմյանց Աստծո շնորհքի զորության և իշխանության մեջ: Օգտագործե՛ք այս դասընթացը և նմանատիպ այլ նյութեր ու մասնակցեք Սուրբ Հոգու աշխատանքին՝ սրբացնելով և զորացնելով Նրա զավակներին:

«Եկե՛ք մտածենք մեկս մյուսին սիրո գործերի և բարի գործերի մղելու մասին: Եվ եկե՛ք չանարգենք մեր միասին հավաքվելը, ինչպես որոշ մարդիկ են անում, բայց խրախուսե՛ք մեկդ մյուսին, հատկապես հիմա, երբ Նրա վերադարձի օրը մոտենում է»:

— Եբրայեցիների 10.24,25, NLT

Օր 1. ՀԱՐԱՏԵՎԵ՛Ք ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Որովհետև քո սերը մշտապես իմ առջև է, և ես շարունակաբար քայլում եմ Քո ճշմարտության մեջ»:

— Սաղմոս 26.3, NIV

Շատ հավատացյալներ ցանկանում են իմանալ, թե երբ է Քրիստոսը վերադառնալու: Հետաքրքիր է, որ մինչև Իր վերադարձի մասին աշակերտներին պատմելը՝ Հիսուսը խիստ զգուշացում արեց. «Զգո՛ւյշ եղեք, որ ոչ մեկը չխաբի ձեզ» (Մատթեոս 24.4, NIV, Մարկոս 13.5, Ղուկաս 21.8):

Այս վերջին օրերում խաբեությունն այնքա՜ն շատ է: Խաբեության վարակից ազատ լինելու և երբեք չհանձնվելու համար մենք պետք է *հարատևենք ճշմարտության մեջ*: Այս դասընթացի ամբողջ ժամանակահատվածում մենք ընդգծում էինք Աստծո Խոսքի կարևորությունը: Աստծո Խոսքը հավիտյան հաստատված է Երկնքում, և այն երբեք չի փոխվի: Այն զորություն ունի ձեր հոգին փրկելու, ձեր սիրտը հսկելու և ձեզ անսուրբ, մարմնական մտածելակերպից ազատելու համար:

Ուշադի՛ր մտորեք այս զորավոր խոսքերի շուրջ.

«Մնացե՛ք այն բաների մեջ, որ սովորել և հավատացել եք... Չկա ոչինչ Աստծո գրված Խոսքի պես, որ ցույց է տալիս ձեզ փրկության ճանապարհը Քրիստոս Հիսուսի հանդեպ ունեցած հավատքի միջոցով: Սուրբ գրքի յուրաքանչյուր մասն Աստծուց ոգեշնչված է և օգտակար այս կամ այն կերպով. այն ցույց է տալիս ճշմարտությունը, բացահայտում է մեր ապստամբությունը, ուղղում մեր սխալները, սովորեցնում մեզ ապրել Աստծուն ցանկալի ձևով: Խոսքի միջոցով մենք զարգանում և կազմակերպված ենք դառնում՝ կատարելու այն առաջադրանքները, որ Աստված որոշել է մեզ համար»:

— Բ Տիմոթեոս 3.14-17, MSG

«Այս մարգարեական խոսքը հաստատվեց մեզ համար: Դուք լավ կանեք, եթե շարունակ ուշադրություն դարձնեք դրան: Այն միակ լույսն է, որ դուք ունեք այս խավար ժամանակներում»:

— Բ Պետրոս 1.19, MSG

ԶՈՐԱՎՈՐ ՀԻՄՔ

Ճշմարտությունը նորածև չէ: Այն ժամանակի ընթացքում հաստատ է մնում և չի կրում մշակույթի ազդեցությունը: Այս աշխարհը հրապուրում է իրեն հետևելու համար, բայց դա ընդամենը տանելու է մեզ խաբեության: Անաստված նորածև մշակույթի ազդեցությունը կանխելու համար մենք պետք է հարատևենք Աստծո Խոսքի ճշմարտության մեջ:

«Ինչպես որ դուք ընդունեցիք Քրիստոս Հիսուսին որպես Տեր, պետք է շարունակեք հետևել Նրան: Թող ձեր արմատները խորանան Նրա մեջ, և թող ձեր կյանքերը կառուցվեն Նրա վրա: Այդ ժամանակ ձեր հավատքը կզորանա այն ճշմարտության մեջ, որ ձեզ սովորեցրել են»:

— Կողոսացիների 2.6,7, NLT

Ինչպե՞ս է Աստծո Խոսքի մեջ հարատևելը պաշտպանում ձեզ խաբեությունից և փոխզիջման գնալուց:

_____

Հիշո՞ւմ եք Աստծո Խոսքով լցվելու ծրագիրը, որ մշակել էիք: Եթե ոչ, ապա վերադարձե՛ք 4-րդ գլխին և վերանայե՛ք այն: Այդ ծրագրի ո՞ր մասն է օգտավետ ձեզ համար, իսկ ո՞րը՝ ոչ: Փոփոխե՛ք այն՝ կատարելով այն ճշտումները, որ Սուրբ Հոգին ցույց է տալիս ձեզ:

Իմ ծրագիրն Աստծո Խոսքի մեջ հարատևելու համար հետևյալն է...

_____

_____

Օր 2. ՊԱՏՐԱ՛ՍՏ ԵՂԵՔ ԱՄԵՆ ԺԱՄԱՆԱԿ

«Դուք պետք է նաև **պատրաստ լինեք ամեն ժամանակ**, որովհետև Աստծո Որդին կգա, երբ Նրան ամենաքիչն են սպասելու»:

— Մատթեոս 24.44, NLT

Այն բանից հետո, երբ Հիսուսը պատվիրեց Իր աշակերտներին զգուշանալ խաբեությունից, Նա նույնպես հանձնարարեց նրանց *ամեն ժամանակ պատրաստ լինել* Իր վերադարձին: Սա վերաբերում է նաև մեզ, այսինքն՝ Նրա աշակերտներին, որ ապրում ենք այսօր: Խոսքը շարունակաբար ասում է մեզ, որ Նա վերադառնալու է՝ *ինչպես գողը*՝ գիշերով (տե՛ս Մատթ. 24.43, Ա Թեսաղ. 5.2-4, Բ Պետր. 3.10, Հայտն. 3.3 և 16.15):

Կարդացե՛ք տասը կույսերի առակը Մատթեոս 25.1-13-ում:

Ի՞նչ ընդհանրություն կար իմաստուն և հիմար կույսերի մեջ: Ո՞րն էր նրանց տարբերությունը:

_____

_____

Ի՞նչ կարող եք սովորել այս առակից և կիրառել ձեր կյանքում:

_____

_____

«Եկե՛ք ցնծանք և ուրախ լինենք և փա՛ռք տանք Նրան: Որովհետև Գառան հարսանիքը եկել է, և Նրա հարսնացուն պատրաստել է իրեն»:

— Հայտնություն 19.7, NIV

Նրա վերադարձին պատրաստ լինելու համար մենք նույնպես պետք է պատրաստակամորեն վկայենք Նրա մասին: Ա Պետրոս 3.15-ում «Մեսիջ» թարգմանության մեջ գրված է. «Թո՛ղ ձեր սրտերը մշտապես ուշադրություն դարձնեն և մեծարեն Քրիստոսին՝ ձեր Տիրոջը: **Պատրա՛ստ եղեք խոսել** և պատասխանել յուրաքանչյուրին, ով կհարցնի ձեզ, թե ինչո՞ւ եք ապրում այսպես: Մշտապես արեք դա ծայրաստիճան քաղաքավարությամբ»:

Եթե դուք ընդամենը մի քանի րոպե ունենաք ձեր շրջապատում կամ աշխատավայրում ինչ-որ մեկի հետ «խոսելու» համար, այն մասին, թե ինչու եք ապրում այսպիսի կյանքով, ի՞նչ կասեիք դուք: Մի քանի րոպե հատկացրեք՝ կազմելու համար ձեր վկայությունը, որպեսզի պատրաստ լինեք՝ այն պատմել մարդկանց: **Ես հետևում եմ Հիսուս Քրիստոսին, որովհետև...**

_____

_____

_____

_____

_____

_____

Օր 3. ԶԲԱՂՎԱԾ ԵՂԵՔ ԱՍՏԾՈ ԳՈՐԾՈՎ

«Մենք պետք է… զբաղված լինենք Նրա գործով, քանի դեռ ցերեկ է»:
— Հովհաննես 9.4, AMP

Հարատևելով ճշմարտության մեջ՝ դուք պատրաստ կլինեք Քրիստոսի վերադարձին և պատրաստ կլինեք Նրա վկաները լինելու: Նրա վկան լինելը նույնպես նշանակում է կատարել այն աշխատանքը, որի համար Նա կանչել և պատրաստել է ձեզ՝ Իր արքայությունն ընդարձակելու և Իրեն փառք բերելու համար: Հիսուսն ասում է. «Օրհնություններ ձեզ, եթե Ես վերադառնամ և գտնեմ ձեզ ձեր գործը հավատարմորեն անելիս: Ես կտամ նման հավատարիմներին իշխանություն ամեն ինչի վրա, որ պատկանում է Ինձ» (Մատթեոս 24.46,47, TLB):

Ուշադի՛ր կարդացեք տաղանդների մասին առակը **Մատթեոսի 25.14-30-ում:**

Ի՞նչ են խորհրդանշում այս տաղանդները մեր կյանքում գործնական առումով:

_____

_____

Տերը տարբեր քանակությամբ տաղանդներ տվեց: Ձեր կարծիքով՝ ի՞նչ է սա նշանակում:

_____

_____

Հակադրե՛ք հինգ կամ երկու տաղանդ ստացած ծառաների սրտի դրդապատճառը մեկ տաղանդ ստացողի սրտի հետ: Ո՞ւմ ավելի կնմանեցնեիք ձեզ:

_____

_____

Արդյո՞ք այն փաստը, որ Տերը վերադառնալու է և հաշիվ է պահանջելու ծառաներից, ինչ-որ բանի է դրդում ձեզ:

_____

_____

Առնչվող սուրբգրային հատվածներ. Հռոմեացիների 12.5-8, 14.12

«Աստված Իր բազմազան հոգևոր պարգևներից տվել է ձեզանից յուրաքանչյուրին: Օգտագործե՛ք դրանք մեկդ մյուսին ծառայելու համար: Դուք ունեք խոսելո՞ւ պարգև, այդ դեպքում խոսե՛ք այնպես, ասես Աստված անձամբ խոսում է ձեր միջոցով: Դուք ունեք մարդկանց օգնելո՞ւ պարգև, ուրեմն արեք դա այն ուժով և եռանդով, որ Աստված մատակարարում է: Այդ ժամանակ ինչ որ անեք, փառք կբերի Աստծուն Հիսուս Քրիստոսի միջոցով»:
— Ա Պետրոս 4.10, NLT

Կարդացե՛ք, թե ինչ է ասում Հիսուսն անմիջապես այս առակից հետո՝ Մատթեոս 25.31-46-ում:

Ինչպե՞ս դուք կարող եք ձեր առօրյա կյանքում զբաղված լինել Աստծո գործով:

_____

_____

Օր 4. ՄՆԱՑԵ՛Ք ԱՍՏԾՈ ՍԻՐՈ ՄԵՋ

«Մնացե՛ք Աստծո սիրո մեջ՝ սպասելով, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողորմությունը հասցնի ձեզ հավիտենական կյանքին»:

— Հուդա 21, NIV

Հիսուսն ասում է, որ վերջին օրերում «չարը կտարածվի և կդրդի շատ մարդկանց՝ դադարել սիրել միմյանց: Բայց եթե դուք հավատարիմ մնաք մինչև վերջ, կփրկվեք» (Մատթեոս 24.12,13, CEV): Հավատարիմ մնալու համար պետք է մնալ Աստծո սիրո մեջ:

Սիրո մեջ քայլելն առաջարկ չէ, այլ՝ պատվիրան. ինչպես սովորեցինք 7-րդ դասի ընթացքում, այն ճշմարիտ խոնարհության գծերից մեկն է: Սերը պարզապես Աստծո գործերից չէ: Սերը Նրա էությունն է (Ա Հովհաննես 4.8), և Նրա սերն աճում է մեզանում, երբ մենք հաղորդակցվում ենք Նրա հետ և սիրում ենք մարդկանց: «Որովհետև թեև մենք դեռ չենք տեսել Աստծուն, բայց երբ սիրում ենք միմյանց, Աստված ապրում է մեզանում, և Նրա սերը մեր ներսում ավելի է ուժգնանում» (Ա Հովհաննես 4.12, TLB):

«Ամեն ինչից առավել **ունեցե՛ք ուժգին և անսպառ սեր մեկդ մյուսի հանդեպ»**:

— Ա Պետրոս 4.8, AMP

***Կարդացե՛ք* Ա Հովհաննես 3.17,18, Առակաց 3.27,28, Գաղատացիների 6.10 և Ղուկաս 6.38 խոսքերը:**

Ի՞նչ են հայտնում այս խոսքերը ձեր հավատակիցների հանդեպ սեր ցուցաբերելու մասին:

_____

_____

Ո՞ւմ հանդեպ կարող եք այսպիսի սեր ցուցաբերել: Ինչպե՞ս:

_____

_____

«Աստված սիրում է մեզ և դրսևորում է Իր սերը գրեթե ամեն ինչում: Շփվե՛ք Նրա հետ և սովորե՛ք ապրել սիրո կյանքով: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչպես Քրիստոսը սիրեց մեզ: Նրա սերը զգուշավոր չէր, այլ՝ շռայլ: Նա չսիրեց՝ մեզանից ինչ-որ բան ստանալու համար, այլ՝ որպեսզի ամբողջովին տրվեր մեզ. սիրե՛ք այդպես»:

— Եփեսացիների 5.1,2, MSG

***Կարդացե՛ք* Մատթեոս 5.43-47, Հռոմեացիների 12.20,21 և Ղուկասի 6.35 խոսքերը:**

Ի՞նչ են սովորեցնում ձեզ այս խոսքերը ձեր թշնամիների հանդեպ սեր ցուցաբերելու մասին:

_____

_____

Ո՞ւմ կարող եք նմանատիպ սեր ցուցաբերել: Ինչպե՞ս:

_____

_____

Աղոթե՛ք այդ մարդու համար՝ խոսելով այնպիսի օրհնություններ նրա կյանքում, որ կցանկանայիք ձեզ համար: Հարցրեք Աստծուն, թե գործնականորեն ինչպես կարող եք ցուցաբերել Նրա սերն այդ մարդու կամ մարդկանց հանդեպ: Հնազանդվե՛ք Նրա տված խորհուրդներին և տեսե՛ք, թե ինչ է լինելու…

Օր 5. ՀԵՏԵՎԵ՛Ք ՀՈԳՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ

*«Նրանք, որ պատկանում են Քրիստոս Հիսուսին, գամել են իրենց մեղավոր բնության կրքերը և ցանկությունները Նրա խաչի վրա: Քանի որ մենք ապրում ենք **Հոգով, եկե՛ք հետևենք Հոգու առաջնորդությանը** մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում»:*

— Գաղատացիների 5.24,25, NLT

Պողոսի նկարագրությունը վերջին օրերի մասին Բ Տիմոթեոս 3.1-9-ում ցույց է տալիս, որ մարմինը գերիշխելու է շատ հավատացյալների կյանքերում: Նրանք աստվածասեր լինելու փոխարեն կլինեն եսակենտրոն, հպարտ և ցանկասեր: Այս ծուղակից խուսափելու համար պետք է հետևել Հոգու առաջնորդությանը: Սա նշանակում է՝ սովորել ոչ ասել աշխարհի ճանապարհներին և չհետևել սեփական մարմնին՝ այն բաներին, ինչ դուք ցանկանում եք, ինչ *դուք* մտածում եք և ինչ *դուք* զգում եք: Հայտնի ավետարանիչ, հովիվ և հեղինակ **Լեսթեր Սամրալն** ասում է.

«Սատանան կգա այնպիսի խաբուսիկ կերպարներով, որ շատերը չեն ճանաչի նրան: Նրա հնարքները կարող են այնքան անմեղ թվալ, սակայն դրանք ծուղակի մեջ կգցեն մարդկանց հոգիներն այնպես, որ նրանք այլևս չեն կարողանա երկրպագել Աստծուն: Ահա թե ինչու է *անչափ կարևոր՝ սովորել ապրել մեր հոգևոր մարդու կյանքով և մշտական ու կայուն շփում ունենալ Աստծո հետ*: Մենք կհաղթենք վերջնական պատերազմն այն դեպքում, եթե մեր հոգին թագավորի, իսկ Հիսուսը լինի մեր Տերը: Ապրելով հոգով՝ մենք դառնում ենք այն հաղթանակող եկեղեցին, որին դժոխքի դռները չեն կարող հաղթել (տե՛ս Մատթեոս 16.18)»[9]:

Աստված ասում է. «Եթե հետևեք ձեր եսասիրական ցանկություններին, կործանում կհնձեք, բայց եթե հետևեք Հոգուն, կհնձեք հավիտենական կյանք» (Գաղատացիների 6.8, CEV):

Կարդացե՛ք ստորև բերված բոլոր խոսքերը և գտե՛ք իմաստուն ցուցումներ, որ կարող եք կիրառել ձեր կյանքում:

Աշխարհի ճանապարհներին չհետևելու համար մտորե՛ք այս խոսքերի շուրջ…

Ա Հովհաննես 2.15-17, Տիտոս 2.12,13 և Հակոբոս 4.1-10

_____

Կողոսացիների 3.1-4, Գաղատացիների 6.14 և Հռոմեացիների 12.2

_____

Սուրբ Հոգուն հետևելու և ձեր մարմնի ետևից չգնալու համար մտորե՛ք այս խոսքերի շուրջ…

Հռոմեացիների 8.1-14

_____

Գաղատացիների 5.16-26

_____

Օր 6. ԵՂԵ՛Ք ՀԱՂԹՈՂ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Աստծո օգնությամբ մենք զորավոր բաներ կանենք, որովհետև Նա կտրորի մեր թշնամիներին»:

— Սաղմոս 108.13, NLT

Այս վերջին օրերին մեծ հակառակությունը ճանապարհի կիարթի մեծ հաղթողների համար. նրանք արտասովոր մարդիկ կլինեն: Այս հավատացյալները չեն ընկրկի և փոխզիջման չեն գնա: Իրենց հաստատուն համոզմունքների և գործերի շնորհիվ նրանք մեծապես կտարածեն Աստծո արքայությունը: Նրանք ճշմարտապես ակնառու կդառնան՝ որպես Նրա փառքի հզոր լույսեր՝ հասնելով գերազանց արդյունքների կյանքի բոլոր բնագավառներում: Աստված ցանկանում է, որպեսզի դուք լինեք այդ չեմպիոններից մեկը:

ՀԱՂԹՈՂ

Ըստ Նոյ Վեբսթերի բառարանի՝ *«հաղթող»*-ը «նա» է, «ով պայքարում է իր շահերի համար կամ պայքարի մեջ է մտնում ինչ-որ մեկի կամ նրա շահերի համար»: Այդպիսի մարդը «հերոս, քաջ պատերազմող» է[10]:

Հեղինակ և հովիվ **Մարկ Բեթերսոնը** հաստատում է, որ պատերազմողների այս նոր սերունդը մոտ է: Նա պնդում է.

«Աստված բարձրացնում է առյուծներ որսողների մի սերունդ, ովքեր չեն փախչում չարից: Աստված բարձրացնում է առյուծներ որսողների մի սերունդ, ովքեր խիզախություն ունեն մրցելու՝ հօգուտ արքայության: ...Առյուծներ որսողները չեն հանձնվում, նրանք հարձակվում են: Առյուծներ որսողները կրկնօրինակողներ չեն: Նրանք ստեղծողներ են: Առյուծներ որսողները հրաժարվում են իրենց կյանքն անցկացնել պաշտպանողական դիրքում: Նրանք գործուն կերպով միջոցներ են փնտրում՝ փոփոխություններ բերելու համար»[11]:

Դուք ունեք այն ամենը, ինչ պահանջվում է երբեք չհանձնվելու համար. Աստծո շնորհքի անսահման, անզուգական զորությունն է: «Աստված կօրհնի ձեզ, եթե դուք չհանձնվեք, երբ ձեր հավատքը փորձվում է: Նա կվարձատրի ձեզ փառավոր կյանքով» (Հակոբոս 1.12, CEV): Այդ վարձատրությունները նախատեսված են և՛ այս կյանքի, և՛ գալիք կյանքի համար:

Կարդացե՛ք Մատթեոս 6.19-21-ը և Ա Տիմոթեոս 6.18,19-ը: Ինչպիսի՞ ողջամիտ հեռանկարներ են տրամադրում այս խոսքերը:

_____

_____

_____

«Աստված օրհնում է ձեզ, երբ դուք ծաղրվում և հալածվում եք, երբ ձեր մասին ստում են այն պատճառով, որ դուք Իմ հետևորդներն եք: Ուրախ եղեք դրա համար: Մեծապես ուրախացե՛ք: Որովհետև Երկնքում մեծ վարձատրություն է սպասվում ձեզ»:

— Մատթեոս 5.11,12, NLT

Կարդացեք Հայտնություն 2.7, 26-28, 3.12,21, Ղուկաս 22.28,29 և Բ Տիմոթեոս 2.12 խոսքերը. տեսե՛ք, որ ձեզ հավիտենական վարձատրություն է սպասվում, եթե անկոտրում կերպով հակառակվեք թշնամուն և հարատևեք փորձություններ ժամանակ:

_____

_____

_____

Կարդացեք Մատթեոս 16.27, Հռոմեացիների 2.6-8 և Հայտնություն 22.12 խոսքերը: Ինչպիսի՞ ճշմարտություններ են կրկնվում այս խոսքերում մեր վարձատրության վերաբերյալ: Ինչպե՞ս է դա խրախուսում ձեզ, հատկապես հաշվի առնելով Ա Կորնթացիների 3.7-15-ը:

_____

_____

_____

Անգամ չկասկածեք, որ վարձատրվելու եք որպես հաղթող՝ ճշմարտության մեջ անկոտրում մնալու համար: Աստված վարձատրող է. Նա վարձատրում է նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են Իրեն և հիմնվում Իր Խոսքի վրա (Եբրայեցիների 11.6): Այնպես որ «ինչ էլ անեք, գործե՛ք ամբողջ սրտով, ասես անում եք Տիրոջ համար, այլ ոչ թե մարդկանց: Հիշե՛ք, որ Տերը որպես վարձատրություն կտա ձեզ այն, ինչ պահել է Իր ժողովրդի համար: Որովհետև այն Տերը, Ում դուք իրականում ծառայում եք, Քրիստոսն է» (Կողոսացիների 3.23,24, GNT):

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս վերջին օրերում քրիստոնյա լինելը դժվար է, բայց՝ ոչ անհնարին: Աստված զորացրել է ձեզ շնորհքով, որպեսզի ապրեք անկոտրում կյանքով՝ չնայած հակառակություններին կամ եկեղեցում գտնվող այլ մարդկանց իրավիճակին: Անկասկած՝ Նա կարող է պահպանել ձեզ և հոգալ ձեր մասին: Այնպես որ հարատևե՛ք ճշմարտության մեջ և մի՛ գնացեք փոխզիջման: Ուղղե՛ք ձեր հայացքն Աստծո երկնային մրցանակին և որոշում կայացրեք՝ երբե՛ք չհանձնվել: Հաղթելու վարձատրությունը թե՛ այս կյանքում և թե՛ հաջորդում շատ ավելի մեծ է, քան ցանկացած հակառակություն կամ դժվարություն, որոնց դուք երբևէ կբախվեք:

(1) Չարլզ Սթենլի. «Վարվել իմաստությամբ» (Նեշվիլ՝ Տենեսի. «Thomas Nelson Publishers», 2002թ.) էջ 242: (2) Թայերի *«Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան»*, Ջոզեֆ Հ. Թայեր (Grand Rapids, MI: «Baker Book House Company», 1977թ.) էջ 48: (3) Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարանի»* առաջին հրատարակություն (1828թ.), պատճենման միջոցով վերահրատարակված «Foundation for Americal Christian Education»-ի կողմից (Սան Ֆրանցիսկո՝ Կալիֆոռնիա, 2000թ.): (4) Նույնը: (5) Տե՛ս Նշում 2, էջ 79: (6) Ա. Ու. Թոզեր. *«Հոգու պատերազմը»* (Քեմփ Հիլ՝ Փենսիլվանիա. «Wing Spread Publishers», 1993թ.), էջ 124: (7) Ֆրենսիս Ֆրենջիֆեյն. *«Սրբությունը, ճշմարտությունը և Աստծո ներկայությունը»* (Սեդար Ռեփիդս՝ Ինդիանա. «Arrow Publications», 1999թ.), էջ 55: (8) Դեյվիդ Ջերեմայա. *«Ապրել վստահությամբ քաոսային աշխարհում»* (Նեշվիլ՝ Տենեսի, «Thomas Nelson», 2009թ.), էջ 182: (9) Լեսթեր Սամրալ. *«Հոգի, շունչ և մարմին»* (Նյու Քենսինգթոն՝ Փենսիլվանիա, «Whitaker House», 1995թ.), էջեր 251,252: (10) Տե՛ս Նշում 3: (11) Մարկ Բեթերսոն. *«Փոսի մեջ՝ առյուծի հետ ծյունոտ օրը»* (Կոլորադո Սփրինգս՝ Կոլորադո. «Multnomah Books», 2006թ.) էջեր 120,121:

Նշումներ

Նշումներ

Նշումներ

Նշումներ

Նշումներ

Նշումներ

Նշումներ

Նշումներ

Նշումներ

Նշումներ

Նշումներ

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

Ունենալ այնպիսի կյանք, որը նշանակություն ունի այսօր և հավիտյան:

Մենք ստեղծված ենք հավիտենականության համար: Այս կյանքը երկրի վրա ընդամենը գոլորշի է: Սակայն շատերն ապրում են այնպես, ասես այս աշխարհից բացի ոչինչ չկա: Սուրբ գրքի օրենքները և սկզբունքները կարելի է կիրառել՝ կյանքում հաջողության հասնելու համար, սակայն արդյո՞ք մենք պատրաստ ենք հավիտենականությանը: Այս զորավոր ուսմունքը՝ Աֆաբելի թագավորության այլաբանական պատմության հետ, կօգնի ձեզ հասկանալ հետևյալը. ձեր այսօրվա ընտրությունը որոշելու է, թե ինչպես կանցկացնեք հավիտենականությունը:

ԱՖԱԲԵԼ

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՀԱՆԸ

2 ժամ 30 րոպե տևողությամբ՝ 4 «CD» սկավառակով

ԱՅՍ ԷՊԻԿԱԿԱՆ ԱՈՒԴԻՈ ԹԱՏՐՈՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ՈՐ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՏՅԱՆՆ ԻՐԱԿԱՆ Է: ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՀԱՎԻՏՅԱՆ ՓՈԽՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ... ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ:

Այս աուդիո-ներկայացումը, ըստ Ջոն Բիվերի՝ «Հավիտենականությամբ շարժվողները» գրքի, կգրավի ձեր սիրտը և միտքը՝ պատկերելով կյանքը «մյուս կողմում»՝ հավիտենականության շեմին, որտեղ բոլորը պետք է կանգնեն Մեծ Թագավորի և Դատավորի առջև: Պատրաստվե՛ք իրար հաջորդող ուրախության, տրտմության, զարմանքի և հայտնության՝ տեսնելով, թե ինչպես են ոմանք ստանում հավիտենական պարգևներ, իսկ մյուսներին արքայական պահապանները վտարում դրսի խավարը՝ շղթայված ձեռքերով և ոտքերով:

ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ

Ամենա կարևոր ուղերձը հավատացյալների համար՝ մեր օրերում:

«Այս ուղերձը, երևի, ամենակարևոր ճշմարտությունն է, որին կարող եք հանդիպել ձեր կյանքում: Վիրավորանքը, որը Սատանայի խայծի հիմքն է, հաճախ ամենակարևոր խոչընդոտն է, որին մարդը պետք է դիմակայի և, որը պետք է հաղթահարի»:

ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ

Բացահայտե՛ք Աստծո գանձերը ձեր կյանքում...

Ի՞նչ է Տիրոջ երկյուղը: Ինչի՞ է այն նման: Ջոն Բիվերը բացահայտում է հաճախ անտեսված և սխալ հասկացված աստվածաշնչյան ճշմարտությունը, որը կարող է փրկել մեր կյանքը: Այն իմաստության, գիտության և Աստծո հետ մտերմության բանալին է:

Այս գիրքը կոչ է անում ձեր առօրյա կյանքում հարել Տիրոջ երկյուղին: Եթե դուք պատրաստ եք ավելի ճանաչել Աստծուն, ապա այն ձեզ համար է: Թե՛ խմբակային, թե՛ անհատական ուսումնասիրության դեպքում, այս ուշագրավ ուղերձը կվերափոխի ձեր կյանքը:

ՋՈՆԻ ԳՐՔԵՐԸ

- Սատանայի խայծը
- Կանչողի ձայնը
- Հաղթանակ անապատում
- Կոտրել երկչոտությունը
- Հավիտենականությամբ շարժվողները
- Արտասովոր կյանք
- Տիրոջ երկյուղը
- Պատվի վարձքը
- Անկոտրում հոգի

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՅՈԳԻ

ԱՅՆ ՁՈՐԱՎԱՐԺՈՒՄԸ, ՈՐԻ ԿԱՐԻՔԸ ՊՈՒՅՐ ՈՒՆԵՔ ԵՐԲԵՔ ՉՊԱՆՇՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այն աշխատանքային գիրքը, որը դուք հիմա կարդում եք, «Անկտրում հոգի» դասընթացի մասն է, որի հեղինակը Ջոն Քիվերն է: Օգտագործելով այս գիրքը հավելյալ ուսուցողական նյութերի հետ, որոնք կարող եք ներբեռնել և ծանրաբեռնվել ուսումնասիրել այս դասընթացի յուրաքանչյուր մասը, ինչը կխթանի և կհոգնի ձեր կյանքը: Պատչած կերպով ուսումնասիրելու դեպքում այն կընդլայնի ձեր քրիստոնեական ընթացքի շրջանակները և կտա ձեզ ևստեղ հաճար ավելին անելու կարողություն:

Ամբողջական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

- **«Անկտրում հոգի» գիրք**
  Սա դասընթացի միակ տպագրված մասն է: Այս գրքի էլեկտրոնային տարբերակները նույնպես կարող եք դիտել էլեկտրոնային և «PDF» ձևաչափերով:
- **«Անկտրում հոգի» սկավառակ (ուսումնական նյութերի հավաքածու)**
  Այս սկավառակը կցված է տպագրված «Անկտրում հոգի» գրքին և պարունակում է դասընթացի նյութերի մեծամասնությունը թվային տարբերակով (սկավառակի ոչ պարունակությունը նույնպես կարող եք անվճար ներբեռնել):
- **«Անկտրում հոգի» աշխատանքային գիրք և սերտողության ձեռնարկ**
  Այս գիրքը, որը հիմա կարդում եք, առկա է էլեկտրոնային և «PDF» ձևաչափերով ացանց և կից սկավառակում:
- **«Անկտրում հոգի» աուդիո գիրք**
  Անկտրում գրքի բոլոր 18 գլուխները ընթերցվում են հայերենով «MP3» ձևաչափով:
- **«Անկտրում հոգի» վիդեոդասընթաց**
  Բոլոր 12 դասերը կարող եք ներբեռնել, իսկ դասերի նմուշներն ընդգրկված են կից սկավառակում:
- **«Անկտրում հոգի» աուդիո դասընթաց**
  Բոլոր 12 դասերը հասանելի են «MP3» ձևաչափով:
- **«Երբ արթնանում են կին ազգությունները» գիրք**
  Այս գիրքն առկա է և ացանց՝ «PDF» ձևաչափով, և կից սկավառակում:

Ջոն և Լիզա Քիվերների այս և այլ ուսմունքները հայերենով
կարող եք ներբեռնել հետևյալ կայքէջերից.

www.MessengerInternational.org

www.CloudLibrary.org

Բազմաթիվ լեզուներով լրացուցիչ նյութեր կարող եք դիտել
Youtube.com և Yuku.com և այլ կայքերում, ինչպես նաև ներբեռնել դրանք:

Ունեցիր

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՈՐՅԱ ՊԱՅՔԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՄԱՐԿ

Ի՞նչ է հարկավոր թշնամու բոլոր հարձակումները հաղթահարելու, նեղության ժամանակ հաղթանակ տանելու և ձեր ընթացքը բարենպաստ կերպով ավարտելու համար: Անկոտրում հոգի: Լինել անկոտրում նշանակում է լինել համառ, դիմացկուն, անզիջում և վճռականորեն տրամադրված հաղթելու համար: Աստված զորացրել է ձեզ Իր շնորհով կանգուն իշխելու և Իր արքայությունը տարածելու համար: Նա կամենում է, որ դուք բարգավաճեք, ոչ թե պարզապես գոյատևեք մինչև Նրա վերադարձը: Հարգացնելով մեզանում անկոտրում հոգի՝ մենք կարող ենք վերապրել այս առատ կյանքը:

Ուսումնասիրելով այս դասընթացը ինքնուրույն կամ խմբով, դուք կստանաք հետևյալը.

- Ավետաբեր կյանքի զորավոր ազդեցությունը.
- Ինչ է նշանակում մտնել Աստծո արքայության մեջ և գործել այդտեղ.
- Փորձությունների անգնահատելի արժեքն ու նպատակը.
- Ինչպես պայքարել թշնամու դեմ և հաղթել նրան Աստծուց տրված հոգևոր զենքերով.
- Հնազանդության և աղոթքի արտասովոր զորությունը:

Այս հագեցած դասընթացը բաղկացած է տասներկու գլուխներից, որոնք լի են թեմային առնչվող հարցերով, տարբերային հատվածներով, ոգեշնչող մեջբերումներով և ամենօրյա ընթերցանության նյութերով: Այս ամենը նախատեսված է ձեր հավատքը զորացնելու և բոլոր հակառակությունների դեմ ձեզ սպառազինելու համար: Շաբաթական խրախուսական նյութերը կօգնեն ձեզ գործնականորեն կիրառել յուրաքանչյուր դասի սկզբունքները: Դրա հետ մեկտեղ դուք հնարավորություն ունեք առցանց օգտվել «Անկոտրում հոգի» դասընթացի հավելյալ նյութերից:
Դուք Քրիստոսի մարմնի կարևոր մասնիկն եք երկրի վրա: Աստված ձեզ տվել է այն ամենը, ինչի կարիքը դուք ունեք հաղթական կյանքով ապրելու համար: Ժամանակն է ընդլայնել ձեր հավատքությունը և զարգացնել այն զորությունը, որի կարիքը դուք ունեք երբեք չհանձնվելու համար:

«Անկոտրում հոգի»-ն ավելին է, քան մի հասարակ ուղերձ. այն հանձնարարված է Աստծուց այս վերջին օրերում ձեզ զորացնելու համար:

Իշխանությունը ձեզ է սպասում: Ձեզ վիճակված է հաղթել. դուք դրված եք թագավորելու համար: Մի՛ հանձնվեք:

Այս նյութը և այլ ուսումնական կարող եք ներբեռնել հետևյալ կայքերից.
www.CloudLibrary.org
www.MessengerInternational.org

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ

հանրաճանաչ գրքերի հեղինակ է և հանրահայտ խոսնակ: Նա՝ և նրա կինը՝ Լիզան, ով նույնպես հանրաճանաչ գրքերի հեղինակ է, 1990թ.-ին հիմնադրել են «Ջոն Բիվերի ծառայությունները»: Այդ ծառայությունն ամեն՝ վերածվելով բազմաբնույթ միջազգային գործունեության: Այն ընդգրկում է «Մեսինջեր» յաբաթական հեռուստահաղորդումը, որը հեռարձակվում է 214 ազգերի համար: Բիվերը մի շարք գրքերի հեղինակ է, որոնց թվում են «Կորել երկրագունդը», «Տիրոջ երկյուղը» և «Ճանկրի տակ» գրքերը:

Օգտագործեց այս ուսումնական մեծանոցը «Անկոտրում հոգի. զորությունն, որի կարիքը դուք ունեք երբեք չհանձնվելու համար» գրքի հետ:

teach reach rescue
Messenger International.
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և ենթակա չէ վաճառքի:

Մնում է մեզ միանալ Facebook և Twitter սոցիալական ցանցերում: